

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԼՈՒՁԻՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՆ

ՀԱՅ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

(Հողվածների ժողովածու)



1184089 947.925 ✓

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԼՈՒՋԻՆՅԱՆ  
ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅ  
ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

(Հոդվածների ժողովածու)



ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2016

1101952



ՀՏԳ- 94(479.25)  
ԳՄԴ- 63.3(52)  
Ս 887

Ժողովածուն հրատարակվել է  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝  
Արմեն Տեր Ստեփանյան  
Խմբագիր՝ Աղավնի Շահերյան

Ստեփանյան Հասմիկ  
Ս 887 Լուզինյան քաղաքական տան հայ ժառանգները Եր.:  
«Գիտություն» հրատ., 2016, 218 էջ:

Ժողովածուն ամփոփում է հեղինակի տարբեր տարիների հոդվածները, ինչպես նաև միջազգային գիտաժողովներում կարդացած զեկուցումները: Հայատառ քուրբերեն գրականության և Օսմանյան կայսրությունում հայերի ներդրման մասին ուսումնասիրությունները ժողովածուի հիմնական մասն են կազմում: Կան նաև հրապարակախոսության մի քանի մտուշներ:

Գիրքը նախատեսված է հայագետ-արևելագետների, ինչպես նաև ընդհանուր լայն շրջանակի համար:

ՀՏԳ- 94(479.25)  
ԳՄԴ- 63.3(52)

ISBN 978-5-8080-1231-8  
© Հասմիկ Ստեփանյան, 2016



Այս աշխատանքը նվիրում են վաղամեռիկ սիրելի ծնողներին՝  
ԱՎԵՏԻՍ և ՆԱԶԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆՆԵՐԻ  
վառ հիշատակին և ի խնկարկումն 1915թ. Մեծ եղեռնի ժամանակ  
Մշեցի, Երզնկացի՝ Տեր Ստեփանյան, Շաքին-Գարսիսարցի՝ Ավագյան,  
Օրբագյուղցի՝ Հովսեփյան (Հուսուփենց) և Հաջրմենց, Ակոռցի  
Պետրոսյան ազնիվ գերդաստանների անմեղ զոհերի հիշատակին

## ՑԱՆԿ

1.	ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՆՁԻՍԱԹԻ ՇՐՋԱՆՈՒՄ .....	7
2.	ՆՄՈՒՇՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ՉԱՓԱՅՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ .....	16
3.	ԱԿՆԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ .....	30
4.	ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ՉԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ .....	37
5.	ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ՏՊԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ .....	43
6.	ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԱԲԵՐԵՆ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄՆԵՐ .....	50
7.	ԱՐՄԵՆ ՅԱՐՄԱՆԻ ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ .....	54
8.	ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՒՆՏ ԲԱՂԻՇԵՅԻ (1678-1741) ՊԱՏԻՍԱՐՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	57
9.	ԳԵՎՈՐԳ ԲԱՄՊՈՒՔՅԱՆ, «ՀԱՅ ԱՐՅՈՒՐՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ» .....	66
10.	Կ.ՊՈԼՄԻ ՍԱՔՍՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ԵՐԿՈՒ ՄԱԿԱՅՈՒՅՑՆԵՐԸ (ՄԲ, Չեռ. 8015 և 8016) .....	73
11.	ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՈՒ ԲԱՅԱՌԻԿ ԳԻՐՔ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԿԱՐՈ ԲՅՈՒՐՔՄԱՆ, Հայ նկարիչները Օսմանյան կայսրությունում 1600-1923թթ. ....	79
12.	ԱՐԱԲԵՐԵՆԻ ՀԵՏ ԱՆՆՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ՉԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ (ԿԱՀԻՐԵՆՈՒՄ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒՍՈՒՄ) ՀՐԱՍԱՐԱԿՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ԳՐՔԵՐ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ .....	84
13.	ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ, ՀԱՅԱՍՏԱՌԹԱԲԵՐԵՆ, ՀԱՅԱՍՏԱՌՎՓՉԱԿԵՆ, ՀԱՅԱՍՏԱՌՔՐԳԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՌ ՀՈՒՆԱՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....	88
14.	ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ I 9-ՐԴ ԴԱՐՈՒՄ .....	95
15.	ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎՍՏԱԿՅԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ .....	106
16.	ՀԱՅ ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....	112
17.	ՀԱՅ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԸ, ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՐԺՈՒԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿՆԵՐ .....	124
18.	ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՃԱՊԱԿՈՒ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ .....	132
19.	ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՍԱՐԱԿՉԱԿԱՆ ՏՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՎԱՐԻՍՅՈՒՄ 19-ՐԴ Պ. ....	138
20.	ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԳԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ .....	144
21.	ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐԱԲԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱՆՄԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՈՒ ԹՈՒՐԱԲԵՐԵՆ ԼԵԶՎԱՎ ՆԵՐԿԱՅՈՒՅՑՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ 18-19-ՐԴ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՆՑ ԿՅԱՆՔՈՒՄ .....	151

22.	Ֆեղասպանությունները Եվ օսման ՆԱԽԱՐԱԿԱՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ.....	156
23.	ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՍԵԼՁՈՒԿՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՐՇԱԿԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ 11-13ԴԴ. ՀԱՅԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՍԵԼՁՈՒԿՅԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐ.....	162
24.	ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՐՄԱՐԾՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (“TARİH ve TOPLUM” ամսագրում).....	166
25.	ՀԱՅԵՐԻ ՆՊԱՍՏՆ օՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԻ ՔԱՆԻ ԾՅՈՒՂԵՐՈՒՄ.....	171
26.	ՉԵՌԱԳԻՐ ՄԻ ԲԺՇԿԱՐԱՆ ԵՎՄ.....	177
27.	ՀԱԿՈՔ ՄԻՐՈՒՆԻՆ ԵՎ ՆՐԱ «ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ».....	180
28.	ՀԱՅԵՐՆ օՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ (19դ.).....	186
29.	ԼՈՒՋԻՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ.....	194
30.	ՄԻ ՀԱՎԱՏՈՒՐԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	203
31.	1829թ. «ՍԵՎ ՀԻՆԳԱՆՈՅՆԵՐԻ» ԳՈՐԾԸ ԵՎ ՄԱՀՄՈՒԴԻ Բ-Յ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՂԱՆԱՎՈՐ ՈՒ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ, ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՋՇԵՅԱՆ ԱՄԻՐԱՆ.....	208
32.	ՄԱՆՈՒԿ ԲԵՅ ՄԻՐՁԱՅԱՆ (1769-1817).....	212

Vartan Paşa  
**AKABI HİKAYESİ**

İLK TÜRKÇE ROMAN

(1851)



Hazırlayan  
**A. TIETZE**



## **ՀԱՅԱՏԱՌ-ԹՈՒՐԻՔԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՄՆՁԻՄԱԹԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

Հայաստան թուրքերեն գրականությունն անկախ այն փաստից, որ ստեղծվել է թուրքերեն լեզվով, հայ ժողովրդի սեփականությունն է, նրա մշակույթի կարևոր մասը:

Շատ ժողովուրդներ կան, որոնք իրենց գրականությունը ստեղծել են երկու լեզվով՝ սեփական ու օտար և կամ էլ՝ օտար լեզուներով: Անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն լեզուներով գրականություն են ստեղծել, և այսօր էլ ստեղծում են տասնյակ ժողովուրդներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ազգային դրոշմը:

Իր շեշտված ազգային դրոշմն ունի նաև հայաստան թուրքերեն գրականության այն հատվածը, որը ստեղծվել է բացառապես թուրքախոս հայերի համար, ինչպես Հովսեփ Վարդանյանի նշանավոր «Ազալի» վեպը, նույն հեղինակի «Շատախոսը», Հ.Պարոնյանի հայաստան թուրքերեն ստեղծագործությունները, հայ կյանքից վերցված մի շարք վեպեր, չափածո ստեղծագործություններ և այլն:

Հայաստան թուրքերեն գրականության այն հատվածը, որ ստեղծել են հայերը, նկատի ունենալով թե՛ հայ ըմբերցողին և թե՛ օտար. դարձյալ պատկանում է հայ մշակույթին, քեև որոշ չափով այն իրենցն են համարում թուրքերը, քանզի հսկայական է եղել այս գրականության դերը Թուրքիայի լուսավորական շարժման մեջ:

Հայ ժողովուրդը վերը հիշատակված որոշ ժողովուրդներից տարբերվում է նրանով, որ հայաստան թուրքերեն գրականությունը նրա հիմնական, կենտրոնական մտավոր զարգացման արտահայտությունը չի եղել, այլ միջոց՝ հայերեն չիմացողներին օգնելու համար:

Ի՞նչ հասարակական-քաղաքական թելադրանքի արդյունք էր այդ գրականությունը: 500 տարի հայերն ապրել են թուրքական տիրապետության տակ: Սա սովորական հպատակություն չի եղել, այլ կրոնական մոլուցքով տարված ռազմաֆեոդալական իշխանության տևական և ահավոր ճնշում՝ մշակութային խոր անցյալ ունեցող մի ժողովրդի նստմամբ: Թուրք տիրապետողները ոչ միայն վերցրել են հայ ժողովրդի նյութական բարիքները, նրա ֆիզիկական աշխատանքի արդյունքը, այլև ամեն կերպ աշխատել են ոչնչացնել նրա մտավոր աշխատանքի արդյունքը՝ տասնյակ հազարավոր հայկական ձեռագրեր: Ջարդերից ու կոտորածներից հիմնականում ազատվել են այն մարդիկ, որոնք փոխել են իրենց ազգությունն ու կրոնը: Հարյուրավոր հայկական գյուղեր, որոնք անցյալում ունեցել են իրենց վանքերն ու եկեղեցիները, աստիճանաբար ամայացել են, և 19-րդ դարի կեսերին այդ վայրերում հայերի հետքն անգամ չի մնացել:

Հայաստան թուրքերենը նկատելի որակ է ձեռք բերել 16-17-րդ դդ.:

Հայաստան թուրքերենն տպագիր գրականությունը ստեղծվել էր ավելի քան կես միլիոն այն հայերի համար, որոնք ապրելով թուրքաշատ վայրերում, կորցրել էին մայրենի լեզուն, սակայն պահել էին ազգային ավանդույթները, կրոնը: Թանգիմարից հետո միայն (19-րդ դարի կեսերը) այս վայրերում բացվեցին աշխարհիկ դպրոցներ: Մինչ մի ամբողջ սերունդ դառնար հայախոս, դեռ երկար տասնամյակներ էին անհրաժեշտ՝ այդ թուրքախոս հայերին հաղորդակից դարձնել ազգային զարթոնքին ու մտավոր վերելքին՝ նրանց համար հասկանալի լեզվով՝ թուրքերենով կատարված հրատարակություններով:

Մրանով պետք է բացատրել հայաստան թուրքերեն տպագիր գրականության առաջացումը (թերթեր, հանդեսներ, գեղարվեստական, կրոնադավանաբանական, պատմագրական և այլ բնագավառների հարյուրավոր գրքեր): Հետագայում հայաստան թուրքերենն այնպիսի բուռն զարգացում ապրեց, քանակական և որակական այնպիսի բարձրակետի հասավ՝ իր մեջ ներառնելով եվրոպական մտքի խոշորագույն ներկայացուցիչների ստեղծագործությունները, որ այդ գրականությամբ հետաքրքրվեցին նաև օտարները, առաջին հերթին իհարկե թուրքերը, քանի որ լեզուն իրենց էր. նրանց մնում էր միայն մեսրոպյան տառերը սովորել: Հայաստան թուրքերենով հետաքրքրվել են նաև այն ժողովուրդները, որոնք ապրում էին թուրքական տիրապետության տակ և լավ գիտեին թուրքերենը՝ հույներ, բուլղարներ, ալբաններ և այլն:

Եթե մեր խոսքը մասնավորեցնենք տիրապետող տարրի հետաքրքրասիրությանը, ապա կարող ենք ասել, որ թուրք առաջավոր մտավորականությունը դեռևս Միդիաստան սահմանադրության տարիներին, մտածել է արաբերեն տառերը հայերենով փոխարինելու մասին: Օսմանյան սահմանադրության տարիներին այս ծրագիրն այնքան էր զբաղեցրել մարդկանց, որ արձագանքել էր մասնով, հայ գրողներին հարցաթերթիկ էին բաժանել՝ հարցնելով նրանց կարծիքը, քե արդյո՞ք թուրքերից թվական քանակով փոքր հայերի համար նպաստավոր երևույթ է թուրքերի կողմից հայկական տառերի ընդունելը: Այսպիսի հարցաթերթիկ էր ուղարկվել նաև Հովհաննես Թումանյանին, որը զարմանալիորեն դրական կարծիք էր հայտնել: Վերոիշխյալ ծրագրի իրականացմանը խանգարեց Առաջին համաշխարհային պատերազմը, որից հետո հայ և թուրք հարաբերությունները սրությունը բացառում էր այս հանգամանքը:

Նախապատվությունը տրվեց լատիներենին (1928թ.), թեև հանրապետական շարժման ակնավոր դեմքերից Իսմեթ Ինենյուի միտքը մինչև մահվան օրն էլ զբաղեցրել է մեսրոպյան տառերը վերցնելու խնդիրը<sup>1</sup>:

1 «Ձարթօնք», 6 փետրվարի, 1974թ.:

Հայաստան թուրքերեն գրականության տպագիր շրջանը կարելի է մի քանի ենթաբաժիններով ներկայացնել:

1740-1840-ական թվականներին հայաստան թուրքերենը հիմնականում օգտագործվել է կաթոլիկ քարոզիչների կողմից՝ կաթոլիկությունը հայ իրականությունում, հայերի միջոցով՝ առհասարակ Արևելքում տարածելու նպատակով: Հայաստան թուրքերեն տպագրական կենտրոններից են եղել Վենետիկի, Տրիեստի և ապա՝ Վիեննայի Մխիթարյան հայ կաթոլիկ միաբանությունները:

Ի տարբերություն հայաստան թուրքերեն գրականության ձեռագրական շրջանի, որտեղ այդ գրականության ընդգրկված շրջանակներն այնքան ընդարձակ էին, տպագիր շրջանի առաջին հարյուրամյակում աննշան բացառությամբ լույս են տեսել միայն դավանաբանական, կրոնական, քարոզչական գրքեր:

Հայաստան թուրքերեն տպագիր գրականության զարգացման ամենաբուռն շրջանը 19-րդ դարի երկրորդ կեսն է՝ 1850 թվականից մինչև դարավերջ: Այս շրջանի համար բնորոշ է բովանդակային թեքումը դեպի աշխարհիկը: Հայաստան թուրքերեն մամուլը 1850-1890-ական թթ. իր քանակով մրցել է հայերեն պարբերականների հետ: Հայերեն բազմաթիվ թերթեր հայաստան թուրքերենով ընդարձակ բաժիններ են ունեցել: Պարբերական մամուլի այս ճոխ հավաքածուն ինքնին ենթադրել է տալիս, թե դրանց էջերում գեղարվեստական, պատմագրական, գիտական, քանասիրական, թարգմանական թերթոնային ինչպիսի հարուստ գրականություն պետք է տպագրված լինի, որը մինչև այժմ արժանի ուշադրության չի արժանացել:

Պարբերական մամուլի էջերից դուրս ստեղծվում է հայաստան թուրքերեն բազմաճյուղ գրականություն՝ տպագրված առանձին գրքերով:

Հիշատակենք մի քանի բնագավառ.

ա. Գեղարվեստական ստեղծագործությունների՝ վեպեր, չափածո երկեր, գործեր թատրոնի համար և այլն, ինչպես օրինակ՝ Հովսեփ Վարդանյանի «Ագապիկն» և «Շատախոսը», Հ.Մարուշի «Դժբախտ կինը», Հ.Պալըզյանի «Կեսաբիայի մեծամեծները», Մ.Պիտար Արապաճյանի մի քանի վեպերը և չափածո գործերը, Հովսեփ Գուրպանի «Երկու հարևանները» (3 հտ.) և այլն:

բ. Պատմագրություն, որի մեջ արժանի տեղ է գրավում Երեմիա Չելեբիի թարգմանած և լրացված «Հայ ժողովրդի պատմությունը», Մ.Չամչյանի «Հայ ժողովրդի պատմության» համառոտ շարադրանքը, «Թահմազ Դուլի խանի պատմությունը», Հովսեփ Վարդանյանի «Նասպոլեոնի պատմությունը» և «Արևելյան պատերազմների պատմությունը» և այլն:

գ. Կրոնադավանաբանական, քարոզչական գրքեր, որոնց թիվը կարող է հասնել մի քանի հարյուրի, և որոնք, բացարձակ մեծամասնությամբ կրոնական հար-



ցեր շուշափելով հանդերձ, պարունակում են սակավաքիվ գեղարվեստական փոր-  
րիկ խրատական պատմություններ՝ աստվածաշնչային բեմաներով: Այս գրքերի  
մեծ մասը թարգմանություններ են ֆրանսերենից, իտալերենից, անգլերենից:

դ. Գրքեր, որոնք պայմանակաճորեն գիտահանրամտաշելի ենը համարելու:  
Այսպես, բժշկության տարբեր բնագավառներին նվիրված գրքեր, առողջապա-  
հության, կենդանաբանության, աշխարհագրության, թվաբանության, լուսանկար-  
չության, հեռագրի, ինչպես նաև կենցաղային տարբեր հարցերի՝ խոհարարության-  
նը, հավաքածությանը, շերամապահությանը, արհեստներին և այլ խնդիրներին  
նվիրված գրքեր, երգարաններ, օրացույցներ, երագահաններ և այլն:

ե. Օտար լեզուներից կատարված գեղարվեստական թարգմանություններ:

Մասնույից հետո այն ամենից ներգործուն ազդեցությունն է ունեցել ընթերցող-  
ների վրա՝ նպաստելով նրանց մտավոր և գեղագիտական ճաշակի զարգացմանը,  
աշխարհայացքի ձևավորմանը, իրագեկ դարձրել արևմտաեվրոպական առաջա-  
վոր մտքի նվաճումներին, նպաստել նրա քաղաքական, մասնավորապես կաթոլի-  
կական, ավելի ուշ՝ նաև բողոքական միսիոներական պրոպագանդայի դեմ մղված  
օրհասական պայքարին:

Գեղարվեստական երկերի թարգմանությունները լինելով ընթերցանության  
դյուրին նյութ, դուրս են եկել հայկական նեղ շրջանակներից, դարձել թուրքերի և  
թուրքերենից ախրապետող այլ ազգությունների տեր մարդկանց սեփականություն-  
նը, դրանով իսկ ստանալով արևելագիտական նշանակություն:

Թարգմանական այս բուռն շարժման մեջ կա քաղաքական շատ որոշակի  
շեշտադրում: Ուշագրավ փաստ է, որ այն տարիներին, երբ հայ հասարակական  
կյանքում ուժեղ բռնկումներ էին սկսվել առաջադիմական և հետադիմական հո-  
սանքների միջև, առաջադիմական հոսանքներին պատկանող մարդիկ փորձում  
էին թարգմանել հիմնականում ֆրանսիական միախեծան կարգերի դեմ գրված և  
կարթուկ եկեղեցու հակաժողովրդականությունը բացահայտող վեպեր, ինչպիսին  
էր Է.Մյուի «Թափառական հրեա» վեպը, որն առաջին անգամ թուրքերեն է թարգ-  
մանվել և տպագրվել 1863 թվականին:

Պատահական չպետք է համարել այն փաստը, որ արևմտահայ իրականու-  
թյունում նախաճոյանական գաղափարների տարածման գաղտնի խմբակների  
շրջանում, «Վենետիկի միաբանները թարգմանում են արքա Պրեշխանի «Լիոնե-  
լոի արկածները»(1863թ.), որտեղ ասածո ճամփից հեռացած հերետիկոսներ էին  
նկատվում առաջադեմ հոսանքների պատկանող և հեղափոխական շարժումների  
մեջ ընդգրկված մարդիկ:

Բնորոշ մի հանգամանք ևս: Հայ լուսավորչական եկեղեցին, հանձին իր տեսա-

քան Տերոյնցի, պաշտպանում էր ավանդական կրոնի դոգմաները, քաղաքական պայքարի մթնոլորտում դաշնակցում էր իր գաղափարական հակառակորդ կաթոլիկների հետ՝ դատապարտելով Մ.Նալբանդյանին ու նրա կողմնակիցներին: Տերոյնցն այդ կատարել է թե՛ հայերեն, թե՛ հայատառ թուրքերեն հրատարակություններով: 1863թ. քաբա Պրեշիանի «Լիոնելլոյի արկածների» լույս ընծայման շրջանում Տերոյնցը հրատարակել է Սերվանտեսի «Դոն Բիշոփ»-ի հայատառ թուրքերեն թարգմանությունը: Մամուլում տպագրված հայտարարության մեջ վեպը համարվում է «խրատական վիպասանություն մը», իսկ հայատառ թուրքերեն բացատրության մեջ ասվում է, թե՛ «Երիտասարդական անխոհեմությունների դեմ է»<sup>1</sup>: Անշուշտ Տերոյնցին ամենևին էլ չի հետաքրքրել այս երկի համաշխարհային գեղարվեստական արժեքը: Ըստ երևույթին մա դոմբիշոփյան արարքներ է համարել Մ.Նալբանդյանի և նրա համախոհների գործունեությունն ընդդեմ միապետական կարգերի, շարագուշակ ապագայի ենթադրություններով: Այս ամենը հաստատուն է այն բանի, որ թարգմանական շարժումը տարերային չի եղել՝ մղված շահադիտական կամ ընթերցանության հաճելի նյութ մատակարարելու նպատակով: Այն կատարվել է նպատակադրված, ծրագրված՝ որպես արդյունք քաղաքական տարբեր հայացքների, դիտավորությունների, նպատակների:

Ֆրանսիական լուսավորական շարժման ամենափայլուն ներկայացուցչի՝ Վոլտերի ստեղծագործությունների այս կամ այն լեզվով թարգմանությունը կարող է քարգանող ժողովրդի մտավոր զարգացման որոշակի մակարդակի չափանիշ հանդիսանալ: Այս առումով, Վոլտերի մուտքը Թուրքիա, անկախ այն բանից, թե նրան այդ երկիր բերողները եղել են հայերը, թե թուրքերը՝ հիշարժան երևույթ է: Նույնը ֆրանսիական լուսավորորիչների երկերի թարգմանությունների խնդիրն է եղել:

Հայանի է, որ մինչև թանգիմարյան բարեփոխումների շրջանը Վոլտերի նման ազատամիտ մտածողի երկերը չէին կարող թարգմանվել և հրատարակվել ո՛չ թուրքերեն և ո՛չ էլ հպատակ ժողովուրդներից որևէ մեկի լեզվով:

Թուրք այն առաջավոր երիտասարդները, որոնք, Թանգիմարի ընձեռած հնարավորություններից օգուվելով, կրթություն էին ստացել Եվրոպայում՝ մասնավորապես Ֆրանսիայում, ականատես, նույնիսկ մասնակից դարձել ֆրանսիական հեղափոխական արևելածումներին, վերադառնալով Թուրքիա, իրենց հետ բերել էին 1848թ. ազատախոհ գաղափարները:

Ֆրանսիական լուսավորիչների գործունեության հիմքում ընկած էր պայքարը հանուն բանականության հաղթանակի, ընդդեմ միջնադարյան սխալաստիկայի,

1 «Սասիս», 1868թ., հ.873:



կղերական դոգմաների, որոնք արգելք էին գիտության զարգացմանը, բանակա-  
նության առաջընթացին: Եվրոպայում այդ ռեակցիայի կենտրոնը կաթոլիկ եկեղե-  
ցին էր, գիտության ռահվիրաներին խարույկների վրա այրող, մարդկության պատ-  
մությանն ամոք բերող ինկվիզիտորական շարժումը:

Վոլտերը, Դիդրոն, Ռուսսոն և մյուս լուսավորիչներն այդ միջնադարյան ամրո-  
ցի դեմ էին ուղղում իրենց նիզակները: Նրանց երկերը լույս են տեսել հայատառ  
թուրքերենով: Թուրքական կրոնական ռեակցիան նվազ չարիք չէր բերում մարդ-  
կությանը, բայց այլ էին պայմանները Եվրոպայում, այլ՝ մոլեռանդ մուսուլմա-  
նական Արևելքում, որտեղ Ղուրանը խոր ազդեցություն ուներ հետամնաց, անզ-  
բազետ բնակչության վրա: Թուրք նոր գրականության ստեղծողներին հաջողվեց  
իրենց թարգմանություններով Թուրքիա բերել ֆրանսիական մեծ լուսավորիչների  
գաղափարները: Այս տեսակետից բնորոշ են Նամըք Քեմալի՝ Ռուսսոյի «Հասարակաց  
դաշինք», Մոնտեսքիոյի «Մտորումներ հռոմեացիների փառքի ու ործան-  
ման մասին» գրքերի թարգմանությունները: Վոլտերի «Միկրոմեզան» թարգմանել  
է Ահմեդ Վեֆիկը: Ջիյա փաշան թարգմանել է Ռուսսոյի «Հասարակաց դաշինքը»  
և «Էմիլը»: Վերջինիս հիման վրա կատարվել է այդ երկի արաբերեն թարգմանու-  
թյունը, որին մեծապես օգնել է նրա օսմաներենով թարգմանված լինելու հանգա-  
մանը: Մի կարևոր հանգամանք սակայն, որը որոշ չափով կասեցրել է այս թարգ-  
մանությունների առաքելության լիարժեք իրագործումը: Այն է՝ խորին օսմաներենը  
կայսրության միայն փոքր շրջանակներին էր մատչելի: Այսպիսով, թուրք լուսա-  
վորիչների մի քանի տասնյակ թարգմանությունների, փոխադրությունների ու տե-  
ղայնացումների կատարման լեզուն օսմաներենով լինելու փաստն ինքնին նվազա-  
գույնի է հասցրել այն մեծ աշխատանքի արդյունքը, որը կոչված էր լուսավորելու  
թուրք ժողովրդին, սնելու նոր գաղափարներով, նոր գրականությամբ՝ իր նոր ժան-  
րերով, վերացնելու համար անգրագիտությունը: Այս թարգմանությունները միայն  
տասնյակ տարիներ անց վերաթարգմանվել են, լատինատառի վերածվել և այն-  
ժամ միայն դարձել թուրք ժողովրդի իրական սեփականությունը:

Վոլտերի երկերը թուրքերեն թարգմանելու գործում նկատելի դեր են կատարել  
հայերը, հայկական թատերախմբերը: «Արևելյան թատրոն»-ի խաղացանկում տեղ  
են գտել Վոլտերից միաժամանակ երկու պիես՝ «Չաիրը» և «Բրուտոսը», որոնցից  
առաջինը Վարդոլվյանի թատրոնում երևացել է թուրքերենով: «Միքրոմեզան» հա-  
յատառ թուրքերենով տպագրվել է Կ.Պոլսում 1869թ., իսկ մինչ այդ Ջմյուռնիայում  
հայերենով լույս են տեսել «Չաիրը» և «Միքրոմեզան»:

Թանգիմաթի շրջանում ոչ միայն Վոլտերի, Ռուսսոյի և այլ լուսավորիչնե-  
րի երկերն են որոշակի քաղաքական նկատառումներով թարգմանվել հայատառ

թուրքերեն: Այս առումով ուշագրավ դեմք է ժամանակի ամենապայծառ ու ակահավոր մարդկանցից մեկը, պարստական բարձրաստիճան պաշտոնյա (հետագայում փաշայության աստիճանի հասած) Հովսեփ Վարդանյանը: Չնայած դավանանքով եղել է կաթոլիկ՝ 1850-ական թթ. միացել է հայ առաջավոր հասարակական շերտերին և մոլեզին պայքար է մղել հայ ժողովրդին երկու մասի բաժանող կաթոլիկ մոլեռանդ թևի՝ հասունյանականների դեմ<sup>1</sup>:

Այս պայքարի արտացոլումն է Հ.Վարդանյանի «Ազակ» վեպը, որը բանադրվել է կաթոլիկ եկեղեցու կողմից:

Հովսեփ Վարդանյանը հայատառ թուրքերեն գրող ամենաբեղմնավոր մտավորականներից է եղել: Նա տասնյակ տարիներ խմբագրել է հայատառ թուրքերեն «Մեճմուայի Հավատիս» պարբերականը, որը հիմնականում կանգնած լինելով կաթոլիկ դավանանքի պաշտպանության դիրքերում, լուսավորական նկատելի դեր է կատարել 1850-60-ական թթ.: Թերթի էջերում տպագրվել են օտար լեզուներից՝ մասնավորապես ֆրանսերենից կատարված բազմաթիվ թարգմանություններ: Առանձին գրքով տպագրված նրա թարգմանություններից են «Փարիզի Ժողովը» (1856թ.), Լը Սաժի «Կաղ սատանան» (2 հտ. 1853թ.), Մեմորիա (1853թ.), Էլեկտրական հուսանքի մասին (1857թ.), Ալ.Դյումայի «Մանյակի պատմությունը» (1870թ.) և այլն: Դժվար չի պատկերացնել «Կաղ սատանա»-յի թարգմանության նպատակը, ակնարկը: Եթե մի կաղ սատանա հրաշքով բարձրացներ այս անգամ ոչ թե Մադրիդի, այլ Թուրքիայի մայրաքաղաքի տների, ապարանքների տանիքները՝ պիտի տեսներ բուրբ փաշաների, պալատականների, տարբեր ազգության պատկանող վաշխառուների կյանքի նույնպիսի այլանդակ պատկերների մի աշխարհ:

Ջաղաքական միանգամայն այլ թելադրանքի արդյունք էր Ժժեն Սյուի վեպերի թարգմանությունը և հրատարակությունը: Անկախ այն բանից, թե է.Սյուի վեպերն իրենց արկածային բնույթով հաճույքով կարող էին ընթերցվել ոչ միայն հայ ընթերցողների կողմից, երևույթն ինքնին հայ իրականության շատ հրատապ մի հարցի թելադրանքն էր: Այն է՝ օտարամուտ կաթոլիկ պրոպագանդայի դեմ մղվող պայքարը, որ սուր բնույթ էր ստացել 1840-ական թվականների կեսերին և իր բարձրակետին էր հասել 1860-ական թվականներին՝ հասունյան և հակահասունյան հայտնի պայքարի բոլորքմամբ: Եվրոպական քիչ վեպեր կարող էին այդքան խոր զգվանք

<sup>1</sup> Այս պայքարը գրավել է նաև թուրքերի ուշադրությունը: Այսպես, Koçuş Sadi "Tarih boyunca Ermeniler ve Türk-Ermeni İlişkiler" (Ankara, 1967, s.117-119) գրքի «Միջհայկական ընդհարումները Օսմանյան կայսրությունում» գլխում նկարագրում է այս պայքարը, այն անվանելով "yabancı parmak" (օտար մատ) և պայքարի ելածներին՝ "hasunistler, antihասunistler": Հեղինակը չի մոռանում հատկանշել, որ թուրքերը հիմնականում չեն խառնվել հայերի այս ներքին պայքարին:

առաջացնել ընթերցողների մեջ կաթոլիկ հոգևորականության նկատմամբ, որքան է.Սյուի «Թափառական հրեան», ուր լայն կտավի վրա և ամենայն խորությամբ երևան էր հանվում կաթոլիկ միաբանությունների քարոզած գաղափարների և գործադրած ոճիրների ողջ հակադրությունը: Պատահական չէ, որ 1850-ական թթ. այս վեպի թարգմանությունը ձեռնարկել են հայերը միաժամանակ Կ.Պոլսում (Կարապետ Փանոսյանը 1863թ., Կարապետ Ուրուճյանը 1868թ., Գևորգ Սիմեթյանը՝ 1889թ.), Միքայել Նալբանդյանը Մոսկվայում (1858թ.) և Ստեփան Ռսկանյանը՝ Փարիզում: Այս վեպը հետագայում էլ բազմիցս վերահրատարակվել է՝ ապացույց հայ առաջավոր մտավորականության հետաքրքրությանն այս երկի նկատմամբ:

Մայր եկեղեցուց, ժողովրդից հեռացած հայ կաթոլիկ հատվածի հիմնական խոսակցական լեզուն հայերենը չէր, այլ թուրքերենը, իսկ մեծահարուստ ընտանիքներում՝ ֆրանսերենը: Ուստի հասկանալի կարող է դառնալ այն ձգտումը, երբ անհրաժեշտ էր օտարացման ճանապարհին գտնվող այդ հատվածին իրենց հասկանալի լեզվով բացատրել նրանց ողջ մոլորվածությունը, իրենց պարտադրվող գաղափարների խաբեությունն ու հետին նպատակները:

Է.Սյուից հայատառ թուրքերենով լույս են տեսել մահ «Փարիզի գաղտնիքները» (1858թ.), «Միրո և զվարճության զավակները» (1886թ.), «Յոթ մահացու մեղքեր-ծուլություն» (1886թ.) վեպերը:

19-րդ դարի 60-ական թթ. արևմտանվորպական ոչ մի գրող այնքան մեծ ազդեցություն չի բողբել համաշխարհային գրականության վրա և չի թարգմանվել այլ լեզուներով, որքան Վիկտոր Հյուգոն՝ որպես բանաստեղծ, գրող, դրամատուրգ: Նրա բազմաթիվ պիեսներն իրենց արժանի տեղը գրավեցին հայկական թատերախմբերի խաղացանկում՝ բեմադրվելով թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն (ըստ հայատառ թուրքերեն թարգմանության):

Իզմիրում 1860-ական թթ. կեսերին դասական թարգմանությամբ լույս է տեսել Վ.Հյուգոյի անմահ «Թշվառները»՝ 5 հատորով, Գրիգոր Չիլինկիրյանի թարգմանությամբ: 1863թ. դարձյալ Գրիգոր Չիլինկիրյանի թարգմանությամբ, լույս է տեսել «Թշվառների» հայատառ թուրքերեն համառոտ շարադրանքը: 1860-70-ական թթ. ֆրանսիական գրականությունից կատարված թարգմանությունների մեջ հիշատակության արժանի են Լամարթինի «Գրացիելյան» (1871թ.), Շատոբրիանի «Աբալան» և «Վերջին Արենսերածի արկածները» (1860թ.): Ուշագրավ է, որ այս վերջին երկի թարգմանիչն էլ Ջյուլիենիայի թարգմանական դպրոցի ամենանշանավոր դեմքերից մեկը՝ Գրիգոր Չիլինկիրյանն է: Թուրքիայի նման հետամնաց մի երկրում այս երկի թարգմանությունը յուրօրինակ կոչ էր՝ մարդկային ամենագեղեցիկ զգացմունքի գնահատման մասին:



Մի քանի խոսք թարգմանությունների լեզվի մասին: Թարգմանիչների մեծ մասը, որոնց կենսագրություններին մենք ծանոթ ենք, եղել են ժամանակի ամենազարգացած մարդկանցից՝ հաղորդակից ոչ միայն ֆրանսիական հարուստ գրականությանն ու առհասարակ մշակույթին, այլև եվրոպկան մտքին: Այդ թարգմանիչները գիտեին մեկից ավելի լեզուներ: Հաճախ նույն անձնավորությունը թարգմանություններ է կատարել խոսակերտից, ֆրանսերենից և այլ լեզուներից: Ուստի անվարան կարող ենք ասել, որ դեպի թուրք և բյուրջասո իրականություն ներհոսող այդ վիթխարի գրականությունը կոչված էր ծառայելու կայսրության ընդհանուր մտավոր զարգացմանը: Հարկ է նշել, որ թարգմանությունների հայատառ թուրքերեն լեզուն միատեսակ չի եղել: Տպագրված են գրքեր, որոնցից այսօր ընթերցողը քիչ քան կհասկանա: Գաօտաներեն, խրթին արաբական մտածողությամբ առլեցուն լեզուն է, որով գրում էին թուրքական բարձր խավի համար: Բնորոշ է, որ նույն Հովսեփ Վարդանյանը գրել է «Նապոլեոն Բոնապարտի պատմությունը» այդ լեզվով և գրել է «Ազապին» ու «Շատախոսը» թուրքերեն ժողովրդական, խոսակցական լեզվով: Ուրեմն հեղինակը նկատի է ունեցել ընթերցող տարբեր խավերի: Թարգմանել Վոլտեր, Հյուգո, Շատոբրիան գուտ խոսակցական լեզվով՝ անհնար էր: Ուստի հասկանալի պետք է համարել թարգմանիչների ջանքերը՝ բարձրանալու դեպի գրական թուրքերեն, ստեղծելով այն ոսկյա միջինը, որը մինչև այսօր էլ կարելի է դյուրությամբ կարդալ: Ավելին, այն թուրք լուսավորիչների երազանքն է եղել՝ բարձրացնել ժողովրդական լեզուն գրական աստիճանի: Ահա թուրք մշակույթի մի ասպարեզ ևս, որի մեջ դժվար է քերականահատել հայ թարգմանիչների մեծագույն ծառայությունը:

Հայատառ թուրքերեն թարգմանական գրականության ծաղկման 50 տարին (1850-1900թթ.) կարելի է բաժանել երկու հիմնական շրջանների: Առաջին, 1850-70 թթ., որի մասին մենք խոսեցինք և որի համար բնութագրական է Թանգինաթին հաջորդող ռոմանտիկ մթնոլորտը: Այս շրջանում համեմատաբար նպաստավոր պայմաններում մտավորական խավերը նկատելի աշխուժացում էին ապրել, զարկ տվել մշակութային կյանքին, թատրոնին, հիմնադրել թերթեր և հրատարակել գրքեր:

Հայատառ թուրքերեն թարգմանական գրականության երկրորդ շրջանը՝ համիդյան բռնակալության տարիների գրականությունն է, իբրև նոր քաղաքական պայմանների, պահանջների և հնարավորությունների արդյունք: Այս գրականությունը մեծ է իր ընդգրկված հեղինակների, հատորների քանակով, որը մի այլ ուսումնասիրության նյութ կարող է հանդիսանալ:

«Արևելագիտության հարցեր» գիտական աշխատությունների միջբուհական  
ժողովածու: Պրակ 1-2, Եր., 1983, ԵՊՀ, էջ 222-230:

## ՆՄՈՒՇՆԵՐ ՀԱՅԱՏԱՌ-ԹՈՒՐԲԵՐԵՆ ՉԱՓԱՃՈ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ճակատագրի բերումով հայկական ձեռագրերը ցրված են աշխարհով մեկ: Մատենադարանների և մասնավոր հավաքածուների մեզ ծանոթ ձեռագրացուցակներում հայատառ թուրքերեն ձեռագրերը զգալի թիվ են կազմում: Հայատառ թուրքերենով և հայատառ թուրքերեն պարունակող հայերեն ձեռագրերի զգալի մասը գտնվում է Երևանում՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (չորս 400 գրչագիր ու պատառիկ): Այն իրենից ներկայացնում է բանահյուսական, պատմագրական, կրոնաբարոյախոսական, աստվածաբանական, ծիսական, բնական գիտություններին վերաբերող ձեռագրական հարուստ ժառանգություն և ընդգրկում է 600 ամյա մի ժամանակաշրջան: Այս ձեռագրերը գրի են առնվել կամ ընդօրինակվել են Կոստանդնուպոլսում, Տիգրանակերտում, Կոտուց անապատում, Բայազետի բերդում, Աղրիանապոլսում, Եվդոկիայում, Կարինում, Վանում, Անկյուրիայում, Չեյրունում, Պրուսայում, Կյունուշխանեում, Սեբաստիայում, Պետերբուրգում, Էջմիածնում, Աստրախանում, Ղրիմում, Կակաթայում, Ֆոքչանում և այլուր:

Բազմադարյան մշակույթ ունեցող հայ ժողովրդի մտքի, իմաստության, փորձի, ուրախության, սրանտության, վշտի ու տառապանքների, երազների ու ցանկությունների արտահայտությունները Օսմանյան կայսրության թուրքախոս գավառներում հնչել են թուրքերեն և գրի են առնվել հայատառ թուրքերենով: Ուստի զարմանալի չէ, որ մեզ չի հասել որոշ գավառների բանահյուսության և ոչ մի հայերեն նմուշ: Այս հանգամանքն այսօր այնքան հմտորեն օգտագործում են թուրք գիտնականները, ի բիվս այլ երևույթների՝ հայ բանահյուսության շատ նմուշներ ներկայացնելով որպես սեփականություն: Թուրքերեն լեզվով լինելու ցավագին հանգամանքը, այնուամենայնիվ նպաստել է, որպեսզի ավելի արագ ու դյուրին տարածվեն այս ստեղծագործությունները Օսմանյան միապետության բազմազգ ժողովուրդների շրջանում, ազդեն թրքախոս ստեղծագործական մտքի վրա, նաև ազդվեն նրանցից:

Աշուղական գրականությանը, բանահյուսությանն է վերաբերում հայատառ թուրքերեն ձեռագրերի գերակշռող մասը<sup>1</sup>:

Հայ աշուղական, գուսանական արվեստի արմատները դարերի խորքից են գալիս, երբ դեռ չէր կազմավորվել թուրքական պետությունը: Վաղ և միջնադարյան

1 Երևանում, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավելի քան 180 ձեռագրեր պարունակում են հայատառ թուրքերեն տաղեր, բանահյուսության նմուշներ:




ՀԻՄ 173

հայ գուսանական, աշուղական գրականության ուսումնասիրությանն են նվիրված Մ.Թադիադյանի, Ղ.Ալիշանի, Մ.Էմինի, Ստ.Պալասանյանի, Հ.Գաբրիելյանի, Գ.Ջարբխանյանի, Մ.Աբեղյանի, Ա.Չոպանյանի, Ստ.Մալխասյանի, Լևոն Մեսրոպի, Հ.Բերբերյանի, Գ.Թարվերդյանի, Գ.Լևոնյանի, Ա.Մնացականյանի, Հ.Սահակյանի, Շ.Գրիգորյանի, Ա.Շահումյանի և ուրիշների բազմաթիվ աշխատություններ, հայ տաղերգուների երկերի գիտական հրատարակություններ, որոնք բույլ են տալիս ճիշտ ըմբռնելու մեզ հետաքրքրող հայատառ բուրբերեն տաղերն իրենց տարբերակներով: Բանասեր Գ.Լևոնյանը հաշվում է ավելի քան 400 աշուղներ, որոնք ԺԷ-ԺԹ դարերում ստեղծագործել են միաժամանակ հայերեն և բուրբերեն լեզուներով: Ընդունված է եղել զանազանել երկու կարգի աշուղներ: Աշուղներ, որոնք հանպատրաստից են հորինել ու կատարել իրենց երգերը որևէ գործիքի նվագակցությամբ (մշտան շուրաբար), և աշուղներ, որոնք նախապես գրավոր ունեցել կամ պատրաստել են իրենց տաղերը (քալեն շուրաբար)<sup>2</sup>: Այնուամենայնիվ դժվար է զանազանել այս աշուղներին, քանզի երկրորդները ևս շատ հաճախ հանպատրաստից են կատարել:

Հաճախ հոգևոր հայրերը գայթակղվելով աշխարհիկ, ժողովրդական քեմաներով գրված այս տաղերով, ոչ միայն մշակել են և վերափոխել դրանք հոգևոր տաղերի, այլև իրենք էլ ստեղծել են աշխարհիկ բովանդակությամբ երգեր՝ կողմական նուրբ քողի տակ, գրի են առել ժողովրդի այդ գանձերը, որոնց մի մասն էլ այսօր մեզ է հասել: Ավելին՝ ընդունելով ժողովրդական երգերի ավանդույթները՝ գրել են ժողովրդական, խոսակցական լեզվով, որը հիմնովին տարբերվում էր եկեղեցական լեզու դարձած հին հայերենից՝ գրաբարից: Թրքախոս գավառներում հոգևոր հայրերը երբեմն ստեղծագործել են նաև բուրբերեն, և այդ տաղերը ևս գրի են առնվել հայատառ բուրբերենով: Հաճախ էլ, հայտնի բուրբերեն երգի նույն սիրված մեղեդու համար գրել են հայերեն նոր բառեր՝ նպատակ ունենալով զարկ տալու հայերեն լեզվով երգերի տարածմանը: Մեզ են հասել Հովհաննես Երզնկացու, Հովհաննես Թլկուրանցու, Թադեոս Թոխաթեցու, Նապահեստ Քուչակի, Գրիգորիս Աղթամարցու, Նաղաշ Հովմաթանի, Պաղտասար Գալիի, Կ.Պոլի Պատրիարք Հակոբ Նալյանի (Նիհատի) և ուրիշների հայատառ բուրբերեն տաղերը: Հակոբ Նալյանը (Նիհատի) գրել է նաև պարսկական «արուլի» չավով: Նրա «Ձեն Հոգետոր»-ի Բ մասը հայատառ բուրբերեն քարոզներ, խրատներ են՝ հարց ու պատասխանի ձևով, որոնք բաղկացած են նաև ոտանավորներից, քարոյախոսական պատմություններից: Նրանց լեզուն հիմնականում արաբա-պարսկերեն խառը բա-

1 Գ.Լևոնյան, Աշուղները և նրանց արվեստը, Երևան, 1944, էջ 34:  
2 Ա.Ալալյանեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրե, 1937, էջ 1554:



ներից է կազմված, որոնց նշանակությունը հեղինակը գրքի վերջի բառացանկում է ներկայացնում: Դրանց մի մասը վերցված է 12-րդ դարի նշանավոր խորհրդապաշտ բանաստեղծ Շեյխ Աքթարի խրատագրքերից և պարսիկ ու արաբ սուֆիների բանաստեղծություններից: Հակոբ Նալբանը գրել է նաև անէական միութուն գովերգող արևելյան դասական գազելների մնանդությունը: Մյուս հոգևորական բանաստեղծները, որ հայաստան թուրքերեն են գրել, Իսեվի-ն է (Հակոբ վրդ. Պերպերյանը) և Սելիսին (Հուլի. փ. Հյունքարպետյանը): Չեռագրելը, ուր ամբարված են բազմաթիվ հայաստան թուրքերեն չափածո ստեղծագործություններ, թույլ են տալիս միաժամանակ որոշ պատկերացում կազմել Օսմանյան կայսրության թուրքալեզու չափածո գրականության մասին և հետևել դասական ու ժողովրդական գրականության զարգացմանը:

Թուրքական դասական գրականությունը, ընդօրինակելով արաբապարսկական միաստիկ բովանդակությամբ հագեցված ծեփերում, վերամբարձ ոճը, ստեղծվել ու զարգացում է ապրել պալատներում՝ միշտ հեռու, օտար մնալով ժողովրդին: Պալատական գրականությունը չի արտահայտել իր ժամանակի բնորոշ գծերը, սոցիալ-տնտեսական իրավիճակը: Ավանդական կառուցվածքային ֆորմուլներից դուրս չեկող ստեղծագործություններում չեք գտնի հեղինակի ժամանակակցին: Այս բանաստեղծներից մի քանիսն են միայն, որ վալել են ժողովրդի սերը:

Աշխարհի բոլոր տիրակալները, թագավորներն ու սուլթանները, ունեցել են իրենց կողքին երգիչներ, որոնց հովանավորել են, սիրել, երբեմն էլ գգուշացել նրանց սուր խոսքերից: Այս երգիչներից ոմանք, ապրելով ճոխ պալատներում, շքեղության մեջ, ուղեկիցները դառնալով նրանց արշավանքների, պատերազմների, ձգտել են դեպի ժողովուրդը, բնությունը և այնտեղ գտել իրենց հոգեկան հարստությունը, կաշկանդումներից զերծ ազատությունը: Նրանք դուրս են եկել սոսկ դասական ավանդույթներով ստեղծագործող պալատական երգչի սահմաններից, երգել են երկրային սեր, ժողովրդի հոգսերն ու ուրախությունները, երբեմն էլ ապստամբել են պալատի դեմ, սպառնացել, որի համար այնքան խստորեն պատժվել են:

Թուրք իրականության մեջ, պալատական թուրք երգիչների կողքին ստեղծագործել են շատ սիրված ու գնահատված հայագգի երգիչներ, ինչպես՝ Աբդուլ Մեջիդ սուլթանի երգիչ Քեշիչօղլին, սուլթան Մահմուդի երգիչ Իլֆեթին և ուրիշներ:

Հայաստան թուրքերեն տաղարաններում հանդիպում ենք անունների, որոնք թուրք գրականության պատմության մեջ համարվում են դասական գրականության ներկայացուցիչներ, որոնցից մի քանիսի լեզուն, հայկական մտածողության առկայությունը, տաղի բովանդակությունը, տաղաչափական կառուցվածքը, նույն հեղինակների ստեղծագործությունների առկայությունը մեր ձեռագրերում թույլ են

տալիս ենթադրելու դրանց հեղինակների հայ լինելու հանգամանքը: Նույն այդ հեղինակների անունները գտնում ենք համապատասխան շրջանի թուրք գրականության մասին աշխատություններում՝ ներկայացված որպես թուրք աշուղներ, համապատասխան կենսագրություններով: Այդպիսիզ են Քարակլու Ահմեդի<sup>1</sup>, Վասֆի Մահիր Քոջաթուրքի<sup>2</sup> աշխատությունները, որտեղ գտնում ենք մեզ հետաքրքրող աշուղների մասին ոչ միայն գրականագիտական տեղեկություններ, այլև որքան էլ որ զարմանալի է՝ թուրքական հագուստներով նրանց նկարները: Հայկական ձեռագրերում ամբարված հայատառ թուրքերեն աշուղական տաղերի գիտական, քննական հրատարակությունները ոչ միայն ճշտումներ կմտցնեն նրանց հեղինակների ազգային պատկանելության հարցում, այլև որոշ վերագնահատումների կմղեն: Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ աշուղների մեծ մասը կրել են պարսկական անուններ: Նույն անունը կարող էին կրել մի քանի աշուղներ, և երրորդ՝ որ նույն աշուղը կարող էր ունենալ մի քանի անուններ: Այսպես, օրինակ, ԺԹ դարի աշուղ Ջարուրին, աշուղական մրցույթներում հաղթելով, ի բիվս այլ աշուղների, նաև հայտնի Թյուճճարիին, ստացել է Քեչիչօղլի մականունը, որը փոխել է Ջարուրիի: Կ.Պոլսում մտերմանալով մի թուրք բեյի հետ՝ ներկայացվում է Մուլթան Մահմուդ Բ-ին, որին հանպատրաստից ձոնում է մի տաղ: Առատ պարզեկի հետ միասին սուլթանից նա ստանում է նոր մականուն՝ Շավզի<sup>3</sup>:

Հայատառ թուրքերեն աշուղական գրականությունն ուսումնասիրել են օտարազգի հետազոտողներից գերմանացի նշանավոր արևելագետներ Էննո Լիտմանը<sup>4</sup>, Օտտո Շախը<sup>5</sup> և ուրիշներ: Թուրք հայտնի գիտնական Ֆուադ Քյոպրյուլյում իր աշխատություններում անդրադարձել է երեք հայ աշուղների, որոնք գրել են հայատառ թուրքերեն: Դրանք են՝ Մեսիհի Էրմենին, Սերգիս Ջեքին(Նուռյան), Միրզա Խանը: Ֆ.Քյոպրյուլյում դրվատանքով է հիշատակում ԺԸ դարի մի այլ աշուղի՝ ոմն Վարդանի, որն անհամեմատ ավելի տաղանդավոր է եղել, քան վերը հիշատակվածները: Մեսիհին, որ Դիարբեքլիցի էր, նաև պարսկերեն գիտեր, գեղեցիկ ձայն ուներ: Եղել էր ուսուցիչ, վաճառական, ճամփորդել Պոլիս, Վենետիկ, գրել թուրքական քարքառներով, չաղաբայերենով՝ հիշում են թուրքական աղբյուրները: Էլվիյա

1 Ahmet Kabaklı. Türk Edebiyatı, Ankara, 1967, s.139, 663.

2 Vasfi Mahir Kocatürk, Türk Edebiyatı Tarihi, Ankara, 1970, s.426, 4744 4984 584.

3 Ա.Ալթայաճեան, Պատմութիւն հայ Կեսաբիոյ, Գահիթե, 1937, էջ 1556:

4 Enno Littmann. Das Malerspiel, Sitzungsberichte der Heiderger Akademi der Vissenschaften, Phil. hist.4 Kl., 1910. նույնի, Ein türkisches Streitgedicht über die Ehe, "Bidârinî Evil ile Bekaryn dasitani", (DA volume of Oriental Studies presented to "Professor Edvard G.Browne" pp. 269-284)

5 Otto Spies. Esmen und Zejdshan. "Ein türkischer Volksroman aus Kleinasien nach einem armenisch-türkischen Druck". Antohropos, t.XX, 1925.

6 Fuad Köprülü. Türk Edebiyatının Ermeni Edebiyatı Üzerindek: Teşirati, Edebiyat Fakültesi Macmuası. İstanbul, 1922; Fuad Köprülü. Edebiyat Araştırmaları. Ankara. 1966, s. 239-269.



Չելեպին (17-րդ դ.) հիշում է Էրզրումցի Մովսեսի մասին, որը փորագրիչ է եղել և օգտագործել է «Հաքքի» մականունը:

17-րդ դարում՝ հայտնի են եղել Մելիքսեղեկ Սուպիին, Գալուստ Կայծակը: Թուրք գրականագետներ Իզզեթ Ուլվին, Ահմեդ Ռասիմը թվում են Ստամբուլի բազմաթիվ հայ աշուղների, որոնք միաժամանակ թուրքերեն են կատարել: Յուսուֆ Նաբիի մի նամակից իմանում ենք ԺԶ դարի երկու հայ աշուղների մասին՝ Վարդան և Մեջնուն: Հայ աշուղները գրել են թուրքական *քոշմասների* չափով սուֆիական բնույթի բանաստեղծություններ, ընտիր ոճ են ունեցել, շատ սիրված ու գնահատված եղել թուրքերի կողմից: Երկու հայ եղբայրներ՝ Մահճուպին ու Հարապին, Ռէսմին, Ջիհինին, Սաֆին մեծ համբավ են շահել իրենց թուրքերեն ոտանավորներով՝ վարժ համդես գալով «արուզի» մեջ:

Ահա մի քանի անուններ՝ վերցված հայատառ թուրքերեն տաղարաններից. Պահարի, Մետաեի, Մեվզունի, Ալեաի, Մեքշուֆի, Ջանիֆի, Ճեհտի, Շուխի, Էօմեր, Շագիրի, Թանգիրի, Այիտի, Ֆասլը, Նեպարի, Հաշիմի, Գարունի, Մահզունի, Մենարի, Կեվիերի, Սարհօշ օղլու, Մեճնունի, Տեհրի, Իրֆանի, Բավզիա, Նեվզի, Լիճճեյի, Նիհատի, Վեհպի, Ճիտայի, Նագիրի, Աքրահամ, Կարաջ օղլան, Գալլաք Մուրադ, Տօնի, Մյակլին Բուրջի, Պետրջի օղլի, Օվչի Նավասի, Մամադ, Ղամբար օղլի, Ջեշիշօղլի, Ալավերդի, Մահմուդ, Հարություն Սալմաստեցի<sup>1</sup> և այլն:

Աշուղները (հիմնականում սագի, թամպուրայի նվագակցությամբ) շրջել են Օսմանյան բազմազգ կայսրությունով, երգել, խաղացել, կատարել են թե՛ իրենց և թե՛ ուրիշների ստեղծագործությունները: Եվ քանի որ թուրքերենը հասկանալի էր կայսրության բոլոր մյուս ազգերի համար ևս, բնական է, որ լինելով անգամ հայախոս գավառների ծնունդ՝ աշուղները հիմնականում կատարել են թուրքերեն:

Հայատառ թուրքերեն տաղարաններում տեղ են գտել քառյակներ, զագեկներ, բեյթեր, որոնց մեծ մասի հեղինակներն ամենայն հավանականությամբ հայեր չեն: Հայատառ թուրքերեն ուշ շրջանի (հիմնականում 19-րդ դարի) մի քանի տաղարաններ, որոնք կազմվել են Կ.Պոլսի հայ երաժշտագետների կողմից, հայկական և եվրոպական նոտագրությամբ ոչ միայն հարստագույն տաղարաններ են՝ ներկայացնելով բազմաթիվ հայ և օտար աշուղների անուններ, նրանց տաղերի բառերն ու երաժշտությունը, այլև ստորաբաժանված են ըստ ժանրային տարբերակների, հիմնականում ժամանակի ընդունված և տարածված արևելյան եղանակային ձևերի:

Հայատառ թուրքերեն տաղարանների ամենագեղեցիկ նմուշները սիրո տաղերն են, հավաստող դարերից եկող ամենախոր փիլիսոփայությունն այն մասին, որ զգացմունքներից ամենագեղեցիկը վեր է հասարակական, սոցիալական, դասա-

1 Մատենադարան, ձեռ. 9003:

կարգային, ազգային ու կրոնական բոլոր պատկանելություններից ու նախապաշարուններից, թեև այն ընդվզում է բազմադարյան սովորությունների ու ավանդույթների դեմ:

Տաղերում նկատել ենք կառուցվածքային հետևյալ տարբերակները.

-մեկ սողը հայերեն է, մյուսը՝ հայատառ թուրքերեն (երբեմն արաբախառը):

-սողերից մեկը մյուսի թարգմանությունն է, կամ միմյանց շարունակում են առանց թարգմանության:

-հայերեն երկսողին հաջորդում է հայատառ թուրքերեն երկսողը կամ քառասողը՝ նույն սկզբունքով:

Նույնիսկ հայերեն տաղերում, հայրեններում տեքստը երբեմն ընդմիջվում է հայատառ թուրքերեն քառերով, մտքերով, առանձին քառյակներով, որոնք բովանդակային շարունակություն են կազմում և կամ նախորդի թարգմանությունն են պարզապես:

Մեծ քիվ են կազմում այն տաղերը, որոնց հեղինակները, երգերի ստեղծման ժամանակը անհայտ են և որոնց հրատարակությունը մի քանի սովոր հատորներ կարող է կազմել: Դրանց մեծ մասը գեղարվեստական որոշակի արժեք են ներկայացնում:

«Տաղ Գրիգորի ասացեալ»-ի առաջին մասը երկլեզվյա է.

Ֆիղան է պաշլատըն պիլպիլլեր քիպի  
(Սոխակների պես ողբալ սկսեցի)  
Վարդն է նրստել ի բարձր որպես բագոնի,  
Տաղկերէ կէգերտիմ պէն մեճլուն քիպի  
(Թափառում էի Մեճնունի պես սարերում)  
Թապալիմ թապլլիլիմ ի վերայ վարդի:  
Խարշիտան կէլէն կէօզերի մեստան  
(Դիմացից եկողի աչքերը խումար)  
Կամ արեք մօտ յիս կամ տուր պատասխան  
Ճիկէր տաղարանի վուրդուն ու կիրեան  
(Ջարկված սիրտս ողբաց խոշտանգված)  
Արեկ որ նըստիք մեճլիս ի սեյրան  
(Եկ նստենք խիճդ ու ուրախության)  
Կել սէն եանըմա, եղաւնճա ահան  
(Դու ինձ մոտ արի, մոտ ժամանակներս)  
Զմեզ ուրախացոյ գարկ զըր բուպ չէշտէն

Պիլպիլ տէ կէլտի՝ պիլպիլլէ խանտէն  
(Սոխակն էլ եկավ, զվարք տխակը)  
Ես եմ խիստ ուրախ ի քո գայքստեան:  
Սաչանիլ դագել ծարուր քաշել ես  
(Գեղեցկուհի, մագերիլ ծարուր ես քաշել)  
Լովն ար մըքքը, վարդ հոտով, քեաֆուր ես  
(Ճերմակերես, ոսկեգօծված, ձյունասպիտակ վարդի հոտով)  
Միճին ար լուրտ կարմիր հագել ես  
(Ճերմակ կրծքիդ վատ կարմիր ես հագել)  
Ֆուսմար մուտավար նուշ ու շեյ երես:  
(Բերանդ կտրո նուշ ու երեսդ խոնավ):  
Է: հասլիպ դալա դու զիս արիք բոց  
(Միրահար մնա, դու զիս արիք բոց)  
Մովաֆ մնացեալ հայրի մի հընոց  
(Շատ խորհրդավոր ես մնացել ի հնոց)



Եւ չաճլլ նա տապ մարկարտէ շարոց  
(Նոճու ես նման, ինչպես գովեմ մարգարտէ  
շարոց)

Ըսխյինյիլիք սա ի մեջ վարդենոց:  
Է կարմիր ըսպիտակ դու ոսկի գրնդով,  
Էր գարկեր դուն զիս այդ շարխի նետով,  
Տապալիմ դեմ դիմացտ ահ կանչեմ ձայնով,  
Դու՛ն ուսի ուսար թուլ ամպ լինելով:  
Է վիզտ շող կուտա, երեստ է փայլուն  
Ով ըզբեզ տեսանէ սըրտիկն է յարիւն,  
Հիվանդ է փափաք եմ ի քո կարատուն,  
Արեկ զիս ի տես, իմ հեթիմըն դուն:  
Թե չի գաս ի տես, մեղք է քո հոգուն,

Կը մեռնիմ հալալէ ի քո կարօտուն,  
Դու ինձ դեղիկ արայ Աստուծոյ սիրուն,  
Իմ սըրտին ումեկըն է արեւըն դուն:  
(Իմ սրտի հույսն ու արեւը դու):  
Այդ գեղեցկութիւնդ կու անցանի  
Անճա պիտի լաս ողորմու լալի  
Գիտես քե ինչ խըղճեր արի դու ինձի  
Պագիկ մի պարտ էիր այլի գտնվի:  
Որ երբամ գանգալիմ իմ գանգատըն դուն  
Էր հանց կու պահես ըզմարդն երերուն:  
Ծաղրոյ է խայտառակ կառնես թըշնամոյն  
Քանց քազ հազար կայ ճավրով ճիկեր դուն!:

Հայտատ թուրքերեճով մեզ են հասել բազմաթիվ աշխատանքային, հեթանոսական և քրիստոնեական տոներին, տնօրինական վայրերին նվիրված երգեր (ծաղկազարդի), բարեկենդախի, վարդավառի, համբարձման տոների ժամանակ շուրջպարերի հետ կատարվող երգեր): Այս երգերի մի մասի վառ քատերայնությունը թույլ է տալիս վերարտադրելու որոշ ծիսակատարություններ ամենայն մանրամասնությամբ: Այս առումով անչափ գունեղ են հարսանեկան երգերը, որոնք բազմաթիվ մասերից են բաղկացած: Բացի քատերական երանգներից՝ դարերի փորձն ու փիլիսոփայությունն են պարունակում ընտանեկան կյանքին վերաբերող երգերը: Դրանք մեղմ ու քնքուշ օրորոցայիններ են, տանտաններ:

Հատկապես գունեղ են երգիծական երանգներ ունեցող որոշ երգեր, ուր գործող իմանական անձիք հարսերն ու սկեսուրներն են:

Աշուղներն անբաժան ուղեկիցներն են եղել պատերազմների, ապստամբությունների<sup>2</sup>: Նրանք երբեմն ամենայն մանրամասնությամբ նկարագրել են պատմական դեպքերը, դեմքերը: Այս երգերն իրենցից ներկայացնում են սպառնական, խորխտ ոճով գրված քայլերգեր:

Շատ հաճախ, արշավանքների, մարտերի, ընդհարումների մասին պատմող երգերը թուրքերեն են հնչել մույնիսկ հայախոս գավառներում, որպեսզի թուրքերը ևս լսեն, հասկանան: Բազմաթիվ մման երգեր գրված են ընդդիմախոսությունների

1 Անդ. ձեռ. 2394, թերթ 182ա-184ա, տաղն անտիպ է, բարգմանությունը մերն է:

2 Աշուղների ստեղծագործություններին տարբեր գավառներում տարբեր անվանումներ են տրվել: Օրինակ, Ջեյրուհում «ավաչներ» են անվանվել աշուղների մարտական, նաև հովվերգական երգերը:

հիման վրա, ուր հետաքրքրությամբ երևան են գալիս պայքարող կողմերի նկատարները: Թուրքերն այս երգերում տարբեր իրադրություններում տարբեր բնավորության գծերով են հանդես գալիս. վախկոտի դիմաց՝ գռռոզ, պոռոտախոս ու ամբարտավան, իսկ քաջի հետ հանդիպելիս՝ քծնող ու վախկոտ:

Արագորեն են հյուսվել քաղաքական, երգիծական երգերը, որոնք արագ էլ մոռացության են մատնվել, քանզի նվիրված են եղել որոշակի դեպքերի, առանձին պատմական դեմքերի, իրադարձությունների: Այս երգերը հիմնականում որոշակի ուղղության, կառուցվածքային կանոնների չեն ենթարկվել: Ուղեկցվելով թամպուրայի նվագակցությամբ, կատարվել են խնջույքների, ճամփորդությունների, ուսուսագնացությունների ժամանակ:

Ժողովրդական բանասիրության ամենահինքնարուխ արտահայտությունները երգերն են, որ կատարվել են տարբեր, մաս՝ տխուր ու դժբախտ առիթներով: Մեզ հասած հայատառ թուրքերեն պանդիստության երգերը կարոտի երգեր են՝ լեցուն ավելի շատ հոռեւեսությամբ, քան թե բարի վերադարձի ու լավ վաստակի հույսով: Այս երգերը վերաբերում են ոչ միայն պանդուխտին, այլև նրան սպասող մորը, հորը, հարազատներին, հարսնացուին: Մորմոքով լեցուն այս երգերի մի մասը բնականաբար վերածում է անեծքի՝ ուղղված իրենց դժբախտության պատճառը հանդիսացողին:

Կեօզիւնիւն ըջըղը սեօյիւնսիւն  
Ճիւլերիճէ աթէշ տիւշսիւն  
Օճաղըն պատսըն  
Էվիւն պաշըննա երխըսըն:

Աչքիդ լույսը մարի  
Հոգիդ(փորդ) կրակ ընկնի  
Օջախդ կործանվի  
Տունդ գլխիդ փվիլ:

Ժողովրդի դառնությունների, դժբախտ ու տխուր օրերի երգերից են եղերերգերը, ողբերը, որոնք հիմնականում կատարվել են հանպատրաստից և ունեցել են իրենց որոշակի, ընդունված բովանդակային և կառուցվածքային ձևերը<sup>1</sup>:

Ժողովրդական բանասիրության մյուս ժանրերին վերաբերող ստեղծագործությունները արդյունք են մաս ժողովրդի մեջ ընդունված՝ ձմեռվա երկար երեկոներից հավաքվելու, պատմություններ պատմելու, զբաղվելու, զվարճանալու սովորության: Մեծ թիվ են կազմում առածները, առակները, ասացվածքները<sup>2</sup>, հե-

1 Մատենադարան, ձեռ. 3300:

2 Անդ, ձեռ. 5941, 1400, 2163, 8048, մաս 3.Թօփճեան, Յուզակ հայերեն ձեռագրաց Արմաշի վանքին, ձեռ. 158, ք.2ա-163ա, «Աղվեսագիրք» (163 առակներ): Մատենադարան, ձեռ. 157:

քիաթները<sup>1</sup>, վիճակախաղերը<sup>2</sup>, քվաբանական խոսելուկները, տաղ-հանելուկները և առած-հանելուկները<sup>3</sup>, ոտանավորները<sup>4</sup>, գուշակությունները<sup>5</sup>, Արևելքում տառածված, երգերով ընդմիջվող սիրային հայտնի պատմությունները<sup>6</sup>: Այս ստեղծագործություններում գերակշռում են չափածո ձևերը:

Ժողովրդի կենցաղի, սովորությունների մի այլ կողմի՝ սնոտիապաշտության արտահայտություններն են երագահանները, հմայագրերը: Ընդունված են եղել հմայագրերի արաբատառ տեքստերը: Ուստի պատահական չէ, որ հայերեն, հայատառ թուրքերեն հմայագրերին անպայման կից են նրանց արաբերեն և պարսկերեն տեքստերը<sup>7</sup>:

Տրամաբանական պիտի համարել այն երևույթը, որ լոկ հայկական կամ ինքնուրույն ստեղծագործություններ կատարելով՝ բանասացները, աշուղները այդքան մեծ հարգանք, սեր ու ժողովրդականություն դժվար քե կարողանային վայելել Օսմանյան կայսրության մեծն բազմազգ մի երկրում: Նրանք մեծ դեր են խաղացել նաև պետության մյուս ժողովուրդների բանահյուսության տարածման գործում: Այդ են վկայում տարբեր ժանրերի ստեղծագործություններին կից (ոմանց) պարսկերեն, հայատառ պարսկերեն, թաթարերեն, հունարեն, եբրայերեն, լատիներեն, հունգարերեն (մանառներեն), հայատառ քրդերեն, օսմաներեն, հայատառ արաբերեն, մոլդավերեն զուգահեռ տարընթերցումները:

Հայատառ թուրքերենով մեզ են հասել ոչ միայն այլազգի և այլալեզու աշուղների ստեղծագործություններ, այլև նրանց ժողովուրդների բանահյուսության մի շարք նմուշներ: Արևելքում տարածված սիրավեպերի առկայությունը հայատառ թուրքերեն ձեռագրերում ապացույց է այն բանի, որ դրանք մեծ սիրով պատմվել, երգվել են նաև հայկական շրջանակներում, գրի են առնվել հայատառ թուրքերենով: Շահ Իսմայիլի, Ասլի և Քյարամի, Աշուղ Ղարիբի, Քյոռ Օղլու, Խան Չոբանի, Թահիր Միրզայի պատմություններն առատորեն ընդմիջված են բազմաթիվ երգերով<sup>8</sup>:

Հոգևոր, կրոնաբարոյախոսական բնույթի ամենավաղ հայատառ թուրքերեն նմուշները ԺՁ-ԺԷ դարերի պատկանող օրհնություններ և աղոթքներ են: Հատկապես թուրքաշատ վայրերում հայերն ազատ չէին կարող օգտագործել իրենց

1 Անդ, ձեռ. 10264:

2 Անդ, ձեռ. 1786, 3442, 5373, 5616:

3 Անդ, ձեռ. 1675, 3830, 3998, 9117, 9404, 10097:

4 Անդ, ձեռ. 10262, 5941:

5 Անդ, ձեռ. 9074, 6657:

6 Անդ, ձեռ. 9906, 10284:

7 Անդ, ձեռ. 2842, 7318, 9003:1856,

8 Անդ, ձեռ. 517, 2861, 3476, 5043, 10295, 1104:

մայրենի լեզուն. մահվան, լեզուն կտրելու, ամորձատելու սպառնալիքով արգելվում էր խոսել հայերեն: Նույնիսկ քարոզը եկեղեցում կատարվում էր թուրքերեն՝ թուրքախոս հայերին հասկանալի լինելու համար: Բացի առօրյա եկեղեցական ծխակատարություններին վերաբերող ձեռագրերի<sup>1</sup> հայատառ թուրքերենով պահպանվել են կրոնաբարոյախոսական պատմություններ<sup>1</sup>, հոգևոր տաղեր<sup>2</sup>, եկեղեցիների պատմությանը վերաբերող ձեռագրեր<sup>3</sup>, վարք սրբոց<sup>4</sup>, խրատներ<sup>5</sup>, հայսմավուրք<sup>6</sup>, ախտարք<sup>7</sup>, ճաշոց<sup>8</sup>, եկեղեցական գրագրության օրինակներ<sup>9</sup>, ծննդյան և մահվան ցուցակներ, ամուսնական դաշնագրերի պատճեններ<sup>10</sup>, անդորրագիրք և կահագիրք<sup>11</sup>, ճառեր<sup>12</sup>, կրոնական տաղեր<sup>13</sup> և այլն:

Երկլեզվյան՝ հայերեն և հայատառ թուրքերեն տեքստերը հիմնականում քարգմանություններ են՝ կատարված լատիներենից, իտալերենից, արաբերենից: Հետաքրքրություն են ներկայացնում բժշկարանները, դեղարանները. օրինակ՝ իտալերենից թարգմանված եռամաս մի բժշկարան, որը ԺԸ դարի ձեռագիր է<sup>14</sup>, կազմված է քնախոսության, ախտահանության, ախտորոշման բաժիններից: Բժշկարաններն ունեն առողջապահությանը, մարդակազմությանը, բույսերի, մետաղների, քարերի, կենդանական ծագման դեղերի բուժիչ հատկություններին նվիրված մասեր, հիվանդությունների և դեղերի բազմալեզու բժշկական բառարաններ:

Գիտություններին վերաբերող ձեռագրերը, ի տարբերություն նմանատիպ հայերեն ձեռագրերի, անհամեմատ աղքատ են ոչ միայն քանակով (մոտ 50), այլև ընդգրկման շրջանակներով<sup>15</sup>: ԺԷ դարից սկսած հանդիպում են քիմիային<sup>16</sup>, քվա-

1 Հէշիշեան, Յուցակ հայերեն ձեռագրաց Ձմմառի վանքի մատենադարանին, ձեռ.176 (ԺԸդ.).Ղուկաս Փիլեյուստ Յիսուսեան կարդիմալի «Քիլիսայ քի, անաէ սեղլէնիր կէլէճէք օմուրտէն օրրու»(Գիրք յորու ճառի զհանդերձեալ կենաց): Մատենադարան, ձեռ. 1670, 9643, 10061: Անդ, ձեռ. 2614, 7265:

2 Յ.Տաշեան, Յուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, ձեռ.441:

3 Մատենադարան, ձեռ.9704:

4 Մատենադարան, ձեռ. 2065:

5 Ն.Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, ձեռ. 14:

6 Մատենադարան, ձեռ. 131, 6463, 10183:

7 Անդ, ձեռ. 524:

8 Անդ, ձեռ. 6420, 9713:

9 Անդ, ձեռ. 159, 1129, 4026, 5538, 9559, 9878, 10046:

10 Անդ, ձեռ. 459, 1387:

11 Անդ, ձեռ. 9677:

12 Անդ, ձեռ. 1803, 10186:

13 Անդ, ձեռ.5946, 8781, 9955, 9972, 10435, 10458, 10590:

14 Ն.Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, ձեռ. 14:

15 Մատենադարան, ձեռ. 1911, 6620, 10097, 9697, 10186, 10658:

16 Անդ, ձեռ. 2722,9697:



քանությանը<sup>1</sup>, աստղաբաշխությանը<sup>2</sup> նվիրված ձեռագրեր: Համեմատաբար շատ են բժշկության, մարդակազմության, դեղագործության մասին աշատուրյունները, դասագրքերը: Կան նաև քանաք պատրաստելու կերպերի, տարբեր գույներ ներկելու միջոցների մասին<sup>3</sup>, նամակների և պարտամտրիակների օրինակներ<sup>4</sup>: 18-19-րդ դդ. Օսմանյան կայսրության տնտեսական, առևտրական կապերի վիճակի առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Կոստանդնուպոլսի մաքսատան սակագույցները<sup>5</sup>:

Պատմությանը վերաբերող հայատառ բուրքերեն ձեռագրերի թիվը ավելի քան 20 է՝ «Պատմություն Օսմանեան թագաւորաց»<sup>6</sup>, «Պատմություն Ալեքսանդր Մակեդոնացու»<sup>7</sup>, «Պատմություն Նադիր շահին»<sup>8</sup>, «Պատմություն Լուսինի Թագաւորին»<sup>9</sup> և այլն: Վարքագրական բնույթի երկեր են «Պատմություն Գրիգոր Լուսաւորչին»<sup>10</sup>, «Պատմութիւն Եղիայի Խարբերդացոյ»<sup>11</sup>, «Վարք եւ պատմութիւն Դաշտիկ ծաղկողի գրոց»<sup>12</sup>, «Պատմութիւն նահատակութեան Ապուրմարումայ»<sup>13</sup>: Պատմական բովանդակության ձեռագրերից են՝ «Գիրք պատմութեան ընդդեմ Փափապաշտից»<sup>14</sup>, Գրիգոր Դարամաղոս երկը<sup>15</sup>, ուղերձներ և այլն:

Հայատառ բուրքերեն ձեռագրերի թվում են «Պատմություն Փարէզու եւ Վենախի»՝<sup>16</sup> միջնադարյան ասպետական ամենահայտնի և ամենախրված ստեղծագործությունը՝ ժամանակին թարգմանված աշխարհի տարբեր լեզուներով (հայատառ բուրքերենի թարգմանիչն է Երեմիա Բյոմուրճյանը) և Երեմիա Բյոմուրճյան

1 Անդ, ձեռ. 10186:

2 Անդ, ձեռ. 6620, 10097:

3 Անդ, ձեռ. 459, 6463:

4 Անդ, ձեռ. 10243:

5 Անդ, ձեռ. 8015, 8016:

6 Անդ, ձեռ. 1675, 10721, 10736:

7 Անդ, ձեռ. 6891:

8 Անդ, ձեռ. 2722:

9 Անդ, ձեռ. 10247:

10 Անդ, ձեռ. 8012, 8988, 10591, 10778:

11 Անդ, ձեռ. 7057, 7715:

12 Անդ, ձեռ. 7044:

13 Անդ, ձեռ. 2622:

14 Անդ, ձեռ. 1911:

15 Անդ, ձեռ.9704, էջ 1ա-5ա, «Պատմութիւն յաղագս առնելոյն տաճկաց գՄուրք Նիկողայոս եկեղեցին ի ձեռացս հայոց եւ տալոյն զկնի միոյ տարոյ յՄուրք Հրեշտակապետ եկեղեցին վոյսանակ նորին» և «Պատմութիւն յայլմ վասն նոյն տուրք եկեղեցոյն, Գրիգոր վարդապետ կոչեցեալն Պարօճաւեր, որ երբեմն էր պատրիարզ սրբոյ Երուսաղեմի յամի տեսոմ 1631: Նա զամենայն անցան իր և գոր ինչ ետես վասն Պալատու Մուրք Հրեշտակապետ եկեղեցոյն գրեաց յայպէս (հեղինակ՝ Գրիգոր Դարամաղոսի), էջ 5բ-10բ»:

16 Անդ, ձեռ.9700:

նի «Պատմութիւն Տիմօի»<sup>1</sup> իրիկական պոեմի հայատառ թուրքերեն տարբերակը: Հետաքրքրական է մ.թ.ա. է դարուն ասորա-բաբելական միջավայրում ստեղծված հազվագյուտ, հմայիչ գրական մի հուշարձանի՝ «Խիկարի գրույց»-ի հայատառ թուրքերեն տարբերակի առկայությունը: Այն ստեղծվել է թրքախոս հայերի միջավայրում՝ բարգմանվելով գրույցի հայերեն տարբերակից<sup>2</sup>: Այսպիսով «Խիկարի գրույցը» երևան է եկել նաև թուրքալեզու գրականության մեջ:

Հայատառ թուրքերեն ձեռագրերում հանդիպում ենք հայերեն գրված մասերի: Դրանք երբեմն հայատառ թուրքերեն բնագրի բարգմանություններն են, երբեմն՝ ուղղակի հայատառ թուրքերենն ընդմիջվում է հայերենով, իսկ հաճախ նաև՝ հայերեն հատվածներն արտահայտում են նախորդ՝ հայատառ թուրքերեն հատվածների համառոտ բովանդակությունը: Եթե ձեռագիրը երկլեզվյա է, հաճախ մեկ թերթի վրա տրվում են միանգամից երկու զուգահեռները, ինչպես հանդիպում ենք ավետարաններում<sup>3</sup>, քարոզներում<sup>4</sup>:

Վերը նշված համարյա բոլոր ձեռագրերը հետագայում բազմաթիվ տպագրություններ են ունեցել, թեև քիչ չեն նաև այն ձեռագրերը, որոնք պատմական, գիտական և գեղարվեստական արժեք են ներկայացնում, մնացել են անտիպ և կարոտ են հետազոտման: Այս առումով պատմական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Թովմա (Թումա) վարդապետի մահվան առթիվ գրված հայատառ թուրքերեն «Վասն Թումայի վարդապետի, Կոստանդնուպոլսի պատրիարքի, որ էտուն սպանանել»<sup>5</sup> տաղը, նվիրված 1657թ. արձակալների<sup>6</sup> միջոցով սպանված Կ.Պոլսի պատրիարք Թումա Հակեպցուն: Տաղն անանում է, գրված առաջին դեմքով՝ Թումայի անունից և նման բնույթի հայատառ թուրքերեն մեզ հայտնի միակ գործն է: Հայ միջնադարյան պանդխտության երգերին հատուկ ձևով է նկարագրվում մահ-

1 Անդ, ձեռ.1456:

2 Պատմութիւն եւ խրատք Խիկարայ Իմաստնոյ, գիրք Ա(գիտական հրատարակությունը Ա.Մարտիրոսյանի), Երևան, 1969, էջ 303-325 «Այն Խիկարն տյալտիկի նասիւար» (գտնվում է Չմմատի վանքում, ձեռ. 413):

3 Մատենադարան, ձեռ.362, 1645, 2002, 2267, 5043, 7868, 10418, 10999:

4 Անդ, ձեռ. 517, 2191, 3830, 5030, 7004, 7044:8084, 10419, 10660:

5 Անդ, ձեռ.7717, էջ 128բ-129բ, ձեռագիրն անտիպ է, քարոզանությունը մերն է:

6 Զեանի որ Կ.Պոլսի Պատրիարքարանն իրենից ներկայացնում էր ոչ միայն հոգևոր, այլև արևմտահայության համար նաև քաղաքական իշխանություն և տնօրինում էր նյութական տիրամալու համար: Պատահական չէ, որ երբեմն աշխարհական մեծահարուստ ամիրաները պատրիարք չէին ընտրում և իրենք էին համարվում արժուակալ, օգտվում էին պատրիարքին տրվող բոլոր իրավունքներից: Սուբանական կառավարությունը շահագրգռված էր լինում այս փոփոխություններում, քանզի յուրաքանչյուր նման դեպքում կառավարությունը որոշակի գումար էր գանձում: Կոստանդնուպոլսի պատրիարք Թումա վարդապետի սպանության պատճառներից ակնարկվում է նրա լատինաեր լինելու հանգամանքը:

վան սնարում, շուրջը ոչ մի բարեկամ չտեսնող Թումայի կարոտը, վիշտը, մորմըն ու ողբերգական վիճակը: Ահա այդ տաղը՝

«Վասն Թումայի վարդապետի, Կոստանդնուպոլսի պատրիարքի, որ ետուն սպանանել»

Թումայ էյ տեր, սուչում մե տիր կիւնահըմ  
պիլիմնէգ,

(Թուման ասում է. հանցանքս ի՞նչ է տեր,  
մեղքս ի՞նչ է, չի իմացվի)

Աքար պէնին չէչիմ եաչի սիլիմնէգ,

(Կհոսի իմ արտասուքը և չի սքբվի)

Պու տիեարտէ էիլի իման պուլունմագ

(Հավատացյալ չի գտնվի այս երկրում)

Եատ էլլէրտէ կալտըղըմի աղլիբիմ:

(Ողբում եմ, որ օտարության մեջ եմ մնա-  
ցել):

Քահպէ ֆէլէք պիզե վերմնէտի էման

(Անառակ ճակատագիրը մեզ աման՝  
փրկություն չտվեց)

Հէբայ կելտի պաշլըմըգայ պէկունէն,

(Անսպասելի փորձանք եկավ մեր գլխին)

Պաղլանըպ զընտանէ կիլիտիկիմ զէման

(Երբ կապտած զնդան նետեցին)

Քարանլըքտայ կալտըճաղըմ աղլէրէմ:

(Ողբում եմ, որ խավարի մեջ մնացի):

Դարիպ կեօնկլում, տուչմետի պիր էլայե,

(Պանդուխտ հոգիս ոչ մի դադար չունեցավ)

Նէ կեհատէն տըքտըլար պէնի կուպայէ.

(Այն ժամանակվանից, երբ ինձ շրջայեցին)

Եալըզըգա կալտըղըմ աղլարըմ:

(Ողբում եմ մենակ մնալս)

Պիր իքի մընաֆըք կիրտի քանըմայ,

(Մի երկու ոտիս մահու տվեցին)

Եարանլէրիմ պուլունմատի եանըմայ,

(Փրկողներ ինձ չնոտեցան)

Քեաֆիր զիմնէլը<sup>2</sup> կիրտիլը քանըմէ,

(Անհավատ զիմները արյունս թափեցին)

Հէտրէփիլ օլտիճէիմ աղլարըմ,

(Ողբում եմ կարոտով մահանալուս համար

Պէնիմ ահըմ էտէնլէրէ քալմասըմ,

(Թող ճրանց այդ չներվի)

Տունեսարմտէ էիրէփիեսէ կիլմէսըմ,

(Ոչ այս ոչ այն աշխարհում չուրախանան)

Տէվրի բընայմթտէ իման պուլմասըմ,

(Ահեղ դատաստանի ժամին ներում չգտնեն)

Մուրտըմայ էրմնտիմ աղլարըմ:

(Ողբում եմ, որ նպատակիս չհասա):

Աղլատը կէօզլըրիմ քան եաշ աղլատը,

(Աշքերս արտասվում են, արյուն արցունք  
թափում)

Աճի սօզլըր ճիկըրճիմ տաղլատը

(Դառը խոսքերն այրեցին հոգիս)

Չալըմ ճէլատ քօլլարըմը պաղլատը

(Անխիղճ դահիճը թևերս կապկպեց)

Եատ էլըթտէ օլտուկունըլ աղլարըմ:

(ողբում եմ պանդխտության մեջ գտնվելս):

Պաք պու պաշլըմըգայ կլէն պու իշլեր,

(Տես մեր գլխին եկածները)

քեաֆիր կէօթսէ պէնի կունահըմըզ պաղըշ-  
լըր,

(անհավատն անգամ ինձ տեսնելով մեղքե-  
րիս թողություն կտա)

1 Աման, էման – ներում՝ մուսուլմանների կողմից հաղթված քրիստոնյաներին:

2 Ջիմնի – միջնադարում այսպես էին անվանում Օսմանյան կայսրության ոչ մահմեդական հայապատկերներին:



խայրի տօնճնտի կեօրտուկունրդ տուշլէր  
(տեսաճ երագնէրս բարի աւարտ շունե-  
ցան)


եստ էլլէրտ օլտուկունրդ աղարբն:  
(ողրուն էն պանղխտության մնջ գտնվէլս)  
Սէլամ էլլէն վախտիմէ, կարտաշըմէ  
(Բարև տարևք իմ մորն ու եղբորը)  
բիբլի բիբլի հալլար կէլտի պաշըմէ,  
(տեսակ հեսակ փորճանքներ եկան գլխիս)  
գնիլրլէն աղը կարտըլար աշըմայ  
(կերակուրիս մնջ դառը բուն խառնեցին)  
եստ էլլերտ օլտուկունրդ աղարբն:  
(ողրուն էն պանղխտության մնջ գտնվէլս):  
Եարանլարըմ հիտամ սիգի սարլասըն,  
(Բարեկամներ, ասուվաճ ճնգ պահսպան),

հեպար էլլէն բարտաշարըմ աղլասըն  
(հայտնեցեք եղբայրներիս, բող ողբան)  
հեմշիրէմ վախտէմ սիեսահ պաղլասըն,  
(քույրս ու մայրս սներ բող հագնէն)  
պիր բէրէճիկ կեօրմէրտիկիմ աղլարբն:  
(ողրուն էն, որ մնկ անգամ էլ շիեսա):  
Վատէմ յէթաի պու տիեսարտէն կեօշօլտըմ  
(ժամս հասավ, այս աշխարհից հեռանում  
էմ)

դերտիմիգ պիրբէն արբըք յիւգ օլար,  
(մի վիշտ ունեիք, հարյուրը դարձավ),  
եսգըք պէնիմ էմճիիմ հէշ օլար,  
(ափսոս իմ գործը ի չիք դարձավ)  
օնուն իշուն պէն տահիյան աղլարբն:  
(դրս համար ես շարունակ ողրուն էմ):

Հայատառ բուրբերէն ճեռագրերի հետագոտոբյունը, հրատարակություննե-  
րը, բնագրերի բննական ուսումնասիրությունները հետաքրքիր արժեքների, վերա-  
գնահատումների առիթ կտան: Չեռագրեր, որոնք սպասում են իրենց մշակներից:

Նմուշներ Հայատառ բուրբերէն չափաճ գրականությունից: Արեւլյան Աղբյուրա-  
գիտություն, հ.1, էր., 1988, ՀՄՄՀ Գ-Ա Արեւկազիտության ինստիտուտ, էջ 83-98:





## ԱԿՆԱՐԿ ՀԱՅԱՏԱՌ-ԹՈՒՐՔԵՐԵՆ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Հայաստան թուրքերեն գրականությունն անցել է 600 ամյա մի ճանապարհ: Իր տեսակի մեջ ինքնուրույն այս գրականությունն ունեցել է զարգացման ձեռագրական և տպագիր հարուստ շրջաններ: Չեռագրական շրջանի ակունքներում հայաստան ղայչաղերեն (թաթարերեն) գրականությունն է, որը չի արժանացել գիտական շրջանակների բավարար ուշադրությանը: Այն հիմնականում կրոնական, դավանաբանական, մաս կենցաղային բնույթ է ունեցել:

Հայաստան թուրքերեն ձեռագիր գրականությունը ստեղծվել է հիմնականում Արևմտյան Հայաստանի հոգևոր, գիտական կենտրոններում՝ զուգահեռ հայագիր մատյաններին:

Օսմանյան տիրակալության մեջ ապրող բազմազգ ու բազմալեզու ժողովուրդներին ուժացնելու նպատակալացության արդյունքում, երբ մահվան սպառնալիքով կայսրության որոշ թրքաշատ գավառներում արգելված էր հայերենը, երբ լեզուն կորցնելու վտանգին հաջորդաբար սպասվում էր ազգափոխության, բռնի իսլամացման դաժան քաղաքականությունը՝ այիտի ակնկալվել կործանարար իրականությունից փրկության շեղբեր որոնելու մտածումները:

Դարեր առաջ քրիստոնյա առաքյալները ոչ քրիստոնյա ժողովուրդների շրջանում քրիստոնեությունը տարածելու նվիրական գործունեություն են ձեռնարկել: Սա տաժանակիր աշխատանք է եղել, որն իր դժվարությունների, տառապանքների կողքին մաս նահատակություններ է ունեցել:

Փրկությունն այս դեպքում մեկն էր՝ կառչած մնալ մեր հավատքին, մոռացնել չտալ անցյալն ու լեզուն: Եվ դա՝ հայերով քնակեցված Արևմտյան Հայաստանի Արևելյան գավառներում, մանկահավաքների, ամենատարբեր տուրքերի ու բռնությունների ենթարկված, առերես կրոնափոխ եղած համայնքների ծանր իրականության մեջ: Բռնի թրքախոս դարձած հայահոծ գավառներում եկեղեցական արարողությունների ժամանակ նույնիսկ քարոզը թուրքերեն էր հնչում: Նույնպիսի վիճակում էին հայտնվել մաս մշակութային հարուստ անցյալ ունեցող այլ ժողովուրդներ<sup>1</sup>: Մտածողականացած քրիստոնյաները երբեմն երկու անուն են ունեցել՝ թուրքական և իրենց իսկականը: Տանն, ընտանիքներում իրենց լեզվով էին խոսում, իսկ դրսում՝ միայն թուրքերեն: Ակամա թրքախոս դարձած, սակայն հայերեն տա-

<sup>1</sup> «Զարամանիդիկա» կոչվող հունատառ թուրքերեն գրականությունը Օսմանյան կայսրության տիրապետության տակ ապրող հույն ժողովրդի համար նույն՝ հայաստան թուրքերեն գրականության ստեղծման ու զարգացման զուգահեռ տարբերակներից է:

ները եկեղեցիներում Աստվածաշունչ կարդալու համար սովորած հայերին հարկ էր կապել մայր ժողովրդին: Հարկ էր մասնակից դարձնել նրանց ազգային հոգևոր, մշակութային կյանքին, լսելի դարձնելով միաժամանակ նաև նրանց վիճակը, կյանքի ամենատարբեր կողմերով հանդերձ, փորձելով հոգեպես նեցուկ հանդիսանալ և դիմագրավել ուղեկից փորձությունները, հավատ ներշնչել կյանքի, ապագայի նկատմամբ: Այսպիսով թերևս մեղմացվեք նրանց լքված ու ակամա մեղանչած լինելու զգացումը, նաև՝ ընծայելով ապաշխարելու հնարավորություն: Այս ամենը նախատակին կծառայեր ու իր հասցեստեղծերին կհասներ միայն այն դեպքում, եթե այն ներկայացվեք նրանց հասկանալի լեզվով՝ բուրբերենով: Այսպիսին էր հայատառ բուրբերենի հիմնական առաքելությունը՝ ապրել հայ ժողովրդի հետ, ուղեկցել նրան իր ամենօրյա կյանքի ամենատարբեր պարագաներում, ուրախ թե տխուր, խաղաղ թե պայքարի, իր տանը թե պանդխտության մեջ:

Այս է եղել հայատառ բուրբերեն գրականության առաջացման նախապայմանները իր վեցհարյուրամյա ճանապարհի շեմին:

Առաջին ճյուղերը հայատառ բուրբերեն գրականության՝ 14-15րդ դարերին են պատկանում: Նրանք ստեղծվել են հայագիր մատյանների կողմին, երբեմն նույն հեղինակների, նույն գրիչների կողմից, նույն վայրերում:

Ձեռագիր հայատառ բուրբերեն գրականությունը ցրված է աշխարհով մեկ: Դրանք և՛ առանձին մատյաններ են, և՛ միատեղ հայերեն ժողովածուներ: Հայ ձեռագրական մշակույթի մի ուրույն ճյուղավորում հանդիսանալով, այն ներառում է հսկայական մի հատված ժողովրդական բանահյուսության, աշուղական գրականության (հայ, նաև՝ օտար աշուղների, բանասացների), ազգագրական բազմազան ու բազմաժանր գրականություն, ինչպես նաև գիտության տարբեր ճյուղերին վերաբերող ձեռագրեր, գեղարվեստական, պատմական գործեր:

Կրոնական ձեռագրերի թվում են՝ Աստվածաշունչ, Ավետարաններ, կրոնադավանաբանական, բարոյախոսական գործեր, քարոզներ, վարքագրական երկեր ու մարտիրոսությունների պատմություններ, մեկնողական ժառանգության հայատառ բուրբերեն ճյուղեր:

Հայատառ բուրբերենով մեզ հանդիպած առաջին հոգևոր, կրոնաբարոյախոսական ձեռագրերը օրինություններ և աղոթքներ են: Կան եկեղեցական ժխակատարությունների վերաբերող ձեռագրեր, հոգևոր տաղեր, կրոնաբարոյախոսական պատմություններ, եկեղեցիների պատմությանը վերաբերող նյութեր, վարք սրբոց, խրատներ, քարոզներ, հայսմավուրք, ախտարք, ճաշոց, եկեղեցական գրագրության օրինակներ, ամուսնական դաշնագրերի պատճեններ, ծննդյան մատյաններ, անորոքագիրք և կահագիրք, ճառեր, կրոնական տաղեր և այլն:

Ուշ շրջանի հայատառ թուրքերեն ձեռագրերի թվում են Նարեկի 538 էջ կազմող թարգմանությունը, վարքագրական երկեր, ինչպես նաև արևմտահայ իրականությունում նոր սկզբնավորվող ուղղության՝ հակակաթոլիկական, հակամիսիոներական պայքարին նպաստող գործեր:

Պատմական մեծ հետաքրքրություն են ներկայացնում քրիստոնեական եկեղեցիներն ավերելու, քալանելու, մզկիթների վերածելու կամ մի ժողովրդից եկեղեցիներն ու վանքերը վերցնելով մյուսին հանձնելու մասին պատմող ձեռագրերը:

Երեմիա Չելեպին հեղինակ է մի քանի հայատառ թուրքերեն դավանաբանական ձեռագրերի:

Համառոտագույնս նկարագրելով հայատառ թուրքերեն կրոնական բովանդակության ձեռագրերը, նշենք, որ դրանց մի մասը երկլեզվյա են: Հանդիպում են հայերեն մասեր, որոնք հիմնականում հայատառ թուրքերեն բնագրի թարգմանություններն են: Երբեմն հայատառ թուրքերեն տեքստն ուղղակի ընդմիջվում է հայերենով: Հաճախ հայերեն հատվածներն արտահայտում են նախորդ՝ հայատառ թուրքերեն մասերի համառոտ բովանդակությունը: Եթե ձեռագիրը երկլեզվյա է, ապա մեկ թերթի վրա տրվում են միանգամից երկու զուգահեռները: Այսպիսի երևույթի հանդիպում ենք Ավետարաններում, քարոզներում: Քարոզը քերտում կան բազմաթիվ օրինակներ հայ, նաև՝ թարգմանական մեկնողական գրականության անհաշիվ հատվածներ, որոնք ներկայացվել են հայատառ թուրքերենով, երբեմն առանց մատնանշելու դրանց աղբյուրը:

Հայատառ թուրքերեն ձեռագրական շրջանի կրոնական, դավանաբանական գրականությանը հիմնականում միատարր է եղել: Այն ստեղծվել է հայ առաքելական եկեղեցու գործիչների կողմից:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռ. 563 Ժողովածուն ներառում է՝ Մեկնություն «Հայր Մեր»ի, Գրիգոր Տաթևացու քարոզները, «Յաղագս գլխավոր մեղաց», «Գիրք եօրն պարզեացն Աստուծոյ», (1691թ.):

Ձեռ. 1129-ը՝ Գրիգոր Տաթևացու «Մեկնություն Եսայեաց»-ն է, (ԺԷդ.):

Ձեռ. 1400, Մատթեոս Ջողայեցի, Մատենագրությունը. «Մեկնութիւն Գործոց Առաքելոց», (ԺԸդ.):

Ձեռ. 1680, Պետրոս Հաճնցի վրդ., «Պարզաբանութիւն մեղաց եւ ապաշխարանաց», (1776թ.):

Ձեռ. 5084, «Վիճակ Գանիւլի մարգարէյին, Գուռն իմաստութեան», (1799թ.):

Ձեռ. 5149-ում Գրիգոր Վանեցու «Մաղկաբաղ ի քարոզգրոց Գրիգորի Տաթևացոյ»-ն է (1804թ.):

Ձեռ. 5717, Եսայի Նչեցի, «Մեկնութիւն Եզեկիւլիլի. Պօղոսի Անդրանուպոլսեց-



այ բարոգ. Մեկնաբանական շնորհի և ողորմութիւն Ամենասուրբ երրորդութեան» (ԺԸդ.):

Ձեռ. 5796, «Յաղագս վարուց և չարչարանաց Քրիստոսի» (հ և հք, 1770թ.):

Ձեռ. 6703, «Մեկնութիւն բրիստոնէական վարդապետութեան», (1816թ.):

Ձեռ. 6577, «Երգոցն երգոյն Մեկնութենէն Գր.Նարեկացոյ» (1786ից առաջ):

Ձեռ. 8277 և 9117, Պետրոս Բերդումեան, «Աղբիւր բացեալ, Աւետարանի առակների մեկնութիւնը» և «Երգարան կոչեցեալ Յիսուս Փեսայ», (ԺԸդ., 1802թ.):

Ձեռ. 10736, Վ.Բուդա-օղլու Մխիթար, «Մտածութիւնք յաղագս աղօթից» «Ընթերցումաւ ի Դանիելի մարգարէն», (ԺԹդ.) և այլն:

Մեկնողական բնույթի բազմաթիվ հայատառ բուրբերէն ձեռագրեր են գտնվում հայերէն ժողովածուներում, որոնք սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Բոլորովին այլ է, երբ խոսում ենք տպագիր շրջանի մասին:

Տպագիր շրջանի մեզ հետաքրքրող գրականությունը կարելի է ներկայացնել որպէս՝

- Հայ առաքելական եկեղեցու ու նրա կողմնակիցների ստեղծած ինքնուրույն և քարգմանական գրականություն:
- Կաթոլիկ եկեղեցուն ներկայացնող գրականություն (Մխիթարյան միաբանության ինքնուրույն և քարգմանական գրականություն, հասունյանական-հռոմեական, պատական ազդեցության գրականություն)
- Ավետարանական-միսիոներական գրականություն՝ հայ և օտար հեղինակների ինքնուրույն, քարգմանական գրականություն:

Ստեղծվելով հիմնականում իրարամերժ ուժերի կողմից, այս գրականությունը ներկայացրել է նրանց ստեղծողների նպատակները, հետաքրքրությունները, եղել վերջիններիս խոսնակը արևմտահայ իրականությունում: Դրանք երբեմն սուր պայքարի են եղել միմյանց դեմ, երբեմն էլ լայնախոհ գտնվելով ոչ միայն չեն մերժել միմյանց, այլև փորձել են հաշտության և համաձայնության կամուրջների վերահաստատումն ժողովրդի շահերի, նրա պահպանման ու զարթոնքի:

Տպագրական շրջանի առաջին հարյուրամյակը հիմնականում կրոնական, դավանաբանական հրատարակությունների շրջան է եղել: Կ.Պոլսում, Վենետիկում, Տրիեստում, Սադրասում (1790թ.), Հռոմում, Ս.Պետերբուրգում, Նախիջևանում, Պրուսայում տպագրվել, քարգմանվել են հարյուրավոր ծավալուն, մեծաթեք գրքեր, որոնք բազմաթիվ վերահրատարակություններ են ունեցել:

Արևելքի երկրներում եվրոպական և ամերիկյան միսիոներական գործունեությունը բավականին մանրակրկիտ կերպով լուսաբանված է տարբեր շրջանների,



տարբեր ազգերի հեղինակների գիտական բազմաթիվ աշխատություններում:

Ինչպես կաթոլիկ միսիոներների, այնպես էլ բողոքական եկեղեցիների քարոզչության, արտահայտության հիմնական լեզուն հանդիսացել է հայատառ թուրքերենը: Այս լեզուն հասկանալի էր ոչ միայն Ստամբուլում և մեծ քաղաքներում, ուր մի քանի տասնյակ միայն հայատառ թուրքերեն պարբերականներ են հրատարակվել ու հազարավոր գրքեր, այլև Օսմանյան կայսրության հայաբնակ, սակայն հիմնականում թրքախոս հեռավոր նահանգներում: Վերջիններիս բնակչության համար հայատառ թուրքերենը հնարավոր չփման եզակի միջոց է եղել, քանզի մահվան սպառնալիքով հայերենը կորցրածները եկեղեցում սովորում էին հայերեն տառերը՝ Աստվածաշունչ կարդալու համար:

Օտար միսիոներներին չխոչընդոտելու Օսմանական կայսրության շահագրգռվածությունը կայանում էր նրանում, որ քարոզչության արդյունքում հպատակ ժողովուրդների միջև, առավելապես նույն ժողովրդի քարոզիչների համակիրների ու նրանց դեմ պայքարողների միջև վիհ էր ստեղծվելու: Այն խորանալու ու տարածվելու էր: Ժողովուրդների միասնականությունը խախտվելու էր և նրանց միջև թշնամություն էր սերմանվելու: Ահա այս «լավագույն» վիճակն էր, որ պիտի դուրացներ հպատակ ժողովուրդներին վերահսկելու, մահմեդական կառավարության կողմից նրանց առերևույթ չզգացվող մեկ զսպաշապիկ ևս հագցնելու գործը: Իմաստունների ասած «բաժանիր, որ տիրես» արտահայտությունը լավագույնս էր ներկայացնում պատմական այս իրավիճակը: Ազդեցության գործակալների դերը լավագույնս կարող էին իրականացնել կաթոլիկ և ավետարանական եկեղեցիների տարբեր ուխտերի միսիոներները:

Ի պատիվ կաթոլիկ և բողոքական քարոզիչների, պետք է խստովանել, որ նախապես ծրագրված քարոզչության վայրերը մեկնելուց առաջ, նրանք ոչ միայն մանրամասնորեն ծանոթանում էին այդ վայրերն ուղարկված իրենց «հետախույզ-ճանապարհորդների» հաշվետվություններին, այլև սովորում էին այն ժողովուրդների լեզուն, ծանոթանում նրանց կրոնական, ազգային սովորություններին, հոգեբանությանը, որոնց շրջանում պիտի ծավալեին իրենց գործունեությունը: Այսպիսի լուրջ վերաբերմունքը հնարավոր էր դարձնում առավելագույնս արգասաբեր կազմակերպելու ապագա գործունեության դիվանագիտությունն ու բարոյափիլիսոփայական կողմը, մշակել համապատասխան հոգեբանական ազդակներ: Այսպիսի լուրջ զինանոցով գործունեության լծվածները չէին կարող ապարդյուն աշխատել ու չունենալ, ցավոք սրտի, հարուստ բերք: Եթե հավելենք մահ քարոզիչ գործիչների ստացած հիմնավոր կրթությունը եվրոպական և ամերիկյան աստվածաբանական լավագույն համալսարաններում, ապա դժվար չի լինի պատկե-

լացնել նրանց հաջողությունները Արևելքի հպատակ ժողովուրդների շրջանում: Իհարկե, տարբեր են եղել քաղաքներում և հեռավոր նահանգներում, մանավանդ բրբախտ շրջաններում թշվառ ու ստրուկի իրավիճակում գտնվողների, բազմաթիվ ու բազմաձև տուրքերի տակ կքամ տարբեր ժողովուրդների մեջ բարոզիչների գործունեության հնարավորություններն ու արդյունքները:

Եվ՛ կաթոլիկ, և՛ բողոքական քարոզիչները համարյա նույն գործունեության ճանապարհն են անցել: Այն է՝ առավելապես կրթական, քաղաքական, իսկ բողոքականների դեպքում նաև՝ տնտեսական հզոր ներգործությունը, կաշառքը, բարեգործությունը:

Այնիստ էր ոտնձգությունը հայ առաքելական եկեղեցու նկատմամբ: Ինստիտուտ, որը պատմականորեն փոխարինել էր դարեր շարունակ պետականությունը կորցրած կենտրոնական իշխանությանը, ազգի պահպանման առնականության հանդիսացել:

Հովհաննես Կոլտը, Հակոբ Նալյանը, Դուկաս Խարբերդյոցին, Գասպար դալի Սեբաստացին Հովհաննես Կոլտի հիմնադրած «Գլխատան» մյուս ուսուցիչներն ու աշակերտները ստեղծագործել են հայերեն և հայատառ բուրքերեն, կատարել մի շարք բարգձմանություններ, եղել բանաստեղծներ, լուսավորական, մշակութային գործիչներ: Հրատարակել են ավելի քան 80 անուն օտար դավանաբանական երկեր, մեկնողական պատշաճ գրականություն:

Հովհաննես Կոլտի կարծիքով կաթոլիկության և ընդհանրապես նաև աղանդների դեմ պայքարը շատ ավելի արդյունավետ կլիներ, եթե կղերականությունը, մշակութային գործիչները, հասարակությունը, մտավորականությունը ծանոթ լիներ հակադիր կողմի գաղափարախոսությանը, աստվածաբանական գրականությանը: Հովհաննես Կոլտի հիմնած բարգձմանական դպրոցի շնորհիվ հրատարակվում են Հոմերոսի, Արիստոտելի, Նյուտոնի և փիլիսոփա այլ հեղինակների ու գիտնականների գործերը՝ քարգձմանվելով հունարենից, լատիներենից, իտալերենից, ֆրանսերենից և այլ լեզուներից: Կաթոլիկության ներքափանցման դեմ պայքարելու համար ամիրաժեշտ էր պատրաստել մի սերունդ որը հավասարապես իրազեկ կլիներ հայ և օտար աստվածաբանությանը, մեկնողական, դավանաբանական գրականությանը:

Մեծ թիվ են կազմել կրոնի դասագրքերը: Այս հրատարակությունները հասարակությանը և դպրոցներում գիտական երկերի դասավանդման հետ միասին կարող էին առաքելական եկեղեցու դիրքերը պաշտպանելու գործում հաջողության գրավական հանդիսանալ:

Հովհաննես Կոլտի լուսավորական գործունեության շարունակողներն են եղել Գևորգ Մխլախյանը (1681-1758), որը 6 տարի սովորել է Փարիզի բազավորական

ճեմարանում: Մյուսը՝ Հովհաննես Կոլոտի աշակերտներից՝ Հակոբ Նալյանն է (1706-1764), իր ժամանակի մեծագույն եկեղեցական մատենագիրը, աստվածաբանը, փիլիսոփան, բանաստեղծը, որը երկու անգամ՝ 1741-1749թթ. և 1752-1764թթ., մինչև իր մահը եղել է Կ.Պոլսի պատրիարք: Հ.Նալյանն իր ստեղծագործություններում քարոզել է հայրենիքի սեր, ազնվություն, խոհեմություն հավատքի նկատմամբ, մտավոր ու բարոյական կրթություն: Նա հեղինակ է բազմաթիվ բարոյախոսական ու աստվածաբանական աշխատությունների, ողբերի, Նարեկի մեկնության, վարքագրությունների, փիլիսոփայական ասացվածքների, աղոթքների, քարոզների, տաղերի, նամականու: Նա առաջինն է օգտագործել աշխարհաբար գրական լեզուն, որը ընթերցողների մեծ շրջապատ էր ապահովելու իր մատչելիությամբ: Նրա պատվերով բազմաթիվ գրքեր են թարգմանվել ու տպագրվել :

Հայ առաքելական եկեղեցու դավանաբանական երկերի հեղինակներից են հայտնի բանաստեղծ Պաղտատար Դպիրը (1683-1768), Կ.Պոլսի պատրիարք Պողոս Աղրիանապոլսեցին (1763-1853), որոնց դավանաբանական գործերը բազմաթիվ տպագրություններ են ունեցել, ծառայել որպես դասագրքեր: Այս շրջանում հայ եկեղեցու պաշտպանության դիրքերից հրատարակված գործերի մեծ մասը ինքնուրույն երկեր են եղել:

\* \* \*

Մյսիթարյան միաբանների դպրոցներում հայագիտական առարկաներին զուգահեռ դասավանդվել է կաթոլիկ եկեղեցու և նրա գաղափարախոսների պատմությունը, գործը: Այդ նպատակով Մյսիթարյանների տպարաններում հրատարակվել են դավանաբանական գործերի մի ամբողջ շարք: Մյսիթարյանների հայատառ թուրքերեն, նաև դասագրքային ձեռնարկներ ծառայած հայերեն, հայատառ թուրքերեն կրոնական հրատարակությունների որոշակի մասը կաթոլիկ հայտնի հեղինակների, տարբեր ուխտերի հիմնադիրների ու առաջնորդների գործերի քարոզմանություններ են եղել՝ վարքագրություններ, կաթոլիկ նահատակ հայրերի պատմություններ, ամենօրյա խորհուրդներ, ցուցումներ քրիստոնյաների համար, մտածական աղոթքներ, աղոթագրքեր, հոգևոր խորհուրդների, կաթոլիկական տոների մասին գրքեր և այլն:

Առաջին համաշխարհային պատերիզմից հետո, 20-րդ դարի դարասկզբին միսիոներական տպագրական կենտրոնները հիմնականում տեղափոխվել էին Մերձավոր Արևելք հաստատված հայկական համայնքներին կից: Նրանք իրականացնում էին տառապյալ ու մագապործ հայերի նկատմամբ ամերիկյան ծրագրված քաղաքականության քարոզը: Այն է՝ համակերպվել ճակատագրի հարվածներին,



ներել թշնամուն, ապավինել բարձրյալի կամքին ու նրա դատին: Աններելի մի բարոյախտությամբ, որը մեծապես խանգարեց ոչ միայն ազգային միասնականությանը, այլև հուսալիություն, հնազանդություն, համակերպում, սեփական ուժերի ու ազգային ինքնությունը սեփական ուժերով պահպանելու անկարողության գագուստ մերարկեց: Այս հիմնական գաղափարները բարոզվում էին հայատառ թուրքերեն պարբերականների, ինքնուրույն ու թարգմանական բարոյա-խրատական բնույթի գրքույկների, բողոքականության տարբեր ուղղությունները ներկայացնող բարոզիչների գործերում:

20-րդ դարում հայատառ թուրքերեն գրականության աշխարհագրական սահմանները աննկարագրելիորեն ընդարձակվել են: Սակայն թե՛ որակական չափանիշներով, թե՛ քանակապես այդ գրականությունն աննախընթաց վայրէջք էր ապրում: Տարբեր դպրոցների մեկնողական հրատարակություններում հետաքրքիր է հետևել այն տարբեր շեշտադրումներին, որոնք պիտի ծառայեին համապատասխան հրատարակության նպատակաուղղվածությանը: Այն կարևոր է ուսումնասիրողների և քրիստոնյա հեղինակների գրական վաստակի գնահատողների համար:

Բնականաբար, այսպիսի գրականությունը չէր կարող նպատավոր հանգամանք հանդիսանալ վերապրելու կոչված մեր ժողովրդի համար: Հայատառ թուրքերեն կարդացողների, ինչպես նաև ստեղծողների մի հսկա մասը զոհ էր գնացել Մեծ եղեռնին, իսկ մի մասն էլ, շնորհիվ հայատառ թուրքերենի՝ վերագտել էին հայերենը, ուստի աստիճանաբար այս գրականությունը նվազեց, դարձավ անախրոնիզ՝ չստեղծելով և ոչ մի արժեքավոր, մնայուն գործ իր գոյության վերջին շրջանում:

Որպես գեկուցում կարդացվել է «Հայ Մեկնողական գրականության դպրոցները» միջազգային գիտաժողովում, (20 սեպտեմբեր 2004թ., ս.Էջփածին)

## **ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐԻՔԵՐԵՆ ՉՏԵՄԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ<sup>1</sup>**

Շուրջ կես միլիոն բոքախոս հայեր են ապրել Օսմանյան կայսրության արևելյան մահաճգնբերում՝ Արևմտյան Հայաստանի իրենից պատմական բնակավայրերում: Նրանց մեծ մասը ստիպված բոքախոս է դարձել: Հայ ժողովրդի ահա այս հատվածի համար, ովքեր կորցնելով սեփական լեզուն, այնուամենայնիվ պահել, պահպանել էին ազգային ինքնագիտակցությունը, ավանդույթները, դավանանքը,

<sup>1</sup> Մեր ուսումնասիրության համար հիմնական նյութ է ծառայել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հայատառ թուրքերեն ձեռագրական հավաքածուն. Տես՝ ՄՄ, ձեռ..



եքե՛ս անգամ բռնի ուժով դավանափոխ են արվել՝ ստեղծվել է հայատառ թուրքերեն գրականությունը: Այն կոչված էր զերթ պահելու արևմտահայությանը ուժացման վտանգից, նրանց հայախոս, հաղորդակից դարձնելու ազգային զարթոնքին ու մտավոր վերելքին:

Հայատառ թուրքերեն գրականությունը հայ մշակույթի անքակտելի մի մասն է, հայագիտության մի ուրույն ու անկախ բնագավառ, որը հանիրավի մոռացության է մատնված մեր ուսումնասիրողների կողմից և մնացել է սովորում: Այս գրականությունը զարգացել է հայալեզու գրականությանը զուգահեռ՝ անկախ նրա վերելքի ու վայրէջքի շրջաններից: Հայատառ թուրքերեն գրականությունն ունի շեշտված ազգային նկարագիր և չափազանց բազմաշերտ է: Հայատառ թուրքերեն գրականությունը արևմտահայ իրականության, Օսմանյան կայսրության սոցիալական, տնտեսական, քաղաքական իրավիճակի, հպատակ ժողովուրդների մշակութային, ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրության անսպառ աղբյուրներից է:

Հայերի թրքախոս հատվածի համար ստեղծված այս գրականությունն այնպիսի զարգացում է ապրել, այնպիսի ճոխ մշակութային մի ինստիտուտ դարձել, որ դուրս է եկել իր նախնական առաքելության շրջանակներից, մեծապես ծառայել է ոչ միայն արևմտահայության թրքախոս ու հայախոս հատվածներին, այլև՝ Օսմանյան կայսրության ժողովուրդների մշակույթի ու կենցաղի անհրաժեշտ մի մասը դարձել:

Հայերեն տառերը սովորելով՝ թուրքերեն իմացողները (մասնավորապես թուրք պալատական, մտավորական խավը, կայսրության բազմազգ ժողովուրդների առաջադեմ մասը) դարձել են հայատառ թուրքերենի կրողներ, ամենատարբեր բնագավառներում այն օգտագործողներ: Այս գործում անուրանալի նշանակություն է ունեցել միջին դարերում հայ գրավոր մշակույթի բնագավառում կարևոր տեղ գրաված բառարանագրությունը: Նրանով է պայմանավորվել հետագա դարերում թարգմանական գրականության բուռն զարգացումը:

Մեզ հետաքրքրող նյութի հետ առնչվող առաջին օրինակը XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի մեջ 50 մոնղոլերեն բառերի ցանկն է՝ բացատրություններով հանդերձ<sup>1</sup>: Այս ցանկ-բառարանը հանդիսանում է ոչ միայն հայ պատմագրության մեջ հայատառ մոնղոլերենի հնագույն գրառումը, այլև մոնղոլերեն լեզվի գոյություն ունեցող նմուշների մեջ հնագույնը: Այն մոնղոլական գրականության հնագույն հիշատակարան են համարել Էդ. Դյուլոբիեն, Հ. Աճառյանը: Նրա գիտական գնահատությանն անդրադարձել է Կ. Մելիք-Օհանջանյանը:

1 Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Աշխատասիրությանը Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 272-7, բառարան):

Հայատառ մոնոլոգներն, քաթարներն բառարանին XVI-XVII դարերում փոխա-  
րինելու են գալիս հայատառ դիջաղերեն (կոմաներեն) բառարանները՝ կազմված  
Հունգարիայում, Լեհաստանում: Հայատառ թուրքերեն ձեռագիր բառարանների  
մասին թուրքական գիտական «*Tarih ve Toplum*» ամսագրում մի հոդված է տպագ-  
րել պոլսահայ գիտնական Գևորգ Բամպուրճյանը<sup>1</sup>:

Հայատառ թուրքերեն ձեռագրացուցակ կազմելու մեր ուսումնասիրություն-  
ների ընթացքում բառարանների մասին մեր մյուսը համարյա կրկնապատկվել է:  
Վաղ շրջանի՝ XVI-XVII դարերի մեզ հետաքրքրող բառարանները հիմնականում  
գտնվում են Վիեննայի կայսերական մատենադարանում<sup>2</sup>, Վենետիկի և Վիեննա-  
յի Մխիթարյան միաբանության մատենադարաններում<sup>3</sup>, Լվովում: Չեռագիր բա-  
ռարաններ կան Երևանի, ինչպես նաև Արևելքի, Եվրոպական երկրների, ԱՄՆ-ի  
առանձին գրադարաններում, մասնավոր հավաքածուներում:

Մեր ժողովրդի պատմական ճակատագիրն այնպիսին է եղել, որ նա ավելի շատ  
կարիք է ունեցել սովորելու և տիրապետելու տիրող ժողովուրդների լեզուները և  
հաճախ օգտագործելու այն առօրյա խոսակցության ժամանակ: Դա առավել կամ  
նվազ չափով վերաբերում է հատկապես արաբերենին, պարսկերենին, թուրքերե-  
նին, մասամբ նաև քրդերենին բուն Հայաստանում և վրացերեն, դիջաղերեն, ռու-  
սերեն, լեհերեն, հունգարերեն, ռումիներեն և այլ լեզուներին՝ հեռու կամ մոտիկ հա-  
յաշատ գաղթավայրերում, նկատել է մեր ժամանակի հայտնի արևելագետ Հակոբ  
Փափազյանը<sup>4</sup>:

Բառարանների առաջացումը միշտ էլ նույն դրդապատճառներն է ունեցել՝

- 1 Kevork Pamukciyan. Ermeni Harfleri Türkçe Yazma Sözlükler. "Tarih ve Toplum". Ist. 1986 ocak, N25. Հայագիտության համար մեծ ավանդ ունեցող այս համեստագույն ուսումնասիրողը ժամանակ առ ժամանակ, իսկ 1980-90-ական թթ. ավելի հաճախ, թուրքական գիտական մամուլում հանդես է եկել հայագիտական հոդվածներով, որոնք այս կամ այն կերպ առնչվում էին թուրքական մրբուրթաի հետ: Մեղմ գրելահոնով, սակայն հիմնավոր կրթվածներով համարձակվել է հերքել հայերի դեմ գրված հոդվածները, զգացնել տալով դիմացիների նյութի սնանկությունը, խեղաթյուրումների ու «թուրքացնելու» կանխամտածված հակումները: Գևորգ Բամպուրճյանը մեծապես հենվելով Հակոբ Անասյանի «Հայկական մատենագիտության» վրա, հայատառ թուրքերեն բառարանները քվարկելու համար երեք մասի է բաժանում՝ հայ-թուրքերեն, թուրք-հայերեն և բազմալեզու: Նա հաշվում է ընդհանուր առմամբ 44 բառարաններ: Նկարագրությունը տես՝ Անասյան Հ.Ս. «Հայկական Մատենագիտությունը Ե-ԺԸ դդ.». Բառարանագրական ճիւղեր. հ. Բ, Եր., 1976, 1178-1242 էջ:
- 2 Չևո. 3. 1638-ից առաջ. 1-106ա. «Բառագիրք հայերենե քարաբերեն», տես՝ Յ. Տաշեան, «Յուցակ հայ ձեռագրաց Կայսերական մատենադարանին ի Վիեննա», 1891, էջ 9:
- 3 Չևո. 1131, 1613թ. «Բառգիրք» 1ա-բ, 51ա-56ա, 70բ կես էջը՝ Իր. և Չևո. 672, «Բառգիրք», ԺԷ դ. Նկարագրությունը տես՝ Յ. Տաշեան, «Յուցակ հայ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա. Վիեննա, 1895:
- 4 Հ. Փափազյան, «Մետրոպոլիտան այլալեզու գրականության մասին», Բանբեր Մատենադարանի, հ. 7, Եր., 1964, էջ 210:

նպաստել տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների միջև հաղորդակցությանը: Բնականաբար, առաջին հերթին նկատի է առնվել սեփական ժողովրդին նոր լեզու կամ նոր հնարավորություն ընձեռնելու կարևորությունը՝ նրանից հետևող բազմաթիվ մեծ ու փոքր արգասաթեր առավելություններով:

Գալով բառարաններին, ապա մեզ, բնականաբար, հետաքրքրում են այնպիսիք, ուր օանաներենն արտահայտված է ոչ թե արաբատառ, այլ հայատառ թուրքերեն:

«Յամի տեառն 1772. Յուլիսի գրեցեալ եղև յումեննէ աշխատասիրէ Գեորգ կոչեցելոյ Կոստանդնուպօլսեցոյ Պալատականէ, որ զգիրքս զայս ի հայ գիր փոխարկեաց անձնածիր արնութեամբ, յեղյեղելով զբառարանս վասն ուղիղ եւ անվրէպ առնելոյ զսա եւ վասն օգտի ընթերցասիրաց եւ լսողաց ի փառս Աստուծոյ...»,- գրված է հայտնի լեզվաբան և պատմաբան Գեորգ Տեր-Հովհաննիսյանի (1736-1811) կողմից՝ Քյաթիպ Չելեպիի (Հաճի Մուստաֆա Խալիֆե) «Թագվիմ իլ Թեվարիխ» աշխատության բարգմանության առթիվ թողած հիշատակարանում (Փարիզի Ազգային գրադարանի ձեռ. 317-ում):

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Վիեննայի Մլիսթարյան մատենադարանի 3522, 3883 ձեռագրերը: Այն է՝ «Քերականութիւն դիչաղ լեզուի»: Դրանք միաժամանակ երկայուն բառարաններ են՝ կազմված ըստ «Քերականութեան» մաս կազմող բաժինների: Օրինակ. 336ա-342ա՝ «Հողով անուսնց՝ ուղղական-դողրու» և այլն: XVIII դարի հայ-դիչաղերեն (հայ-կոմսաներեն) բառարանի 170 էջանոց մի ձեռագիր էլ գտնվում է Հունգարիայի Գեռլա քաղաքում: Հայատառ դիչաղերեն (կոմսաներեն), թաթարերեն ձեռագրերն ավելի վաղ օրինակներն են հայատառ թուրքերեն գրականության և հիմնականում ստեղծվել են XIII դարից սկսյալ Արևմտյան Ուկրաինա-Լեհաստան, Ղրիմ հաստատված հայերի կողմից: Ուկրաինայում ապրող հայերի կյանքի, սովորույթների, կրոնի մասին առաջին անգամ ուսումնասիրական ակնարկով հանդես է եկել Յան Լասիցկին XV դարում?: Այս և XVI-XVII դարերում Ուկրաինայի հայոց հասարակական հաստատությունների մասին սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ հանդես է եկել Յա. Դաշկևիչը?: Հայատառ դիչաղերեն բառարաններին անդրադարձել է Հ.Ամալյանն իր՝ XVI-

1 Raymond .H.Kévorkian: Armen Ter-Stépanian. Manuscrits arméniens de la Bibliothèque national de France. Paris 1998 p. 911-914.

2 Я.Р.Дашкевич. Ян Ласицкий и его очерк об армянах на Украине в 70-ых гг.XVI ст. Բանբեր Մատենադարանի, հ.6, Եր., 1962, էջ 471-496; Я.Р.Дашкевич. Армянские общественные печати на Украине /в XVI- XVIII вв./, Բանբեր Մատենադարանի, հ.11, Եր., 1973, էջ 471-496:

3 Я.Дашкевич. Кто они-“Армяно-кыпчаки”. Բանբեր Մատենադարանի, Երևան, 1994, 16, էջ 58-110.



XVII դարերն ընգրկող բառարանագրական հուշարձաններին նվիրված աշխատություններում: Այս առթիվ կարևոր են Վ.Գրիգորյանի և Ա.Պիստվիչի համատեղ հոդվածները<sup>1</sup>, Բ.Չուբասովյանի հետազոտությունը:

Շատ ավելի ներշնչող թիվ են կազմում հայատառ բուրբերենի օգտագործմամբ բազմալեզու բառարանները: Հայերենի (գրաբար, աշխարհաբար), հայատառ բուրբերենի հետ բառարաններում օգտագործված հիմնական լեզուներն են՝ քաբարերենը, արաբերենը, պարսկերենը, անգլերենը, ֆրանսերենը, իտալերենը, լատիներենը, հունարենը, սլավոներենը<sup>2</sup>: Այս լեզուներից շատերը ևս հայատառ են գրի առնվել:

Կան ձեռագրեր, որոնց գրելու տեղը և հեղինակը, ժամանակը հայտնի են եղել: Հայտնի է եղել նաև նրանց գտնվելու տեղը, սակայն հետագայում նրանց հետքը կորել է և մնացել են միայն մատենագիտական տվյալներ: Այդպիսի օրինակ կարող է ծառայել Արթին Հինդոլուի (1780-1840) հայերեն-գերմաներեն-հայատառ բուրբերեն բառարանը (1840թ.): Մյուսը՝ հայերեն-իտալերեն-բուրբերեն 1726 թվականից առաջ գրի առնված, Անկարայից ոչ հեռու Կարմիր վանքում պահվող 522 էջերից բաղկացած անանուն հեղինակի բառարանն է, որի ճակատագիրն այսօր անհայտ է<sup>3</sup>: Այս բառարանները, որպես կանոն, այբբենական դասավորությամբ են կազմվել<sup>4</sup>:

Այս բառարանների մեծ մասի կազմողների անունները ափսոս, որ հայտ-

1 Անասյան Հ.Ս. Հայկական Մատենագիտություն Ե-ժԸ դդ.: Բառարանագրական նյութեր. հ. Բ, Եր., 1976, էջ 1220: Հ.Մ.Անասյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները V-XV դդ. Եր., 1966: Հ.Մ.Անասյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները XVI-XVII դդ. Եր., 1971, էջ 120-126: Չուբասովյան Բարկեն. Գեորգ դպիր Պալատեցու կյանքի և գործունեության տարեգրություն. 1737-1811, Եր., Գիճոյ, 1994: Վ.Գրիգորյան և Ա.Պիստվիչ (Լեհաստան), Հայատառ լեներեն վավերագրերը, Բանբեր Մատենադարանի, հ.7, Եր., 1964, էջ 225-236:

Այս գրականությունն ուսումնասիրության հատուկ բնագավառ է և գրադեցրել է բազմաթիվ եվրոպացի գիտնականներին: Գալով նույն խնդրի շուրջ բուրբ պատմագրությանը, ապա բուրբ գիտնական Թալաթ Թեքինը հայատառ բուրբերենի մասին գրած իր մի հոդվածում հայատառ դիչադերենի առաջացումը կապում է դեռևս 13-րդ դարում Գրիմի դիչադական-բուրբական պետության տարածքում բուրբերի և *բոչվոր հայիրի միջև սերյ համագործակցությամբ ու սերյ հարաբերություններով, հայիրի մայրենի լեզվից ինքնակամ հրաժարված և ամբողջովին բուրբերենը սեփականացրած լինելու հանգամանքով* (ընդգծումը մերն է.-Հ.Ս): Տես՝ Talat Tekin. Ermeni Alfabesiyle Türkçe. "Tarih ve Toplum". Ist. 1984, N 44 s. 6-9.

2 ՄՍ ձև.3869. 118ա-47բ՝ հայերեն և հայատառ բուրբերեն խառը բացատրական բառարան և 147ա-73բ՝ հայատառ ֆրանսերեն-հայերեն և հայատառ բուրբերեն բառարան:

3 Կարմիր վանքի անհետացած որոշ ձեռագրերի հետքեր տանում են Անկարայի պետական գրադարան:

4 ա. ՄՍ ձև.5373. 99ա-միայն Գ և Գ տառերով սկսվող բառերի բառարան հայերեն-հայատառ բուրբերեն բառարան:

բ. ՄՍ ձև.6577. Էջերի դատարկ մասերում տեղ է գտել հայատառ արաբերեն-հայերեն-հայատառ բուրբերեն բացատրական մի բառարան, որը հետագայի հավելագրություն է:

գ. ՄՍ ձև. 9559. 250ա՝ Բառարան միայն Ա տառով սկսվող բառերի, թերի է:



նի չեն: Գիտենք Մինաս վրդ. Ամերիկյանի (1827-1909), Գևորգ Տեր-Հովհան-նիսյանի, Գեորգ Պալատեցու, Դիարբեքիբյի Հակոբ Դպրի, պոլսեցի Հարութ-յուն դասատուի, Սահակ Կալպակչյանի, Գրիբոր Փեշտմալճյանի, Չագըճեան Հ.Եփրեմի, Հակոբոս Պողաճյանի, Միքայել Ռեստենի, Անդրեաս Շուքրյանի անունները, որոշ բառարանների էլ՝ Մխիթարյան հայրերի հեղինակությունը լի-նելու մասին: Մխիթարյան միաբանության անդամների հավաքական հեղինա-կած բառարանները, որպես կանոն, կորոշային գործեր են և մինչև օրս էլ չեն կորցրել իրենց գիտական ու կիրառական նշանակությունը: Բարեբախտաբար դրանք, ինչպես և Մխիթարյան միաբանության գիտնական վարդապետների հե-տազայի աշխատությունները արժանացել են շքեղ, արժեքավոր սուպագրություն-ների, որոնք ավելի կիրառական են այն դարձրել:

Կան բառարաններ, որոնք կցվել են որևէ ձեռագրի՝ կամ մաս են կազմում որևէ հիմնական երկի, կազմում առանձին գլուխներ: Այս բառարանները կոչված էին հիմնական ձեռագրից օգտվելու համար, որին մաս էին կազմում: Դրանք հիմնա-կանում այնպիսի գործեր են, որոնք գրված են խոթին լեզվով, արաբերեն, պարսկե-րեն՝ դժվարամարս բառերի օգտագործմամբ: Այդպիսի գործերից է Պողոս Ադրիա-նապոլսեցու «Ջանազանութիւն հինգ դարուց»-ի հայատառ թուրքերեն «Պէշ տէիր ֆէրգի» գրքին կից բառարանը: Կան ուղղակի բացատրական բառարաններ՝ տար-բեր ժողովածուներում<sup>2</sup>: Երբեմն դրանք մեկ կամ մի քանի թերթ են կազմում, այն էլ՝ որոշակի տառերով սկսվող բառերի: Ամենայն հավանականությամբ դրանք որևէ բառարանից պահպանված հատվածներ են:

Որոշակի թիվ են կազմում բժշկարաններին, դեղագրերի ժողովածուներին մաս կազմող բառարանները<sup>3</sup>: Դրանք նաև հիվանդությունների, դեղատոմսերում օգ-

- 1 Երևանի Մատենադարանի 1798թ. մի Երզնկայանի վերջում (Նոր ձեռագրերի հավաքածու, ձեռ. 160) գտնում ենք 1826թ. հայատառ ռուսերեն և հայատառ թուրքերեն բառարան՝ 323 գործածական բառերի համար:
- 2 ա.ՄՄ ձեռ.2906. «Վեցհազարեակ» հայերեն և հայատառ թուրքերեն: 20թ-22թ՝ բառարան աստղագուշակից օգտվելու համար:  
բ. Ս.Էջմիածնի Վեհարանի մատենադարանի ձեռ. 82. Ապոյի Ռահմանի Թէպիզեցու «Բանալի Աստղագ.» 92թ-96ա. Բառարան՝ ձեռագրում գործածված արաբերեն, թուրքերեն և պարսկերեն բառերի հայերենները:
- 3 ա.ՄՄ ձեռ. 9583. 203ա-251թ՝ քաղցիր բժշկարանի:  
բ.ՄՄ ձեռ. 9789. Անուանք կենդանակերպից արաբերեն, քարաբերեն, պարսկերեն, թուրքերեն, հունարեն: Անուանք սողորակից արաբերեն, թուրքերեն պարսկերեն, հունարեն: *Բոլոր լեզուներն էլ գրի են առնված հայաբառ:*  
գ. ՄՄ ձեռ. 10661. Հեքիմարան. 64ա-71թ՝ Բառարան 212 դեղատոմսերում օգտագործված նյութերի՝ այբբենական կարգով:  
դ. ՄՄ ձեռ. 10912. Բժշկարան. 16ա-17թ, 170ա-182ա՝ Բառարան հիվանդութեանց կամ անուանք հիվանդութեան՝ այբբենական կարգով: 280թ-281թ՝ Յանկ քանի մը մաճունից՝ Ա-Թ և Մ տառերը:

տագործվող նյութերի տարբեր լեզուներով, գիտական տարբեր տերմինների քառարանների արժեքավոր օրինակներ են<sup>1</sup>:

Հայաստան բուրբերեն ձեռագիր բառարաններ, << ԳԱԱ Պապուս-  
բանասիրական հանդես (Երևան, 2005թ., հ.2(169), էջ 250-255):

## ՀԱՅԱՍՏԱՌ-ԹՈՒՐԻԵՐԵՆ ՏՊԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ

Հայ բառարանագրային մշակույթում հայաստան բուրբերեն երկլեզու, եռլեզու, բազմալեզու և բազմազան բառարանները որոշակի թիվ են կազմում՝ մոտավորապես 100 անում<sup>2</sup>: Դրանք բարձր որակի հոմանիշներ են՝ իրենց գիտական ու կիրառական նշանակությունը մինչև օրս պահպանած գիտական հուշարձաններ: Նրանք շարունակել են միջին դարերում զարգացում ապրած հայ բառարանագրության ավանդները, նոր որակի հասցրել այն և փոխանցել տպագիր շրջանին:

Հայաստան բուրբերեն բառարանները շատ տարբեր են եղել: Հրատարակվել են աշխարհի տարբեր ծայրերում, սակայն հիմնականում ծառայել են նույն նպատակին: Այն է՝ նպաստել հայաստան բուրբերեն գրականության առաքելությանը՝ պահպանելու ու ծագումնից հայ ժողովրդի թրքախոս հասվածը, օգնել նրանց հաղորդակից դառնալու բուն հայկական մթնոլորտին, մասնակից դարձնել նրանց արևմտահայության զարթոնքի տարիների բուռն շարժմանը, եվրոպական գրականության, մշակույթի, նոր գաղափարների ներթափանցմանը Օսմանյան Թուրքիա: Ինչպես ողջ հայաստան տպագիր գրականությունը, բառարանները ևս իրենց մեծ նպաստն են ունեցել քարգանակական և ինքնուրույն տպագիր գրականության ձևավորման ու զարգացման գործում: Այն նպաստել է կայսրության, ինչպես նաև եվրոպական տարբեր ժողովուրդների միջև հաղորդակցության, մշակույթի զարգացմանը, իրարբերությունների կամրջելուն, արհեստների, գիտությունների, մասնավորապես բժշկության, տարբեր բնագավառների զարգացմանը, ժողովրդի կենսասնակարգակի բարձրացմանը:

- 1 ա. ՄՄձեռ. 9697. «Արուեստարանություն» (Քիմիա) հայերեն և հայաստան բուրբերեն երկլեզու ձեռագրին կից տերմինների գործածության բառարան՝ 126ա-8բ:  
բ. Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. 1388. «Գիտական բառարան հայերեն- բուրբերեն-ֆրանսերեն»:
- 2 Տպագիր բառարանների մասին տես՝ Յասմիկ Ստեփանեան, Հայաստան բուրբերեն գրքերի և հայաստան բուրբերեն պարբերական մամուլի մատենագիտություն (1727-1968). Ստամբուլ, Թուրքուազ հրատ., 2005:

Առաջին հայատառ թուրքերեն գիրքը տպագրվել է 1727թ. Մյուխարյան միաբանության հիմնադիր Մյուխար Սեբաստացու (1676-1749) կողմից Վենետիկի Անտոնի Բորտոլիի տպարանում: Այդ շրջանում դեռ Մյուխարյանները դեռ չէին գործադրել ս.Ղազար կղզու իրենց տպարանը, որի հարյուրամյակների հրատարակությունները ոչ միայն իրենց՝ հրատարակիչներին, այլև ողջ հայ մատենագրությանը փառք պիտի բերեին:

Մյուխար Սեբաստացին, լինելով շատ մեծ հայրենասեր, իր ժողովրդի վիճակով տառապող գիտնական, գտնում էր, որ հայ ժողովրդի փրկությունը պայմանավորված է միայն նրա լուսավորությամբ, նրա կրթությամբ, համաշխարհային մշակույթի առաջընթացին հաղորդակից, ապա նաև՝ մասնակից դարձնելու հնարավորությունների համար ճանապարհի հարթելով: Ըստ նրա՝ այդ գործը պետք է արվեր ժողովրդին հասկանալի լեզվով՝ աշխարհաբարով, իսկ քրքրախոս հայերի համար՝ հայատառ թուրքերենով: Մյուխար Սեբաստացու հայատառ թուրքերեն տպագրած առաջին գրքի վերնագիրն էր՝ «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին Հայոց, շարադրեցեալ տաճկականա լեզուա»: 149 էջանոց դասագրքի վերջին 50 էջերը իրենցից ներկայացնում էին «Բառգիրք, որ հետևի Դրան քերականութեան»: Այսպիսով՝ հայատառ թուրքերեն առաջին տպագիր գրքի և առաջին հայատառ թուրքերենի օգտագործմամբ տպագիր բառարանի մասին պետք է խոսել որպես մեկ հուշարձանի: Երկրորդ բառարանը կից է Այբբենարանին, «մեկնութեամբ տաճկական բառից հայկական աշխարհաբար լեզուի (Տրիեստ, 1786թ., 71 էջ, 2-րդ տպագրություն): Առաջին տպագրության մասին մատենագիտական տվյալներ չունենք:

Տպագիր բառարանների մասին խոսելիս նպատակահարմար ենք գտնում այն ներկայացնել ոչ թե ըստ իրենց ներառած լեզուների, այլ՝ ըստ հրատարակության վայրերի: Նման ձևը հնարավորություն կտա հետևելու 18-20-րդ դդ. հայ բառարանգիտական հիմնական դպրոցների, այն է՝ Մյուխարյան հրատարակությունների և Կ.Պոլսի, Իզմիրի, ապա մի քանի առանձին քաղաքների տպագրություններին: Վերջինները հիմնականում պայմանավորված են եղել առանձին անհատների գործունեությամբ: Հայատառ թուրքերեն բառարանները հիմնականում լեզվական բնույթի են եղել՝ կազմված այբբենական կարգով: Կամոդրադառնաք նաև առանձին բառարանների՝ ըստ նրանց կիրառական նշանակությունների:

Ընդհանրապես հայատառ թուրքերեն բառարանագրության մեջ իրենց հատուկ ներդրումն ունեն Մյուխարյան միաբանության հրատարակությունները, որոնց գերակշռող մասը հենց իրենց՝ Վենետիկի, Տրիեստի, ապա՝ Վիեննայի Մյուխարյան հայերի հեղինակություններն են: Որպես կանոն՝ մյուխարյան հրատարակությունները ամենաարժեքավորներն են, ամենածավալունները՝ բառանյութի



առումով, շքեղ հրատարակված, ուր գերիշխում են բազմալեզու բառարանները: Դրանք մինչև օրս պահպանել են իրենց մեծ արժեքն ու կիրառական նշանակությունը: Բնականաբար այս բառարանների արժեքավոր լինելը պայմանավորված էր նրանց կազմողների լեզվական հիմնալի կրթությամբ, եվրոպական բառարանային ավանդույթներին ծանոթ լինելու հանգամանքով, օգտագործվող լեզուների կենդանի իմացությամբ: Մխիթարյան միաբանության Վենետիկի հայերերից Գաբրիել Ավետիքյանի (1751-1827) «Իտալերեն, հայերեն, հայատառ թուրքերեն, թօսքանեան բառարանը» մեզ հայտնի երրորդ բառարանն է, որ հրատարակվել է 1775 թվականին: Նույն հեղինակը հայտնի է իր տոսկաներենի համառոտ քերականությամբ՝ հայերեն գրաբար և տաճկերեն բացատրությամբ (1792, 488 էջ): Վենետիկյան հաջորդ հրատարակությունը Մամուել Ջախջախյանի (1770-1835) բառարաններն են իտալերենի, հայերենի, տաճկերենի օգտագործմամբ: Վենետիկյան բառարանգրական դպրոցի մյուս ներկայացուցիչներն են՝ Սկրտիչ Ավետիքյանը, Սուրխաս արք. Սոմալյանը (1776-1846), Սամուել Գանթարյանը (1838-1908):

Մխիթարյան միաբանության Տրիեստի, ապա վիեննական ճյուղի հրատարակություններից են Տեվեճի օղու Մահեստի Սիմոնի որդի պարոն Կարապետ Գաղատացու ( -1788) Այբբենարանը՝ կից տաճկական բառերի աշխարհաբար մեկնությամբ (Տրիեստ, 1781, 71 էջ): Այն որպես դասագիրք է ծառայել Մխիթարյան վարժարանների համար: Տրիեստից Վիեննա տեղափոխվելուց հետո առաջին բառարանը Ավգերյան Հարությունի (1774-1854) կազմածն է: Մխիթարյան միաբանության վիեննական ճյուղի մյուս բառարանագիր հեղինակներն են՝ Հակոբոս Պոզաճյանը (1808-1883), քառալեզու և բազմալեզու խոսակցական բառարաններ կազմող Փիլիպոս Դամճյանը (1818-1902), Եփրեմ Չազըճյանը, Սրապիոն Էմինյանը (1823-1854), Ղևոնդ Նովմանյանը (1817-1897): Վիեննայում է հրատարակվել պոլսեցի դավանանքով կաթոլիկ Արիստակես և Ստեփանոս Ագարյան եղբայրների քառալեզու բառարանը (1848), Քյուփեյան Ամբրոսիոսի եռալեզու բառարանը և թուրքերենի համատեղ քերականությունը՝ բաղկացած 1000 էջից:

Վենետիկի Մխիթարյան նախկին միաբան Ամբրոսիոս Գալֆայանը (1826-1906) հեռանալով կաթոլիկ եկեղեցուց, Գաբրիել Այվազովսկու հետ միասին Փարիզում բաց է արել Հայկազյան վարժարանը, ապա աշխատել է Թեոդոսիայի Խալիպյան Ազգային վարժարանում, ուր և հեղինակել է թուրք-հայերեն 2 բառարաններ (1836, 1864): Հետագայում, 1865թ. կրկին Փարիզ վերադառնալով, հրատարակել է մի շարք համառոտ հայ-ֆրանսերեն-տաճկերեն բառարաններ, հանրահայտ «Նոր բառգիրք Ֆրանսահայ»-ը, որը հայտնի է «Լուսինյան բառարան» անունով, սակայն այն չի առնչվում մեր նյութի հետ:



Ա.Պոլսում որոշակի թիվ են կազմում հարևան ժողովուրդների լեզուների օգտագործմամբ բառարանները: 1826թ. տպագրված պարսկերեն-հայերեն-բուրբերեն-արաբերեն բառարանը (715էջ) մեզ ծանոթ է ձեռագրական հավաքածուներից: Այն կազմել է լեզվաբան, պատմագիր Գևորգ Դպիր Տեր Հովհաննիսյան Պալատեցին (1737-1812): Պոլսի բառարանգիտության ամենահայտնի ամուններից են հրապարակախոս Տիգրան Գաբամաճյանը, Միհրան Աբիկյանը (1855-1938), Ջեքի Պետրոս Կարապետյանը (1873-1937), Սարգիս Գասապյանը (1842-1907), Մ.Գ.Միմաչյանը (1870-1936). Ջ. Փափազյանը և ուրիշներ:

Ա.Պոլսում, բացի մեծածավալ, բազմալեզու բառարաններից, տպագրվել են կիրառական, առօրյա նշանակության փոքրածավալ բառարաններ, խոսակցական բառարաններ, բառատեսերեր՝ հայերեն պիտանի բառերի տաճկերեն թարգմանությամբ:

Բառարաններից մի քանիսը հունարենի օգտագործմամբ են եղել, ինչպես Տիգրան Գրիգորյանի, Վ.Մարգարյանի, Դ.Չօլազյանի (Չօլաբիտիս)՝ հունարեն, բուրբերեն լեզուներով ընտանեկան խոսակցությունների բառարանը (1887): Ս.Խոջայանը հրատարակել է հունարեն, ֆրանսերեն, հայերեն, բուրբերեն ընտանեկան խոսակցական բառարան (1865), Տիգրան Գրիգորյանը՝ ուրբեզվյա բառարան և խոսակցական բառարան (1870): Մյուս բառարանգիրներն են՝ Գալուստ Թիրաբյանը (1840-1910), Թովմաս Թերզյանը (1840-1909), Հարություն Գայսեթյանը, Սարգիս Գասապյանը (1842-1907), Պողոս Գալբազյանը, Վահան Գալբազյանը և ուրիշներ: Մի շարք բառարանների վրա բացակայում են այն կազմողի անունները:

Եթե բառարանները նախատեսված են եղել դպրոցականների համար, ապա քիչ չեն դեպքերը, երբ նրանք եղել են չափածո, ոտանավորի մնաց՝ որը ոչ միայն դյուրացնում էր առաջարկվող նյութի ընկալումը, այլև հանգավորված լինելու պատճառով ավելի տպավորիչ, հիշվող էր դարձնում: Այդպիսիք էին Պաղտասար Դպիր կազմած դասագրքերը հայտնի Դպրատան աշակերտների համար: Չափածո բառարաններից է նաև Պողոս Գասասաց Դպիր Տյուրիկեցի Թորոսյանի «Տեսրակ համառոտ թուրք-հայերեն բառարանին»ը (Նոր Նախիջևան, 1794.):

Բառարանների հեղինակներից մի քանիսը նաև թուրքերենի դասագրքեր, նմանակնիներ են հեղինակել (Միհրան Աբիկյան, Ջեքի Պետրոս Կարապետյան, Պողոս Գալբազյան, Մուքիաս Սոմալյան, Մ.Գ.Միմաչյան և ուրիշներ): Սա պատահական չէ, քանի որ նրանց մի մասը որպես թուրքերենի, կամ այլ առարկաների ուսուցիչներ են աշխատել: Նույնիսկ նրանց կազմած բառարանների վրա երբեմն կարդում ենք՝ «Ի պետո ազգային վարժարանաց»: Այս դեպքում հնարավորինս պարզեցված, դյուրամարս են դարձված առաջարկվող բառարանները, դասագր-

քերը: Այսպես օրինակ, Պողոս Գալղայճյանի անգլերեն, հայերեն, թուրքերեն բառարանում անգլերեն բառերի հնչումը ևս հայատառ է արված (Կ.Պոլիս, 1890), իսկ պրոֆ. Միհրան Աղաճանյանի զիրքը կոչվում է «Ֆրանսերեն լեզու. բարեկամ մանկանց: Բառագրքոյկ եւ խօսելավարժութիւն հայերէն, գաղղիերէն, տաճկերէն հնչումներով»: Այդ դասագրքերը և բառարաններն ունեցել են երբեմն տասնյակից ավել տպագրություններ: Դպրոցական բառարաններ հրատարակվել են հենց տեղերում, ինչպես օրինակ Այնթապում՝ Մարաշի աղջկանց վարժարանի համար: Նայած թե ո՞ր միսիոներական կազմակերպության հովանավորությամբ է գործել տվյալ դպրոցը, ապա համապատասխան լեզվի բառարաններն ու դասագրքերն են տպագրվել: Մարաշում ամերիկյան միսիոներները մեծ ազդեցություն ունեին: Որբանոցներ, ծերանոցներ, դպրոցներ... Գերիշխողն այստեղ անգլերենն է եղել:

Կ.Պոլսի հետեղեռնյան շրջանի բառարաններից հատուկ ուշադրության է արժանի Հակոբ Շուրլյանի (Միրունի) զինվորական բացատրական բառարանը հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն լեզուներով: Այնքանով է սա եզակի, որ զինվորական վարժարաններում հայերի մուտքն արգելված էր և զինվորական ասպարեզը հայերի համար ընդունելի չէր ի տարբերություն զինվորական թիշկների մասնագիտությանը: Բայց եթե հայերը մուտք չունեին այստեղ որպես ուսանողներ, ապա մուտք ունեին ուսուցիչների մակարդակով: Ընդհանրապես մասնագիտական լուրջ հավակնություններ ունեցող թուրքական ուսումնական (տեխնիկական) հաստատություններում որոշ առարկաներ, ինչպես նաև լեզուների, այդ թվում թուրքերենի ուսուցումը կատարվել է հայատառ թուրքերենով գրված դասագրքերի միջոցով: Բնականաբար բառարանները մեծապես օգնել են այս գործընթացին: Այս կերպ ուսանողները շատ ավելի արագ են յուրացրել առաջարկվող նյութը, քան թե այն կտվորելին արաբատառ օսմաներեմով: Այդ մասին գրվել է նույնիսկ գրքի վերնագրում, ինչպես Հ. Տեր Մելքոնյանի կազմած հայերեն, թուրքերեն քերականության դասագրքի տիտղոսաբերքում է՝ «թուրքերի համար» (1913):

Երկու տասնյակի չափ բառարաններ են տպագրվել Ֆրանսիայում: Սակայն դրանք կապվում են 2-3 հեղինակների անվան հետ միայն: Փարիզյան հրատարակություններից առաջինը Խորեն արք. Գալֆայան Նար-Պեյի (1832-1892)<sup>1</sup> հայ ուսանողների համար կազմած ֆրանսերեն-թուրքերեն խոսակցական բառարանն է (1859թ): Փարիզում տպագրված մի շարք բառարանների տպագրության պատմությունը կապվում է իզմիրցի հայտնի փորագրիչ, հրատարակախոս, տպարանատեր, «Արամյան» հայտնի տառատեսակի հեղինակ Դանիլ Արամյանի (1820-

<sup>1</sup> Խորեն արք. Գալֆայան Նար-Պեյը (1832-1892) ընդարձակ տաճկերեն, հայերեն բառարան է տպագրել նաև Կ.Պոլսում (1892, 670 էջ):

1879) անվան ու գործունեության հետ, որը Եվրոպա էր մեկնել՝ տառերի փորագրության իր արվեստը կատարելագործելու համար: Նա միայն 1860-62 թվականներին, հետագա տարիներին ևս, Վալտեր հայտնի տպագրիչի մոտ տպագրել է 10 բառարաններ: Նրա 309 էջից կազմված «Քառագրքոյկ»-ները ավելի քան 7 տպագրություն են ունեցել:

Քառարանները հաճախ կոչվել են բառգրքեր, բառքոյկներ, բառերի հավաքածուներ, Վեցհազարեակ (կազմված բառերի քանակով), Բառգիրք խոսակցության, զրուցարություններ, խոսակցական բառարաններ...

Երբեմն տիտղոսաբեքին նշվել է բառարանի պարունակությունը: Այսպես օրինակ 1888թ. Միխրան Աբիկյանի 1150 էջանոց բառարանի վրա արձանագրված է՝ 24 000բառ և 8000 ոճ: Մ.Աբիկյանը, որը հեղինակ է հայաստառ թուրքերենի օգտագործմամբ թուրքերեն և օսմաներեն. 26 բառարանների, մի այլ բառարանի վրա նշել է՝ 13000 գրագիտական, պաշտոնական և գիտական բառ, 700 ոճ՝: Նրա մի այլ գիտական բառագրքոյկ ներառում է հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուները: Հայտնի է, որ տեխնիկայի վերաբերյալ բառերը, տերմինները գրական նոր թուրքերենը փոխառել է գերմաներենից: Ահա այս բառարանն այդ գործընթացի արտահայտություններից մեկն է հանդիսացել (1895): Պողոս Գալըպճյանի բառարանի վրա նշված բառաքանակը 20000 բառ (1890) է:

1890-ական թթ. Կ.Պոլսում սկսել են հրատարակվել բազմալեզվյա (թուրքերեն, հայերեն, հունարեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, անգլերեն) գործնական բառարաններ: Այդպիսի բառարան կազմողներից է եղել Ստեփան Ֆերանճեյանը: Մոտ 15 տարի շարունակ Կ.Պոլսում վաճառականների համար տպագրվել են տարեկան 2 հատուկ «Հուշատետր-օրացույցներ»(պարզ և գրպանի), որոնք իրենցից ներկայացնում էին հայերեն, ֆրանսերեն թուրքերեն բառարաններ և բառալեզու օրացույցներ (agenda):

Հայտնի է, որ հայերն Օսմանյան կայսրությունում նոր ձևավորվող արդյունաբերության որոշ ճյուղերի հիմնադիրներն են եղել, առաջինները, որոնք, եվրոպական համալսարաններում հետևելով գիտության տարբեր ուղղություններին՝ մասնավորապես իրավունքին, բժշկությանը, կենսաբանությանը, կենդանաբանությանը, բուսաբանությանը, վերադարձել են Թուրքիա՝ ներդնելով իրենց ողջ գիտելիքնե-

1 Մ. Աբիկյանը հեղինակ է հայերենով մի շարք օսմաներենի դասագրքերի: Երե դրանց մի մասում օսմաներենը ներկայացված է հայաստառ թուրքերենի միջոցով, ապա նյութնեկում այն արարատառ է և չի առնչվում մեր ուսումնասիրության հետ: Իհարկե, սա ուսումնասիրության հատուկ առարկա է, որը մաս է կազմում հայ լեզվաբանների կողմից թուրքերեն լեզվի դասագրքերի հեղինակման ավանդույթի և նոր թուրքերենի զարգացման գործում հայերի դերած նպաստի մասին նյութի:



րը, դարձել են այդ ճյուղերի փնտրված մասնագետներ: Կ.Պոլսի սուլթանական ու վաշայական ամենահայտնի պարտեզների լավագույն մշակողները եղել են հայ բուսաբանները, գյուղատնտեսները, հողագետ այգեպանները, ծաղիկբույծները, ծխախոտի, բամբակի, խաղողի, շերամաբուծության մասնագետները: Վերադառնալով ուսումնառության վայրերից՝ նրանք կազմակերպել են գիտական հավակնություն ունեցող միություններ, հիմնադրել պարբերականներ, հեղինակել գրքեր, որոնք պիտի նպաստեին Օսմանյան կայսրությունում ամենատարբեր բնագավառների զարգացմանը: Հայտառ թուրքերեն գրականությունը հաստատումն է նրանց արգասաբեր գործունեության: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում բժշկական ամենահայտնի ու ամենավաղ սուլթանական Սիբայեյ Ռեստեն Տեր Պետրոսյանի՝ հիվանդությունների, դեղերի, բույսերի, հանքանյութերի, կենդանիների, գազերի, հեղուկների անունների 9 լեզվա բառարանը (Վենետիկ, 1822, 542 էջ): Այն 3 տպագրություն է ունեցել: Կ.Պոլսում՝ Ն.Արքիմյանի տունկերի բառարանն ընդգրկել է ֆրանսերեն, հայերեն, թուրքերեն լեզուները (1908):

Երուսաղեմյան հրատարակություններից հայտնի է Պողոս Ադրիանապոլսեցու (-1853) «Ձանազանութիւն հինգ դարուց» երկի հայատառ թուրքերեն հրատարակության մեջ եղած արաբերեն և պարսկերեն բառերի բառարանը՝ բացատրված հայերենով ու թուրքերենով (1844, 1881): Երբեմն բառարանները մաս են կազմել հայատառ թուրքերեն այս կամ գրքին, ինչպես դա եղել է Մ.Գաբրիելյանի «Հատընտիր»-ի դեպքում: Թուրքերեն բնագրին հետևել է թուրքերեն, հայերեն բառարանը (1893):

Հայկական գաղթավայրերում հրատարակվածներից են Արմենակ Պետոյանի՝ բույսերի անունների պատկերազարդ, բազմալեզվա բառարանը՝ լատիներեն, արաբերեն, հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն լեզուներով (Կահիրե, 1936թ.1099 էջ): Մեծ Եղեռնից հետո Արևելքի, Եվրոպայի հայկական գաղթավայրերում շարունակվում է բառարանների տպագրության ավանդույթը: Այս բառարաններում երբեմն բացակայում է հայերեն լեզուն և միայն թուրքերենը ներկայացնելու համար է կիրառվում: Այսպես օրինակ, Բեյրութում հրատարակված ֆրանսերեն, թուրքերեն բառարանը փաստորեն ֆրանսերեն-հայատառ թուրքերեն է (1931): Բեյրության հրատարակությունների մեջ որպես բառարաններ կազմող հայտնի է Կ.Կիլիկեցին: Բեյրութի 1926թ. տպագրության մեջ առաջին անգամ հանդիպում ենք գրպանի գրուցարանի, ուր հայերենի և հայատառ թուրքերենի հետ իսպաներեն լեզուն է օգտագործվում:

Հունաստան տարագրված հայերի համար 1923թ. Աթենքում Հայկ Գնդունու հեղինակությամբ լույս է ընծայվում հունարեն, հայերեն, թուրքերեն առձեռն բառարան և նույն լեզուներով գրուցարան:



Դարասկզբին անգլերենի օգտագործմամբ բառարանների թիվն ավելանում է, իսկ եղեռնից հետո այն նույնիսկ անհրաժեշտություն է դառնում: Մեծ տարածում է ունեցել Ի.Ա.Երանի բուրբերեն, անգլերեն պատկերազարդ գրուցագիրքը (Բոստոն, 1914): 1919-1920թթ. Եաղուսյան Ատուրի հեղինակությամբ տպագրվում է 3 մասից բաղկացած մի բառարան՝ անգլերեն, հայերեն, հայաստան բուրբերեն լեզուների տարբեր գուգորությամբ՝ Նյու-Յորքում (1919), ապա՝ Լոս Անջելոսում (1920): Հայաստան բուրբերենով լույս են տեսել շուրջ 25 երկերվա, 30 եռալեզու, 12 քառալեզու, 10 բազմալեզու բառարաններ, 15 երկերվա և բազմալեզու գրուցաբաններ, 5 տարբեր բնագավառների բառարաններ:

Այսպիսով, բառարանները հայաստան բուրբերեն տպագիր գրականության մի մասն են կազմել: Չնայած 20-րդ դարի երկրորդ կեսին հայաստան բուրբերենը անկման շրջան արձանագրեց ու ժամանակավիեպ դարձավ՝ այս բառարանների մեծ մասը մնացին գործածական՝ չկորցնելով իրենց գիտական արժեքը:

*Հայաստան բուրբերեն տպագիր բառարաններ. Մերչախոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ. Ժողովածու. 24-րդ հատոր, Երևան, 2005, էջ.513-520.*

**ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄՆԵՐ  
ARSEN YARMAN**

**OSMANLI SAĞLIK HİZMETLERİNDE ERMENİLER VE SURP PIRGIÇ  
HASTANESİ TARİHİ, İst., 2001. Yayınlayan Surp Pırğıç Ermeni Hastanesi Vakfı,  
865s.**

*(Արսեն ՅԱՐՄԱՆ. ՀԱՅԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԵՎ «ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ» ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԳԱՆՈՑԻ ՊԼԱՏՈՒԹՅՈՒՆԸ)*

2001թ. Կ.Պոլսում հրատարակվել է հանրագիտարանային արժեքի շքեղագույն մի ուսումնասիրություն, որը ներկայացնում է առողջապահության պատմությունն Օսմանյան կայսրությունում: Աշխատությունը գրված է բուրբերեն լեզվով: 865 մեծածավալ էջերից կազմված նկարազարդ մենագրությունը ներկայացվում է ներքոհիշյալ գլուխներով՝

ա. Առաջաբան

բ. Հայ բժշկության պատմություն

գ. Օսմանյան բժշկությունը և հայերը

դ. Օսմանյան դեղագործությունը և հայերը

ե. Հայ բուսաբանները

զ. Հայերը և «Կարմիր մահիկ»-ը, Աղքատախնամը (ծերանոց),

«Երեխաների պաշտպանության միությունը»

է. Անատոլիայի հայկական հիվանդանոցները

ը. Մահմուդ Բ-ի և Գազազ Արքին Ամիրայի բարեկամությունը

թ. «Սուրբ Փրկիչ» ազգային հիվանդանոցի պատմությունը

ժ. Օսմանյան կայսրության առողջապահության ասպարեզում

մեծ ավանդ ունեցած հայ բժիշկների կենսագրություններ

Պիտքը եզրափակում են օգտագործված աղբյուրների, տեղանունների ու անձ-անունների հարուստ ցանկերը:

Աշխատության առաջին էջերում կարդում ենք Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Մեթե Թունջայի և Եվրոպայի գիտնականներից ճանաչված ուռուցքաբան, մարդու իրավունքների պաշտպանության հայտնի դեմքերից Լեոն Շվարցենբերգի գիրքն արժևորող, հայերի ավանդող խորապես գիտակցող խոսքերը: Լ. Շվարցենբերգի առաջնորդողում անդրադարձ կա նաև մեր ժողովրդի տառապանքի, սակայն կանգուն մնալու ոգու ուժին:

Իր տեսակի մեջ եզակի այս աշխատության հեղինակ Արսեն Յարմանը պոլսահայ համայնքի երևելիներից է սերում: Սովորել է Կ.Պոլսի Մխիթարյանների մոտ, սպա ուսումը շարունակել Իտալիայում: Տիրապետում է մի քանի օտար լեզուների: Այն, որ հետազոտողը հայագգի է, մեծապես շահեկան դեր է ունեցել ուսումնասիրությունը հնարավորին չափ լիարժեք ներկայացնելու առումով, քանի որ Օսմանյան կայսրությունում մշակույթի, գիտությունների, արհեստների և որոշ այլ քնագավառների զարգացման պատմությունն անխզելիորեն կապված է հիմնականում արևմտահայ համայնքի գործունեության հետ: Հիմնականում հայկական աղբյուրներում են ամբարված (հայերեն և հայատառ թուրքերեն գրական ժառանգության մեջ, փաստաթղթերում, պարբերական մամուլում և այլուր) Օսմանյան կայսրության կյանքի ամենատարբեր կողմերի ուսումնասիրության վրա լույս սփռող նյութերը, սկզբնաղբյուրները: Բազմաթիվ հեղինակներ, որոնք ձեռնարկել են Օսմանյան կայսրության կյանքի այս կամ այն ասպարեզի ուսումնասիրությունն առանց օգտագործելու հայկական նյութի՝ ի վիճակի չեն եղել այն լիարժեք ներկայացնելու և ստիպված են եղել բավարարվել միայն դրա ուրվագծումով:

Այս աշխատանքը մեծապես շահեկան է նաև ուսումնասիրված հարուստ աղբյուրների, արխիվային նյութերի առումով: Ներկայացված են չափազանց մեծ հե-

տարբերություններ կայացնող օսման եզակի փաստաթղթեր, սուլթանական հրամանագրեր՝ բերաքներ, ֆերմաններ, հայերեն, ֆրանսերեն, հայատառ թուրքերեն նյութեր: Փաստաթղթերի մի մասը, որ առաջին անգամ են գիտական շրջանառության մեջ դրվում, այսուհետև ևս արժեքավոր աղբյուր կարող են հանդիսանալ տարբեր բնագավառների ուսումնասիրողների համար:

Առատորեն ներկայացված են Արևմտյան Հայաստանի բոլոր գավառների հայաբնակ բնակավայրերը ներկայացնող նկարներ՝ վանքեր, պատմական հուշարձաններ, կալվածագրեր, հաշվեցուցակներ, այդ վայրերում գործած առողջապահական հիմնարկների, շենքերի արտաքին ու ներքին, բժշկական առումով կահավորման, աշխատակիցների բժշկական առօրյային վերաբերող բազմաթիվ նկարներ: Բնականաբար շատ են հայկական դեղարանների, բժիշկների, այցետոմսերի, մամուլում նրանց զովագղների, հայտարարությունների հայերեն, օսմաներեն, հայատառ թուրքերեն, ֆրանսերեն օրինակները: Այս ամենը, հիյրավի, մեծ տպավորություն է գործում: Գրքի վերնագիրը զուսպ է՝ ընդգծելով ընդամենը հայերի ունեցած դերը օսմանյան առողջապահության բնագավառում՝ շեշտելով մինչև Օսմանյան կայսրության հայ բժշկության պատմությունը ներկայացնող նյութերը, հայ բժշկության ունեցած ավանդույթները: Հիացմունք է պատճառում զբքում ծայրաստիճան ճաշակով ու տեղին ներկայացված կառավարական, համայնքի ու անձնական հավաքածոների, վիմագիր արձանագրությունների, սկզբնաղբյուրների փաստաթղթային կամ կիրառական առարկաների, մանրանկարների ու նկարների, ճարտարապետական կառույցների արտաքին ու ներքին տեսքի, հայաշատ քաղաքների, թանգարանային, հնագիտական բրածո իրերի, դրամների, ձեռագիր մատյանների, զարդերի, շքանշանների, կիրառական շատ առարկաների, ինչպես նաև առողջապահության հետ մոտավոր կամ հեռավոր առնչություն ունեցող իրերի, սարքերի, գծանկարների ու լուսանկարների, գրքերի, ատլասների և շատ ու շատ տարբեր, բազմալեզու նյութերի բազմությունը: Ազդեցիկ թիվ են կազմում օսմաներեն նյութերը, որոնցից շատերն այս ուսումնասիրության էջերում են առաջին անգամ լույս աշխարհ գալիս:

Գրքի երկրորդ նպատակի՝ Կ.Պոլսի Ս.Փրկիչ ազգային հիվանդանոցի մասին պատմող գլուխը սկսվում է 447 էջից միայն: Այն ոչ միայն հայերին ու Թուրքիայի այլ ազգերին ծառայող հիվանդանոցի պատմությունն է, ներկան, այլև սպագան պայմանավորող ծրագրերն ու պարագաները: Մեծ արժեք են ներկայացնում տարբեր ցուցակները, բժշկական միությունների ու հայ բուսաբանների մասին գլուխը, բժշկական մամուլն ու մասնագիտական գրականությունը, տարբեր ասպարեզների բժիշկների ցանկերը՝ նրանց մասին տեղեկություններով, նկարներով հանդերձ: Հեղինակը հետևել է անգամ նրանց ճակատագրին՝ լիարժեք ներկայացնելու հա-



Շնորհակալություններով և շնորհակալությամբ շնորհակցում եմ Ձեր Օսմանյան կայսրությունում ապրած ու գործած իր գրքի հերոսներին:

Այս ուսումնասիրությունը լիովին արդարացրել է հեղինակի սույն դրված կարևորագույն խնդիրներից հիմնականը՝ ներկայացնել առողջապահության պատմությունն Օսմանյան իրականությունում:

Ավելին՝ առաջին անգամ բուրբերեն լեզվով գիտական գրականության մեջ մեծ ծավալով ներկայացվել է հայ ժողովրդի պատմությունն իր սկզբնավորման շրջանից հիվեր, արևմտահայության պատմությունը, պոլսահայ համայնքի պատմությունը, արևմտահայերի դերն ու ավանդը այդ երկրի կյանքի ամենատարբեր բնագավառներում, նրանց ունեցած նպաստը: Անդրադարձ կա ամիրտների, պատրիարքական աթոռի, մտավորականների, առանձին անհատների, ինչպես նաև բժշկության պատմության հայ երախտավորների գործունեությանը՝ կենսագրականներով, տոհմաճառերով, նրանց գեղանկարներով կամ լուսանկարներով համոզելով:

Այս գրքում ի մի են բերված եվրոպական տարբեր երկրներում ուսանած, կարևորագույն գիտական կենտրոններում հայտնագործությունների հեղինակներ դարձած, ապա՝ Թուրքիայում գործունեություն ծավալած հայ բժիշկների, նրանց տարբեր երկրներում ունեցած բարձրագույն պարգևների ու գիտական աստիճանների արժանացած լինելու, նաև այլ ասպարեզներում ծավալած գործունեության մասին տեղեկությունները: Գիրքը հարուստ է հայ բժիշկներին վերաբերող տարբեր մանրամասն ցուցակներով, նկարներով՝ սկսած Բալկանյան, Առաջին համաշխարհային պատերազմներում մասնակիցների, բժշկության տարբեր բնագավառները ներկայացնողներից մինչև օտար երկրներում թուրքական կառավարության դիվանագիտական ներկայացուցչություններում, հյուպատոսություններում, թուրքական բանակում ծառայած հայազգի բժիշկների ներկայացմամբ:

Հիրավի, կոթողային մի աշխատանք, որի հեղինակը՝ Մխիթարյան հայերի անսպառ աշխատասիրությունը որդեգրած մտավորական այս ժառանգը, անհավատալի գործ է կատարել: Այն հավասարապես մեծ ավանդ ու հետաքրքրություն է ներկայացնում ինչպես Օսմանյան իրականությունում բժշկության, առողջապահության պատմության, այնպես էլ ընդհանրապես բժշկության պատմության Մերձավոր արևելյան քնի ուսումնասիրության, արևելագիտության համար:

Ի՞նչ անձնագրի, տքնաջան ուսումնասիրության արդյունք է այս Տկզ-ից ավել կշռող գիրքը՝ միայն այն բերթողը, կարդացողը կարող է գիտակցել: Հիրավի, պատվավոր դոկտորի կոչմանն արժանի մի դեմք, որը պատիվ կբերի ուզածը գիտական, ակադեմիական հաստատությանը և իհարկե, առաջին հերթին այն պարտ է, որ կատարվի Հայաստանում:

Գալով հայ բժշկության, առողջապահության պատմության արևմտահայ հատ-

վածի ուսումնասիրության գործում Արսեն Յարմանի անուրանալի և մնայուն նպաստին, այն թուրքերենով ներկայացնելուն՝ պիտի ոչ միայն հիացումի ու բարձր գնահատանքի մղի մեզ, այլև շուտափույթ թարգմանվի հայերեն՝ նաև հայագիտությանը, հայ բժշկագիտությանը լավագույնս ծառայելու համար:

Պատմա-Քանասիրական Հանդես. ՀՀ ԳԱԱ, 2005, 2 (169), էջ 316-318  
(Ռուսերենով տպագրվել է Մեդիաինֆորմ ամսագրում, 2006թ.հ.3, էջ 26-27)

## ԱՐՍԵՆ ՅԱՐՄԱՆԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱԼՈՒ-ԽԱՐԲԵՐԳ 1878

**BALU-HARPUR 1878.** Çarsancak, Çemişgezek, Çapakçur, Erzincan, Hizan ve Civar Bölgeler Raporlar. İstanbul, “Derlem” yayımlar, 2010, c I.-494s., c II-563s.

**ԲԱԼՈՒ-ԲԱՐԲԵՐԳ 1878.** Չարսանջակ, Չեմիշգեզեկ, Շապակչուր, Երզնկա, Խիզան և շրջակայք, 2 հատոր, Ստամբուլ, «Գեքլեմ» հրատ., 2010, հ. I՝ 494 էջ, հ.2՝ 563 էջ:

Կան հեղինակներ և ուսումնասիրություններ, առանձին հրատարակություններ, որոնց կարևորությունը դուրս է գալիս սոսկ արժեքավոր լինելու շրջանակներից: Նրանք ավելի շատ դասվում են առաքելությունների խմբին: Մանավանդ, եթե ուղղված են այլաբերական ընթերցող շրջանակներին և ծանոթացնում են մեր երկրին, նրա պատմությանը, վերահանում մինչ օրս անհայտ վավերագրեր, թարգմանաբար ներկայացնում հույժ կարևորության ուսումնասիրություններ: Մի կողմից, ծանոթացվում և կարևորվում են հայ հեղինակների ու հայկական աղբյուրների եզակիությունն ու հավաստիությունը, մյուս կողմից, կից տրվում է հայագիտական այնպիսի մի մատենագիտություն, որը մրցակցություն չի հանդուրժում: Ավելին, եթե այս ամենը կարող է նաև վերահաստատել պատմական արդարությունը՝ կանխելով սովյալ ասպարեզին, նյութին սպառնացող մոռացման, խեղաթյուրման որոգայքները, ապա «առաքելություն» որակավորումը չի կարող ներկայանալ որպես ծեծներուն մի բառ:

Արսեն Յարմանը պոլսահայ մտավորական երևելի ընտանիքի շառավիղ է: Նրան ծանոթ ենք 2001թ. Ստամբուլում թուրքերենով հրատարակված «*Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermeniler ve Surp Pırgiç Hastanesi Tarihi*» (Հայերն Օսմանյան Առողջապահության ոլորտում և Ս.Փրկիչ հիվանդանոցի պատմությունը) գրքով: Հանրագիտարանային արժեք ունեցող, 856 թերթից բաղկացած այս աշխատությունը Օսմանյան կայսրության առողջապահական ասպարեզում հայերի ներդրման և Ս.Փրկիչ հայ ազգային հիվանդանոցի 175-ամյա պատմության լիակատար ուսումնասիրություն է: Շքեղ, պատկերազարդ, մեծածավալ այս հատորը ներառում է հայ բժիշկների, դեղագործների, քնագետների, և ընդհանրապես՝ արևմտահայ բժշկու-

յան պատմությունը: Ուսումնասիրության բացառիկությունը մաս այն է, որ առաջին անգամ բուրբերենով շարադրված է մեր ժողովրդի պատմությունը՝ ուրարտական շրջանից մինչ օրս: Մա պատկերազարդ հետազոտություն է հայ բժշկության ու նրա երախտավորների մասին՝ հարուստ կենսագրական տեղեկություններով: Այս պատկառելի հրատարակության համար ջերմ առաջաբան է գրել եվրոպական բժշկության ամենափայլուն ներկայացուցիչներից մեկը՝ ֆրանսիացի հայտնի ուռուցքաբան, մաս մարդու իրավունքների պաշտպան Լեոն Շվարցենբերգը:

Երկրորդ կարևոր գործը 2008թ. «Բիրզամանլար» ստամբուլյան հրատարակչության լույս ընծայած «Սվազ 1877» բուրբերեն հատորն է՝ բաղկացած 560 էջից: Այն հրատարակության է պատրաստել, ծանոթագրել և լուսանկարներով հարստացրել Արսեն Յարմանը: Թարգմանչուհին է Սիրվարդ Մալխասյանը:

Այսօր Թուրքիայում շատ են կարևորվում Արևմտյան Հայաստանի առանձին մահացների մասին աշխատությունները: Այնհայտ է, որ հայկական աղբյուրների, նախկին և այսօրյա հայ հեղինակների ուսումնասիրությունների՝ բուրբերեն թարգմանված հրատարակությունները չափազանց կարևոր են պատմական արդարությունը խեղաթյուրվելու վտանգից հեռու պահելու, կամոմավոր դարձած մնա՞ն գայրակողության հնարավորություններից զերծ մնալու համար: Սվազի, մաս՝ Թոքատի, Ամասիայի, Մարզվանի մասին պատմող այս հատորը հրատարակիչ Արսեն Յարմանը նախընտրել է ներկայացնել ծնունդով վանեցի բանասեր, մշակութային գործիչ Պողոս Նաբանյանի (1856-1886)՝ Պոլսում տպագրված մի քանի երկերի թարգմանությամբ, որոնք Արևմտյան Հայաստանում նրա շրջագայությունների տպավորություններն են և XIXդ. դարի հայ գավառի տնտեսական, քաղաքական կյանքի մասին հարուստ նյութ են պարունակում: Այդ երկերն են՝ «Տեղեկագրություն ընդհանուր վիճակին Գաղատիոյ» (1873), «Տեղակագիր ընդհանուր վիճակին Մեքաստիոյ եւ անոր կուսակալութեան ներքե զանող մեկ քանի գլխատր քաղաքաց» (1877): Այս հատորի երկրորդ մասում տեղ են գտել հատվածներ Գարեգին Սրվանձոտյանի (1840-1892) «Թորոս աղբար»-ի Ա մասից (1879), և հավելվածը: Գրքում զետեղված մի քանի լուսանկարներ պատկերում են կարթլիկ եկեղեցու կողմից ամենասիրված սրբերից մեկի՝ ծագումով սվազցի, հայ, հայկական աղբյուրներում հիշատակվող ս.Վլասի (ծնվ.՝ 280թ.–մահատակված՝ 316թ.) գերեզմանաքարը՝ ղեղատոմսերի աղբերեն արձանագրություններով: Նշենք, որ այս սրբի անունով աշխարհում շուրջ 2000 եկեղեցի, զանգակատուն և այլ հուշարձաններ կան: Նա համարվում է եվրոպական մի շարք վայրերի, քաղաքների հովանավոր (օր. Դուբրովնիկի): Ապշեցուցիչ է, որ այսքան հարյուրամյակներ անց այսօր Արսեն Յարմանը գտել է նրա գերեզմանը՝ Սվազի Բուրուջին Մեղրեսի մուտքի



աջ կողմում՝ մուսուլմանական երկու գերեզմանաքարերի միջև:

Բարձրաբժեք են «Բայու-1878» երկհատորյակում Պողոս Նաթանյան, Գարեգին Սրվանձտյան, Վահան Պարտիզակցի երեք հոգևոր մտավորական հայրերի ուղեգրությունները, հուշագրությունները, տեղագրությունները, կարևոր՝ տարբեր գավառների սոցիալ-տնտեսական, քաղաքական վիճակի մանրամասն նկարագրությունները, ցանկերը: Եթե դրանց հավելենք մաս լուսանկարչական հարուստ ու եզակի նյութը. ֆաբսիմիլեները, ապա թուրքերեն այս հրատարակությունն այնքան լիարժեք կդառնա, որ, մեր կարծիքով, երկար ժամանակ որևէ թուրք գիտնական չի ձեռնարկի այս նույն մահանգների մասին նոր ուսումնասիրություն կատարելու աշխատանքներին, քանզի դրանք կարող են բազմաթիվ որոզայթներ ու խեղաբյուրումներ ունենալ: Արսեն Յարմանը շարունակելով իր՝ հրատարակիչ-հեղինակի առաքելությունը, լույս է ընծայել նախորդի՝ «Սվազ 1877»-ի տրամաբանական շարունակությունը՝ «Բայու-Քարբերդ 1878» երկհատորյակը (2010): Ա հատորը հեղինակել է Արսեն Յարմանը: Այն իրենից ներկայացնում է XIX դ. Օսմանյան կայսրության համառոտ պատմությունը և արևմտահայության վիճակի նկարագրությունը, անդրադառնում է 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմին, որի ժամանակ էլ Պոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից Անատոլիայի հայկական գավառներն ուղարկվեցին գրքում ներկայացված տեղեկագրերի հեղինակ երեք հոգևոր հայրերը:

Բ հատորի առաջին գործը Վահան վրդ. Պարտիզակցու «Խօսք Չհայրենեաց»-ն է (1870, 56 էջ): Երկրորդը՝ Պողոս Ծ.Վ. Նաթանյանի «Արտօսը Հայաստանի կամ Տեղեկագիր Բայուայ, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղ ջուրի, և Երզնկայու, Յառելուած ըստ խնդրանաց ազգասիրաց Խիզան գաւառ» երկն է (Կ.Պոլիս, 1878, 167 էջ): Երրորդը՝ Գարեգին վրդ. Սրվանձտյանի «Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ»-ն է (1879, 1884): Թարգմանիչներն են՝ Սիրվարդ Մալխասյանը և Արսեն Յարմանը: Վերջինս գիրքը հրատարակության է պատրաստել և հայթիայթել լուսանկարները: Երկհատորյակը հարստացնող ու նրան առանձնակի հմայք հաղորդող, արժևորող լուսանկարչական նյութը բացառիկ է իր նորահայտությամբ, բազմազանությամբ: Գրանք օսմաներեն հազվագյուտ տեքստերի ֆաբսիմիլեներ են, քնականաբար՝ ուսումնասիրության առարկա վայրերի, հուշարձանների (այսօր չպահպանված) պատկերներ, արձանագրություններ, բազմազգ բնակիչների, նրանց տարագների ու զբաղումների, տարբեր ծիսակատարությունների, (մաս քաղման, հարսամիքի), տոների (աշխատանքի, շուկայի), դպրոցների, առանձին երևելիների ու նրանց զարմանալի տների նկարներ: Չափազանց արժեքավոր են հատկապես տարբեր վայրերի ազգային տարազների, առանձին արհեստների, կիրառական և արվեստի առարկաների նկարներն ու հայ վարպետների կնիքները և այլն:

Ա հատորի առաջաբանի հեղինակ, Նյու-Յորքի Պետական համալսարանի Բինգհամթոնի մասնաճյուղի պրոֆեսոր, պատմաբան Դոնալդ Քուաթերթ (Donald Quataert) գիրքը համարում է տարբեր կրոնների պատկանող բազմազգ ու բազմակեզու ժողովուրդների կյանքը պատկերող հրաշալի մի ուսումնասիրություն, որը, լրացված լինելով լուսանկարչական հարուստ նյութով՝ իր ընթերցողներին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու Օսմանյան կայսրության պատմությանը: Միաժամանակ այն մեկ անգամ ևս կարևորում է այս բնագավառում հայկական աղբյուրների բացառիկ դերը: Այն մեծապես օգտակար հրատարակություն է, որը միաժամանակ նոր էջ է և՛ Արևմտյան Հայաստանի, և՛ Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրության ասպարեզում: Նշենք նաև, որ 2010թ. Պոլսի Ս.Փրկիչ Ազգային հիվանդանոցի կողմից հրատարակվել է արևմտահայ մշակույթում բացառիկ կարևորություն ներկայացնող մի ոլորտի մասին՝ «Օսմանյան դասական երաժշտությունը և հայերը», «Հայ ստեղծագործողներն Օսմանյան դասական երաժշտության մեջ» քույրերեն երկհատորյակը, որի հրատարակիչը ևս Արսեն Յարմանն է: Հեղինակներն են՝ Արամ Քերովբյանը, Ալբու Յըլմազը և Էմինե Բորան:

Արսեն Յարմանը հրատարակության է պատրաստել նաև Թորաթին նվիրված քառահատոր քույրերեն մի ուսումնասիրություն, որը շուտով լույս կտեսնի :

ԼՐԱԲԵՐ Հասարակական գիտությունների, Երևան, 2011, ՀՀ ԳԱԱ հրատ., 2011, հ.3, էջ 298-301: Նաև՝ «Անկախ» շաբաթաթերթ, Երևան, 2010, հոկտ., 28-նոյեմբերի 4, հ. 38(62), էջ 4:

## **ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՒՈՏ ԲԱՂԻՇԵՅԻ (1678-1741) ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԹՈՒՐԲԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Մեր ժողովրդի ճակատագրի ու անցած ողորմ մահն մույնչափ բարդ, տասակոտ է եղել մեր եկեղեցու ճակատագիրը: Պարտություններ տարբեր տեսակի ճակատներում, ստրկություն, նվաստացում, համբերություն ու խոհեմություն, հեռատեսություն ու պայքար, ծվեն-ծվեն լինել, ուժացում, դավաճանախոսություն, դիվանագիտություն, խաղաղություն, հաղթանակներ ... Եվ որպես կանոն միշտ էլ մեզ բաժին են ընկել հզոր թշնամիներ, ուխտադրած բարեկամներ, նախանձ հարևաններ: Ուստի բարի ու խաղաղ ժամանակները մեր ժողովրդի համար շատ երկար չեն տևել: Ու շնորհիվ մեր ազգի, եկեղեցու մեծերի, ու մույնիսկ ոչ շատ մեծերի, մենք կարողացել ենք դիմակայել, ներել մեր թշնամիներին, երբեմն հաղթել, հավատարիմ մնալ մեր ժողովրդի լավագույն գծերին, չլիռլիռանալ, ապրել, ստեղծագործել, հարատևել:

Հայ եկեղեցին իր պատմության ընթացքում շատ մեծեր է ունեցել: Դրանցից է Հովհաննես Կողոտ Բաղիշեցին:

Բարեբախտաբար Կ.Պոլսո, կամ ինչպես անվանում էին նաև՝ Բյուզանդիոնի հայ պատրիարքները հոգևոր հայրերի, ազգի մեծերի տիպար են եղել: Հիմնականում եղել են գրագետ, մտավորական, առեցում հայ ժողովրդի պատմությամբ, գիտակ մատենագրությամբ, դարերի դասերի նկատմամբ ունեցած դիվանագիտությամբ, շինարար, իրենց ամենը կյանքի վարագույրի մյուս կողմում բողած ու ազգի ճակատագիրը օրվա խնդիր դարձրած՝ մեզ համար համարյա սրբացած: Այս հոգևոր ու ազգային գործիչները մեծ հեղինակություն են վայելել իրենց ժամանակներում՝ հայ ու օտար շրջանակներում, պայծառ հետք թողել մեր եկեղեցու ու արևմտահայության պատմության մեջ: Ու այդ ամենը չափազանց քաղո, իրարամերժ վիճակներում, երբ դեմ հանդիման են եղել կայսրությունում տարբեր ուժերի ու այդ ուժերի շահերին, խարդավանքներին, ակնհայտ ու քաջուն, հեռահար նպատակների, մասնավորապես եվրոպական տերությունների, Հռոմի, «ԲՈՐԴ»-ի, Ամերիկայի կողմից հայ ժողովրդին իրենց գերիշխանական նպատակների համար օգտագործելու ճանապարհին ոչնչի առջև կանգ չառնող, մեր ազգը պառակտող, քաղաքական անմարդկային երևույթներին:

16-17-րդ դարերից սկսյալ Օսմանյան կայսրություն ուղևորված եվրոպական տարբեր ազգերի «ճանապարհորդներն» իրենց զեկուցագրերում, գրքերում<sup>1</sup>, պատմություններում ներկայացնում էին երկիրը, նրանում ապրող ժողովուրդներին, նրանց նկարագիրը, վիճակը, կենցաղը, հանուն Եվրոպայի, իսկ ավելի ուշ՝ նաև հանուն Ամերիկայի օգտագործվելու, գործիք դառնալու մեծ ու փոքր հնարավորությունները, դրանց արժեքը, միջոցները, օգտագործվող ժողովուրդների հոգեբանական առանձնահատկությունները<sup>2</sup>: Ափսոս, որ այս ազգավտյուրները կիրք ու խելացի մասնագետներ են եղել, իսկ ներկայացրած նյութերը, հետևությունները ճիշտ են օգտագործվել: Թուրքիայի այսօրը՝ 350 տարիներ առաջ նրանց տեսածի, գրվածի, արածի ապացույցն է, արդյունքը:

Մինչ այդ, Օսմանյան փակ կայսրությունը եվրոպականացման արշալույսին էր սպասում: Եվրոպան՝ Օսմանյան կայսրությունը իր համար լիովին բացահայտելու, հանուն միմյանց միջև բաժանելու նպատակի ոչ մի արգելքի առջև կանգ չառնելու ծրագրերն էր սկսում գործադրել: Արտաքին քախումների մի կողմում կաթոլիկ

1 Այս մասին տես՝ Missionary Researches in Armenia. By Eli Smith Smith and H.G.O.Dwright, London 1834; On Horsebeck Trough Asia Minor. By Capitain Fred Burnaby. London 1877.

2 Կաթոլիկ միսիոներների ներքափանցումը Օսմանյան կայսրության հայկական միջավայր սկսվել է 16-րդ դարից, իսկ բողոքական միսիոներները հիմնավորվեցին կայսրությունում 19-րդ դարի սկզբին:



եկեղեցին էր, եվրոպական երկրները, Օսմանյան կայսրությունում նրանց ներկայացնող տարբեր ուխտերը, դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցչությունները: Պոլիսն ու պալատը գրաված մասունները (19-րդ դարի կեսերին միայն Ստամբուլում այդ կազմակերպությունների թիվը 50-էր հասնում)<sup>1</sup>, եվրոպական տերությունների ամենատարբեր մասնագիտության տեր լրտեսները, որոնցով սկսել էր վիստալ պալատը, արտաքին գերատեսչությունները, փաշայական ընտանիքները (ի դեմս առտոնին մասնագետների, ընտանեկան ուսուցիչ-դաստիարակների)՝ մինչև նույն նպատակին էին ծառայում: Այն է՝ գրավել ու բաժան-բաժան անել Օսմանյան հետաճող կայսրությունը: Դրանք պալատական բժիշկներից, երաժիշտներից սկսած մինչև տարբեր տեսակի ու կարգի խորհրդակցաններն էին, դիվանագիտական, բանկային անձնակազմը, թարգմանիչներ: Իսկ որ այդ թարգմանիչներին պարտաստում էր և՛ Հռոմը, և՛ Փարիզը, վաղուց էր հայտնի: Նույն այս դպրոցի շարունակությունը պետք է համարել ամերիկյան համալսարանների աստվածաբանական ֆակուլտետները, ուր ուսանելու էին ուղարկվում հիմնականում հայաշատ գավառների ուշին հայ երիտասարդներին: Նրանք երկիր էին վերադառնում թող որ լուսավորական, մարդասիրական, բարեգործական նպատակների համար գործելու (դպրոց, հիվանդանոցներ, ծերանոցներ, մամուլ, փոքրիկ ֆարիկաներ և այլն), սակայն այս բոլի ներքո զբաղված էին ամերիկյան արժեքների, բողոքականության բացահայտ քարոզչությամբ: Քրիստոնյա ազգաբնակչությանը կաշառելու, հոգևորության շքերթ էր կազմակերպվում: Աստվածաշնչի և կաթոլիկության, ավետարանական եկեղեցու տարածման առաքելություն: Ահա բողոքական ու կաթոլիկ հոգևորսքաղաքականության կողմից օգտագործվող կեղծ շղարշները: Կայսրությունը գրավելու համար կաթոլիկ ու բողոքական միախոնրներին կողմից, ցավոք սրտի, որպես հարմարագույն գործիք էին ընտրվել հայ ազգաբնակչությունը ու հիմնականում նրա վրա էին կենտրոնացվել ուժերը: Այն ուներ իր հիմքում շատ կարևոր սոցիալ-քաղաքական արձաններ: Հայերի ձեռքում էին գտնվում 100-ից ավելի արհեստներ, վաճառականությունը, տնտեսության կարևոր ճյուղեր, արվեստը, սեղանավորությունը, պալատի կարևոր պաշտոնները, ի դեմս ամիրայական դասի: Որպեսզի բաժան բաժան արվեր կայսրությունը, մալի պետք էր կոտրել հայկական ազդեցությունը:

Արևմտահայությանը չփոշխանալու, ուժացվելու դեմ ազատագրական պայքարի մղելով, ինչ որ չափով երկարաձգվում էր կայսրության հոգեվարքի լարը:

Արևմտահայության այս պայքարը ղեկավարում էին Կ.Պոլսի հայ պատրիարքները:

<sup>1</sup> Sel K.S., Türk Masonluk Tarihine Ait Üç Etüd, „Tarih ve Toplum“, İst., N 4, İst., 1972. s. 39. “Suha Umur, V Murad”ın Masonluğu, “Tarih ve Toplum”, İst., 1987. ocak, s. 36-39.

Հակառակորդ կողմից այս ամենն արվում էր միախոնրեմերի ու քարոզիչների մարդասիրական գործունեության թողով ազուցված այնպիսի բարձր մակարդակով, որ այն հաջողության գրավական էր հանդիսանում: Գործունեության միախոնրեմական ոճը բացարձակապես նույնությամբ կրկնվում է այսօր՝ գաղութային քաղաքականության նորանոր նյութական ու հոգեբանական հայտնագործություններով լրացված:

Արևմտահայության, մասնավորապես պոլսահայ մթնոլորտում ներքին բախումները պայմանավորված էին հայ և հունական եկեղեցու միջև Բարձր Դռան կողմից անընդհատ նյութվող դավադրություններով, և, իհարկե, Բ.Գումը՝ իր անորոշ կեցվածքով դեպի իրարամերժ կողմերը: Ամենացավալի հարաբերությունները՝ կաթոլիկ եկեղեցու օրեցօր աճող «գոհերի», մոլորյալների միջև էր: Բնականաբար պատրիարքարանը ևս զերծ չի մնացել օտար խարդավանքներից, երբեմն հենց պատրիարքի շրջապատում, ազգակիցների կողմից: Վերջինս ավելի մարդկային գործոնի ապացույց է հանդիսանում:

Մեր թվարկած հանգամանքները մեկտեղվել են շուրջ 300 տարիներ առաջ՝ 1715 թվականին, Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի (1678-1741) Բազմաշնորհ Կ.Պոլսոս պատրիարքի գահակալության (1715-1739) ժամանակ և իրենց արտահայտությունը գտել հայատառ թուրքերեն գրականության մեջ ևս: Նրանով առկեցուն է հատկապես ժամանակի հայատառ թուրքերեն պարբերական մամուլը:

Մեր ժողովրդի քրիստոնեության ընդունման առաջին իսկ հարյուրամյակից հայտնի են պատմության մեջ ընդունված եկեղեցական կայունության ու բախումների ժամանակաշրջան հասկացությունները: Հովհաննես Կոլոտ պատրիարքի աթոռակալման շրջանը պետք է համարել բախումների մի շրջան՝ նկատի ունենալով այդ տարիներին բնորոշ թե՛ ներքին, և թե՛ արտաքին բովանդակությունը:

Հովհաննես Կոլոտի ժամանակը, իսկապես, ամենաբարդերից է եղել: Այս տարիներին է, որ օտար դեսպանների ու հռոմեական եպիսկոպոսների ուժն ու ազդեցությունը պալատում բավականին մեծ է եղել: Նրանց հետախուզական գործողություններն Օսմանյան կայսրությունում հիմնականում ավարտված էին, և գործադրվում էր երկիրը մասնատելու ծրագրային հաջորդ քայլը:

Մուսուլմանական օրենքներով պատժվում էր մահանդականների շրջանում քրիստոնյա քարոզիչների գործունեությունը, ուստի վերջիններս պետք է գործեին միայն կայսրության հայատակ ժողովուրդների շրջանում: Ամենահարմար խայծերն ընտրված էին և որքան էլ ցավալի էր, առաջինների մեջ էր, եթե ոչ առաջինը՝ արևմտահայ ազգաբնակչությունը: Ներագրելու բոլոր միջոցները լավագույնս մտածված էին, նույնիսկ հայաշատ տարբեր նահանգների, տարբեր խավերի հա-

մար դրանք տարբեր են եղել: Գավառում ավելի ուշ հանդես է եկել հայերի շրջանում քացահայտ կաշառքի քաղաքականության գործադրումը: Այն ավելի կապվում է բողոքականների, նախ՝ լոնդոնյան, ապա «ԲՌԲ»-ի ամերիկյան կենտրոնի գործունեության հետ: Իսկ մինչ այդ այն, որպես կանոն, ավելի մարդասիրական, լուսավորական, քարոզչական ձևերով է արտահայտվել: Կաշառքը վերապահվել է Անատոլիայի թուրք դադիներին, կուսակալներին, վալիներին: Հռովմեականների «միջամտությամբ» նրանք հայերի վրա ներագրելու համար զավառներում մույնիսկ ինքնուրույն հոգևոր առաջնորդներ են նշանակել: Իրավունք, որը Բ.Դռան կողմից հրովարտակով վերապահված էր միայն Կ.Պոլսո պատրիարքներին:

1725թ. Սուլթան Սահմուդ Ա-ի Կոլտո Պատրիարքին շնորհված ֆերմանը «...առանց պատրիարքի առաջնորդություն չտալու, պատրիարքի գործերին չխառնվելու» մասին է: Օտարներին արգելված էր միջամտել, կառավարիչներին արգելվում էր քննարկել հայ հոգևոր առաջնորդների: Իհարկե, վերջին հանգամանքները շարունակում էին անօրինաբար գործադրվել:

Ահա այսպիսի բարդ ժամանակաշրջան էր Հովհաննես Կոլտո Պատրիարքի արժուակալման շրջանը:

Վատիկանի քաղաքականության դեմ Հովհաննես Կոլտոյի հետևությունները հանգում էին հետևյալին: Այն է՝ հայերի բաժանումը մայր եկեղեցուց դատապարտելի է, արժանի պախարակման և համարվում է ուխտադրություն, ազգուրացություն: Հովհաննես Կոլտոյի կարծիքով՝ օտար քարոզիչների նկատմամբ հետապնդումներն այնուամենայնիվ չպետք է կատարվեին որպես պատասխան գործողություններ՝ չգրգռելու նրանց ու հակառակության ոգի չարքնացնելու համար: Հակառակ դեպքում այն կհանգեցնեի ուրացողների թվի կտրուկ մեծացմանը: Անհրաժեշտ էին չափավոր գործողություններ ու խորը համոզումներ: Այս վերջինի իրականացման համար չափազանց կարևոր էր հասկանալի լեզվով արևմտահայությանը մատուցել անհրաժեշտ կրոնադավանաբանական-լուսավորական գրականություն: Մի բան, որ Հովհաննես Կոլտոյի քաղաքականության հիմնական մասերից էր և իրականացվում էր հայերեն ու հայատառ թուրքերեն՝ ձեռագիր ու տպագիր կերպով, միմյանց գուգահեռ:

Չմոռանալով, որ կարծիքի հայերի շրջանակում հայերեն չէին խոսում և կամ՝ թուրքերենն ու ֆրանսերենն էին գերիշխող: Հովհաննես Կոլտոն կարողացել էր իր շուրջը հավաքել լուսավորչական, նաև կարծիքի դարձած նշանավոր ու ազդեցիկ հայ ամիրաների, սեղանավորների, պալատական պաշտոնյաների: Ազդեցիկ ու երևելի հայ դեմքերը ակնհայտ, ավելի հաճախ նաև քաղուն՝ մեծապես օգտակար են եղել պատրիարքին, նրա ձեռնարկած շինարարական աշխատանքներում, հո-



վանավորել են հրատարակություններ, հաճախել առաքելական եկեղեցիները:

Գալով Հովհաննես Կոլոտի գործին՝ հետագայում այն շարունակել են նրա 23 աշակերտները, հետևորդները՝ մեծագույն ծառայություններ մատուցելով մեր մատենագրությանը, հարատևելով նրա փառքը, գործը<sup>1</sup>:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են Հովհաննես Կոլոտի շրջանի հետ առնչվող և միայն Կ.Պոլսում գրի առնված շուրջ 100 հայտատա թուրքերեն և հայերեն ձեռագրեր: Դրանք Ավետարաններ են, հայ և օտար հեղինակների ինքնուրույն և թարգմանական կրոնադավանաբանական, վարքագրական, պատմագրական երկեր, ծիսական գործեր, սաղմոսներ, քարոզներ (Հովհաննես Ծործորեցու քարոզները), բառգրքեր, վարքագրական գործեր, Եղիա Քյոնուրճյանի, Մարգիս Սարաֆի Հովհաննիսյանի գործերն ու թարգմանությունները, կարգ օսմանցոց թագավորաց, վեզիրների ցուցակ, պատճենը Պատրիարքարանի թղթոց և, իհարկե, հրաշալի տաղարաններ<sup>2</sup>:

Հայատառ թուրքերեն գրականության առաջին հարյուրամյակը նվիրված է եղել հայ առաքելական եկեղեցու կողմից կաթոլիկ ու բողոքական քարոզիչների գործունեության դեմ մղած պայքարին: Վեներտիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության և Կ.Պոլսի պատրիարքական դիվանները հարուստագույն աղբյուր են հանդիսանում այս ժամանակաշրջանի ուսումնասիրության համար: Դրանց կարևորագույն մի մասը հայատառ թուրքերեն է: Պիտի Գշել, որ այս շրջանի հայատառ թուրքերեն գրականությունն արդյունք է նաև հակառակորդ կողմի հրատարակչական, քարոզչական գործունեության: Այն տպագրվել է ոչ միայն Պոլսում: Մխիթարյանների կողմից տարբեր բառարանների, քերականների կողքին հրատարակված դավանաբանական հայատառ թուրքերեն գրքերն ունեցել են նաև լուսավորական բնույթ: Դրանք ծանոթացրել են քրիստոնեական կրոնի տարբեր ուղղություններին, տարբեր ուխտերին, նրանց հիմնադիրների գործերին, կաթոլիկ եկեղեցու սրբերին, կրոնաքարոյախոսական տարբեր գործեր: Պիտի ճանաչես թշնամուղ, որպեսզի պայքարես, հասկանաս նրան: Իզուր չէ, որ նույն գործին նվիրվեցին Հովհաննես Կոլոտի հիմնած թարգմանական դպրոցի անդամները, նրա աշակերտները՝ հիմնականում հայերենի թարգմանելով կաթոլիկ եկեղեցու հիմնական հեղինակների գործերը:

Հովհաննես Կոլոտ պատրիարքը ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքների վրա, որքան էլ որ դա ցավալի էր ընդունել, որոնք գործում էին ի շահ

1 Բանկյորճեան Գ., Յակոբ Նալեան Պատրիարք 1706-1764. կեանքը, գործերը և աշակերտները, Ստամբուլ, 1981, 279 էջ:

2 Այս մասին տես՝ Հ.Ստեփանյան, Հայագետ թուրքերեն գրականությունը, Երևան, 2001, Մաս Ա. էջ 5-84:

կաթոլիկների, այլազգի քարոզիչների: Այն է՝ հայ հոգևորականների զարգացման անբավարար մակարդակի և, ընդհակառակը, դավադիր կողմի ուսյալ, կրթյալ լինելու հանգամանքի փաստը:

Հայատառ բուրբերենով այդ շրջանի ամենից շատ տպագրված հեղինակներից էին Պաղտասար Դ-պիրը, Գևորգ Մխլայիմը, Հակոբ Նալյանը (չմոռանանք մեր ծեռագրերում «Նիխտի» ծածականվամբ Հակոբ Նալյան պատրիարքի հայատառ բուրբերեն բազմաթիվ գեղեցիկ բանաստեղծություն-տաղերը), Կեսարյան Մանուէլ Սրմաբեշը (Կարճիկ) և ուրիշներ:

Հայատառ բուրբերեն տպագրական շրջանը, որ սկսվել է 1727թվականից, ունեցել է 250 տարվա գոյության պատմություն և շատ ընդարձակ աշխարհագրություն: Կ.Պոլսի 90-ից ավելի տպարաններում՝ հրատարակվել են հայատառ բուրբերեն գրքեր ու պարբերականներ:

Պիտի շատ հեռատես լինել, որպեսզի ազգը ուժացումից փրկելու համար միաժամանակ երկու լեզվով պայքարի գրականություն ստեղծել:

Թուրքական հրատարակչական ու մտավորական շրջանակների կողմից այսօր մեծ հետաքրքրություն կա մասնավորապես հայատառ բուրբերեն մատենագիտության նկատմամբ: Դրա ապացույցներից է պոլսահայ հայտնի մատենագետ Գևորգ Բամպուրճյանի քառաստորյակի բուրբերեն տպագրությունը<sup>2</sup>: Դա նշանակում է, որ գիտակցվում է հայկական մատենագիտական նյութերի անփոխարինելիությունն ու հազվագյուտ արժեքը Օսմանյան կայսրության պատմության իրական ու գիտական ներկայացման համար:

Իհարկե, հայատառ բուրբերեն առաջին գիրքը 1727թ. Մխիթար Սեբաստացու կողմից տպագրվել է Վենետիկում: Մեր կարծիքով Մխիթար Աբբահայրը, որ երազում էր ազգը փրկել լուսավորության միջոցով, ուսյալ, կրթյալ կղերականների օգնությամբ, ի դեմս Հովհաննես Կոլտիի, տեսել է առաքելական մեծ մարդու, որի գործունեության մի հիմնական կողմն էլ լուսավորական, հրատարակչական, թարգմանչական, դպրոցաստեղծ գործն էր: Չմոռանանք նշել, որ հալածանքներից փրկված ու Իսալիա հաստատված Աբբահայրն իր ազատությամբ պարտական է եղել նաև հենց իր «հակառակորդ» Հովհաննես Կոլտիին: Սա լրացուցիչ մի փայլ է ավելացնում Կոլտիի անձին:

Հետաքրքիր հանգամանք է, որ պատրիարքարանին մոտ կանգնած ազդեցիկ,

1 Ստեփանեան Հ., Հայատառ բուրբերեն գրքերի և Հայատառ բուրբերեն պարբերական մամուլի մատենագիտություն, Ստամբուլ, 2005, 652 էջ:

2 Pamukciyan Kevork, Ermeni Kaynaklarından Tarihe Katkıları, Yayına hazırlayan Osman Köker. Cilt 1-İstanbul yazıları; Cilt 2-Ermeni Harfleri Türkçe Metinler; Cilt 3-Zamanlar, Mekânlar, İnsanlar; Cilt 4-Biyografileriyle Ermeniler, Aras Yayıncılık, İstanbul, 2002-2003, s. 249, 255, 373, 449.

մտավորական հայեր շահագրգիռ են եղել, որպեսզի խաղաղություն ու հաշտություն լինի Մխիթարյանների ու իրենց միջև: Ապացույցներից կարելի է հիշել Հակոբ Նալբանի Մխիթար աբբայի դեմ գրված «Կշիռ ժամանակի» գրքույկը ասպարեզից հանելը:

Ընդհանրապես, հավասարակշիռ, հանդուրժողական գործունեությունը Հովհաննես Կոլոտի քացառիկ արժանիքներից է եղել: Մենք հիմնականում նկատի ունենք նրա հարաբերությունները Պոլսի ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցիչների, դեսպանի, եկեղեցու հետ: Հայասնի են կաթոլիկների հետ փոխադարձ այցելությունները: Չափազանց կարևոր հանգամանք է եղել կարոլիկ հայերին մեր եկեղեցին այցելելու հնարավորությունից զրկելը, մեր եկեղեցու նկատմամբ նրանց կապվածությունը քաջալերելու, կաթոլիկ և առաքելական հայ ազգաբնակչությանը չքշնամացնելուն ուղղված բոլոր ջանքերը: Երբ հանդուրժողականության սահմանն անցնում էր, եկեղեցիներում կարողացվել են նզովքներ, ընդհուպ դիմել են սուլթանի միջամտությունը՝ ազգի մեջ խառնակություն մտցնող դավաճանների նկատմամբ հետապնդում իրագործելու, պատժելու, անգամ՝ մահապատիժ գործադրելու համար:

Հանդուրժողականության չափը Հովհաննես Կոլոտը հիմնականում կարողացել է պահպանել: Մինչդեռ Ավետիք Եվդոկացի պատրիարքի առևանգման փաստը ապացույց էր եվրոպական տերությունների կողմից իրենց նպատակներին հասնելու համար անգամ ոճրագործ ուղուց շանսալու քաղաքականության: Խոսքը վերաբերում է հետագայում վիսպալին երանգ ստացած Բաստիլի «երկաթե դիմակով մարդու» պատմությանը<sup>1</sup>:

Հովհաննես Կոլոտի հակառակորդներն անգամ նրան զնահատել են որպես լավ զգացումների տեր, ողջամիտ այր, իր աշակերտներին որպես գիտնական, ուսյալ անձեր, ճշմարիտ հավատքի հետևորդներ պատրաստող և անձամբ ուսուցանող մեծ անձ: Նա հիմնադրեց պոլսահայ գրական, թարգմանական դպրոցը: Նրա օրոք զարկ տրվեց ճեռագիր և տպագիր գրականությանը, այդ բովում հայաստան թուրքերեն գրականությանը, որը հետագայում ինքնուրույն ու ինքնաբավ մշակութային ահռելի զարգացում ունեցավ՝ իր մի կարևոր մասը միշտ վերապահելով հանուն հայ եկեղեցու պայքարին գործին: Այս գրականության աշխարհիկ բովանդակության հատվածը ծառայեց ոչ միայն այն ստեղծող հայ ժողովրդին, այլև մշակութային աներևակայելի հզոր երևույթ դառնալով՝ մեծապես նպաստեց Օսմանյան կայսրության բոլոր բուրբախտ ժողովուրդների և առաջին հերթին՝ թուրքերի լուսավորական շարժմանը, եվրոպականացման, զարգացման գործին՝ կարևոր ավանդ

1 Տե՛ր Ստեփանյան Արմեն, *Գևորգ Մխլայիմ*, «Էջմիածին» ամսագիր, 1984, հ. 5, էջ 36-44:



ունենալով «գարբոնքի» շրջանի մշակույթների զարգացմանը ողջ Օսմանյան կայսրությունում:

Բիարկե, միշտ չէ որ պատրիարք հայերը միաժույլ են եղել իրենց հոսիմ: Երբեմն պատրիարքները հրաժարվել են, երբեմն այդ հրաժարականը չի ընդունվել, երբեմն էլ հրաժարեցրել են, երբեմն վերընտրվել մի քանի անգամ, որ լրացուցիչ ծախսեր էր համայնքի համար ու հասույթի աղբյուր՝ ի շահ պալատի գանձարանի: Այս բարդագույն ժամանակաշրջանում ամենակարևոր հանգամանքը մեր կարծիքով եղել և մնում է մեր պատրիարքների ինքնուրույն մնալու, չթուլամալու ու դրա արդյունքում՝ պարտադրված քաղաքականություն չվարելու փորձանքից զերծ մնալու իմաստությունը, դիվանագիտական գործունեությունը: Մի բան, որը խոր հարգանքի և ներշնչման աղբյուր է հայ համայնքի համար և արժանապատվության պահպանում՝ կառավարող շրջանակների հետ շփվելիս:

Հովհաննես Կոլոտի շրջանը հայ ժողովրդի դեմ նախապատրաստված ու մշակված դավադրությունների իմաստով շատ աղերսներ ունի մեր այսօրյա վիճակի հետ, որը զգո՞ն դիտարկման դեպքում կարելի է դիմակայության անհրաժեշտ քաղաքականության գործադրման համար օրինակելի դաս ծառայել :

Ժողովուրդների պատմությունները կազմված են դեպքերի ու նաև դեմքերի պատմությունից: Նրանցից ոմանք, որքան էլ որ պատմական կարևորագույն հանգամանքներում են գործել, իրենց կյանքն ու գործը նվիրաբերել են ազգին: Ժողովուրդը այնուամենայնիվ սրբացրել է նրանց, ովքեր իրենց ժամանակի, ազգի խիղճ են եղել: Այդպիսին են եղել մեր շատ սրբացած հերոսներ, պետական ու հոգևոր գործիչներ:

Հազվագյուտներին է տրվում իրենց անունն անմահացնելու շնորհը:

Այդպիսին էր Յովհաննես Կոլոտ Կ.Պոլտ Երանաշնորհ Պատրիարքը, որի հիշատակի խնկարկումներն են Կ.Պոլտում և Երևանի Մատենադարանում կազմակարգված այս գիտաժողովները:

(Որպես զեկուցում կարդացվել է Երանաշնորհ Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի Պատրիարքի հիշատակին նվիրված գիտական նստաշրջանում (7 հունիս 2006թ. Երևան, Մատենադարան)

Տպագրված է «Էջմիածին», 2006թ. էջ 138-143 և «Նոր Կյանք» ամսագրերում (Բուխարեստ, 2007, 3, էջ 4)

## KEVORK PAMUKCIYAN

“ERMENİ KAYNAKLARINDAN TARİHE KATKILAR”

### ԳԵՎՈՐԳ ԲԱՄՊՈՒՔՃՅԱՆ

«ՀԱՅ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՆԵՐԳՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՉ»



2002-2003 թթ. Ստամբուլի «ԱՐԱՍ» երկվեզու հայկական հրատարակչատունը հետմահու լույս ընծայեց պոլսահայ հայտնի բանասեր ու աղբյուրագետ Գևորգ Բամպուքճյանի (1923-1996թթ.) թուրքերեն աշխատությունների քառահատոր ամբողջական շարքը<sup>1</sup>: Այն իրենից ներկայացնում է մեր մշակույթի նվիրյալի և համեստագույն մի անձի՝ իր կյանքի ընթացքում հրատարակած թուրքերեն հոդվածների, աշխատությունների ամբողջականությունը: Հատորներն ամբարել են 1956թ. ի վեր ուսումնասիրության 28 տարիների պտուղները՝ շուրջ 370 հրատարակված գործեր: Գիրքը հրատարակության է պատրաստել, ծանոթագրել, մեկնաբանել թուրք մտավորական, հրատարակիչ Օսման Քոթերը: Հրատարակության նախապատրաստման աշխատանքներին իր մասնակցությունն է բերել Գևորգ Բամպուքճյանի տարիների բարեկամ, կենսագիր բեյրութաբնակ մտավորական, պոլսահայ գրողների անթոլոգիաների հեղինակ Կարո Աբրահամյանը<sup>2</sup>:

Գ.Բամպուքճյանն հայագիտական իր հոդվածներով աշխատակցել է ոչ միայն հայկական, այլև Ստամբուլի և Անկարայի թուրքական շատ ու շատ գիտական պարբերականների, հանրագիտարանների<sup>3</sup>:

Գ.Բամպուքճյանի գործերի քառահատորյակի հրատարակիչները հատորները բաժանել են ըստ բովանդակային առումների:

Քառահատորյակի առաջաբանում գտնում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս,

- 1 Kevork Pamukciyan, *Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar*. Yayına hazırlayan Osman Köker. Aras Yayıncılık. İstanbul. 2002 –2003. Cilt 1-İstanbul yazıları; Cilt 2-Ermeni Harflı Türkçe Metinler; Cilt 3- Zamanlar, Mekânlar, İnsanlar; Cilt 4- Biyografileriyle Ermeniler.
- 2 Գևորգ Բամպուքճյանի կենսագրության և ուսումնասիրությունների մասին տես՝ Կարո Աբրահամյան. «Կալսական ու անկոխարիցեի կորուստ մը՝ Գևորգ Բամպուքճյան (1923-1996)», «Հասկ», է տարի. Անթիլիաս, Լիբանան, 1995-96թթ., էջ 659-670.
- 3 Գ.Բամպուքճյանը եղել է այն եզակի գիտնականը, որի համագործակցությանն են ապավինել թուրքական մի շարք ծանրակշիռ հանրագիտարաններ՝ հայկական նյութերը ներկայացնելու համար: Դրանք են՝ Քէշատ Էրբեն Գուշլի «İstanbul Ansiklopedisi», Յըլմազ Էօզբունայի «Türk Muzikisi Ansiklopedisi», Մուսաթաա Արղաղի խմբագրած «Türk Dili ve Edebiyatı Ansiklopedisi», «Անա» հրատարակչատան «Genel Kültür Ansiklopedisi» և «Ana Britanika», «Belleten» լուրջ հրատարակությունները:

երջանկահիշատակ Գարեգին Ա-ի 1997թ. ուղերձը Գ.Բամպուքճյանին՝ Թարգմանչաց տոնի առթիվ:

Գնահատանքի և աշխատանքային համատեղ տարիների հուշերով առաջնորդող մի հողվածով էլ համղես է եկել Կ.Պոլսո Թուրքիո Հայոց Պատրիարք, արքեպիսկոպոս Մեսրոպ Բ Մութաֆյանը:

Գ. Բամպուքճյան մարդու, քարեկամի, մտավորական դերվիշի, թուրքերեն և թուրքական հանրագիտարանների համար գրուած հողվածների, ընդհանրապես նրա մասին երախտագիտական խոսքերով հանղես են եկել թուրք գիտնականներ Ֆահրի Արալը, Թուրգուր Քուրը, Սաբրի Քոզը: Վերջիններս իրենց հայերենի իմացությամբ պարտական են Գ.Բամպուքճյանին, նրա հետ տարիների համատեղ աշխատանքին:

Առաջին հատորն ամբարել է Պոլսի պատմության տմենատարբեր դրվագները՝ ըստ հայկական «Պատմությունների», հայալեզու ու հայատառ թուրքերեն աղբյուրների: Նախ և առաջ՝ Պոլսի եւ հայերի, Պոլսի պատմությունը գրի առած հայերի ու նրանց ժամանակագրությունների մասին: Հիմնական հեղինակները, որոնց Պոլսի մասին թողած ժառանգությանն անդրադարձել է Գ.Բամպուքճյանը՝ պատմագիր, գրող, քննաստեղծ, քարգմանիչ, հրատարակիչ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանն է (1637-1695) և Վենետիկի Մխիթարյան միաբանության հայերից՝ պատմագիր, աշխարհագետ Ղուկաս Ինճիճյանը (1758-1833):

Առաջին հատորը՝ «*Istanbul. Yazıları*» (Ստամբուլը սկզբնաղբյուրներում), ներառել է Կ.Պոլսի պատմությանը նվիրված աղբյուրների ուսումնասիրությունները:

Հատորը ներկայացնող 51 հողվածները վերաբերում են Պոլսի պատմության ողբերգական դրվագներին, աղետներին, պատմական առանձին հուշարձաններին, պատմական դեմքերին, ներկայացնում սուլթանական, պալատական ժամանակագրության որոշակի հատվածներ: Այս բոլորն արժեքավոր է նրանով, որ սրանք հիմնականում եզակի հուշարձաններ են, որ կարող են լույս սփռել ժամանակի կարևոր իրադարձությունների վրա, մաս՝ հավաստի աղբյուրների լույսի ներքո թույլ տալ լուծելու պատմության որոշ գաղտնիքներ: Այս առումով հետաքրքրական են պատմական բովանդակության մի քանի դեստաններ, ժամանակագրություններ: Հետաքրքիր են Պոլսի հայ բնակչության պատմության հետ կապված հողվածները: Այն է՝ հայկական հիվանդանոցների, գերեզմանոցների, դպրոցների, եկեղեցիների, կղզիների մասին: Հայ-թուրքական առնչություններին, Օսմանյան կայսրության այս կամ այն ասպարեզում հայերի ունեցած դերին նվիրված հողումները երկակի արժեք են ներկայացնում:



Գ.Բամայուքճյանի ուսումնասիրությունների, նախասիրությունների հիմնական ոլորտը բուրքալեզու (հայատառ բուրքերեն) երկերն են եղել:

Երկրորդ հատորը՝ «*Ermeni Harflri Türkçe Metinler*» (Հայատառ բուրքերեն սկզբնաղբյուրները) նվիրված է հայատառ բուրքերեն ձեռագիր աղբյուրներին, այսինքն՝ Գ.Բամայուքճյանի հայատառ բուրքերեն աղբյուրների ուսումնասիրությանը նվիրված 31 հոդվածներին, աշխատություններին<sup>1</sup>:

Ռոբեր Կոփքաշի 45 էջերից բաղկացած հայատառ բուրքերենը ծանոթացնող առաջնորդողում անդրադարձ կա հայատառ բուրքերեն ձեռագիր գրականությանը, աշուղական դպրոցներին, տպագիր գրականությանը, Մխիթարյան միաբանության ավանդին, մասնավորապես թարգմանական գրքերին, պարբերականներին, որոշ հեղինակների ու նրանց գործերին: Տրվում է հայատառ բուրքերենի մասին գրականության ցանկ, իսկ հոդվածն ամբողջությամբ հավելված է գրքերի տիտղոսաթերթերի, հեղինակների, աղբյուրների բազմաթիվ նկարներով:

Հայատառ բուրքերենին նվիրված հատորում (ինչպես և Կ.Ռոլսոն մասին աղբյուրների գիտական հրատարակություններն ամփոփող Ա հատորում) որոշակի թիվ են կազմում 17-րդ դարի հայտնի հեղինակ Երեմիա Չելեպի Բյուրքճյանի (1637-1695) գործերը, որոնք նույնքան արժեքավոր են հայագիտության, որքան և բուրք պատմագրության համար: Գ.Բամայուքճյանը խմբագրել է աղբյուրագիտական հույժ կարևորություն ունեցող 2 հայ հեղինակների չափածո ներթողները՝ նվիրված իր համեմատաբար հայանպաստ քաղաքականությամբ հայտնի Սուլթան Մահմուդ Բ-ին և վերածել դրանք լատինատառ բուրքերենի, դարձնելով նաև այսօրյա բուրք ընթերցողի սեփականությունը: Այս հատորում մի քանի պատմական դեստանների ընդգրկված լինելը հայատառ բուրքերեն աղբյուրների բացառիկ կարևորության հերթական ապացույցն է: Ընդհանրապես, հայատառ բուրքերեն չափածո պատմական գործերը՝ «դեստանները», մինչ այժմ ստվերում են գտնվում, և դրանց լատինատառ բուրքերենի վերածելը, ասպարեզ բերելը, ծանոթագրելն ու տպագրելը՝ խորին հարգանքի է արժանի: Սա նախադեպ է ստեղծում, որպեսզի մեր գրականությունը, պատմագրությունը հարստանա ոչ միայն նոր ստեղծագործություններով, այլև նոր հեղինակներով, որոնք մինչ բամայուքճյանական հրատարակությունները, ծանոթ չէին: Հատորը միայն սկզբնաղբյուրների, մինչ օրս անծանոթ նյութերի առատության կողքին՝ բազմաթիվ գիտական մեծ ու

1 Հատորն առաջնորդող Ռոբեր Կոփքաշի հոդվածից իմանում ենք, որ հրատարակիչների համար մասնավորապես օգտակար են եղել նաև մեր «Հայատառ բուրքերեն գրականությունը» մեծագրությունը, հայատառ բուրքերեն գրքերի և պարբերականների մեր կազմած մատենագրությունները, որը հրատարակիչների կողմից հայերեն աղբյուրները գնահատելու փորձ ենք նկատում:

փոքր հայտնագործություններ է նվիրում ընթերցողներին: Այս նյութերի գիտական նոր ուսումնասիրությունները մի շարք բացահայտումներ են ընձեռնելու ուսումնասիրողներին:

Երրորդ հատորը՝ «*Zamanlar, Mekânlar, İnsanlar*» (Ժամանակներ, բնակավայրեր, մարդիկ) ներառում է հայ երևելիների, մասնավորապես՝ ամիրայական ընտանիքների, Օսմանեան կայսրության կյանքի տարբեր բնագավառներում հայերի ունեցած ներդրումների, կայսրության ու սուլթանների կյանքի առանձին դրվագների վերաբերյալ Գ.Բամպուքճյանի տպագրած հայկական սկզբնաղբյուրների շուրջ առանձին գիտական ուսումնասիրությունները, աղբյուրների հրատարակությունները: Հատորում տեղ են գտել Գ.Բամպուքճյանի այն հոդվածները, որոնք նա գրել է ի պատասխան թուրքական մամուլում տպագրված հակահայկական, կամ հայ իրականության որևէ խնդրի առթիվ աղավաղումներ պարունակող հոդվածներին: Մեղմ, գուսպ գրչով, գիտական ու պատմական անհերքելի փաստարկներով ի չիք են դարձվել կանխամտածված հարձակումները, հերյուրանքներն ու հակահայկան մթնոլորտը շիկացնելու ձգտումները: Դրանց չուշացող բամպուքճյանական պատասխանները նպաստել են հայ և թուրք մշակույթների կամրջմանը, հնարավորինս, զոհն իր աշխատակցած հրատարակություններում կանխել է մեր մշակույթի, պատմության շուրջ կանխակալ գործերի, խեղաթյուրումների թվի աճը: Յուրաքանչյուր հակահայկական հոդված, որը այս կամ այն կերպ առնչվել է գիտության հետ, անպայման որպես պատասխան ունեցել է Գ.Բամպուքճյանի գուսպ, համոզիչ հակահարվածը: Մթնոլորտին մեծապես նպաստել է նրա բարեխիղճ ուսումնասիրողի մեծագույն հարգանքի արժանի կեցվածքը:

Կ.Պոլտ Պատրիարքարանի ավագ քարտուղար, մշակույթային հարցերով խորհրդական, պատրիարքարանի դնրավոր արխիվի և մատենադարանի պատասխանատու, սակայն միշտ համեստ, պարտաճանաչ ուսումնասիրող և հետազոտող անձ, որը մեղվաջան աշխատանքով մաքրեց, ցուցակագրեց, կարգավորեց հազարավոր փաստաթղթեր, մամակներ, կավածագրեր, ձեռագրեր, պատառիկներ, եկեղեցական գրագրության բազմաթիվ հատորներ, գրադարանը, մամուլը: Նրա լեզուների իմացությունը նպաստեց գնահատելու և հասկանալու, գրելու, տպագրելու ամեն մի նորահայտ նյութ, կոնդակ՝ ծառայեցնելով դրանք հայ եկեղեցու պատմության ու հայ ժողովրդի մշակույթի հարստացմանը:

Հետաքրքիր է Դ հատորի շապիկը: Սա նկարիչ Դիմիտրի Նալբանդյանի «Վերնատան» հայտնի նկարն է, ուր հայ մտավորականները մեկտեղված են դաշնամուրի առջև նստած Կոմիտասի շուրջը: Միայն վերջին՝ Դ հատորն է, որ կազմված չէ նախկինում տպագրված հոդվածներից՝ «*Biyografilerile Ermeniler*» (Հայ

կենսագրություններ): Գ.Բամայուքճյանի «թղթերը» ամօրհան են եղել հայ կենսագրականներով: Դրանց մի մասը ուսումնասիրությունների, տպագրված և անտիպ հոդվածների նյութեր են եղել: Կենսագրությունների մյուս մասը՝ հոդվածներին կից են, տեքստերի վրա հավելագրված, նշումների ձևով: Վերջիններս բնականաբար ավելի շատ միտված են եղել ծառայելու հենց իրեն՝ հեղինակին: Կենսագրականների ահա այս երկու տեսակներից է կազմված վերջին հատորը՝ շնորհիվ հրատարակիչների ու խմբագրի տքնաջան աշխատանքի:

«Խմբագիրը, խղճամիտ ու գիտական բժախնդրութեամբ իրարմե գատորոշած է երկու տեսակ կենսագրականները, առաջինը՝ լայնաշունչ ու հեղինակին կողմէ գրի առնուած իբր ամբողջական կենսագրություն, երկրորդը՝ միայն մեկ կամ երկու տողով, հեղինակին կողմէ գրուած որպէս սիւնակներու տակ ենթատեղեկութիւն: Առաջինները տպուած են մեծատառ, իսկ երկրորդները գրուած են մանրատառ: Այս կերպով հարգուած է հեղինակին գիտական վարկը, քանի որ ողբացեալ Բամայուքճան անշուշտ երբեք չէր երեսակայած, քէ իր այդ ցիրուցան կենսագրական մօթերը օր մը պիտի կարենային մեկտեղուի որպէս կենսագրական բառարան»,-գրում է Պոլսի «ՄԱՐՄԱՐԱ» օրաթերթը:

Հրատարակիչն իր առաջաբանում, գնահատելով թուրքական հանրագիտարաններին աշխատակցելու նրա վաստակը, նշում է, որ Գ. Բամայուքճյանը որպէս հայ է դասել նաև այն անձանց, որոնք, հայկական ծագում ունենալով հանդերձ, ավելի ուշ ընդունել են մահմեդականություն, ինչպէս օրինակ թուրք իրականության ամենահայտնի անուններից մեկը՝ Միմար Սինանը: 450 էջերում տեղ են գտել նաև մի շարք հայտնի բանաստեղծներ, աշուղներ, որոնք թուրքական ծածկանուններ են ունեցել: Դրանցից են, օրինակ, «Նիխատի» անվան տակ՝ Կ.Պոլսի հայոց պատրիարք Հակոբ Նալբանը, 18-րդ դարի աշուղ Կարապետ Դըղանը՝ յայտնի որպէս «Էարաջաօղլան»<sup>1</sup>: Կենսագրական հատորում օսմանցիների պաշտամունքի առարկա ճարտարապետը տեղ է գտել որպէս «Սինան» կամ «Քոնա Սինան»:

Դ հատորն արժեքավոր է նաև նրանով, որ գրքի վերջում տեղ է գտել Գ.Բամայուքճյանի հայերեն ուսումնասիրությունների, առանձին հոդվածների ցանկը: Այն չափազանց հետաքրքիր է ոչ միայն ուսումնասիրողների համար, այլև հայ մշակույթով հետաքրքրվողների համար: Ցուցակը սկսվում է 17-18-րդ դարերի մեր ամենահայտնի հոգևոր գործիչների՝ Հովհաննես Կոլոտ և Հակոբ Նալբան Կ.Պոլս պատրիարքների մասին Գ.Բամայուքճյանի մենագրությունների արձանագրմամբ:

1 Գ. Լևոնյան, Հայ աշուղները և նրանց արվեստը, Ե., 1944, էջ 34: Ամիրյան Խ.Պ., Միլո բեման թուրքալեզու հայ աշուղների երգերում. («Արևելագիտության հարցեր» ԵՊՀ ժողովածուի 1-2 համարում, Եր. 1983, էջ 230): Ամիրյան Խ.Պ., Թուրքալեզու հայ աշուղներ, Օսմանյան Կայսրություն. 16-20-րդ դարեր, 1990, Օլնե-սու Բուս (Ֆրանսիա):



Այս աշխատություններում արտացոլվում է արևմտահայ իրականություն ներխուժած կաթոլիկական կրոնի, մաս դրա դեմ ուղղված հայ ժողովրդի պայքարը, որ դեկավարում էին Կ.Պոլստ պատրիարքները հայ առաջադեմ մտավորականության հետ միասին: Հովհաննես Կոլոտի ստեղծած «Գրական-բարգձմանական» դպրոցի, նրա ավանդույթները շարունակող Հակոբ Նալյանի գործունեությամբ են պայմանավորված եղել այդ շրջանի գրական ժառանգության կարևոր մաս կազմող հաստատ թուրքերեն ինքնուրույն և բարգձմանական գործերը: Առեղի փաստական նյութ է ամբարված այս մեծագործություններում, որը մեր ժողովրդի պատմության շատ ու շատ անհայտ էջերի վրա լույս է սփռում: Փաստական հարստագույն նյութ, որը կարող է աղբյուր ծառայել մի քանի լուրջ ուսումնասիրությունների համար, մանավանդ որ այս արժեքավոր նյութը ինքնին կհարստանա քննական մոտեցման արդյունքում: Այս աշխատությունների մեծագույն արժեքներից է Կ.Պոլստ Հայոց Պատրիարքարանի մեծերի, հոգևոր գործիչների եւ Մխիթարյան միաբանության հայրերի, մասնավորապես Մխիթար Մեքաստացու ու մյուսների միջև նամակագրական հարուստ նյութը, որը նոր էջ է հայ իրականության մեջ միջեկեղեցական հարաբերությունների արտացոլման տեսակետից: Ի տարբերություն մեզ հայտնի հասունյանական պայքարի շրջանի՝ մխիթարյանների հետ այս կապը չափազանց հուզիչ է ու շատ հետևութիւններ սկսկալող, ի շահ մեր ժողովրդի տարբեր եկեղեցիների ու նրանց հովվապետերի միջև հարաբերությունների լուսաբանման:

Գլխական հրատարակության պատրաստած աղբյուրագիտական արժեքների թվում են Երեմիա Չելեպի Քյոնուրճյանի «Պատմութիւն Հրակիզման Կոստանդնուպոլսոյ» եւ «Իսթանպուլ Թարիիի»-ն, Միքայել քին.Երամյանի «Պատմութիւն Արմաշու», Տրդատ քին. Ուղուրլյանի «Պատմութիւն Կիլիկեկեան գերդաստանի» երկերը: Գ.Բանպուրճյանի գիտական ծառայություններից մեկն էլ այն է, որ նա թուրքերենի է թարգմանել կամ լատինատառ թուրքերենի վերածել, ծանոթագրել է մի շարք կարևորագույն սկզբնաղբյուրներ, կազմել հայալեզու և հայատառ թուրքերեն մամուլի մատենագիտություններ: Ինչպես հայտնի է, հայատառ թուրքերեն ձեռագրերի մի գերակշիռ մասը աշուղական արվեստի նմուշներ են, տաղարաններ: Սա ժողովրդական ստեղծագործության ու առանձին անհատ ստեղծագործողների մի ամպիսի փունջ է, որն անհատում ուսումնասիրությունների, տաղարանների հրատարակման, նորանոր բացահայտումների, նոր արժևոյունների է սկսկալում: Հայատառ թուրքերեն տաղարաններն արժեքավոր են նրանով, որ նրանց շնորհիվ կարող ենք վերականգնել մի քանի հարյուրամյակներ Արևելքում շրջած բազմազգ աշուղների ինքնուրույն տաղերը, ճշտել նրանց անձերը, հետևել այս մշակույթի զարգացման ընթացքին՝ ունենա-

լով ոչ միայն երգերի բառերը, հեղինակների անունները, այլև արևելյան եղանակների, ռիթմիկայի ընդհանուր պատկերը<sup>1</sup>: Հայտնի է, որ միայն 17-19-րդ դդ. ավելի քան 400 հայ աշուղներ ստեղծագործել են միաժամանակ հայերեն եւ թուրքերեն լեզուներով: Հայատառ թուրքերեն տաղարաններում և առանձին ժողովածուներում տեղ գտած տաղերը դրա լավագույն արտահայտություններն են<sup>2</sup>: Մամավանդ թուրքերենով ստեղծագործած տաղերը հարկ է, որ մատչելի լինեն նաև թրքախոս հասարակությանը: Այս առումով գնահատելի է «Ճիհան» (Աշխարհ) հայատառ թուրքերեն գրական, գիտական, առևտրական, ճանապարհորդական, կենսագրական, արդյունաբերական շաբաթական հանդեսի (Կ.Պոլիս, 1884-1885թթ.) արտոնատեր ու գլխավոր խմբագիր, արևմտահայ նշանավոր մտավորական Տիրան Քելեկյանի շուրջ 150 տաղերի լատինատառ թրքերենի վերածումը քանասեր Գ.Բամպուրճյանի կողմից:

Գ.Բամպուրճյանի հայալեզու տպագիր ու անտիպ գործերի ցուցակը Կարո Աբրահամյանի աշխատասիրությանն ենք պարտական: Հայերեն աշխատասիրությունների ցանկը, «ՄԱՐՄԱՐԱ»-ի կարծիքով ևս կարող է լրացվել<sup>3</sup>:

Քառահատորյակի կազմության գործում իր ջանասեր աշխատակցության համար գրքի հրատարակչներն ու խմբագիրը մի շարք առիթներով իրենց երախտագիտությունն են հայտնում Կարո Աբրահամյանին: Նա Գ.Բամպուրճյանի կենսագիրը լինելու պատվավոր պարտականություն ունի: Ամենայն խնամքով կազմված այս ցուցակում գտնում ենք Գ.Բամպուրճյանի աշխատակցած պարբերականների, հանրագիտարանների ու դրանցում տպագրված հոդվածների անվերջանալի ցանկը:

Ափսոս, որ Գ.Բամպուրճյանի անտիպ գործերի ցանկը ևս բավականին մեծ է:

Վերջին հատորն ավարտվում է «Գ.Բամպուրճյան աղբյուրագետի» օգտագործած հայալեզու եւ հայատառ թուրքերեն գրակառույթյան լատինատառ հայերեն ցանկով: Դրանք հայկական պարբերականներ են, տարեգրքեր, հանրագիտարաններ, գրքեր՝ որոնք այնքան օգնել են հեղինակին տարիների իր ուսումնասիրությունների ընթացքում: Թվում է, թե հրատարակչները ավելի շատ նկատի են ունեցել այն հանգամանքը, որ այս ցուցակը առաջնորդող կլինի այսօրյա հայ, թուրք ուսումնասիրողների, երկու ժողովուրդների մշակութային կապերի, դրանցով հետաքրքրվողների համար:

1 Երևանի Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 197, 201-215 (Նոր ձեռագրերի հավաքածու):

2 ՄԱՐՄԱՐԱ, «Լոյս տեսա Գեորգ Բամպուրճեանի Զորրոյր Թրքերեն Հատորն ալ. Այս Փառավոր Հատորը Կ'ընդգրկէ...», 24 սեպտեմբեր 2003թ. էջ 1 եւ 4:

3 Անդ., էջ 4:

Գ.Բամպուբճյանի թուրքերեն աշխատասիրությունների այս քառահատորյակը թուրք և հայ հրատարակիչների անչափ ողջունելի մի գործն է, նրա գիտական ժառանգության ու հիշատակի խնկարկումը, որը պիտի մեզ մոյի հայ մասնագրությունն այդչափ նպաստ բերած մեր պոլսահայ հայրենակցի գործերի թարգմանությունը, հրատարակությունը կազմակերպելուն, ապահովելու նրա անվան արժանի տեղը մեր հանրագիտարաններում, հայ գրականագիտության ու պատմագրություն մեջ<sup>1</sup>:

«Պատմա-Բանասիրական Հանդես», ՀՀ ԳԱԱ, 2005, 2 (169), էջ 318-321  
և «Հայկական Հանրագիտական Հանդես», Ռկյուր, 2006թ., հ. ԻԶ, էջ 360-368.

## **Կ.ՊՈԼՍԻ ՄԱՔՍԱՏԱՆ ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐԲԵՐԵՆ ԵՐԿՈՒ ՍԱԿԱՅՈՒՅՅՆԵՐԸ** (ՄՄ՝ 8015 և 8016 ձեռագրեր)

Հայատառ թուրքերեն ձեռագիր և առավել ևս՝ տպագիր գրականությունն իր ընդգրկումով չափազանց ընդարձակ է: Այսօր, երբ մենք որոշակի կարծիք ունենք տպագիր շրջանի մասին, որպես ինքնուրույն, ինքնաբավ, հարուստ ու իր շրջանի համար չափազանց առաջավոր գրականության, նույնը կոչվարանանք ասել հայատառ թուրքերեն ձեռագրերի մասին, մինչև չունենանք պահպանված բոլոր ձեռագրերի մասին տեղեկություններ, ձեռագրացուցակներ, եթե նույնիսկ չբաղձանք ունենալ ավելին՝ շատերի քննական բնագրերի գիտական հրատարակություններն ու նրանց մասին ուսումնասիրությունները:

Ավելորդ է ասել, որ մեր մշակույթի այս յուրատեսակ մասը շատ ու շատ հետաքրքիր, չբացահայտված, արժեքավոր, եզակի նյութեր է պարունակում, որը որպես ժառանգորդների՝ մեզ պարտավորեցնում է քամահրանքով չվերաբերվել դրան, պահպանել, արժևորել, քանզի հավակնող մի որոշակի հատվածի համար, օտար տեր կա՝ սեփականացնելու իր տևական ձգտումներով, փորձերով:

Վերջին հանգամանքը բնական է: Օսմանյան կայսրության պատմության համար անկրկնելի ու բացառիկ են ինչպես հայերեն, այնպես էլ հայատառ թուրքերեն

<sup>1</sup> Տողերիս հեղինակը բեև պատիվ շի ունեցել անձամբ ծանոթ լինելու Գ.Բամպուբճյանին, սակայն տարիների ջերմ, բարեկամական, մասնագիտական նամակագրություն է ունեցել նրա հետ, և երախտագիտությանը է հիշում նրա գնահատականները, մեծ սիրով պահում նրա նվիրած ու հեղինակված գրքերը, հայատառ թուրքերենի վերաբերյալ սեփական և թուրք գործընկերների հոգիվածների առանձնատիպերը:



աղբյուրները, վավերագրերը: Այս հանգամանքը շատ լավ գիտակցվում է այսօրյա թուրք գիտնականների կողմից: Մի քանի մեզ ծանոթ և անծանոթ գիտնականներ զբաղվում են հայաստան թուրքերենի տարբեր բնագավառներով: Հայաստան թուրքերեն հուշարձանների հիման վրա գրվում են գիտական թեզեր: Դրանք թվում այսօր օտարազգի գիտնականներ էլ կան: Հիմնական նյութը, որը հետաքրքրում է նրանց, դա աշտուղական ծով գրականությունն է, Օսմանյան պատմության վերաբերյալ ձեռագրերը, առանձին սուլթանների ժամանակագրությունները, ինչպես նաև թարգմանական գեղարվեստական գրականությունը, որը հիմք է հանդիսանում այդ ստեղծագործությունների լատինատառ թարգմանությունների համար: Այս տիպի հետաքրքրության ապացույց է պոլսահայ հայտնի մատենագետ Գևորգ Բամպուկեյանի հայաստան թուրքերեն աղբյուրների ուսումնասիրությունների հետմահու հրատարակումը 4 պատկանելի հատորներով<sup>1</sup>: Գալով չորրորդ հատորին, ապա այն կենսագրական բառարան է, որի մի մասը հրատարակիչներն ուղղակի հավաքել են բանասերի ձեռագրերի լուսանցքներից և ծանոթագրություններից: Այս գործերը տարիներ շարունակ սնել են թուրքական հանրագիտարանները, գիտական հրատարակությունները, մամուլի էջերը՝ երկուստեք շնորհակալ գործ կատարելով թե հայերեն, թե հայաստան թուրքերեն գրականությունն ու աղբյուրները վերհանելու, մշակելու առումով և թե այն ծառայեցնելու թուրքական գիտությանն ու մշակույթին: Մեղմ, զուսպ գրչով, գիտական ու պատմական անհերքելի փաստարկներով ի չիք է դարձվել թուրքական գիտական հրատարակություններում տպագրվող հոդվածներում առկա կանխամտածված հարձակումները, հերյուրանքներն ու հակահայ մթնոլորտը շիկացնելու ձգտումները: Ավելացնենք միայն, որ մեր մշակույթի երախտավորի անունը հայկական հանրագիտարանային գրականության մեջ առայժմ բացակայում է:

Հայաստան թուրքերեն ձեռագրերի մի որոշակի մասը ուղղակիորեն կան անուղղակի արտահայտություններն են Օսմանյան կայսրության տնտեսական իրավիճակի: Դրանք արտահայտվում են հարևանցիորեն շատ ձեռագրերում, սակայն որոշակի ձեռագրեր ուղղակի այդ խնդրին են վերաբերում: Դրանք կալվածագրեր են, մուրհակներ, նամակներ, պատճենք պատրիարքարանի թղթոց, սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր, առևտրական գործառնության օրինակներ, կալվածային գործի մանրամասն հաշվենախյաններ (օր. Սվազից, Կյուլպենկյան կալվածքների) և այլն:

1 Kevork Pamukeciyan. Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar.Yayına hazırlayan Osman Köker. Aras Yayıncılık. İstanbul. 2002 –2003. Cilt 1-İstanbul yazıları; Cilt 2-Ermeni Harfli Türkçe Metinler; Cilt 3- Zamanlar, Mekânlar, İnsanlar; Cilt 4- Biyografileriyle Ermeniler. Ştu Gült' Şmasıh Sıntıfımsınan, Գևորգ Բամպուկեյան, Հայ աղբյուրների ներդրումը պատմության մեջ: Հայկազեան Հայագիտական Հանդես, հ. ԻԶ, Պեյրոս, 2006, էջ 362-368:

Տպագիր հայատառ բուրբերեն գրականության մեջ այն վերաճում է մասնագիտական ուսումնական հաստատությունների համար նախատեսված տնտեսագիտության բնագավառն արտահայտող թարգմանական դասագրքային հրատարակությունների՝ հիմնականում գերմաներեն լեզվից: Տնտեսության ավանդական ու երկիր նոր մուտք գործող ճյուղերի կատարելագործման ու ներդրման համար տպագրվում են շերամապահության, մետաքսագործության, անասնապահության, անասնաբուծության ուղեցույց ձեռնարկներ, քարտեզներ, քաղաղեզու մասնագիտացված բառարաններ. գյուղատնտեսների ու վաճառականների համար մասնավոր տարեգրքեր:

Խնդրո առարկա են հայատառ բուրբերեն երկու ձեռագրեր, որոնք պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Դրանք Կ.Պոլսո նավահանգստի մաքսատան սակացույցներ են<sup>1</sup>, զրված 1802 թվականին: Գրիչն է ոճն Անտոն: Մեզ հայտնի է, որ Պոլսի մաքսատան ամենափայլուն շրջանը մետաքսագործության մի քանի գործարաններ բացած, շերամապահության երախտավոր, հայտնի վաճառական և հայ թատրոնի մեծ համակիր Սարգիս Ամիրայի (1742-1815) որդի Սկրտիչ Դեզաիրյան ամիրայի (1805-1860) կառավարության շրջանն է եղել: Այս շրջանում մաքսատնային փաստաթղթերը (օսմաներեն, հայատառ բուրբերեն) հնարավորինս պատշաճ վիճակի են բերվել, մեծապես խոչընդոտելով թուրք և օտար դիվանագիտական շահագրգիռ շրջանակների անօրինությունները: Նրա տնօրինության տարիներին (1850-ական թթ. սկզբներին) մաքսային շահույթներն աննախընթաց չափերի են հասել: Այդ տարիներին նավահանգստում հայ պանդուխտ քեռնակիրների թիվը հազարների է հասել: Սկրտիչ Դեզաիրյան ամիրան զոհ գնաց իր հովանավոր Մեծ եպարքով Մուստաֆա Ռեշիդ փաշայի բռնամիների մեքենայություններին ու ամեն ինչ կորցրեց:

Մեզ հետաքրքրող վերոհիշյալ ձեռագրերը պատկանում են դարասկզբին՝ Մուլթան Սելիմ Գ-ի գահակալության (1789-1807) շրջանին: Ինչպես հայտնի է Մուլթան Սելիմ Գ-ն հոր՝ Մուլթան Մուստաֆա Գ-ի օրինակով ոչ միայն անձնական շփման մեջ էր ֆրանսիական դեսպանների ու հյուպատոսների հետ, այլև մարդ էր ուղարկել Ֆրանսիա՝ տեղում ծանոթանալու այս բնագավառում եվրոպական առաջադիմությանը<sup>2</sup>:

<sup>1</sup> Սակացոյց Մաքսատանն Կ.Պոլսոյ, ՄՄ ձեռ. 8015, 10 թերթ և ձեռ. 8016, 12 թերթ:

<sup>2</sup> Յ.Սլիբունի, Պօլիս եւ իր դերը: Պեյրոս, 1970, հ. 2, էջ 33: Այս մասին տես նաև՝ Kevork Panukciyan. Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar.Yayına hazırlayan Osman Köker. Aras Yayınclılık. İstanbul. 2002 –2003. Cilt 2-Ermeni Harflı Türkçe Metinler; “ Manchester Ermenilerin Ait Ermeni Harflı Türkçe Eski Bir Belge”, s.171-173, “Mahmuda Dair Dört Manzum Methiye”, s. 174-190.

Այս շրջանը հայտնի է «Նիգամի Ջեդիդ» բարենորոգումների անվամբ, որը հաջողության չհասավ, քանզի երկրում բարենորոգությունների անցկացման սուլթանի մտահոգությունը կիսող համակիրների խումբը հակառակորդների մի հսկա բանակ ուներ իր դեմ: Մուլթան Սելիմ Գ-ն իր բարենորոգումների ծրագրի իրականացման համար դիմեց «գավուր» Եվրոպայի օգնությանը՝ հասկանալով, որ խաղում է ոչ միայն իր հեղինակության, այլև իր կյանքի հետ: Երկիր, ուր շուրջ 40 սուլթաններից 3-ը հոգեկան հիվանդներ էին եղել, 14-ը գահընկեց, Բալազետ Ա-ն՝ անճանապահ, Մուրադ Բ-ն հրաժարվել էր գահից, 6 ապագա սուլթաններ սպանել էին իրենց եղբայրներին՝ գահին տիրանալու համար և այլն:

Ահա կայսրության եվրոպականացման սուլթանական մտահոգությունների շրջանի արդյունք են այս երկու «Սակացույցները»: Գրանք վերաբերում են Ռուսաստանից (Մոսկովից) եկող վաճառականների ապրանքներին և Ռուսաստան տարվող ապրանքներին: 10 և 12 թեթեքից կազմված այս երկու ձեռագրերը փաստորեն նույն որակն են արտահայտում: Չեռ. 8015-ը կազմելիս հիմք է ընդունվել ներմուծվող ու արտահանվող ապրանքներն ըստ տեսականո: Չեռ. 8016-ը կազմելիս սակացույցում նույն այս ապրանքներն են՝ միայն թե ըստ այբբենական կարգի: Ուրիշ ի՞նչ սկզբունքներով են կազմված սակացույցերը: Առաջաբանը ներկայացնող էջերում հատուկ նշվում է, որ սույն սակացույցները հաստատված են օսմանյան զինվորական համապատասխան կոչում ունեցող մաքսային պաշտոնյաների՝ Իբրահիմ Իսմեթի և Ահմեդ Աքըֆի կողմից: Այն նախատեսված է Ռուսաստանից բերվող և Ռուսաստան տարվող ապրանքների համար: Նախապես ասենք, որ դրանց որոշակի մասը ո՛չ ռուսական և ո՛չ էլ օսմանյան կայսրությունների ապրանքներ են: Սակացույցները կազմված են աղյուսակային սկզբունքով: Նախ ներկայացվում են համապատասխան ապրանքային խմբերի վերնագրերը (կտորեղեն, մորթեղեն, ապակեղեն, համեմունքներ և այլն): Ապրանքների անվանումների կողքին դրանց պայմանական չափերն են (օխա, թոփ, արշին, դիրհեմ, հատ, 12 հատ, 100 հատ, գույգ, տուփ, շիշ և այլն): Աղյուսակի հաջորդ սյունակը հատկացված է գներին և ապա՝ մաքսի չափն է նշվում:

Երկրորդ ձեռագրում գնի սյունակը բացակայում է: Երբ համեմատում ենք այս երկու ձեռագրերը, ապա առաջին ձեռագրում ապրանքների անվանացանկը հասնում է 596-ի, իսկ երկրորդ ձեռագրում այն 435 անուն է: Գալով չափերին, մաքսերին, ապա դրանք բնականաբար նույնն են: Առաջին սակացույցն ավելի մանրամասն է: Ապրանքների հիմնական բաժինը կազմում են տարբեր կենդանիների տարբեր գույների ամբողջական մորթիներն ու դրանց պատառիկները, կաշիները (օր.՝ սպիտակ աղվեսի մշակված կամ անմշակ մորթի), ամենատարբեր տեսակի,



որակի ու երկրի կտորեղեն՝ սկսած վեճետիկյան կամ Ֆլորենցիայի մետաքսեղենից, անգլիական նուրբ քրդե կերպասներից. հնդկական բամբակեղենից մինչև վերմակեղենի ծաղկազարդ կամ միագույն կտորեղեն, չիթ, սրբիչացու՝ Լոնդոնից: Փարիզից՝ եվրոպական կտորներ, շալեր, քեչա, թելեր, թանկարժեք փայտեղեն(սաճողալ, ընկուզենի և այլն), թրեր, ծխամորճ, մետաղներ, վեճետիկյան ու եվրոպական ապակեղեն, սպասք, թանկարժեք քարեր. զարդեր, տարբեր տեսակի մարգարիտներ, սաթ, մարջան, արծաթ, թանաք, օճառ, մեղրամոմ, սուրճի, շաքարի տեսակներ, համեմունքներ ամեն տեսակի, դոշաքներ, աղամղեր (ընկույզեն, պիստակ, կաղին), բաստուրմա, սուջուխ, թարմ ու չոր մրգեր, դրանց հյութերը, ջրերը, կեղևները, արտասահմանյան խմիչքներ, օշարակներ, ձկնեղեն, ոստրեղեն, խավիար, ձկնկիթ և այլն և այլն:

Արտահանվող և ներմուծվող ապրանքները չեն առանձնացվում: Միայն անուններից կարելի է գուշակել դրանց որտեղից լինելը:

Այս ամենը պետք է որ շատ հետաքրքրի տնտեսական, վաճառականության, առևտրական կապերի պատմությանը, գործող օրենքներով զբաղվողներին, առևտրականներին, այս կարգի մասնագետներին: Իրապես, այս երկու սակացույցները շատ գիտնականների համար ուսումնասիրության հետաքրքիր աղբյուր են հանդիսանում:


Կարևոր հանգամանք է այն, թե ինչու՞ են այս սակացույցները գրված հայատառ թուրքերենով: Ստույգ պատասխան մենք չունենք: Եզրակացություններ՝ բավականին:

Մի շարք ասպարեզներում, ուր հայերը կարևորագույն դերակատարումներ են ունեցել, այդ բնագավառում գործնական, աշխատանքային լեզուն հայատառ թուրքերեն է եղել: Մասնագիտական որոշ ուսումնական հաստատություններում որոշակի առարկաներ և դրանց դասագրքերը եղել են հայատառ թուրքերենով: Հայատառ թուրքերենն աշխատանքային լեզու է եղել թատրոնում, երաժիշտների շրջապատում և այլն: Գալով սակացույցների հայատառ թուրքերենով լինելու հանգամանքին, ասենք որ և Օսմանյան և ռուսական կայսրության կողմից մեծ թվով հայ վաճառականներ են եղել: Մաքսային համակարգում հայ տնօրեններ, պաշտոնյաներ են եղել, ինչպես նաև որոշ մաքսատներ հայ մեծատոնները աշխատացրել են վարձակալական սկզբունքով: Այս սակացույցները բնականաբար օսմաներեն բնօրինակների հայատառ թուրքերեն պաշտոնապես հաստատված աշխատանքային տարբերակներն են եղել: Եթե վաճառականները հայ չեն եղել, ապա նրանք անպայման ունեցել են հիմնականում ազգությամբ հայ օգնականներ, թարգմանիչներ: Հայերը հայտնի են եղել նաև իրենց լեզուների իմացությամբ: Այն հանգամանքը, որ սակա-

ցույցներում հանդիպում ենք սակավ հայերեն քացատրությունների, կարծում ենք նույնպես ապացույց է հայ վաճառականների համար այս լեզվով ներկայացվելու նպատակահարմար լինելուն: Չճոռանա՞նք մահ այն մասին, որ Եվրոպայում քաղված լեզվական դպրոցները միտված էին վաճառականների ու միսիոներների գործունեությանը զարկ տալուն և միանշանակ օգտագործելի ու ավելի գործնական էին դարձնում սակացույցների հայատառ թուրքերեն լինելու հանգամանքը: Օտարները օսմաներեն կարողաւ ու հասկանալ չէին կարող: Մինչդեռ հայերեն տառերն ու ապրանքների անունները հասկանալի ու ընկալելի կարող էին լինել նրանցից մեծ մասի համար: Բոլորին է հայտնի, որ հայ վաճառականները հայտնի են եղել աշխարհի տարբեր մասերում, իսկ Օսմանյան կայսրությունում վաճառականությունը եղել է հիմնականում հայերի, հույների ու հրեաների մենաշնորհը:

Այսպիսով, Մատենադարանի 8015 և 8016 հայատառ թուրքերեն ձեռագիր սակացույցներն իրենցից շափազանց հետաքրքիր վավերագրեր են ներկայացնում այդ շրջանի առևտրական կապերի, մասնավորապես Ռուսաստանի հետ վաճառականական մշակույթի ուսումնասիրության համար: Այս ձեռագրերի տնտեսագիտական և այլ տեսանկյուններից մասնագիտական ուսումնասիրությունը կարծում ենք շատ ավելի հետաքրքիր կլինի:

**Որպես գեկուցում կարդացվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Քրիստոնյա Արևելք» բաժնի 30-ամյակին նվիրված գիտական նիստում. (Երևան, 2006, դեկտեմբեր).**



## ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՈՒ ԲԱՅԱՌԻԿ ԳԻՐԲ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարո ՔՅՈՒՐ-ՔՄԱՆ. Հայ նկարիչները Օսմանյան կայսրությունում 1600-1923թթ., Ստամբուլ, Մաթրուսալեմ հրատ. (2004թ. Երկու հատոր, 988 էջ (թուրքերեն, անգլերեն լեզուներով):

GarokÜRKMAn. *OSMANLI İMPERATORLUĞU'NDA ERMENİ RESSAMLAR 1600-1923.* (İstanbul, Matüsalem Uzmanlık ve Yayıncılık, 2004, 2cilt; 988s.)

Շրջազույն ու եզակի այս աշխատության հեղինակը ստամբուլահայ ճանաչված ու հեղինակավոր գիտնական, Օսմանյան կայսրության տարածքի գիտության և արվեստների, արհեստների միջազգային ճանաչման արժանացած հետազոտող, մեր ժամանակակից Կարո Քյուրքմանն է, իսկ գործը՝ նրա 15 տարիների առճշան աշխատանքի ու պրպտումների հոյակապ արտահայտությունը: Երկհատորյակը տպագրվել է Ստամբուլի «Մաթրուսալեմ» հրատարակչության կողմից թուրքերեն ու անգլերեն տարբերակներով:

Տարիներ ի վեր պոլսահայ կանադաբնակ գիտնականի ուսումնասիրության աղբյուր են հանդիսանում Օսմանյան կայսրության տարածքում մշակույթի ու գիտության տարբեր ճյուղերի ուսումնասիրությունը: Կարո Քյուրքմանի սույն աշխատությանը նախորդել են՝

1. Չափ ու կշռը Անատոլիայում
2. Օսմանյան արձաթե կնիքները
3. Չափ ու կշիռը Օսմանցիների մոտ

պատկառելի ուսումնասիրությունները: Հեղինակի հետաքրքրությունների ոլորտում են պղնձագործության, արծաթագործության, ոսկերչության, Կուտինայի ճեմապակու մասին ուսումնասիրությունները: Այս և նախկին բոլոր գործերում հետազոտությունների մեխը՝ հայ ժողովրդի ներդրումն ու նրա ներկայացումն է, ուսումնասիրությունն ու բազմաթիվ հանգամանքների, փաստերի վերհանումը, ապացուցումը: Այսինքն, Օսմանյան կայսրության տարածքի վերոհիշյալ բնագավառներում հայ ժողովրդի ունեցած դերի ուսումնասիրությունն է: Այս աշխատություններն իրենց տեսակի մեջ առաջին կորողային գործերն են: Դրանք ամբողջական տեղեկություններ են պարունակում ուսումնասիրության առարկաների շուրջ, գիտական հայտնագործությունների, վերձանությունների, փաստական առատ նյութի, դրանց հիման վրա գրված արժեքավոր ուսումնասիրություններ են, շքեղ հրատարակված, բազմաթիվ լուսանկարներով հագեցված:



«Հայ նկարիչները Օսմանյան կայսրությունում 1600-1923թթ.» երկհատորյակում ներկայացված նկարիչների թիվը 455 է, նկարների թիվը՝ 934:

1600-1923թթ. (մինչհանրապետական) շրջանի նկարիչների մասին գիրքը սկսվում է հեղինակի նրանց իսկ ուղղված երախտագիտության խոսքերով:

Հրատարակության իրականացման գործում իրենց օգնությունը ցուցաբերած անձանց ուղղված շնորհակալական խոսքը ոչ միայն երախտավորների ցուցակն է: Նրանց անվանը կից տարբեր երկրների նշումը թույլ է տալիս մոտավոր պատկերացումն ունենալ այն հսկայական պրպտումների շուրջ, որ կատարել է հեղինակը աշխարհի բոլոր կողմերում, թանգարաններում ու գրադարաններում, մատենադարաններում ու մասնավոր հավաքածուներում: Գրքում ներկայացված նկարների հիմնական մասը գտնվում է Ստամբուլի ռազմական թանգարանում, Օսմանյան արխիվների մախարարությունում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան մխաբանության թանգարաններում, Պեշիկթաշի ծովային թանգարանում, Թոփ Գավուի և Դումբախչեի պալատ-թանգարաններում, Ստամբուլի իսլամական արվեստի ու մշակույթի հետազոտությունների կենտրոնում, Վիեննայի, Նյու-Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում, Գրիգոր ու Կլարա Ջոնրապ ինֆորմացիոն կենտրոնում, Ստամբուլի հայկական պատրիարքարանում, Ստամբուլի Մաղբերք Հանըմ և Սաբանջըլ թանգարաններում: Բազմաթիվ նկարներ գտնվում են մասնավոր հավաքածուներում աշխարհի տարբեր քաղաքներում և նույնիսկ՝ Ստամբուլի հնաոճ իրերի վաճառատներում:

Գրքի ներածականներից առաջին խոսքը ստորագրել են Նազան Օյշերը և Ֆիլիզ Չաղմանը: Եվրոպական հասկացությամբ նկարչության մուտքը Օսմանյան կայսրություն կարելի է համարել 18-19-րդ դարից: Համառոտագույնս անդրադառնալով կերպարվեստի այս բնագավառի հիշարժան հատվածներին, նրանք մեծապես արժևորում են գիրքը, այն համարելով Քյուրթմանի մեծագույն ծառայությունն ու նկերը արվեստասերներին:

Հեղինակային ներածականում Քյուրթմանն անդրադարձել է մինչ այդ իր կատարած ուսումնասիրություններին, գրքի կազմության սկզբունքներին:

Նկարիչները ներկայացվում են ըստ ալբեմական կարգի: Այս հանգամանքը թվում է, թե թույլ չի տալիս հետևելու ժամանակի ընթացքին, պատմության որոշակի ժամանակահատվածում ստեղծագործած արվեստագետներին ընդհանուր առմամբ, զգալու մթնոլորտը, ժամանակի բնորոշ շունչը, նրանց կայտոլ ու միմյանց տարբերող գծերը, տարբեր դպրոցների պատկանելու հանգամանքը ու տվյալ ժամանակի իրական արտահայտությունը: Մյուս կողմից՝ ալբեմական սկզբունքը թույլ է տալիս միավորելու, խմբավորելու նույն ընտանիքի նկարիչ-

ներին, վեր հանելով բազմաթիվ կարևոր անուններ, որոնք զեղարվեստի սերը և նվիրվածությունը ժառանգաբար անցկացրել են իրենց միջով, արտահայտիչը դառնալով գույների, վրձնի, կերպարվեստի համաշխարհային ու ազգային ավանդույթների: Այս գրքում ի մի են բերված Օսմանյան կայսրությանը պատկանող տարածքում ծնված պրոֆեսիոնալ ու ինքնուսույց նկարիչները, մաս՝ որոշ ժամանակ այդտեղ ստեղծագործած անունները:

88 էջերից կազմված ներածությունը հայ կերպարվեստի պատմության համառոտ շարադրանքի լավագույն օրինակ է: Այն ներառում է հայ մանրանկարչությունն իր փառավոր անուններով ու դպրոցներով, դրանց ամենատարբեր օրինակները ներկայացնելով հանդերձ: Հայկական ձեռագրեր, Ֆլորենցիայի դպրոցի գծանկարներ ու յուղանկարներ, սրբապատկերներ և այլն:

Ներածության կարևոր մաս է կազմում 19-րդ դարում Օսմանյան կայսրությունում զեղարվեստի՝ նկարչական, քանդակագործության դպրոցների մասին պատմող հատվածը, միջազգային՝ Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի, Չիկագոյի, Մյունխենի, Ստամբուլի ցուցահանդեսներում և նկարչական, լուսանկարչական, ճարտարապետական, ձեռքի աշխատանքների եվրոպական ու արդեն մաս՝ թուրքական զեղարվեստի սալոններում Օսմանյան կայսրության արվեստագետների մասնակցության, դրանց կատալոգների մասին: Հետաքրքրական են փորագրանկարների (գրավյուրաների), զեղարվեստի իրերի վաճառականների, ձեռագրերի ու մանրանկարչության ստեղծման ողջ շրջանի նկարագրությունները՝ կենդանիների կաշվի մշակումից մինչև ամենատարբեր տեսակի բնական և արհեստական ներկերի ստացման, օգտագործման եղանակների մասին տեղեկությունները:

Գրքում ներկայացվում են արվեստագետների լուսանկարները, կենսագրական համառոտ տեղեկություններ, նրանց մի քանի գործերը և նկարի վրայի հայտատառ, լատինատառ ու արաբատառ ստորագրությունների, թվականների լուսանկարները՝ խոշորացված: Բնականաբար՝ նկարների անունը, նկարչության տեխնիկան և գտնվելու տեղը, չափսերը, երբեմն մաս արվեստագետի այցետոմսը, օսմաներեն ստորագրությունների վերձանումը:

Արդուլահ Լոքբայրների լուսանկարները սկիզբն են Օսմանյան կայսրությունում լուսանկարչական արվեստի: Նրանց հետևել է հայազգի լուսանկարիչներին մի փառավոր շարան: Նրանք Օսմանյան կայսրության լուսանկարչությանը նվիրված վերջերս Ստամբուլում հրատարակված գրքի մի պատկանելի մասն են կազմում: Գրքի նկարագրողման, գովազդների, այցեքարտերի, օսմաներեն տառերի կալիգրաֆիական(զեղագրական) արվեստի մեջ հայազգի նկարիչների ներդրումն անմրցելի է եղել:

Գրքի ամեն մի էջը հայտնագործության է նման՝ Ա-ից մինչև Ֆ: Անուններ, որոնք լսել կամ չէինք լսել անգամ: Գործեր, որոնց մասին երազել կարող էինք միայն:

Շեշտը դնելով հատկապես բովանդակային առունով հայկականից, քրիստոնեականից դուրս ստեղծագործությունների վրա, նշենք օսմանյան գահի տոհմաժառերը՝ մինչև 31 սուլթանների մանրանկարներով (Թոփ-Գափուի բանգարանի առաջին, օսմանյան սուլթանների սրահի զարդերից), նույն այս սուլթանների, փաշաների, տարբեր նախարարների (Մահմուդ Բ, Սելիմ Գ, Աբդուլգափ, Աբդուլմեջիդ, Մեհմեդ Ե, Մեհմեդ Ջ, Աբդուլհասմիդ Բ, Մուրադ Ե, արքայադուստր Ֆաթմա Ալի, Ահմեդ, Մուստաֆա Ռեշիդ, Սրդհատ, Ավնի, Մեհմեդ Թեվֆիկ, Չերքեզ Աբդի փաշաներ, Շամիլ և այլն, և այլն) տարբեր ժամանակների նկարները՝ մինչև անգամ դրանցով գոհարագարդ բազմաթիվ զարդեր, կիրառական արվեստի տարբեր գլուխգործոցներ, դրոշմանիշներ, փոստային բացիկներ, դրամներ, մեդալներ, գեղանկարներով ոճավորված զենքեր, մասնավորապես օսմաներենով գրքերի տպագրության համար առատորեն կատարված հրաշալի փորագրանկարներ և այն: Օսմանյան սուլթանների դիմանկարներից սկսած, պատմական, պատերազմական նշանավոր տարբեր դրվագներից, ծովամարտերի տեսարաններից մինչև հանրապետական Թուրքիայի ամենանշանավոր ղեկավարների ամենահայտնի նկարների մեծագույն մասը, բնականաբար նաև երկրի տարբեր վայրերի, Ստամբուլի թաղերի ու ծովեզրյա տեսարանների, կղզիների, պատմական հուշարձանների, թո՛ղ որ պալատական հայ ճարտարապետների կողմից հեղինակված պալատների, մզկիթների նկարները՝ հայ հեղինակների վրձնի արդյունքն են: Նույն սուլթանի տարբեր տարիների նկարների գոյությունը ապացույցն է այն բանի, որ այդ նկարչական գերդաստանները մեծ համարում են ունեցել, պալատական նկարիչների պաշտոն զբաղեցրել ու անմրցելի համարվել իրենց ժամանակին: Արվեստի բացառիկ գործեր, նկարչական տեխնիկայի, տաղանդի, հանճարի արտահայտություններ, որոնց հեղինակները հայեր են եղել: Մի բնագավառ, որ կայսրության կյանքի արտացոլման պատմական կարևոր հատված է, իր ժամանակի յուրատեսակ հայելի:

Ոսկերիչների, ժամագործների, բանկիրների, դրամահատարանի և վառողարանի ղեկավարների, ճարտարապետների և այլոց կողքին սուլթանական պալատներում տարիներ ի վեր ծառայել են նաև հայ նկարիչների գերդաստաններ, որոնցից շատերը ամիրայական կոչման ու սուլթանական այլևայլ շնորհների են արժանացել: Մենք հատկապես նկատի ունենք կեսարացի Մանասների պալատական նկարիչների գերդաստանը և մասնավորապես այդ տոհմի նախահայր Տիրացու Ռաֆայելին (1715-1780), որին ժամանակակիցներն անվանել են իրենց



ժամանակի Ռաֆայելը: Կարո Քյուրքմանը համադրելով տաղանդավոր նկարչի մասին բոլոր մատենագիտական փաստերը, ճշտում է նաև նրա ծննդյան ու մահվան թվականները: Հանգամանք, որը գրքի գիտական հեքթական արժանիքներից է: Սակայն կարծում ենք, որ Մանասներին վերաբերող ուսումնասիրություններում դեռ շատ քիչ բան է ասվել: Ավելին, դեռ կլինեն նոր հայտնագործություններ չբացահայտված հայազգի տաղանդավոր գեղանկարիչների գերդաստանում, նրանց արվեստի ուսումնասիրություններում:

Մենք առաջին անգամ ծանոթացանք Մանասների անվանը, տեսանք նրանց գործերը, երբ շուրջ 13 տարի առաջ փարիզյան հայտնի աճուրդի տներից մեկում վաճառքի էին հանվել Աբդուլ Համիդ Բ-ի ժառանգներից մեկի՝ սուլթան պապից ստացած ժառանգության գեղարվեստի նմուշները: Դրանց թվում 3 տարբեր Մանասներ ու հայկական այլ վարպետների նկարներ, զարդեր ու կիրառական արվեստի հիասքանչ գործեր կային:

Հայ նկարիչների փառքն այնքան է տարածված եղել, որ գրքում զանում ենք նաև օտար պատվիրատուների, շատ հայտնի դեմքերի նկարներ: Անկարելի է չաբանչանալ լավագույն Վիկտոր Հյուգոյով, Էդուարդ 7-րդի, ամիրաների ու նրանց ընտանիքների անդամների դիմանկարներով, աստվածաշնչային բովանդակությամբ բազմաթիվ ապշեցնող կտավներով:

Կարո Քյուրքմանը արևմտահայ գրականության ու պարբերական մամուլի գիտակ է, ծանոթ արևելահայ հանրագիտարանային գրականությանը: Նկարիչների կենսագրությունները ներկայացնելիս հեղինակը մեծապես օգտվել է Գառնիկ Ստեփանյանի «Կենսագրական բառարան»-ից: Որոշ նկարիչների, որոշ նկարների ու նրանց գտնվելու մասին աշխատանքները իսկական հետազոտողին վայել հաջողությունների արձանագրումներ են: Գրքի վերջում կան նկարների բովանդակային ցանկեր, նկարիչների ցանկ, անվանացանկ, օգտագործված հարուստ գրականության ցանկ, նկարների վերնագրերի ցանկ: Գիրքը բաղկացած է 988 մեծադիր էջերից: Այն թերթելիս չես դադարում հիանալ ու զարմանալ: Ինչպիսի անուններ, ինչպիսի նկարներ, որոնց մասին մենք պատկերացում անգամ չունեինք, մինչդեռ դրանցից շատերը անվերապահորեն լավագույն, հանճարեղ, անկրկնելի մակդիրների արժանի նկարիչների և նույնպիսի հիացմունքի արժանի գործեր են:

Կարո Քյուրքմանը գիտական պատկառելի գործ է կատարել: Այն մեծ ներդրում է հայ մշակույթի, մասնավորապես կերպարվեստի պատմության բնագավառում: Այս պատկառելի աշխատությունների հայերեն թարգմանությունը մեր պատվի ու նաև անհրաժեշտության գործ է, իսկ նրա հեղինակը, միջազգային

ճանաչում վայելող Կարո Ջյուրքմանն արժանի է մեր հայրենիքի Գլխուրթյունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամի հորջորջմանը:

Այս գիրքը հարգանքի տուրք ու ոգեկոչում է մեր բոլոր հայտնի ու անհայտ, մոռացված արվեստագետների հիշատակին:

**ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» մատենաշարի 4-րդ հատորում: «Հազվագյուտ ու բացառիկ գիրք հայ նկարիչների մասին» (2006թ., Երևան, էջ 278-282). Ռուսերեն լեզվով՝ Հասնիկ Մտեփանյան. «924 ստեղծագործություններ բացառիկ հրատարակությամբ» (Երևան, «MEDIAINFORM» ամսագիր, N 4, 2006 թ. էջ29-31).**

**ԱՐԱՔԵՐԵՆԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ՀԱՅԱՏԱՌ-  
ԹՈՒՐՔԵՐԵՆ ՉԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ (ԿԱՀԻՐԵՌՈՒՄ  
ԵՎ ԱԼԵՔՍԱՆԳՐԻԱՅՈՒՄ) ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀԱՅԱՏԱՌ-  
ԹՈՒՐՔԵՐԵՆ՝ ԳՐՔԵՐ, ՊԱՐԵՐԱԿԱՆՆԵՐ**

Հայատառ թուրքերեն գրականությունն ընդգրկում է ավելի քան վեց հարյուրամյակ՝ 14-րդ դարից գրեթե մինչև մեր օրերը: Հայատառ թուրքերեն գրականությունն անչափ բազմազան է եղել իր բովանդակությամբ և ժանրային առումով: Այս գրականությունն ունեցել է յուրօրինակ զարգացում: Այն պայմանավորված է եղել մի կողմից՝ հայ ժողովրդի պատմական ճակատագրով, իսկ մյուս կողմից՝ բուն հայ կյանքում տեղի ունեցած քաղաքական ու սոցիալ-տնտեսական վայրուվերումներով: Հայատառ թուրքերեն գրականությունն անցել է զարգացման երկու շրջան՝ ձեռագրական և տպագիր: Ձեռագրական շրջանն ընդգրկել է մոտ 600 տարի (14-19- դդ.): Այս գրականությունը, ի թիվս այլոց ներառում է հիմնականում արաբերենից գիտություններին վերաբերող կատարված քարգմանական գործեր, արաբերենի օգտագործմամբ բառարաններ, բժշկարաններ ու դեղագրքեր, ալքիմիային վերաբերող, կենցաղային, գուշակությունների ու դրանց աղյուսակների, հմայիլների երկլեզու ձեռագրեր: Կարծում ենք առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում 1724թ. Ասլտի Ֆաթիթ Ձէյնիվայետին պէն Խալիլին վերագրվող բժշկարանը, որ 17 մասերից է բաղկացած<sup>2</sup>: Հաջորդը՝ 1772թ. գրի առնված «Խասնէթ-իլ

1 Այստեղ և հետագայում սույն տերմինը նշանակում է, որ գրված է հայկական այբուբենի տառերով, իսկ լեզուն թուրքերեն է:

2 Երևանի Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, Չեռ.8102 (Այստեղև տես՝ Մատենադարան, ձեռ...)

Հանաթի»<sup>1</sup> 25 մասերից բաղկացած բժշկարան է, որին կից է ձեռագրում առկա անհասկանալի արարքերն բառերը բացատրող հայատառ թուրքերեն բառարանը: Ռոշալի թիվ են կազմում աստղաբաշխական ձեռագրերը, մոլորակների անվանումների, քվերի, կենդանակերպերի արարքերնի օգտագործմամբ համադրական ցանկեր, աղյուսակները<sup>2</sup>: Աստղաբաշխական բազմաթիվ մեծադիր ու մեծածավալ աղյուսակները եղել են բազմալեզու, նաև՝ արաբերեն (արաբատառ) ու հայատառ արաբերեն:

Մի քանի ձեռագրեր պարունակում են Քյաթիպ Չլեբիթի «Թագվիմի քեվա-րիխ» աշխատության հայատառ թուրքերեն տարբեր օրինակներ, ընդօրինակված սկսած 1760 թվականից, որոնց ծավալը մինչև 256 էջ է: Այդպիսի ձեռագրեր պահպանվում են Երևանի Մատենադարանում, Վիեննայի Մխիթարյան միաբանության և Երուսաղեմի Ս.Հակոբեանց հայկական վանքի մատենադարաններում, Փարիզի ազգային գրադարանի հայկական բաժնում: Հետաքրքիր են բազմաթիվ հայատառ թուրքերեն տաղարանները, որտեղ անհամար տաղերի հեղինակներ են ոչ միայն հայերը, այլև մահմեդական կրոնին պատկանող բազմաթիվ հայտնի ու անհայտ հեղինակներ: Հայատառ թուրքերեն ձեռագրերը պահպանել են ոչ միայն գուտ տաղերի բառերը, այլև հեղինակների անունները, դրանց մի մեծ մասի եղանակներն իրենց արևելյան ժանրային բոլոր տարբերակումներով, հայկական և եվրոպական նոտագրությամբ:

Հայատառ թուրքերենի տպագիր շրջանը գոյատևել է մոտ 250 տարի և ունեցել է ընդարձակ աշխարհագրություն: Այն տպագրվել է թե՛ Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում, թե՛ նրա սահմաններից դուրս՝ ամենատարբեր պատճառներով: Հայատառ թուրքերեն տպագրված գրքերի թիվն անցնում է 2000-ից: Հրատարակվել են դրանք աշխարհի մոտ 50 քաղաքների 200-ից ավելի տպարաններում<sup>3</sup>: Հայատառ թուրքերեն տպագիր գրքի շրջանակները թեմատիկ առումով շատ ընդարձակ են: Գոյություն առաջին հարյուրամյակում, հայատառ թուրքերեն գրականությունը հիմնականում ծառայել է կաթոլիկ միսիոներներին՝ հայերի շրջանում կաթոլիկության տարածման համար և նրանց միջոցով Օսմանյան կայսրությունում իրենց երկրների ազդեցությունը տարածելու նպատակով: 19-րդ դ. երկրորդ կեսից սկսվում է հայատառ թուրքերեն տպագիր գրականության զարգացման մի նոր շրջան: Այս ժամանակահատվածի համար բնորոշ է ձգտումը աշխարհիկ

<sup>1</sup> Մատենադարան, ձեռ. 9583, նաև՝ ձեռ. 10658.

<sup>2</sup> Մատենադարան, ձեռ. 9789, ձեռ. 1205, նաև՝ ս.Էջմիածնի Վեհարանի մատենադարանի ձեռ. 82:

<sup>3</sup> Տես՝ Յամիկ Ստեփանեան: Հայատառ թուրքերեն գրքերի եւ հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն (1727-1968), Իսթանբուլ, 2005թ.:



քեմաներին՝ գեղարվեստական գրականություն (ինքնուրույն և թարգմանական), պատմական, պատմա-կրոնական աշխատություններ, լուսավորական գրականություն, հրապարակախոսություն, փիլիսոփայական տրակտատներ, գիտական, գիտա-հանրամատչելի գրքեր, դասագրքեր, բառարաններ, օրենսգրքեր, իրավագիտական ակտեր, դավանաբանական հրատարակություններ, կենցաղային գրքեր, հրատարակություններ երեխաների համար և այլն: 150 տարվա պատմություն ունեցող հայատառ թուրքերեն մամուլը ներկայանում է ավելի քան 130 ամուճով: Միայն 1850-1890-ական թթ. Կ.Պոլսում՝ 85 հայկական տպարաններում, հրատարակվել են ավելի քան 100 ամուն հայ պարբերականներ, որոնցից մոտ 54-ը՝ հայատառ թուրքերեն: Այս տպարանները, նաև խմբագիր հեղինակների մի մասը հետագայում իրենց գործունեությունը շարունակեցին Եգիպտոսի մի շարք քաղաքներում՝ ծառայելով հայ համայնքի թուրքախոս մասին: Նման հայատառ թուրքերեն պարբերականներն իրենցից անհատում աղբյուր են ներկայացնում Օսմանյան կայսրության կյանքի բոլոր կողմերի ուսումնասիրության համար՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական վիճակի, կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների և այլն: Հայատառ թուրքերեն պարբերական մամուլը ներկայացրել է արևմտահայերի բազմադեմ կյանքի ամենօրյա հայելին: Վերոհիշյալ պարբերականները հրատարակվում էին ժամանակի ֆրանսիական պարբերականների նմանությամբ: Եվրոպական պարբերականներից թարգմանվել են բազմաթիվ օտար տերությունների պատմության, ազգագրության մասին հոդվածներ, պատմական դեմքերի, ժամանակակից իրավիճակի, մշակույթի, այդ երկրներում գիտության, բանակի, անգամ բյուջեի , քաղաքական ու տնտեսական կյանքի վերաբերյալ նյութեր, որոնք բազմաթիվ ընթերցողների համար տեղեկատվության միակ աղբյուր են հանդիսացել: Հայատառ թուրքերեն պարբերականները բազմաթիվ բաժանորդներ են ունեցել ոչ միայն խոշոր քաղաքներում, այլև ողջ երկրով մեկ, Մերձավոր Արևելքում, Եվրոպայում: Սովորական երևույթ էր, երբ այդ թերթերը, դրանցում տպագրված հետաքրքիր հոդվածները կարդացվել ու քննարկվել են թեյարաններում և սրճարաններում: Հայատառ թուրքերեն որոշ պարբերականների հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ մյուս ազգերի առաջադեմ մտավորականությունը, մասնավորապես թուրքերը ոչ միայն համագործակցել են դրանց, այլև սովորել են հայկական այբուբենը և կարդացել այդ թերթերը<sup>1</sup>: Հայատառ թուրքերեն մամուլը միատարր չի եղել:

1 Թուրք ընթերցողները սովորելով հայկական տառերը, ազատորեն կարդում էին «Մանգումի էֆբեար»-ի տիպի մամուլը, - գրում է թուրք գիտնական Մեթին Անոը Թանգիմատի շրջանի թուրք բատրոնին նվիրված իր մեկնագրության մեջ. (Metin And, Tanzimat ve İstibat Döneminde Türk Tiyatrosu 1839-1908, Ankara, 1972, s. 36. Այստեղևս տես՝ M. And, Tanzimat...):

Այն արտահայտել է հասարակության տարբեր խավերի գաղափարները, ներկայացրել բաղաբաական, կրոնական տարբեր հոսանքներ:

Հայատառ թուրքերեն տալագիր գրականության 250-ամյա պատմության ուսումնասիրությունը փաստում է հայերի բազմակողմանի կյանքի գոյությունն ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, Ամերիկայում և այլուր: Գաղթած ու ջարդերից մազապուրծ փախած թրքախոս հայեր որոշ գաղթավայրերում փորձեցին շարունակել հայատառ թուրքերենի ավանդույթները, բայց այն երկար չուսեց: Այդ գաղթավայրերից էր Եգիպտոսը, որն իր ինտելեկտուալ բարձր գերուժով որոշակիորեն տարբերվել է մյուս հայ գաղթօջախներից: Կահիրեում և Ալեքսանդրիայում տասնյակ հայկական տպարաններ են գործել, ուր հրատարակվել են բազմաթիվ գրքեր և 1865 թվականից ի վեր ավելի քան 120 պարբերականներ, որոնցից մոտ 90-ը՝ Կահիրեում: 1900-1946 թվականների Կահիրեի 4 հայկական տպարաններում հրատարակվել է մոտ 20 գիրք: Դրանց թվում է 1863թ. հաստատված «Ազգային Սահմանադրություն Հայոցը» (1901), «Սահմանադրական կանոնադրություն հայ ավետարանական եկեղեցու օրինագիրք, Եգիպտական կառավարությունն վավերացված և խտիվական բարձրագույն հրամանագրով հաստատված» 107 հոդվածներ (1906): «Արևելյան հարցը» (1902), «Արևելյան հարցը և նրա լուծման հետևանքն ամբողջ մարդկության համար» (1902), կրոնական բնույթի գրքեր, և Թ.Մ.Տեր Աբրահամյանի կազմած «Բառագրքույկ տանկերեն-ֆրանսերեն»ը 1907 թվականին, Արմենակ Պետկյանի (1884-1957) «Պատկերազարդ բազմալեզուեան բառարան բոյսերու անուանց՝ լատիներեն, արաբերեն, հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, թուրքերեն լեզուներով», որը 1711 նկարներ է պարունակում և լավագույնս շարունակում էր հայ բառարանագրության հարուստ ավանդույթները (1099 էջ, 1936թ.), հայտնի բարգմանիչ և երաժիշտ Մերկեր Մելիքի «Ընարերգական հավաքածո» երգերի ժողովածուն (ա.թ.): Կարևոր են Աղանայի ջարդերին նվիրված մի շարք գեղարվեստական գրքեր, բարոյախոսական, կրոնական գրքեր: 1917թ. Ալեքսանդրիայում փոքրիկ մի գրքույկ է հրատարակվել «Պատմութիւն թուրք և գերման անկանոն և անել առաջ-խաղացումներու» վերնագրով՝ Արշակ Պոհճայանի հեղինակությամբ: Այս գիրքը մեզ հայտնի է միայն մատենագիտական աղբյուրներից: Նույն Արամ Մտեփանյանի տպարանում 1917-ին լույս է տեսել մի այլ բանաստեղծի՝ Կարապետ Մըսրյան-Մօրուքի հայատառ թուրքերեն բանաստեղծությունները:

Կահիրեում և Ալեքսանդրիայում տասնյակ հայկական տպարաններ են գործել, ուր հրատարակվել են բազմաթիվ գրքեր և 1865 թվականից ի վեր ավելի քան 120 պարբերականներ, որոնցից մոտ 90-ը՝ Կահիրեում: Հայատառ թուրքերեն «Մա-

ծակ» (1898թ.), «Լույս»(1936թ.)-ը հրատարակվել են Կահիրեում, իսկ «Ավետարանի ձայն»(1939-1947...թթ.)-ը՝ Ալեքսանդրիայում:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, նվազել էր հայատառ թուրքերեն կարդացողների թիվը, հետևաբար նաև՝ տպագրվող գրքերի, մամուլի թիվը: Այն հիմնականում պայմանավորված էր Մեծ եղեռնի ողբերգությամբ, որի զոհերի թվում էին հարյուր հազարավոր հայատառ թուրքերենի կրողներ ու մշակներ: Այս ողբերգության զոհերից էր հայատառ թուրքերենի մշակույթը, որն այնքան մեծ ներդրում էր ունեցել Օսմանյան կայսրության կյանքում, մշակույթի մեջ:

20-րդ դարի կեսերին հայատառ թուրքերենը վայրէջք ապրեց: Այն հիմնականում կատարել էր իր պատմական առաքելությունը: Նոր գաղթավայրերում նոր երկրների լեզուներն էին տիրապետող կենցաղում, իսկ հայատառ թուրքերենն արդեն անախրոնիզմ էր դարձել: Այս ինքնատիպ ու բացառիկ մշակութային երևույթի վայրէջքի հանգրվաններից էին Կահիրեն ու Ալեքսանդրիան:

Արաբերենի հետ առնչություն ունեցող հայատառ թուրքերեն ձեռագրեր և Եզիպտոսում (Կահիրեում և Ալեքսանդրիայում) հրատարակված հայատառ թուրքերեն գրքեր, պարբերականներ, *Ալեքսանդրիայում (Եզիպտոս) Հայ-արաբական գիտածոյովի նյութերից (2006թ փետրվար)*, Hasmik Stepanyan, *Armeno-Turkish manuscripts related to arabic bibliography and arabic language: Armeno-Turkish books and periodicals published in Cairo and Alexandria, Egypt. Armenian-Egyptian historical and cultural ties, Cairo, Library of Alexandria, 2007, pp, 25-29.*

## **ՀԱՅԱՏԱՌ-ԹՈՒՐԻՔԵՐԵՆ, ՀԱՅԱՏԱՌ-ԹԱՐԱՐԵՐԵՆ, ՀԱՅԱՏԱՌ-ՂՓՉԱՂԵՐԵՆ, ՀԱՅԱՏԱՌ-ՔՐԳԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԱՏԱՌ-ՀՈՒՆԱՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(2007թ. ապրիլին Մարտելում Հայ գրչության, գրքին նվիրված ցուցահանդեսի համար, Ֆրանսիայում Հայաստանի տարվա միջոցառումների շրջանակում)

Շատ ժողովուրդներ և ազգեր կան, որոնք իրենց գրականությունը ստեղծել են միաժամանակ երկու լեզվով՝ սեփական ու օտար, և կամ էլ՝ օտար լեզուներով:

Ավելի քան 500 տարի հայերն ապրել են թուրքական տիրապետության տակ: Սա սովորական հպատակություն չի եղել, այլ կրոնական մոլեռանդության մոլուցքով տարված ռազմա-ֆեոդալական իշխանության տևական ու անավոր ճնշում՝ մշակութային խոր անցյալ ունեցող մի ժողովուրդի վրա: Թուրք տիրապետողները ոչ միայն վերցրել են հայ ժողովրդի ստեղծած նյութական բարիքները, նրա ֆի-



զիկական աշխատանքի արդյունքը, այլև ամեն կերպ աշխատել են ոչնչացնել կամ յուրացնել նրա մտավոր ստեղծագործության արգասիքները, ձուլել ու մահմեդականացնել հպատակ ժողովուրդներին: Հայաստան բուրքերեն գրականությունը ծնունդ է առել որպես ինքնապահպանման ու ուժացման դեմ պայքարի միջոց: Խորպես ազգային այս երևույթն իր ձեռագիր ու սուպգիր զարգացման ու գոյության ավելի քան վեց հարյուրամյակներում վերածել է մշակույթի մի այնպիսի հզոր, բազմաժանր ու ինքնուրույն ճյուղի, որը ոչ միայն արդարացրել է իր նախնական առաքելությունը, այլև վերածել է ավելի լայն գործոնի՝ ծառայել ոչ միայն բուրքախոս ու նաև բուրքերենին տիրապետող հայերին, այլև Օսմանյան կայսրության մեջ ապրող բուրքերին, այլ ազգերի և ս՝ իր մասն ունենալով այդ ժողովուրդների զարգացման, եվրոպականացման, լուսավորության գործում:



Հարկ է նշել, որ ի թիվս հայերեն ու հայաստան բուրքերեն գրականության, գոյություն են ունեցել հայաստան ղվչաղերեն, լատիներեն, արաբերեն, քրդերեն և շատ այլ հայաստան գրականություններ, որոնք հիմնականում գուրկ լինելով սոցիալ-քաղաքական հիմքերից, իրականում գործնական խոշոր դեր չեն կատարել:

**Հայաստան հունարեն** ձեռագրերը չափազանց փոքր թիվ են կազմում: Դրանք հիմնականում ԺԵ-ԺԹ դարերում Թիֆլիսում, Մեծփայ վանքում, Աստրախանում, Կ.Պոլսում և այլուր գրի առնված մատյաններում տեղ գտած աղոթքներ են, տաղեր, բառացանկեր, որոնց կից, որպես կանոն, եղել են դրանց այլալեզու տարբերակները<sup>1</sup>: Այս ձեռագրերն ընդամենը կիրառական նշանակություն են ունեցել:

<sup>1</sup> Հայաստան հունարեն աղոթքներ, տաղեր են պարունակվում Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև տես՝ Մատենադարան) 631, 4618, 5954, 7117, 7316, 7716, 8728 ձեռագրերում:

Դրանցից երկուսը՝ 7117 և 7316 ձեռագրերում «Սուրբ Աստուած» աղոթքն է՝ հայաստան

Ի տարբերություն հայատառ հունարենի՝ **հայատառ քրդերեն** գրականությունը ստեղծվել է որոշակի նպատակարարվածությամբ: Քանի որ այլընտրանք համարյա չկար, ապա քրդերի համար ստեղծված գրականությունը հիմնականում եղել է հայատառ: Շնորհիվ հայ գրիչների, մեզ են հասել այս գրականության ձեռագիր և տպագիր մնուշներ<sup>1</sup>, տպագրվել հայկական տպարաններում<sup>2</sup>, մասամբ հայ հեղինակներ ունեցել: Հայատառ քրդերեն ձեռագրերը աղոթքներ են, ժողովրդական բանասիրության օրինակներ, ինչպես՝ առակներ, հանելուկներ, ասացվածքներ, երգեր, նաև բառարաններ: Դրանք որոշակի ազգագրական արժեք են ներկայացնում: Չեռ.10036-ն իրենից ներկայացնում է Տաղարան, որ գրի է առել 1869-81թթ. Ախալքալակի Էշտիա գյուղում գրիչ, տաղերգու Սարգիս Քյուրդօղյանը: Մասնագետների կարծիքով դա միջնադարյան հայտնի բուրդ փիլիսոփա քանաստեղծ Ֆադիե Տայրայի ստեղծագործություններն են: Կարծում ենք հետաքրքրություն են ներկայացնում 1680-1719 թթ. Բաղեշում գրի առնված ժողովածուի մեջ տեղ գտած քրդական «Տաղ Դ-ն խանմանայ» երգերը, Ի դարի հայ-քրդերեն գրուցաբառարանը<sup>3</sup>:

Հայատառ քրդերեն տպագիր գրականության մի մասը կապվում է Օսմանյան կայսրության ժողովուրդների շրջանում ամերիկյան և եվրոպական տարբեր ուխտերի միսիոներների գործունեության հետ: Այս շրջանում քարգմանվել ու տպագրվել են տարբեր լեզուներով Աստվածաշունչ, Ավետարաններ, դավանաբանական գրքեր, այդ թվում՝ հայատառ քրդերեն<sup>4</sup>: Հայատառ քրդերեն տպագիր գրականության մյուս մասը իրենից ներկայացնում է լուսավորական առաքելության արտահայտություն: Դրանք Սլյուսիչ վարդապետ Տիգրանյանի, Պետրոս Ամիրխանյանի հեղինակած քրդերենի և հայերենի դասագրքեր են, այբբենարաններ, բառարաններ: Այն ուղղված էր քրդերին գրաճանաչ դարձնելու նպատակներին<sup>5</sup>:

---

հունարեն, հայատառ քրդերեն, հայատառ ասորերեն, հայատառ վրացերեն, հայատառ պարսկերեն, հայատառ արաբերեն, հայատառ ղվիչաղերեն: Հայատառ հունարենով մեզ են հասել նաև «Հայր մեր, Ողջոյն քեզ» աղոթքի մի քանի օրինակներ: Տես՝ Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի ԺԺԹ. ձ. 876: Այն ավելի քան կես էջ քառասուն է «Հայկվար, յուներեն, տաճկերեն, լատիներեն.» սեռ -եւն'ս, ճինս, յունարեն՝ հետս, տիաֆօրա, տաճկերեն ֆինս, ֆասըլ»:

1 Հայատառ քրդերեն են պարունակում Մատենադարանի 737, 771, 4618, 5066, 7117, 8049, 10036 ձեռագրերը:

2 Մեզ հայտնի հայատառ քրդերեն տպագիր գրքերի թիվն անցնում է տասից:

3 Գ-տնվում է Փարիզի ազգային գրադարանի հայկական բաժնում՝ ձ. 145:

4 Հայատառ քրդերենով Կ.Պոլսում 1850, 1861, 1857, 1872, 1891, 1911 թվականներին լույս են տեսել Նոր կտակարան, Ավետարաններ:

5 Դրանք տպագրվել են 1861, 1866, 1868, 1910 թվականներին Կ.Պոլսում: 1942թ. Հայելյում, հայկական ճիզմենյան տպարանում տպագրվել են հոգևոր երգարաններ Ղազար Տեր Ղազարյանի քարգմանությամբ: 1949թ Բեյրութում տպագրվել է Հակոբ Մոսճյանի քրդերենի դասագիրքը, քերականության, բառարանով հանդերձ:

Հայաստան քաքարերեն և հայաստան դիչադերեն գրականությունը հայ մշակույթի անբաժանելի մի մասն է կազմում և որոշակի պատմաբանասիրական արժեք ունի: Այն հայաստան թուրքերեն գրականության մի տարբերակն է և առաջացել է 13-14-րդ դարերում: Այս ձեռագրերը պատկանելի թիվ են կազմում և գտնվում են աշխարհի տարբեր գրադարաններում, մատենադարաններում ու մասնավոր ձեռագրատներում: Մեզ են հասել հիմնականում 16-րդ դարի ձեռագրեր, որոնք ստեղծվել են հիմնականում Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի հայկական գաղթավայրերում, որոնց մի մասը թուրքախոս էր և ունեն հույժ ազգային բնույթ, ծառայել են համայնքի ամենօրյա կենցաղային խնդիրներին: Դրանք քարոզգրքեր, աստվածաշնչային պատմություններ են, դատաստանագրքեր(Մյսիթար Գոշի Դատաստանագիրքն է՝ 10 զլուխ քարզմանությամբ), եկեղեցական, արարողակարգային ձեռագրեր, քարոզգրքեր, աղոթքներ, ժամագրքեր, սաղմոսագրքեր, վարք սրբոց, համայնքի կամոնադրություններ, եկեղեցական հաշվառման, ամուսնական դաշնագրերի ու ծնունդի մատյաններ, պարզակարգեր, անդորրագրեր, կահագրքեր, հաշվեմատյաններ, պատմություններ (Խիկարի և ուրիշ), տաղեր, բառգրքեր և այլն<sup>1</sup>:

Հայաստան դիչադերեն ձեռագրերը<sup>2</sup> պարունակում են բառարաններ, ժամագրքեր ու աղոթագրքեր, դատաստանագրքեր, բժշկարաններ: Արժեքավոր են դիչադերենի քերականությունները, բառարանները<sup>3</sup>:

Երբեմն հայաստան թուրքերեն, հայաստան քաքարերեն և հայաստան դիչադերեն բաժանումները հարաբերական են՝ կախված ձեռագրացուցակների կազմողների հայեցողությունից, ձեռագրերի ստեղծման ժամանակային ու լեզվական նրբություններին տիրապետելուց: Հետագայում այս ձեռագրերի մի մասը տպագրվել է հիմնականում Լվովում<sup>4</sup>:

- 1 Հայաստան քաքարերեն ձեռագրեր տես՝ Վիեննայի Կայսերական մատենադարանի ձեռ. 13(1580թ.) և ձեռ. 3(1638թ.): Տես նաև՝ Վիեննայի Մյսիթարյան միաբանության ձեռ. 468 (1575թ.), 559 (1583թ.), 446(1608թ.), ձեռ. 525 (1618թ.), ձեռ.447(1643թ.), 479(1660թ.), 480(1661թ.), 536(ԺԶ),ձեռ 1300(ԺԸ), 1609(ԺԸ) և այլն:  
Երևանի Մատենադարանում հայաստան քաքարերեն են 1731, 9789 ձեռագրերը:
- 2 Կամենեց-Պոդոլսկում և մյուս մշակութային հայկական կենտրոններում գրի առնված և տպագրված հայաստան դիչադերենով (հին քաքարերեն) մեծ թվով գրականություն է պահվում Ուկրաինայի, Լեհաստանի արխիվային ֆոնդերում: Հայաստան դիչադերեն ձեռագրեր տես նաև՝ Փարիզի Ազգային գրադարանի 1568թ. Լվովում գրված դատաստանագիրք Լեռալուսի Հայոց ձ.176 և ձ. 194 Շողովածոյ(Ուկրաինա, 17դ. կեսեր) ձեռագիր մատյանները:
- 3 Մատենադարան, ձեռ 3522, Քերականություն դիչադ լեզուի. Լվով, 1634թ. 353 բերք և ձ. 3883, Բառք քերականականք , ԺԶդ., 383բերք, ձ. 3521 «Թուրք առ Դիոսկորոս» (1609թ, 220 բերք) և այլն:
- 4 1619թ. Լվովում տպագրվել է «Աղոթք հասարակաց քրիստոնից» գիրքը Հովհ. Քարմատանեանցի տպարանում:Գտնվում է Լեյդենի համալսարանի գրադարանում:



Գալով հայատառ թուրքերեն գրականությանը՝ ապա նրան հատուկ է շեշտված հայ ազգային նկարագիրը: Հայատառ թուրքերեն գրականությունը չի համարվում հայ ժողովրդի հիմնական, առավել ևս՝ հայ ժողովրդի մտավոր զարգացման գրական միակ արտահայտությունը: Հայատառ թուրքերենը ստեղծվել է հայերի կողմից՝ որպես հաղորդակցության միջոց ոչ միայն հայերեն չիմացողներին, այլ նաև մասամբ հայերենին տիրապետողների համար: Հայատառ թուրքերեն գրականության սկզբնավորումն ու զարգացումն ընթացել է բուն հայ գրականությանը զուգահեռ և երբեք պայմանավորված չի եղել հայ գրականության վերելքով կամ վայրէջքով: Այն թելադրված էր միայն Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակով: Ի տարբերություն վերոհիշյալ հայատառ գրականությունների՝ հայատառ թուրքերեն գրականությունն ունի սոցիալ-քաղաքական խոր արձատներ: Հայատառ թուրքերեն գրականությունը, բնականաբար, թե՛ քանակական և թե՛ որակական առումներով գիջում է բուն հայ գրականությանը և կազմում ինքնուրույն արտահայտչաձև գտած նրա մի անբաժանելի մասը: Հայ ժողովրդի արևմտահայ հատվածը, դարեր շարունակ գոյատևելով Օսմանյան կայսրության տիրապետության տակ, անընդհատ գտնվել է բռնի ուժացման քաղաքականության դեմ հանդիման, որը եթե լիակատար հաջողությամբ չի պսակվել, բայց և անհետևանք չի անցել: Ջարդերից ու հետապնդումներից, հարկերից ու մանկահավաքներից հիմնականում հարաբերականորեն ազատվել են այն մարդիկ, որոնք փոխել են, երբեմն միայն առերես, իրենց ազգությունն ու կրոնը: Հարյուրավոր հայկական գյուղեր, որոնք անցյալում ունեցել են իրենց վանքերն ու եկեղեցիները, աստիճանաբար ամայացել են, և 19-րդ դարի կեսերին այդ վայրերում հայերի հետքն անգամ չի մնացել:

Հայատառ թուրքերեն գրականությունն անցել է զարգացման երկու շրջան՝ ձեռագրական և տպագիր: Ձեռագրական շրջանն ընդգրկել է մոտ 600 տարի (14-19-րդ.): Տպագիր շրջանը գոյատևել է մոտ 250 տարի: Այս շրջաններից յուրաքանչյուրն իր առանձնահատկություններն է ունեցել:

Հայատառ թուրքերեն ձեռագրական շրջանն ունեցել է հարուստ բովանդակություն և ընդգրկումների լայն շրջանակ: Այն ներառել է աշուղական գրականության հսկա մի հատված<sup>1</sup>, ազգագրական բազմազան ու բազմաժանր գրականություն, Աստվածաշունչ, Ավետարաններ, կրոնադավանաբանական, բարոյախոսական գործեր, քարոզներ, վարքագրական երկեր ու մարտիրոսությունների պատմութ-

<sup>1</sup> Հայատառ թուրքերեն ձեռագրերում ամբարված են նաև արևելքի բանասիրության, աշուղական ստեղծագործությունների, նրանց եղանակները, ժանրային բոլոր տեսակներով, հեղինակների մեծ անվանացանկով:

յուններ, ինչպես նաև քիմիային, բժշկությանը, քվաքանությանը, աստղագիտությանը, անասնաբուծությանը վերաբերող գիտական ձեռագրեր, զեղարվեստական, պատմական ինքնուրույն ու թարգմանական գործեր և այլն<sup>1</sup>:

Ի տարբերություն հայատառ թուրքերեն ձեռագրական շրջանի՝ հայատառ թուրքերեն տպագիր գրքի շրջանակները թեմատիկ առումով շատ ավելի ընդարձակ են: Գոյության առաջին հարյուրամյակում, քիչ բացառությամբ, հիմնականում ներկայացված են եղել կրոնա-դավանաբանական, բարոյախոսական երկեր: 1727-1840-ական թթ., ավելի քան մի ողջ հարյուրամյակ, հայատառ թուրքերեն գրականությունը հիմնականում ծառայել է կաթոլիկ (ավելի ուշ՝ նաև ամերիկյան բողոքական) միսիոներներին՝ հայերի շրջանում կաթոլիկության և բողոքականության տարածման համար: Պատասխան կրոնադավանաբանական գրականություն է ստեղծվում հայ եկեղեցու հայրերի կողմից, ի պաշտպանություն հայերի ավանդական կրոնին հավատարիմ մնալու քաղաքականության:

19-րդ դ. երկրորդ կեսից զուգահեռ այս բովանդակությամբ, սկսվում է հայատառ թուրքերեն տպագիր գրականության զարգացման մի նոր շրջան: Այս ժամանակահատվածի համար բնորոշ է ձգտումը աշխարհիկ քեմալիզմին: 1850-1870-ական թթ.՝ հայ քաղաքական կյանքի համար համեմատաբար բարենպաստ տարիներին, հայատառ թուրքերեն գրականությունը մեծապես նպաստել է հայ ժողովրդի քրքախոս հատվածի հոգևոր վերելքին, նրա ազգային-ազատագրական ոգու վերածննդին և ընդհանուր առմամբ Օսմանյան կայսրությունում հասարակական մտքի զարթոնքին: Այս շրջանի հրատարակություններում մոտ տաս ժանրային ձևեր ենք տարբերում: Այն է՝ գեղարվեստական գրականություն (ինքնուրույն և թարգմանական), պատմական, պատմա-կրոնական աշխատություններ, լուսավորական գրականություն, հրապարակախոսություն, փիլիսոփայական տրակտատներ, գիտական, գիտա-հանրամատչելի գրքեր, դասագրքեր, բառարաններ, օրենսգրքեր, իրավագիտական ակտեր, դավանաբանական հրատարակություններ, կենցաղային գրքեր, հրատարակություններ երեխաների համար և այլն: Հայատառ թուրքերեն միայն պիեսների թիվն անցնում է 500-ից<sup>2</sup>: Դրանց մի չնչին մասն է միայն տպագրվել: Նույնիսկ համիդյան բռնակալության դաժան տարիներին, երբ արգելված էր ազգայինը, հայկականը շեշտող ամեն մի բան, հայատառ թուրքերեն

1 Այս մասին տես՝ Հասմիկ Ստեփանյան, Յուցակ հայերեն ձեռագրերի հայատառ թուրքերեն նիւթերի եվ հայատառ թուրքերեն ձեռագրերի, Երեսնի Մաշտոցեան Մատենադարանի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրեր: Երևան, 2008: գիրքը, էջերը: Տրվում է շուրջ 300 ձեռագրերի նկարագրություն:

2 Ստեփանեան Յ., Հայատառ թուրքերեն գրքերի եւ Հայատառ թուրքերեն պարբերական մանուկի մատենագիտություն, Իսթանբուլ, 2005, էջ 415-425:

գրականությունը շարունակեց նույն հաջողությամբ իր զարգացումը՝ այս անգամ առատորեն թարգմանելով եվրոպական ժողովուրդների արքայների հազարավոր էջեր կազմող գրքերը, որոնց լուսավորական, ճանաչողական ազդեցությունն ամենաբարձր է անտեսել: Հայ թատերական խմբերը, որոնք իրականացնում էին մասնավորապես ներկայացումներ՝ առատորեն օգտագործում էին հայաստանի թուրքերենը: Թուրքերեն ներկայացումների տեքստերը, դերերը հայաստանի թուրքերեն էին: Այս թատրոնների համար թուրք լուսավորիչների կողմից գրված կամ թարգմանված, ադապտացված պիեսները եղել են ևս հայաստանի թուրքերենով: Դրանք մեծ հաջողությամբ օգտագործվել են հանրապետական շրջանի թուրք թատերախմբերի կողմից իրենց գործունեության սկզբնական շրջանում:

Իր գոյության ավելի քան 250 տարիների ընթացքում հայաստանի թուրքերենով տպագրված գրքերի քիվն անցնում է 2000-ից<sup>1</sup>, որոնք տպագրվել են աշխարհի մոտ 50 քաղաքների 200-ից ավելի տպարաններում 1727-1961 թթ.:

Հայաստանի թուրքերեն մամուլն իր 150 տարվա գոյության ընթացքում շուրջ 120 անուն պարբերականներ է հաշվում<sup>2</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մվազել էր հայաստանի թուրքերեն կարդացողների քիվը, հետևաբար մասնավորապես տպագրվող գրքերի, մամուլի քիվը: Հայաստանի թուրքերեն գրականությունը վայելչ էր սպրել թրքախոս հայերի ավագ սերնդի անհետացման, և ընդհանրապես՝ ջարդերին զոհ գնացած հարյուր հազարավոր թրքախոս հայերի անհետացման պատճառով: Հայաստանի թուրքերեն գրասիրատարակչությունը Թուրքիայում մեծ արագությամբ անկում ապրեց: Հայաստանի թուրքերեն գրականությունն իր առաքելությունը կատարել էր: Հայերի մի մեծ մասը հայախոս էր դարձել և կարդում էր հայերեն:

Մյուս կողմից՝ Եղեռնին զոհ էին գնացել ոչ միայն հայաստանի թուրքերեն ընթերցողները, այլև այն ստեղծող մտավորականները, հասարակական գործիչները: Եղեռնին զոհ գնաց մի այնպիսի հզոր մշակութային արժեք, ինչպիսին էր նոր ժամանակներում նույն Օսմանյան կայսրության ու նրա ժողովուրդների և առաջին հերթին՝ թուրքերի բազմակողմանի զարգացմանը մեծագույն ծառայություններ մատուցած հայաստանի թուրքերեն գրականությունը:

Մագապուրծ փրկված հայերը, որոնց համար թուրքերենը մնում էր հաղորդակցության միջոց, աշխարհի տարբեր անկյուններում դեռ երկար տարիներ ստիպ-

1 Ստեփանյան Հ., Հայաստանի թուրքերեն գրականությունը. Արդյուրագիտական հետազոտություն, Եր., 2001, 269 էջ:

2 Ստեփանյան Հ., Հայաստանի թուրքերեն գրքերի և Հայաստանի թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն, Ստամբուլ, «Թուրքուազ» հրատ., 2005, 652 էջ:



ված էին օգտագործել այս գրականությունը, կարողալ հայատառ բուրբերեն պարբերականներ, կրոնական-քարոյախոսական հրատարակություններ և այլն:

20-րդ դարում Հայատառ բուրբերենը ժամանակավրէպ (անախորհիզ) էր դարձել:

*Հայատառ բուրբերեն, հայատառ քարաբերեն, հայատառ դիչաղերեն, հայատառ բրդերեն և հայատառ հունարեն ձեռագիր գրականության մասին  
«Հ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ժողովածու, Մերձավոր և Միջին  
Արևելքի ժողովուրդներ և երկրներ, հ.26. 2007, էջ 218-224: Յրանակին  
դարբերակը 2007թ. ապրիլին Մարտկում Հայ գրչության, գրքին նվիրված  
ցուցահանդեսի ժողովածուի համար, Հայաստանի տարին Յրանակայում  
շրջանակում*

## **ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐԲԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐԱՒԹՅՈՒՆՈՒՄ 19-ԲԳ ԳԱՐՈՒՄ<sup>1</sup>**

Վերջին տասնամյակում բուրբական գիտական շրջանակներում հետաքրքրության հատուկ առարկա են դարձել Օսմանյան կայսրության հայատակ ժողովուրդների մշակութային հարցերը: «Tarih ve Toplum» ստամբուլյան գիտական ամսագրում ժամանակ առ ժամանակ հրատարակվում են Օսմանյան կայսրությունում հպատակ ժողովուրդների այբուբեններով ստեղծված բուրբավեզու ժառանգության մասին հոդվածներ, ուր մակերեսորեն ներկայացվում են նմուշներ այդ գրականությունից, դրանց առաջացման ու զարգացման խնդիրները: Այն, ինչ վերաբերում է հայատառ գրականություններին (հայատառ բուրբերեն<sup>2</sup>, հայատառ դիչաղերեն<sup>3</sup>, հայատառ բրդերեն<sup>4</sup>) նվիրված հոդվածներին, ապա դրանք շատ հեռու են իրական, գիտական ուսումնասիրություններ համարվելուց, քանի որ ծայրաստիճան քաղաքականացման միտումների վրա են կառուցված: Այս ամսագրի էջերում պարբերաբար տպագրվող պոլսահայ մատենագետ Գևորգ Բամպուքճյա-

1 Որպես գեկուցում կարդացվել է Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի ուսումնասիրություններին նվիրված ICANAS-38 միջազգային կոնգրեսում. (Անկարա, 2007թ. սեպտեմբեր 10-15)

2 1990-ական թթ. ամսագրերի համարյա բոլոր համարներում տարբեր նյութերի առթիվ անդրադարձ կա հայատառ բուրբերենին: Դրանց մի մասի հեղինակները բուրբ գիտնականներ են, իսկ մնացածը հիմնականում Գևորգ Բամպուքճյանի գրչին են պատկանում:

3 Tarih ve Toplum, Ist., 1984, N16, s.6-8.

4 Tarih ve Toplum, Ist., 1988, N 54, s.59-63.

նի հողվածներն իրենց ժամանակին հավասարակշռել են բյուր մոտեցումներն այս խնդրի շուրջ ու ներկայացրել իրերի իրական վիճակը, գիտական փաստարկներով ամրագրված:

Օսմանյան կայսրության հպատակության ներքո գտնվող հայ ժողովուրդի արևմտյան հատվածը, մասնավորապես քրիստոնյա հպատակները հարյուրամյակներ շարունակ կանգնած են եղել բռնի մահմեդականացման, ուժացման վտանգի առջև, քանզի հպատակ ժողովուրդների թուրքացման քաղաքականության առաջին քայլը՝ բռնի ուժով թուրքալեզու դարձնելը, մասամբ հաջողությամբ էր պսակվել: Մեր ժողովրդի մայրենին կորցրած այս հատվածին կրկին իր լեզվին, կրոնին, մշակույթին վերադարձնելու և հետագա ուժացումից փրկելու խնդրին է ծառայել հայատառ թուրքերեն գրականությունն իր գոյության շրջանում: Հայատառ թուրքերեն գրականությունը ստեղծվել է հայ ժողովրդի ոչ թե հիմնական մասի համար, այլ նրանց, որոնք, կորցնելով սեփական լեզուն, այնուհանդերձ պահպանել էին իրենց հավատքը, քրիստոնեական դավանանքը, ազգային ավանդույթները:

Նույնպիսի վիճակ էր քրիստոնյա այլ ազգերի, հպատակների մոտ, օրինակ՝ հույների: Սակայն հունատառ թուրքերենը՝ չէր կարող նման մասսայականություն ունենալ, պատճառն էր խաղաղ Օսմանյան կայսրության զարգացման համար, ինչպիսին խաղացել է հայատառ թուրքերեն գրականությունը, քանզի հունարենը չէր արտահայտում թուրքերենի ողջ հնչունական կազմն այնպես, որքան լավագույնս արտահայտում էր հայերեն այբուբենը: Ուստի և թուրքալեզու այլ ազգերի, մասնավորապես թուրքերի համար հունատառ թուրքերենն անհաղորդ է մնացել:

Հայատառ թուրքերենի աշխարհագրական սահմանները չեն սահմանափակվում Օսմանյան կայսրության տարածքով: Հայատառ թուրքերեն, հայատառ թարթերեն ու ղվիչաղերեն՝ ձեռագիր ու տպագիր, նշանակալի գրականություն են ստեղծել այն հայերը, որոնք, բռնելով պանդխտության ճանապարհը, քարավաններով հասել են Ռուկրաինա, Լեհաստան, Արևելյան Եվրոպայի երկրներ:

Հայատառ թարթերենն ու հայատառ ղվիչաղերեն գրականությունը հայ մշակույթի անքակտելի մաս են կազմում և որոշակի պատմաբանասիրական արժեք են ներկայացնում: Այն հայատառ թուրքերեն գրականության ավելի վաղ մի տարբերակն են ներկայացնում, որն առաջացել է 13-14-րդ դարերում: Այս ձեռագրերը պատկանելի թիվ են կազմում և գտնվում են աշխարհի տարբեր հայկական, օտար

1 «Քարամանլիլիկա» կոչվող հունատառ թուրքերեն գրականությունը հույն ժողովրդի համար նույն հայատառ թուրքերեն գրականության ստեղծման ուզարգացման գուզահեռ տարբերակներից է: Այն ևս մեծ ծավալ է ունեցել, սակայն ծառայել է հիմնականում գրառ հույն ազգային խնդիրներին:

և մասնավոր ձեռագրատներում: Մեզ են հասել հիմնականում 16-րդ դարի ձեռագրեր, որոնք ստեղծվել են մասնավորապես Ղրիմի, Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի հայկական գաղթավայրերում, որոնց մի մասը թրքախոս էր և ունեցել են հույժ ազգային բնույթ, ծառայել են համայնքի ամենօրյա կենցաղային, հոգևոր-ժխական խնդիրներին: Դրանք քարոզգրեր, աստվածաշնչային պատմություններ են, համայնքի համար որպես օրենսգիրք ծառայած երկեր, եկեղեցական արարողակարգային ձեռագրեր, աղոթքներ, ժամագրքեր, սաղմոսագրքեր, վարք սրբոց, համայնքների կանոնադրություններ, եկեղեցական հաշվառման, ամուսնական դաշնագրերի ու ծնունդների մատյաններ, պարզևագրեր ուղղված տվյալ երկրի նշանավոր անձանց (երբեմն չափազանց շքեղ, արծաթա-նսկեզօծ գեղագիր փորագրյալ կազմերով), անդորրագրքեր, կահագրքեր, հաշվեմատյաններ, թղթակցություններ, պատմություններ (Խիկարի պատմությունը և այլն), տաղեր և այլն<sup>1</sup>

Նրանց և՛ ծխական, և՛ առօրյա կենցաղային, և՛ համայնքային օրենքներն իրենց արտահայտությունն են գտել նաև հայատառ դիչաղերենով, թաթարերենով, ստեղծելով նշանակալի մշակութային արժեքներ: Այստեղ ստեղծված ձեռագրերում են միայն պահպանվել հայերի հեղինակած դիչաղերենի քերականությունները: Մխիթար Գոշի հայտնի «Դատաստանագիրք» երկի հայատառ դիչաղերենը (12 գլուխների) որպես կանոնագիրք է ծառայել, օրենք՝ հայ գաղութների համար, իսկ համայնքի ու եկեղեցական ամենատարբեր մատյանները մույն լեզվով են գրվել ու մեզ հասել:

Հայատառ դիչաղերեն ձեռագրերը<sup>2</sup> պարունակում են նաև բժշկարաններ, թարգմանական գրականության օրինակներ, կենցաղում օգտակար գրականություն: Կարևոր հանգամանք, որ կարող էր ծառայել ոչ միայն զուտ հայկական շրջանակներին, այլև շրջապատում այդ լեզվով խոսողներին: Այս ձեռագրերում են միայն պահպանվել հայերի հեղինակած դիչաղերենի եզակի քերականությունները<sup>3</sup>: Ասպարեզում չկան և ոչ մի նման այլ քերականություններ: Վերջին-

1 Հայատառ թաթարերեն ձեռագրեր տես՝ Վիեննայի Կայսերական մատենադարանի ձեռ. 13 (1580թ.) և ձեռ. 3 (1638թ.): Տես նաև՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռ. 468 (1575թ.), ձեռ. 559 (1583թ.), ձեռ. 446 (1608թ.), ձեռ. 525 (1618թ.), ձեռ. 447 (1643թ.), ձեռ. 479 (1660), ձեռ.480 ( 1661թ.), ձեռ.536 (ԺԶ), ձեռ. 1300 (ԺԸ), ձեռ.1609 (ԺԸ) և այլն:

2 Կամենեց-Պոդոլսկում և մշակութային հայկական մյուս կենտրոններում գրի առնված և տպագրված հայատառ դիչաղերենով մեծ թվով գրականություն է պահվում Ուկրաինայի, Լեհաստանի արևելվային ֆոնդերում: Հայատառ դիչաղերեն ձեռագրեր տես նաև՝ Փարիզի Ազգային գրադարան, «Դատաստանագիրք Լեուդոլտի Հայոց» ձեռ. 176 (1568թ. Լվով), ձեռ. 194 «Ժողովածոյ» (Ուկրաինա, ԺԷ դ. կեսեր):

3 Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 3522, «Քերականութիւն դիչաղ լեզուի», (1634թ., Լվով, 353 թերթ), ձեռ. 3883 «Բարք Զերականականք» (ԺԶ դ. 383 թերթ), ձեռ. 3521 «Թուրք առ Դիսուկորոս» (1609թ.,220 թերթ) և



ներս անուրանալի արժեք են ներկայացնում այսօրյա բյուրքական ժողովուրդների համար և իզուր չի նրանց որոշ գիտնականների տասնամյակներ շարունակվող «պայքարը», ներկայացնելու հայատառ այս գրականությունը որպես «ինքնակամ ղփչաղությունը գերադասած և ղփչաղացած հայերի, ղփչաղների», այսինքն՝ բյուրքական մշակութային գրավոր ժառանգություն<sup>1</sup>: Վերոհիշյալ և ծիսական, և առօրյա կենցաղային, և օրենքներն իրենց արտահայտությունն են գտել նաև հայատառ ղփչաղերենով, քաթարերենով, ստեղծելով նշանակալի մշակութային արժեքներ:

Երբեմն հայատառ բյուրքերեն, հայատառ քաթարերեն և հայատառ ղփչաղերեն բաժանումները մեզ հայտնի ձեռագրացուցակներում հարաբերական են՝ կայսված այն կազմողների հայեցողությունից, ձեռագրերի ստեղծման ժամանակային ու լեզվական մոտեցումներին տիրապետելուց: Հետագայում այս ձեռագրերի մի մասը տպագրվել է առավելապես Լվովում, Լեյդենում<sup>2</sup>:

Հայատառ բյուրքերեն գրականությունն անցել է զարգացման երկու շրջան՝ ձեռագրական և տպագիր: Ձեռագրական շրջանն ընդգրկել է շուրջ 600 տարի (14-19-րդ.): Տպագիր շրջանը գոյատևել է շուրջ 250 տարի: Այս շրջաններից յուրաքանչյուրն իր առանձնահատկություններն է ունեցել: Մինչ Օսմանյան կայսրության անատոլիական բյուրքախոս որոշ գավառներում արևմտահայության մի ամբողջ սերունդ պիտի դառնար հայախոս, դեռ երկար տասնամյակներ, մինչև 19-րդ դարի կեսերը, (երբ բացվեցին հայկական աշխարհիկ դպրոցներ), անհրաժեշտ էր թրքախոս այդ հայերին հաղորդակից դարձնել ազգային զարթոնքին ու մտավոր վերելքին նրանց համար հասկանալի լեզվով՝ հայատառ բյուրքերենով, այսինքն հայերեն տառերով, սակայն բյուրքերեն լեզվով կատարված հրատարակություններով: Այս հանգամանքով պետք է բացատրել հայատառ բյուրքերեն ձեռագիր և հատկապես տպագիր գրականության առաջացումը, հարյուրավոր կրոնադավանաբանական, պատմական, գեղարվեստական և այլ գրականության, իսկ ավելի ուշ՝ թերթերի ու հանդեսների առաջացումը: Երևույթ, որը մենք նպատա է բերել կայսրության թրքախոս այլ ազգերին ևս:

Այդեն միայն հայատառ բյուրքերեն աշուղական գրականությունն իրական գանձարան է ոչ միայն հայկական մշակույթի, այլև կայսրության այլ ժողովուրդների, առաջին հերթին՝ բյուրք ժողովրդի երգարվեստային մշակույթի համար: Հա-

---

այն:

1 Tarîh ve Toplum, İst., 1984, N16, s.6-8.

2 1619թ. Լվովում տպագրվել է «Աղօթք հասարակաց բրիտոյնից» գիրքը Հովհաննես Ջարսաթանյանցի տպարանում: Գրքի մ մեկ օրինակ գտնվում է Լեյդենի (Հոլանդիա) համալսարանի գրադարանում:

յատառ թուրքերեն ձեռագրերում պահպանվել են ոչ միայն հայագրի, այլև թուրքական, արևելյան բազմալիսի ու բազմաոճ հարյուրավոր թուրքերեն տաղեր: Պահպանվել են երգերի ոչ միայն բառերը, այլև դրանց հեղինակների անունները, երաժշտությունը՝ հայկական ու եվրոպական նոտագրությամբ: Մի խոսքով՝ լի-մոնոճյանական՝ հսկայական, եզակի ու անզնահատելի ձեռագիր ժառանգություն, որը սպասում է իր հայ և թուրք. այլագրի այլ ուսումնասիրողներից՝ արժանի ուշադրության, նոր արժևորումների, բացահայտումների փոխադարձ ակնկալությամբ<sup>2</sup>:

Հայատառ թուրքերեն տպագիր գիրքն ամենատարբեր պատճառներով տպագրվել է թե՛ Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում և թե՛ նրա սահմաններից դուրս: Ավելի քան 250 տարիների ընթացքում հայատառ թուրքերեն տպագրված գրքերի թիվն անցնում է 2000-ից: Դրանք հրատարակվել են աշխարհի շուրջ 50 քաղաքների 200-ից ավելի տպարաններում: Յուրաքանչյուր տպարան, հրատարակչություն ունեցել է իր դեմքը, իր սոցիալ-քաղաքական ու կրոնական կողմնորոշումը, իր գրական, լուսավորական նպատակները, իր նախասիրած թեմատիկան, հետաքրքրությունների նախընտրած շրջանակը և ընթերցողները: Հայատառ թուրքերեն տպագիր գրականության երկուս ու կես դարյա պատմության ուսումնասիրությունը փաստում է հայերի բազմակողմանի կյանքի գոյությունն ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, Ամերիկայում և այլուր: Սա ինքնուրույն ու ինքնաբավ մի գրականություն է՝ հարուստ, որակով, միմյանց չկրկնող՝ հանուն արևմտահայության ու Օսմանյան կայսրությունում զարթոնքի ու ազգային ինքնագիտակցության բարձրացման:

Միայն Ստամբուլում հայատառ թուրքերեն գրքեր հրատարակվել են շուրջ 85 հայկական տպարաններում: Բացի հայերեն- հայատառ թուրքերեն պարբերականներից հայերը հրատարակել են օսմաներեն, բազմալեզու թեքքեր, ամսագրեր: Հրատարակչական կենտրոններ են եղել մաս Միսիթարյան միաբանության Վեներտիկի սբ. Դևադար կղզու, Տրիեստի, Վիեննայի վանքերն իրենց տպարաններով, Երուսաղեմը, ապա՝ Բեյրութը, Սիրիան, Եգիպտոսը, Ֆրանսիան, Ամերիկան, Բուլղարիան, Մալթա կղզին, Ռուսաստանը և այլն:

Հայատառ թուրքերեն գրականության ուսումնասիրությունը կարևոր է հիմնականում հետևյալ նկատառումներով.

ա. Հայատառ թուրքերեն մատենագիտությունը այն անփոխարինելի ու եզակի

1 Այս ձեռագիր տաղարան-ժողովածուների կազմողները եղել են հիմնականում իր ժամանակի ամենահայտնի երաժշտագետ, նոտագետ Համբարձում Լիմոնճյանը՝ Պապա Համբարձումը (1769-1839), նրա աշակերտներն ու հետևորդները:

2 ՄՄ ձեռ. 10295, 10876, 11042, և Նոր հավաքածոյից՝ ձեռ. 197, 201, 204, 205, 206, 213, 214, 215, 229, 245 և այլն:

աղբյուրներից է, որը ներկայացնում է նաև Օսմանյան կայսրության պատմությունը: Բազմաթիվ ժամանակագրություններ (նաև չափածո խրոնիկներ) միակ գրավոր ու հավաստի աղբյուրներն են հանդիսանում Կայսրության որոշակի ժամանակաշրջանում կատարված դեպքերի ու կարևոր դեմքերի մասին: Այս առումով քաջատիկ էր ստամբուլահայ մատենագիր ու բանասեր, թուրքական բազմաթիվ գիտական պարբերականներին ու հանրագիտարաններին իր գիտական հոդվածներով աշխատակցող Գևորգ Բամպուրճյանի թուրքերեն լեզվով աշխատությունների քառաստոր գիտական հետմահու հրատարակությունը վերջին տարիներին՝ Օսման Էյոքեբի կողմից: Այն ներառում հայ և թուրք մշակույթի ու նրա գործիչների, գրական առանձին, գիտական ու պատմական հուշարձանների ու դրվագների մասին թուրքերեն լեզվով շուրջ 1000 հոդվածների մի մասը<sup>1</sup>: Այսօր էլ հայատառ թուրքերեն ձեռագրական հարստությունն անսպառ աղբյուր է ներկայացնում Թուրքիայի պատմության ու կյանքի տարբեր բնագավառների ուսումնասիրության համար:

Բ. Մամուլին գրեզահեռ հայատառ թուրքերեն տպագիր գրականությունը հսկայական ազդեցություն է ունեցել իր ընթերցողների վրա՝ նպաստելով նրանց մտավոր զարգացմանն ու գեղարվեստական ճաշակի բարձրացմանը, հաղորդակից դարձնելով նրանց արևմտաեվրոպական առաջադեմ մտքի նվաճումներին:

Տպագիր շրջանն ի տարբերություն ձեռագրական շրջանի, դուրս է եկել իր նախնական առաքելության շրջանակներից ու սկսել է ծառայել ոչ միայն հայերի թուրքախոս հատվածին, այլև ողջ արևմտահայությանը, Օսմանյան կայսրության բրթախոս այլ ժողովուրդներին և առաջին հերթին՝ թուրքերին:

Այս գրականությունն Օսմանյան կայսրության եվրոպականացման, նոր գաղափարների ներթափանցման, զարթոնքի ընդհանուր շրջանի ծնունդ տվողներից ու շարժիչ ուժերից է հանդիսացել: Այս լեզվով են թարգմանվել ու կարդացել համաշ-

1 Kevork Pamukciyan. Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar. Yayına hazırlayan Osman Köker. Aras Yayınılık. İstanbul. 2002–2003. Cilt 1-İstanbul yazıları; Cilt 2-Ermeni Harfli Türkçe Metinler; Cilt 3- Zamanlar, Mekânlar, İnsanlar; Cilt 4- Biyografileriyile Ermeniler. Գևորգ Բամպուրճյանի կենսագրության և ուսումնասիրությունների մասին տե՛ս՝ Կարո Բամպուրճեան (1923-1996)», «Հասկ», Է տարի, Անրիլիաս, Լիբանան, 1995-96թթ., էջ 659-670.

Գ. Բամպուրճյանը եղել է այն եզակի գիտնականը, որի համագործակցությանն են ապավինել թուրքական մի շարք ծանրակշիռ հանրագիտարաններ՝ հայկական նյութերը, մասնավորապես թուրք պատմության շուրջ հայատառ թուրքերենով եղած աղբյուրները ներկայացնելու համար: Դրանք են՝ Ռեշադ Էրբեն Գուչույի «İstanbul Ansiklopedisi», Յընմակ Էօթրունայի «Türk Müzikisi Ansiklopedisi», Մուսթաֆա Արղալի խմբագրած «Türk Dili ve Edebiyat Ansiklopedisi», «Ana» հրատարակչատան «Genel Kültür Ansiklopedisi», և «Ana Britanika», «Belleten» լուրջ հրատարակությունները:



խարհային, եվրոպական դասականներին ու ժամանակի հայտնի, բուլվարային, արկածային գրականության արքաներին: Այս լեզվով են հիմնականում գործել հայկական թատերախմբերը՝ ներկայացնելու համար թուրքերեն լեզվով իրենց խաղացանկը: Հայատառ թուրքերենով են գրել, թարգմանել, փոխադրել հայ թատրոնը շրջապատած թուրք լուսավորիչները՝ ծնունդ տալով թուրքական դրամատուրգիային, թուրք նոր գրականությանն ու գրական «թուրքերենին»: Այս լեզվով տպագրվել են տասնյակ պարբերականներ, որոնք անկարագրելի պատմական դեր են ունեցել Օսմանյան կայսրության սոցիալ-քաղաքական, գիտական, մշակութային կյանքում, կենցաղում՝ նոր աստիճանի բարձրացնելով հայ լրագրողական մշակույթը, միաժամանակ ծնունդ տալով ժամանակահունչ թուրքական լրագրողական մշակույթին: Դրանք թուրք ու թրքախոս մտավորականների ու պաշտոնյաների նախընտրած մամուլն են հանդիսացել ժամանակի արտաքին ու ներքին լուրերի, նյութերի ներկայացման հրատապությամբ ու որակով: Նույն այս շրջանակը ներկայացնողները թղթակցել են հայատառ թուրքերեն պարբերականներին, այդտեղ տպագրելով նաև իրենց ստեղծագործությունները, թարգմանությունները:

Հայատառ թուրքերեն պարբերական հարուստ մամուլը, նրա էջերում տպագրվող ինքնուրույն ու թարգմանական, մասնավորապես ֆրանսիական արկածային գրականությունը օրը օրին սովորության ուժով կարդացվում էին հասարակական վայրերում, սրճարաններում, (սովորաբար մեկը կարդում էր, մյուսները՝ լսում էին), թեյարաններում, դիվանագիտական հաստատություններում, պաշտոնատեղիներում, անգամ հարեմներում՝ հարյուրապատիկ մեծացնելով ընթերցողների շրջանակը:

Ստեղծվել է հայատառ թուրքերեն մեծաթիվ գրականություն: Այդ թվում՝ օսմաներեն լեզվի ուսուցման դասագրքերի, բառարանների անճախընթաց առատություն: Ամենից շատ այն օգնել է նոր թուրքերեն լեզվի կայացմանը, նրա բառացանկի հարստացմանը: Հայ լեզվաբանների հեղինակած թուրքերենի (հայատառ թուրքերենով և օսմաներենով) դասագրքերով սեփական լեզուն տասնամյակներ շարունակ սովորել են թուրքերը, նորաբաց տարբեր մասնագիտական, նույնիսկ զինվորական ուսումնական հաստատություններում՝ հայատառ թուրքերեն մասնագիտական գրականության հետ միասին:

Հայատառ թուրքերեն գրականությունը մեծապես նպաստել է ստեղծելու համար կայսրություն մուտք գործող գիտության, տեխնիկայի, գյուղատնտեսության, արհեստների ու մշակույթի գրականություն, որը կոչված էր ծառայելու ոչ միայն հայ, այլև Օսմանյան կայսրության թուրքախոս ազգերին, թուրքերին:

Հայատառ թուրքերենը եղել է կենդանի օրգանիզմ և ծառայել է ողջ կայսրության շահերին: Իզուր չէ, որ պալատական շրջանակներում (մեծ վեզիրների մտանդակ-

մամբ) 19-րդ դարի կեսերին օսմաներեն լեզվի արաբական այբուբենը հայկականով փոխարինելու հարց է առաջացել, որի կենսունակությունն արդեն ապացուցված էր:

150 տարվա պատմություն ունեցող շուրջ 120 ամուն հայատառ բուրբերեն պարբերականները լայն ժողովրդականություն են վայելել, տարիներ շարունակ հրատարակվել մեծ տպաքանակով, ունեցել բաժանողողներ և բազմաթիվ թղթակիցներ՝ տարբեր գավառներում, արտասահմանում, կարդացվել տարբեր ազգերի կողմից: Այս պարբերականներն իրենցից անհատնում աղբյուր են ներկայացնում Օսմանյան կայսրության կյանքի բոլոր կողմերի ուսումնասիրության համար՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական վիճակի, կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների և այլն: Հայատառ բուրբերեն պարբերական մամուլը ներկայացրել է արևմտահայերի բազմադեմ կյանքի ամենօրյա հայելին: Գավառին մվիրված հողավածները ճանապարհորդի, թղթակցի տպավորությունների հետ միասին ընդարձակ տեղեկություններ են տվել այդ գավառների բնության, պատմական հուշարձանների, ազգային, կրոնական ավանդույթների, սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, գավառներում հայ և մյուս բնակիչների կրած հալածանքների մասին:

Մի հանգամանք ևս, որն այս գրականությունը դարձնում է անփոխարինելի հարուստ աղբյուր գավառների բազմազգ ժողովուրդների կյանքի ուսումնասիրության համար:

Վերոհիշյալ պարբերականները հրատարակվում էին ժամանակի ֆրանսիական պարբերականների նմանությամբ և բազմաթիվ ընթերցողների համար հանդիսացել են տեղեկատվության միակ բարձրակարգ աղբյուրը: Եվրոպական պարբերականներից քարգմանվել են բազմաթիվ օտար տերությունների պատմության, ազգագրության մասին հողվածներ, պատմական կարևոր դեմքերի, ժամանակակից իրավիճակի, մշակույթի, այդ երկրներում գիտության, բանակի, անգամ բյուջեի, քաղաքական ու տնտեսական կյանքին վերաբերյալ նյութեր: Նույն ֆրանսիականի նմանողությամբ շատ պարբերականներ, անգամ մանկականները, ունեցել են թերթոնների բաժին, ուր շարունակաբար, օրը օրին տպագրել են հիմնականում ֆրանսիական հայտնի վեպեր, պատմվածքներ, երբեմն էլ՝ հայ ու մույնիսկ թուրք հեղինակների գործեր: Հայատառ բուրբերեն որոշ պարբերականների հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ մյուս ազգերի առաջադեմ մտավորականությունը, մասնավորապես թուրքերը ոչ միայն համագործակցել են դրանց, այլև սովորել են հայկական այբուբենը և ամեն օր կարդացել այդ թերթերը, նախընտրելով այն օսմաներենով հրատարակվողներից: Մեզ են հասել թուրք հայտնի գրող Մեհմեդ Էմինի մի շարք բանաստեղծությունները՝ «Մեր բանաստեղծ կուսակալը» վերնագ-

րով, գավառի հայատառ թուրքերեն պարբերականներում, երբ նա կուսակալ էր:

Հայատառ թուրքերեն գրականությունն անկասկած իր հսկայական ազդեցությունն ունեցավ թուրք գրողների ու հասարակական գործիչների նոր սերնդի ձևավորման ու զարգացման վրա: Վերջիններս հանդես էին գալիս հանուն Օսմանյան կայսրությունում սահմանադրական բարեփոխումների անցկացման և թուրք հասարակության մեջ՝ աշխարհիկ, մշակութային կյանքի զարգացման:

1850-1870-ական թթ., քաղաքական կյանքի համար համեմատաբար բարենպաստ տարիներին, հայատառ թուրքերեն գրականությունը մեծապես նպաստել է հայ ժողովրդի թուրքախոս հատվածի հոգևոր վերելքին, նրա ազգային-ազատագրական ոգու վերածննդին և ընդհանուր առմամբ՝ Օսմանյան կայսրությունում հասարակական մտքի զարթոնքին: Գեղարվեստական գրականություն (ինքնուրույն և քարզմանական), պատմական աշխատություններ, լուսավորական գրականություն, հրապարակախոսություն, փիլիսոփայական տրակտատներ, գիտական, գիտա-հանրամատչելի գրքեր, դասագրքեր, բառարաններ, իրավագիտական ակտեր, տարբեր տեսակի ուղեցույցներ, բժշկական, կենցաղային՝ երգարաններից մինչև երազահաններ ու խոհարարական գրքեր, առողջապահական հրատարակություններ, մանկական գրականություն և այլն:

Նույնիսկ արքուլիամիդյան բռնապետության դաժանագույն գրաքննության տարիներին, երբ խստագույնս արգելք էր դրված ազգային ինքնագիտակցության զարգացմանը նպաստող յուրաքանչյուր գրքի ու հոդվածի վրա, երբ արգելված էին անգամ հայերեն թատերական ներկայացումները, հայատառ թուրքերեն գրականությունը կարողացավ կատարել իր քաղաքացիական պարտքը՝ մշակութային, հասարակական-քաղաքական համախմբման առաքելության առումով:

Այս գրականության մի խոշոր հատված իրենից ներկայացնում է քարզմանություններ՝ կատարված թատրոնի համար: Այդպիսի ստեղծագործությունների թիվը հասնում է շուրջ 500-ի: Իհարկե, դրանց մեծ մասը չի հրատարակվել, սակայն այդ պիեսները ներկայացվել են ավելի քան հարյուրավոր անգամներ: Այնուամենայնիվ, հրատարակված չլինելով հանդերձ, այս գրականությունը նշանակալի դեր է խաղացել Օսմանյան կայսրության ժողովուրդների հոգևոր զարգացման գործում: Այդ բեմադրություններից շատերն ավելի կարևոր են եղել, քան հրատարակված որոշ ստեղծագործություններ: Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ կայսրությունում անգրագետների ու թուրքերեն կարդալ չիմացողների թիվը հսկայական է եղել, իսկ զարգացած ու թուրքերենին տիրապետողների թիվը՝ սահմանափակ: Դրանք բոլոր միասին դիտել և հասկացել են հայկական թատերախմբերի բեմերից հնչող թուրքերենը:



Գերասանապետ Հակոբ Վարդույանի (Գյուլլի Հակոբ) «Օսմանյան քատրոն-նի» հետ համագործակցության շրջանը թուրք մտավորական երիտասարդների մի կարևոր հատվածի համար ճակատագրական նշանակություն է ունեցել: Հետագայում նրանք լրջորեն տարվել են գրականությամբ, հատկապես թատերական դրամատուրգիայով: Հայկական թատերախմբերի հետ համագործակցած թուրք մտավորականների ցանկն իրենից ներկայացնում է թուրք նոր գրականության դասականների, լուսավորիչների համարյա քիվ ցուցակը: Այն է՝ Նամըք Քեմալ, Ահմեդ Միդիհատ, Շամսեդդին Սամի, Էբուզգիյա Թեֆիք, Ռաջաիզադե Էքբեմ, Ալի Հայդար, Հասան Բեդրեթթին, Աբդուլհակ Համիդ և շատերը: Բացի նյութական կողմից, թատրոնը թուրք լուսավորիչներին գրավել է նրանով, որ հենց թատրոնի միջոցով է հնարավոր եղել արտահայտել նրանց ամենամեծ երազանքները և թուրք առաջադեմ մտավորականության տրամադրությունները:

Թատրոնի հանդես գալուց հետո պայքարի մի մասը տեղափոխվում է բեմ:

Թուրք թատրոնի պատմաբան Ռեֆիկ Ահմեդն իրավացիորեն նկատում է, որ Վարդույանի թատրոնն արժանի է ուշադրության որպես թուրքական գրականության ձևավորման կենտրոն: Միաժամանակ դրանք հանդիսանում են թուրք նոր գրականության դասականների ամենահայտնի ստեղծագործությունները:

Թուրքական թատրոնի պատմաբանների կողմից այս շրջանն ուսումնասիրվում է որպես թուրքական ազգային թատրոնի սկզբնավորման ժամանակաշրջան (Մեթին Անդ, Ահմեդ Ֆեհիմ և ուրիշներ):

Թուրք թատերագետները, դերասանները արդարացիորեն նշում են, որ եթե չլինեք Հակոբ Վարդույանի, Մարտիրոս Մնակյանի, Թովմաս Ֆասուլաճյանի, Արշակ Պենկլյանի և մյուս հայկական թատերախմբերը, նրանց կողմից նյութական վարձատրությամբ թուրք հեղինակներին տրվող պատվերները, ապա դժվար թե ստեղծվեք թուրքական դրամատուրգիան:

Մեր ասածն ամբողջական չէր լինի, եթե չխոսեինք Տիգրան Չուխաջյանի ու նրա գործընկերների մասին, որոնց անունները նույնացվում են թուրքական օպերայի, թուրքական երաժշտական թատրոնի, օպերետի հիմնադրման պատմության հետ: Տիգրան Չուխաջյանի հեղինակած ու ղեկավարած ներկայացումները ժամանակի մշակութային մեծագույն իրադարձություններից են համարվել: Նրա գրչին պատկանող երեք հիմնական օպերետների լիբրետտոները եղել են թուրքերեն (հայաստաո թուրքերեն): Նրա անվան հետ է կապվում նաև թուրքական քայլերգային երաժշտության զարգացումը: Նա հայտնի է որպես մի քանի սուլթանական քայլերգերի հեղինակ: Օսմանյան կայսրությունում լուսավորական շարժման զարգացման գործում նկատելի դեր են խաղացել հայկական թատերախմբերի

երկրով մեկ, մինչև Բալկաններ, Եգիպտոս կատարած հյուրախաղերը: Այս հյուրախաղերը համընկել են «գուլումի» տարիներին, երբ Կ.Պոլսում ոչ միայն արգելված էին հայերեն ներկայացումները, այլև թուրք հեղինակների ու եվրոպական քարզմանական պիեսների մեծ մասը: Նշենք, որ արևելյան գավառներում շատերն առաջին անգամ էին կյանքում շփվում թատրոն կոչված երևույթի հետ: Առաջին անգամ էին տեսնում դերասանների, բեմ, շփվում դրամատուրգիայի, այդ թվում նաև դասականների ստեղծագործությունների, հայ և թուրք հեղինակների գործերի հետ: Ներկայացվում էին նաև ժողովրդի մեջ հայտնի արևելյան սիրավեպերը, մելոդրամներ, վոդևիլներ, ֆարսեր, զավեշտներ:

Ավելի քան 50 ձիգ տարիներ Թուրքիայի բնակչության ամենատարբեր, բյրախոս և թուրքերենին տիրապետող խավերը այսկերպ հաղորդակցվել են թատերական մշակույթի հետ:

Թուրքական հարեմներում փակված կանայք թատրոնում ականատես էին լինում այնպիսի տեսարանների, երբ տղամարդը ծնկաչոք սեր էր աղերսում կնոջից, իսկ վերջինս մերժում էր, ստիպելով տղամարդուն տանջվել: Միայն այս հանգամանքը բավական էր, որպեսզի հարեմական կյանքով սահմանափակված կինը հասկանար, որ իր բանտարկյալ ու ստրկական վիճակը, որ իրեն գնել-վաճառելու-նվիրելու փաստն ի վերուստ կարգադրված երևույթներ չեն և ոչ էլ մարգարեական պատգամներ: Այս ամենին ավելանում էր սովորելու, զարգանալու և դրանով իսկ որոշ չափով կյանքի հարվածներին դիմագրավելու կոչերը՝ որպես կարևոր պայման կյանքում կույր գործիք շլինելու համար: Այստեղից բխում էր, որ պետք է սովորեն բոլորը՝ կին, տղամարդ, հարուստ, աղքատ: Եվ եթե Օսմանյան սահմանադրության վերականգնման տարիներին թուրք կինն աստիճանաբար հասարակական ասպարեզ մտավ և Թուրքիայում ծայր առավ կանանց էմանսիպացիայի խնդիրներին ուղղված շարժումը՝ այն միանգամայն կարելի է վերագրել մասամբ Մարտիրոս Մնակյանի թատրոնի՝ հատուկ կանանց համար տրվող ցերեկային ներկայացումների դաստիարակչական մեծ ազդեցությանը: Ներկայացումները նպաստում էին կնոջ սոցիալական ու մշակութային մտահորիզոնի ընդարձակմանը: Թատրոնն այդ կանանց համար դառնում էր եվրոպական քաղաքակրթության հետ շփվելու լավագույն հնարավորություն: Այն մղում էր հարեմի և հանդիսատես մյուս կանանց կարողալու ֆրանսերենից առատորեն քարզմանվող վեպերը: Հայատառ թուրքերեն սիրային, արկածային վեպերը տարածված էին Ստամբուլի հարուստ ու միջին ընտանիքներում, հարեմներում ու ամեն մի կնոջ ու երիտասարդ աղջկա բարձի տակ կարելի էր այն գտնել: Իրենք, բրբուռիները, հաճախ են շնորհակալության զգացումով խոստովանել այս մասին:

Հայատառ թուրքերեն շրջանը 19-րդ դարում Օսմանյան կայսրության առաջավոր, մտավորական ու լուսավորական բոլոր ուժերի համագործակցության հրաշալի շրջան է եղել, որն իր պտուղներն է ավել ի դեմս թուրք նոր ինքնուրույն ու թարգմանական գրականության, նոր թուրքերեն գրական լեզվի, մամուլի, գիտությունների, արվեստների զարգացման: Այս համագործակցությունը 20-րդ դարի արշալույսին արդեն գոյություն չուներ...

Թուրքագիտական եվ օսմանագիտական հետազոտություններ, V, 22 ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ Երևան 2008, էջ 232-242.

## **ՖԻՆԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 19-ՐԴ ԳԱՐՈՒՄ**

(Հայատառ-թուրքերեն հրատարակություններ)

(Հեղինակները՝ Քսավի դը Մոնթեբեն, Պոլ Ֆեվալ, Բուակոպե դը Ֆորբուսեն, Էմիլ Գաբորիո, Էմիլ Ռիշբուրգ, Ժորժ Պրադել, Բոնստոն դը Թերրայլ, Ադուլֆ Բլո, Ժյուլ Բուլաբեր, Ժյուլ դը Կասքին, Ժյուլ Վեռն, Ալ. Դյունա, Վ.Հյուգո, Ժորժ Օգե, Էժեն Սյու, Լը Սաժ և այլն: Թարգմանիչները՝ Պիտար Արապաճյան, Հովհաննես Թալայան, Ալիք Անտոն, Կարապետ Փանոսյան, Գր. Չիլիկլիքյան, Տիգրան Աղամյան և այլն: Կ. Պոլսի և Ջնյունիայի թարգմանական դպրոցները)

Այս գրականությունն ունեցել է ձեռագրական 600- ամյա և տպագրական 250- ամյա շրջաններ: Չեռագրական հարուստ շրջանին հաջորդել է շատ ավելի հարուստ ու բազմաժանր տպագրական շրջանը 18-րդ դարում (1727թ.):

Ավելի քան 250 տարիների ընթացքում հայատառ թուրքերեն տպագրված գրքերի թիվն անցնում է 2000-ից: Հրատարակվել են դրանք աշխարհի մոտ 50 քաղաքների 200-ից ավելի տպարաններում: Այն ներառում է բազմաժանր գրականություն, պարբերական մամուլ, որը ստեղծվել է ժամանակի ֆրանսիական մամուլի օրինակով: Հայկական թատերախմբերի թուրքերեն (հայատառ թուրքերեն) ներկայացումների համար ստեղծված գրականության թիվն անցնում է 500 անուն ստեղծագործություններից, որոնց մի չնչին մասն է միայն տպագրվել:

Այդ գրականությամբ Օսմանյան կայսրությունում հետաքրքրվեցին մաև օտարները (հույներ, բուլղարներ, հրեաներ, ալբաններ և այլն), առաջին հերթին իհարկե թուրքերը, քանի որ լեզուն իրենցն էր, իսկ հայկական այբուբենն անհամեմատ դյուրին էր սովորելը քան օսմաներենի արաբական բարդ գրաֆի-



կան: Հայատառ թուրքերեն որոշ պարբերականների հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ մյուս ազգերի առաջադեմ մտավորականությունը, մասնավորապես թուրքերը ոչ միայն համագործակցել են դրանց, այլև սովորել են հայկական այբուբենը և կարդացել այդ թերթերը:

150 տարվա պատմություն ունեցող հայատառ թուրքերեն մամուլը հայ պարբերական մամուլի մի անբակտելի մասն է կազմում: Միայն 1850-1890-ական թթ. Կ.Պոլսում հրատարակվել են ավելի քան 100 անուն հայ պարբերականներ, որոնց կեսից ավելին՝ 54-ը, հայատառ թուրքերեն: Հայատառ թուրքերեն թերթերից շատերը ֆրանսիական պարբերականների օրինակով ունեցել են բազմաթիվ, մսև՝ թերթոցների բաժին, ուր ամեն օր շարունակաբար տպագրել են հիմնականում ֆրանսիական հայտնի վեպեր, երբեմն էլ՝ հայ ու նույնիսկ թուրք հեղինակների գործեր: Այս ամենի շնորհիվ հայատառ թուրքերեն պարբերականները բազմաթիվ բաժանորդներ են ունեցել ոչ միայն խոշոր քաղաքներում, այլև ողջ երկրով մեկ: Սովորական երևույթ էր, երբ այդ թերթերը, դրանցում տպագրված հետաքրքիր հոդվածները, վեպերը կարդացվել ու քննարկվել են թեյարաններում, սրճարաններում: 120 անուն պարբերական մամուլին զուգահեռ՝ թարգմանական գեղարվեստական գրականությունը հսկայական ազդեցություն է ունեցել իր ընթերցողների վրա՝ նպաստելով նրանց մտավոր զարգացմանն ու գեղարվեստական ճաշակի բարձրացմանը, հաղորդակից դարձնելով նրանց արևմտաեվրոպական առաջադեմ մտքի նվաճումներին:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հայատառ թուրքերեն թարգմանական գրականության միջոցով Արևմուտքի առաջադեմ գաղափարները ներթափանցում էին կայսրության բոլոր ժողովուրդներին, մասնավորապես թուրքական շրջանակները՝ անգրագետ, հետամնաց, ռազմա-ֆեոդալական թուրքական բռնապետությունում տարածելով լիբերալ-սահմանադրական, հեղափոխական գաղափարախոսության սերմերը:

Պալատից՝ մինչև թուրքախոս տարբեր ազգերի ընտանիքներում հայատառ թուրքերենով ֆրանսիական վեպերը անչափ սիրված ու տարածված են եղել, մի տեսակ տուրք՝ ժամանակի նորածնությանը: Սուլթանների ու փաշաների հարեմի կանանց բարձերի տակ այս վեպերն են եղել, իսկ հայկական թատրոններում հարեմի գեղուհիներն իրենց համար հատուկ հատկացված օբյակներում դիտել են ներկայացումներ, ուր կինը պայքարում էր համուն սիրո ու ազատության: Նրանց ճակատագիրը ու կյանքի իմաստը լոկ իր տիրոջն ամբռունչ ծառայելու մեջ էր: Ֆրանսիական պիեսները, մելոդրամներն ու նույնիսկ օպերետները կրթեցին Թուրքիայի ապագա կնոջը:

Ֆրանսերենից կատարված քարգմանությունները երկու դրակական բուռն շրջանների են բաժանվում: 1850-70ական թթ., որը համեմատաբար ավելի քաղաքական բարվոք շրջան է համարվում, բարենորոգումների ու դրանից հետևող մթնոլորտի գրականություն և հետո՝ մինչև 20-րդ դարասկզբի գրականություն: Այս շրջանում քարգմանվել են ֆրանսիական լուսավորիչների բազմաթիվ գործեր, համաշխարհային եվրոպական գրականության գլուխգործոցներ, գրական տարբեր հոսանքների հիմնադիրների ստեղծագործություններ: Թարգմանվել են քարգմանական տարբեր դպրոցների, գրական ու քաղաքական տարբեր հոսանքների ու ճաշակների մտավորականների կողմից: Օրինակ, արևմտահայ իրականության ամենահայտնի դեմքերից Հովհաննես Տերոյենցն, ի պատասխան ֆրանսիական հեղափոխության Կայսրություն թափանցող գաղափարների, քարգմանել է Սերվանտեսի ամմահ գործը՝ հայտարարության մեջ գրելով, որ դոքիչոտություն է համարում նման գաղափարներով տարվելը: Ակնարկն ուղղված էր այն հանգամանքին, որ Պոլսում նախանդանական գաղափարները հասկիքների մեծ բանակ ունեին:

Համիդյան բռնակալության, գրաքննական խստությունների ծիծաղելիորեն ծայրահեղությունների հասնող տարիներին, երբ արգելված էր ազգայինը, հայկական թատերախմբերը ստիպված էին իրենց ներկայացումները թուրքերենով հնչեցնել: Նույնիսկ արդուլիամիդյան բռնապետության դաժանագույն տարիներին, երբ խստագույնս արգելք էր դրված ազգային ինքնագիտակցության զարգացմանը նպաստող յուրաքանչյուր գրքի ու հոդվածի վրա, հայատառ թուրքերեն գրականությունը կարողացավ կատարել իր քաղաքացիական պարտքը՝ հայ ժողովրդի ազգային, մշակութային, հասարակական-քաղաքական համախմբման առաքելության առումով: Ոչ տարերայնորեն են քարգմանվել ֆրանսիական ռոման-ֆելիետոնների տասնյակ հազարավոր էջերը, Փարիզում դրանց հրատարակվելուց ընդամենը մի քանի ամիս անց:

Ցանկանում ենք ներկայացնել թվ 2-3 հայ քարգմանիչների մեզ հայտնի քարգմանությունների ցուցակը՝ առանց անդրադառնալու նրանց ինքնուրույն և հրապարակախոսական գործունեությանը, առանց թատրոնի համար կատարած նրանց գործերին:

Պիտար Արապաճյանը քարգմանել է՝

- |  |        |
|--|--------|
| 1. Ժյուլ դը Կասթին, «Դ-անիելի գաղտնիքը» (1872թ.)         | 500 էջ |
| 2. Հատընտիր բանաստեղծություններ (1879 թ.)                | 160 էջ |
| 3. Ալ.Դյումա, «Լորդ Բեկինգհեմի 7 համբույրները» (1888 թ.) | 360 էջ |

4. Հելտոր Մալո, «Առանց ընտանիքի» (1890 թ.)	400 էջ
5. Պոլ Ֆեվալ, «Սերը փարիզում» (1890թ.)	1119 էջ
6. Հանրի Ֆրանսիսի, «Ոճրագործության հետքով» (1891 թ.)	288 էջ
7. Ժյուլ Վեռն, «20 000 լյո ջրի տակ» (1892 թ.)	750 էջ
8. «Հազար ու մեկ գիշերներ» (1891թ.)	1245 էջ
9. Ժյուլ Վեռն, «Խորհրդավոր կղզին» (1893 թ.)	438 էջ
10. Պրադել Ժորժ, «Ամերիկացին Փարիզում» և «Մառլո փողոցի սպանությունը» (1893 թ.)	340 էջ
11. Պրադել Ժորժ, «Ամերիկայի հայտնագործումը» (1893 թ.)	470 էջ
12. Բոնսոն դը Թերրայլ, «Գեղեցկուհի Անժելլը» (1893 թ.)	1200 էջ
13. Ժյուլ Վեռն, «80 օր աշխարհի շուրջ» (1893 թ.)	288 էջ
14. Զ. դը Մոնթեպեն, «13 համարի կտորը» (1894 թ.)	1300 էջ
15. Էմիլ Գաբորիո, «113-րդ գործը» (1895թ.)	752 էջ
16. Ա.դը Սագի, «Հազար ու մեկ օր» (ա.թ.)	
17. «Սուրբ Ալեքսիանոսի վարքը»:	

Սեզ հայտնի նրա կատարած թարգմանությունների ծավալը 10000 էջից ավելի է:

Հովհաննես Թոլայանի՝ խմբագրի և թարգմանչի կատարած թարգմանությունների ընդհանուր ծավալը շատ ավելին է, քան Թանգլիանսիի և հետագա մի քանի տասնամյակների թուրք մտավորականության կատարած բոլոր թարգմանությունները միասին.

1. Բսավիե դը Մոնթեպեն, «Փարիզի խաղատները» (1876 թ.)	840 էջ
2. Զ.դը Մոնթեպեն, «Գնչուհին» (1879 թ.)	560 էջ
3. Զ.դը Մոնթեպեն, «Չուլաժո աղջիկներ» (1880-81թթ.)	3100 էջ
4. Զ.դը Մոնթեպեն, «Դավաճան մայրը» (1880-81թթ.)	750 էջ
5. Զ.դը Մոնթեպեն, «3սլն օժիտ» (1881 թ.)	616, 385 էջ
6. Զ.դը Մոնթեպեն, «Հացագործ կինը» (1882 թ.)	1240 էջ
7. Զ.դը Մոնթեպեն, «Միլո խոստովանություն» (1882-1883 թթ.)	2250 էջ
8. Զ.դը Մոնթեպեն, «Հնդիկների գաղտնիքը» (1882 թ.)	575 էջ
9. Բուազոպե դը Ֆոքթուն «Կարված բերան» (1883-84թթ.)	970 էջ
10. Ժ.Կասթիլ «Մյ կնոջ վրեժը» (1883-84թթ.)	680 էջ
11. Ադոլֆ Բլո «Մայրասպանը» (1885թ.)	1050 էջ
12. Ադոլֆ Բլո, «Ոճրի արձագանքը» (1880 թ.)	380 էջ
13. Էմիլ Ռիշբուրգ, «Քողով կինը» (1885թ.)	664 էջ
14. Ժյուլ Բուլպեր, «Անտառ կինը» (1887թ.)	194 էջ
15. Զ.դը Մոնթեպեն, «Փարիզի ողբերգությունները» (1887թ.)	1454 էջ



16. Բ. դը Մոնթեպլան, «Խաղամուխ կինը» (1887թ.)	560 էջ
17. Բ. դը Մոնթեպլան, «Կարմիր կտակագիր» (1888 թ.)	500 էջ
18. Բ. դը Մոնթեպլան, «Փարիզում ինչեր են տեղի ունենում» (1889 թ.)	1344 էջ
19. Ժյուլ-Մարի, «Թակարդ» (1888 թ.)	300 էջ
20. Բ. դը Մոնթեպլան, «Փարիզի շրջմուխները» (1890 թ. )	1000 էջ
21. Բ. դը Մոնթեպլան, «Հագար ու մեկ գիշերներ» (1891 թ.)	1245 էջ
22. Բ. դը Թերրայլ «Ռոքամբոլ» (1892-93թթ.)	2400 էջ

Այսպիսով, Հովհաննես Թոլայանի թարգմանությունները կազմում են մոտավորապես 22000 էջ: Բ. դը Մոնթեպլանի «Գիշերվա սուլթանը» վեպի թարգմանության ձեռագիրը, որը չի հրատարակվել և 3 մասից է բաղկացած, ու 3045 էջ է պարունակում, պահվում է Հայաստանի Ազգային գրադարանում:

Ալիք Անտոնի կատարած թարգմանությունների մոտավոր ցանկը հետևյալն է՝

1. Էմիլ Գոնզալազ, «Սատանայի գործիքը» ( 1880թ.)	832 էջ
2. Բ. դը Մոնթեպլանի, «Սիմոն և Մարի» (1885թ.)	700 էջ
3. Բ. դը Մոնթեպլան, «Կարմիր կախարդը» (1885թ.)	420 էջ
4. Բրատել Ժորժ, «Դեղին մարգարիտը, (1887թ.)	460 էջ
5. Ժորժ Օնե, «Նպատակի հետևանքը» (1888թ.)	277 էջ
6. Բլո Ադոլֆ, «Ոճրագործության հետևանքները» (1888թ.)	400 էջ
7. Բուազուպե դը Ֆորթունե, «Կատվի աչքը» (1888թ.)	414 էջ
8. Բ. դը Մոնթեպլան, «Խեցեքերի բժիշկը» (1888թ.)	240 էջ
9. Նիմուս Պիեռ, «Օտարի կամ խենթի գաղտնիք» (1889թ.)	800 էջ
10. Բրետտոն միսս, «Ստի հետևանքները» (1891թ. )	240 էջ

Թարգմանությունները մոտավորապես 5600 էջ են կազմում:

Հայատառ թուրքերենով թարգմանվել և բեմականացվել են արևմտաեվրոպական բեմերում և քառերախմբերում հայտնի համարյա բոլոր մելոդրամները, օպերետները, անգամ որոշ օպերաների համառոտ տարբերակները:

Հայ թատերական խմբերը, որոնք իրականացնում էին մաս թուրքերեն ներկայացումներ, առատորեն օգտագործում էին հայատառ թուրքերենը: Մանավանդ համիդյան բռնակալության շրջանում, երբ արգելված էին հայերեն ներկայացումները, դրանք թուրքերենով էին հնչում: Թուրքերեն ներկայացումների տեսուերը, դերերը՝ հայատառ թուրքերեն էին: Հայատառ թուրքերենով են սովորել իրենց դերերը մաս առաջին թուրք դերասանները, որոնք խաղացել են հայկական թատերախմբերում: Այս թատրոնների համար թուրք լուսավորիչների կողմից գրված կամ թարգմանած, աղապտացված պիեսները ևս հայատառ թուրքերենով

են եղել: Այս մասին հիշատակում է նաև թուրք թատերագետ Մեթին Անդը: Թատերագետ Ադոլֆ Թալաստն, Փարիզում, 1904 թվականի «Լա ռելյու թևաթավի» մի ամբողջ(հ.6) համար է նվիրել այս խնդիրներին: Ըստ նրա հաշվումների՝ միայն Հակոբ Վարդովյանի թատերախմբի համար մեկ թատերաշրջանում անհրաժեշտ է եղել ունենալ անհամեմատ ավելի մեծ խաղացանկ, քան Փարիզի ամենամեծ թատրոնի համար, քանի որ Փարիզում մեկ պիեսը նեկայացվում էր շուրջ 100 անգամ, իսկ Պոլսում՝ միայն 3-5 անգամ: 1874-75թթ. թատերաշրջանում միայն Հակոբ Վարդովյանի (Գյուլյի Հակոբի) թատրոնում խաղացվել է 80 կատակերգություն, 10 ողբերգություն, 44 դրամա, 28 ինքնուրույն ու տեղայնացված պիեսներ, 10 օպերետ և ողկիլ:

Ընդհանրացնելով մեր խոսքը՝ ասենք, որ հայատառ թուրքերենի օգտագործմամբ մոտ հինգ հարյուր պիեսներ են բեմադրվել հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումների համար: Հետագայում դրանք ժառանգել են մյուս թատերախմբերը՝ հազարավոր հանդիսականների ներկայացնելով արդեն սիրված ու մեծ ընդունելություն գտած ամենատարբեր ժանրերի պիեսների բեմադրությունները: Դժվարանում ենք ասել, թե որո՞ւմ են հրատարակվել, սակայն դա այնքան էլ էական չի եղել, մասնավաճ, եթե դրանց դիտողները, մասնավորապես գավառներում՝ անգրագետ մարդիկ են եղել: Այս ներկայացումները մեծագույն լուսավորական աշխատանք են իրականացրել: Այս թարգմանությունները ձեռքից ձեռք և թատերախմբից թատերախումբ են անցել հիմնականում հայատառ թուրքերեն ձեռագրերի տեսքով, որն ամենևին էլ չի նսնացնում նրանց կատարած մեծագույն ծառայությունը կայսրության մշակութային և հասարակական կյանքում, ինչպես նաև նրանց հայ և թուրք թարգմանիչների ունեցած ավանդը:

Հայկական թատերախմբերի գործունեությամբ է պայմանավորված եղել թուրք մոր գրականության, թուրք լուսավորիչների առաջին սերնդի զարգացումը, որոնք հավաքված են եղել հայկական թատերախմբերի շուրջը, կատարել թարգմանություններ, փոխադրություններ և իրենց ինքնուրույն գործերն էլ եղել են հիմնականում վերջիններիս ազդեցությամբ ստեղծված, երբեմն էլ՝ դրանց պարզ մտանկումները: Թուրք թատերագետները պնդում են, որ հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումներով է պայմանավորված եղել թուրքական մոր գրականության մեջ դրամատուրգիայի զարգացումը:

Հայատառ թուրքերեն թարգմանական գրականությունը, մասնավորապես ֆրանսերենից կատարվածները բազմակողմանի ազդեցություն են ունեցել Օսմանյան կայսրության կյանքում՝ պալատից մինչ արճարան, թատրոն, հարուստ ու հայտնի ընտանիքներ, հարեմ:

Գրանք սեր են ներարկել գրականության, գրագիտության նկատմամբ, լուսավորական մեծ ազդեցություն ունեցել: Նրանց շնորհիվ են ներթափանցել արևմուտքի առաջադեմ գաղափարները, ծանոթացել եվրոպական երկրներին, նրանց կյանքին, կենցաղին, մարդկանց ու սովորություններին՝ բառիս ամենալայն առումով: Երբ թարգմանվել են Հյուգո, Վոլտեր, Ռասին ու Շատոբրիան, ապա ժամանակի թուրքերենն անկարող էր իր բառացանկով ապահովել այն: Հայ թարգմանիչների զարգացվածության բարձր աստիճանը, բազմաթիվ լեզուների տիրապետելը, բառակազմության ու բառաստեղծման առումով բացառիկ տաղանդն ու հոտառությունը կարողացել են ապահովել դասականների այնպիսի հրատարակություններ, որոնք այսօր էլ դյուրությամբ կարդացվում են ու հասկացվում: Այսպիսով, այս գրականության ավանդը պիտի նկատել նաև ժամանակակից գրական թուրքերենի, թուրք նոր գրականության, դրամատուրգիայի ու լրագրողական մշակույթի ձևավորման, զարգացման խնդիրները:

Տպագրվել է՝ «Հայ-ֆրանսիական լեզվաճակտության ամբողջություններ» (Ֆրանսիայում Հայաստանի տարվա միջոցառումների շրջանակներում Վ.Բյուրաթի անվան պետական լեզվաբանական համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան, «ԼԻՆԳՎԱ» հրատ, 2008. էջ 33-39).

## ՀԱՅ ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայատառ թուրքերեն գրականության մի խոշոր հատված իրենից ներկայացնում է թարգմանություններ՝ կատարված թատրոնի համար: Այդպիսի ստեղծագործությունների թիվը հասնում է շուրջ 500-ի<sup>1</sup>:

Իհարկե, դրանց մեծ մասը չի հրատարակվել, սակայն այդ պիեսները ներկայացվել են ավելի քան 100 անգամներ: Այնուամենայնիվ, հրատարակված չլինելով

1 Այս հոդածի շարադրմանը մեծապես օգտակար են հանդիսացել հետևյալ ուսումնասիրությունները՝ Գ.Ստեփանյան «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» եռահատոր ֆունդամենտալ ուսումնասիրությունը (Եր., 1962, 1969, 1975), այսուհետև տես՝ Ուրվագիծ... : Նույն հեղինակի «Թուրքական աղբյուրները թուրք թատրոնի զարգացման գործում հայերի դերի մասին» գրքույկը (Եր., 1963), ինչպես նաև արևմտահայ րեժիսորներին նրախտավորների մասին նույն հեղինակի հրատարակած մենագրությունները: Միայն ըստ թուրք հայտնի թատերագետ Մերիմ Անդի ցուցակի, հայկական թատերասյաների կողմից թուրքերեն լեզվով խաղացվել են 366 պիեսներ: Steu'Metin And, Tanzimat... s.454-462.



հանդերձ Բատրոնի համար գրականությունը նշանակալի դեր է խաղացել Օսմանյան կայսրության ժողովուրդների հոգևոր զարգացման գործում: Այդ բեմադրություններից շատերն ավելի կարևոր են եղել, քան հրատարակված որոշ ստեղծագործություններ: Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ կայսրությունում անգրագետների ու բուրքերեն կարդալ չիմացողների թիվը հսկայական է եղել, իսկ զարգացած և օսմաներենին տիրապետողների թիվը՝ շատ սահմանափակ: Դրանք բոլորը միասին դիտել և հասկացել են բեմում հնչող բուրքերենը: Այս առթիվ արժե հիշատակել բուրք մոր գրականության հիմնադիրներից Նամըք Քենալի այն արտահայտությունը, թե՛ «Թատրոնը զվարճություն է, սակայն զվարճություններից ամենաօգտակարը»:

Պոլսահայ կյանքում քատրոնը մուտք է գործել 1820-ականներին: Սկզբում դրանք քատերական ներկայացումներ էին՝ հարուստ, առաջադեմ եվրոպասեր ու արվեստների հովանավոր հայ ամիրաների՝ մասնավորապես Բուֆորի ափի Պեզդյանների, Տյուլյանների, Պալյանների ապարանքներում, փարիզյան մանողությանը սպրնային երեկոների ընթացքում: Հայտնի են նաև Օրթագյուղում Շահինյանների տանը կազմակերպված ներկայացումները: Սկյուտարում Պողոս Օռյան էֆենդիի տանը երիտասարդները բեմադրել են Ռ-ասին, Վոլտեր, Մոլիեր...

Քանի որ բուրքական կառավարության կողմից արգելված էին հայկական ներկայացումները քաղաքի կենտրոնում՝ Պերայում, ուստի Սրապիոն Հեքիմյանի խումբը 1856թ. ստիպված էր միայն բուրքերեն ներկայացումներ տալ: Սկզբում նրանց ներկայացումները բուրքերեն էին, հետո՝ իտալերեն, ֆրանսերեն: Հայերեն գրված պիեսներն անգամ թարգմանվում, վերածվում էին հայատառ բուրքերենի կամ իտալերենի: Հետագայում, թույլտվություն ստանալով կարողացան նաև հայերեն լեզվով ներկայացումներ կազմակերպել: 1867թ. թատերասեր յսանդավառ երիտասարդները հիմնում են Օրթագյուղի «Թատերասիրաց ընկերակցությունը»: Թուրք պատմաբան և թատերագետ Ռեֆիկ Ահմեդը բուրքական առաջին ներկայացումները համարում է 1857թ. Սրապիոն Հեքիմյանի թատերախմբի կողմից Նաում եղբայրների քատրոնում Գողդոնիի «Փայտե սուր» և «Դոն Գրեգորիո» ներկայացումները: Այս նշանակալից ներկայացմանը մասնակցել է սուլթան Աբդուլ Մեջիդը:

Թատրոնը զբաղեցրել, լուսավորել, օգնել է դուրս մղելու վատ սովորությունները: Ֆրանսիական, իտալական կատակերգությունների ու մելոդրամների, օտար ժողովուրդների սովորությունների ցուցադրությամբ՝ քատրոնը ջանացել է աստիճանաբար դաստիարակել սեփական համդիսատեսին: Հայերեն լեզվով բեմադրվել են սոսկ ողբերգություններ, իսկ մելոդրամները՝ հայերեն և բուրքերեն: Կատակերգությունները ներկայացվել են երեք լեզուներով՝ հայերեն, բուրքերեն և հունարեն:

Թատրոնի նկատմամբ պալատական սիրո արդյունք կարելի է համարել քիչ ավելի ուշ արքունի քատերախմբի հիմնումը, որի ամենահայտնի դերասանապետերից է եղել Հակոբ Վարդուկյանը՝ Գյուլի Հակոբ էֆենդին:

Պետական մենաշնորհի ստացած և կառավարական հովանավորությունը վայելով «Օսմանյան քատրոնում» 10 տարվա ընթացքում թուրքերեն լեզվով խաղացվել է ավելի քան 200 պիես: Բոլոր քատրոնները գտնվել են «Գրաքննական վարչության» ուշադրության կենտրոնում: Համիդյան շրջանի գրաքննական խստություններին են մվիրված բազմաթիվ հոդվածներ:

Հայկական քատերախմբերի աշխատանքային լեզուն այս շրջանում եղել է հայատառ թուրքերենը: Կ.Պոլսում, այդ տարիներին հրատարակվում էին 40 անունից ավելի հայատառ թուրքերեն պարբերականներ, որոնք թուրք առաջադեմ մտավորականության շրջանում որոշակի բաժանորդներ ու ընթերցողներ են ունեցել: Նրանցից շատերը համագործակցել ու թղթակցել են այդ պարբերականներին: Հայատառ թուրքերենը մեծ մասսայականություն էր վայելում կայսրության թրքախոս բոլոր ժողովուրդների, այդ թվում՝ թուրքերի շրջանում և գործնական մեծ նշանակություն ունեցել: Ուստի հայատառ թուրքերենի օգտագործումը քատրոնում՝ որևէ քարդոսություն և հակազդեցություն չէր առաջացնում՝ անկախ հեղինակի կամ թարգմանչի ազգային պատկանելությունից:

Ինչպե՞ս է կայացել թուրք հեղինակների ու հայ քատրոնի համագործակցությունը: Ի սկզբանե հայ քատրոնները գործել են սեփական ուժերով, սակայն այլ է եղել «Օսմանյան քատրոնի» դեպքում: Մեկ քատերաշրջանի ընթացքում բեմադրվել են 170 տարբեր ներկայացումներ: Բնականաբար այդպիսի ընդարձակ խաղացանկի համար անհրաժեշտ էր ունենալ դրամատուրգների, սցենարիստների, թարգմանիչների մի ամբողջ բանակ: Ահա այս նպատակով էլ Հ.Վարդուկյանը քատրոն է ներգրավել ոչ միայն հայ, այլև թուրք մտավորականությամբ: Հ.Վարդուկյանի «Օսմանյան քատրոնի» հետ համագործակցության շրջանը թուրք երիտասարդների մի կարևոր հատվածի համար ճակատագրական նշանակություն է ունեցել: Հետագայում նրանք լրջորեն տարվել են գրականությամբ, հատկապես քատերական դրամատուրգիայով: Դրան մեծապես նպաստել է այն հանգամանքը, որ Հ.Վարդուկյանը ոչ մի ծախսի առջև երբեք կանգ չի առել, եթե այն վերաբերել է քատրոնին: Հայկական քատերախմբերի հետ համագործակցած թուրք մտավորականների ցանկն իրենից ներկայացնում է թուրք նոր գրականության դասականների, լուսավորիչների համարյա լրիվ ցուցակը:

Հետաքրքիր մի հանգամանք, որ բնորոշ է եղել թուրք լուսավորիչներից շատերի մտածելակերպին: Նրանք գտնում էին, որ ժողովրդի լուսավորության, զարգաց-

ման որոշակի մակարդակի ստեղծման գործում մեծ դեր կարող է խաղալ քատրոնը: Բացատրությունը շատ պարզ է. մինչ համատարած անգրագիտության վերացումը միայն քատրոնի միջոցով է, որ հնարավոր էր առավելագույն շփումը եվրոպական գաղափարախոսության, կյանքի, կենցաղի, պատմության ու գրականության հետ:

Թատրոնն այն եզակի արտահայտություններից էր, որ հանդես եկավ Թանգի-մաքի շրջանում: Եվ եթե արձատական փոփոխություններ չեղան երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքում, ապա մշակութային կյանքում տեղի ունեցած բարեփոխումները նկատելի եղան, վերածելով զարթոնքի շրջանի:

Թուրք քատրոնի պատմաբան Ռեֆիկ Ահմեդն իրավացիորեն նկատում է, որ Վարդոլվանի քատրոնն արժանի է ուշադրության որպես թուրքական նոր գրականության ձևավորման կենտրոն: Միայն «Օսմանյան քատրոնի» խաղացանկում հաշվում ենք շուրջ 60 պիեսներ, որոնց նեկայացման աշխատանքներում Վարդոլվանի առաջարկով այս կամ այն չափով ներգրավված են եղել թուրք հեղինակները: Նախևառաջ դրանք թուրք գրողների շուրջ 20 ինքնուրույն ստեղծագործություններն են եղել, որոնք գրվել են հատուկ Վարդոլվանի քատրոնի համար, նրա պատվերով: Միաժամանակ դրանք հանդիսանում են թուրք նոր գրականության դասականների ամենահայտնի ստեղծագործությունները: Բնականաբար բոլոր այս պիեսները հայատառ թուրքերենի վերածելուց հետո են միայն տրվել ռեժիսորին, դերասան-դերասանուհիներին: Այսուհանդերձ կարևոր մասնապայման է հանդիսացել այն հանգամանքը, որ թուրք հեղինակների երկերը խաղացանկում ընդգրկելու հնարավորություն են ունեցել միայն որոշակի որակի համապատասխանելու դեպքում: Թուրքական լուսավորիչների անունների առաջին շարքում զանվող լուսավորչի՝ Շինասիի (1826-1871) 1960թ. գրված հակակղերական բովանդակությամբ գրված «Պոետի ամուսնությունը» բեմ է բարձրացել լոկ 1908 թ. Սալոնիկում, այն էլ՝ սիրողական խմբի կողմից: Մյուս կողմից՝ Տիգրան Չուխաջյանը 2 գործողությամբ օպերային երաժշտություն է գրել Շինասիի «Պոետի ամուսնությունը» պիեսի համար (1874):

Հ. Վարդոլվանը շատ ու շատ հետաքրքիր սյուժեներ է հուշել բազմաթիվ թուրք գրողների՝ հետաքրքիր գաղափարներ տվել, օգնել աշխատելու պիեսների բեմական կառուցվածքի վրա: Պիեսների վրա աշխատելու շրջանում այս սերտ համագործակցությունն իր շարունակությունն էր ունենում փորձերի ժամանակ: Վարդոլվանի պատվերով շատ թուրք գրողներ քատրոնի համար փոխադրություններ, տեղայնացումներ և քարգմանություններ էին կատարում: Հեղինակի նշված լինելու պարագայում անգամ երբեմն անհմար էր բուն գործը ճանաչել՝ երբեմն ծայրաստիճան աղավաղված բովանդակության կամ փոխված վերնագրերի պատճառով: Թատրոնի համար պատվերները տարերայնորեն չեն կատարվել: Գոյություն



են ունեցել փոքրիկ խորհուրդներ՝ կից հրատարակչություններին, թատրոններին, որոնք էլ որոշել են, թե ինչ երկեր են թարգմանվելու: Եվրոպական մի շարք վեպեր հատուկ թարգմանվում էին թետրոնի համար պիեսների վերածվելու նպատակով:

Նոր թուրքական գրականության գործիչներին ամենից ավելի մտահոգող և օրակարգային խնդիրներից էր ժամանակի պահանջները բավարարող գրական նոր թուրքերենի ձևավորման հարցը:

Թուրք գրողներից կազմված հանձնախումբն ամեն կերպ ձգտում էր, որ Հ.Վարդյովյանի թատերախումբը լավագույնս նպաստի թուրքական ազգային դրամատուրգիայի զարգացմանը: Թատրոնի հետ կապված բոլոր տեսակի հարցերը դառնում էին մամուլի քննարկման առարկա՝ լինի այն հայկական, թուրքական թե ֆրանսիական, անգլիական, հունական և այլ լրատվամիջոց: Մամուլի էջերում վեր էին բարձրացվում թատրոնի դերի ու նշանակության, բարբերի ու հարաբերությունների վրա թատրոնի ունենալիք դրական ու բացասական ազդեցությունների, բեմական արվեստի զարգացման, կայուն թատերախմբեր պահելու, դերասանական նոր սերունդներ պատրաստելու, բեմական ուրույն խաղաոճ, լեզու, դրամատուրգիայի խնդիրների հետ կապված մասնագիտական և հասարակական լուրջ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Պոլսահայ մամուլում առատորեն հրատարակվող հոդվածների առաջադրած պահանջկոտության և շահագրգռվածության մթնոլորտը միաժամանակ նպաստում էր Վարդյովյանի թատերախմբի մասնագիտական վարպետության աճին, որն ավելի բարձր էր, քան Օսմանյան սահմանադրության տարիներին:

Այն փաստը, որ դերասան-դերասանուհիները, բեմադրիչը հայեր էին, թուրք թատերագետները բացատրում են որպես կրոնական ֆանատիզմի արդյունք:

Հայտնի է, որ թուրք կինն այնպես էլ բեմ չբարձրացավ ընդհուպ մինչև հանրապետական կարգերի հաստատումը՝ 1923թ.: Ի վերջո, հայալեզու ներկայացումների համար Վարդյովյանին տրված բույլատվությունը կարծես փոխհատուցում էր թուրքական թատրոնի սկզբնավորման և զարգացման գործում նրա ունեցած մեծ ավանդի համար: Ծառայություն, որը միշտ էլ գնահատվել է թուրք բանասերների և թուրքական թատրոնի պատմաբանների կողմից: Իրենց հիշողություններում հայերի դերին են անդրադարձել Մուսիսն Էրթողրուլը, Նազիմ Հիքմեթը, Վասֆի Ռեզա Ջոբուն և այլոք: Թուրք դերասան և բեմադրիչ Վասֆի Ռեզա Ջոբուն նշում է, որ եվրոպական տիպի թուրքական թատրոնի հիմնադիրը եղել է Հակոբ Վարդյովյանը: Իր հուշերում Վասֆի Ռեզա Ջոբուն հիացական էջեր է նվիրել Մարտիրոս Մնակյանին, Քնար Սվաճյանին, Աղավնի և պրիմադորնա Էլիզ Պրինսեսեյաններին: Նրանց ներկայացումները տարբեր թուրքախոս ժողովուրդների՝ թուրքերի, հայերի, հույն-

րի, հրեաների, բուլղարների և այլոց հոգեկան մերձեցման գործուն են համդիսացել:

Թուրք թատերագետները, դերասանները, այդ թվում Ռ-եֆիկ Ահմեդը, Մեթին Անդը արդարացիորեն նշում են, որ եթե չլինեին հայ դերասանապետերի թատերախմբերը, նրանց կողմից նյութական վարձատրությամբ թուրք հեղինակներից ստիպող առատ պատվերները, ապա դժվար թե ստեղծվեր թուրքական դրամատուրգիան: Եվ եթե չլիներ Գ-յուլյու Հակոբը, ամենայն հավանականությամբ չէին լինի Նամըք Քեմալի, Ահմեդ Միդհատի, Ալի բեյի կամ Շամսեդդին Սամիի նման դրամատուրգները:

Թուրքական թատրոնի ֆրանսագիր պատմաբան Ադուֆ Թալասսոն<sup>1</sup>, որ տարիներ շարունակ Պոլսում հետևել է թատրոնի զարգացմանը, հիացմունքով է գրում հայ թատերախմբերի, հայ դերասան-դերասանուհիների, դերասանապետերի մասին: Նա այնքան էր ոգևորված հայ դերասանուհիների արվեստով, որ իր գրքում առանձին հատվածներ է նվիրել նրանց: Թալասսոն Գ-յուլյի Հակոբին վերաբերվում էր ոչ միայն որպես հզոր դերասանապետի, այլև մեծարժեք դերասանի, որին ժողովուրդը սիրել է, պաշտել ու լեզենդի վերածել: Տաղանդավոր դերասան, նկարիչ ու բանաստեղծ Պետրոս Աղամյանին համարում էր օսմանյան բեմի ամենամեծ դրամատիկ աստղը՝ «Արևելքի Մունե-Մյուլլի, որ կարողացել է մտնել իր յուրաքանչյուր հերոսի մաշկի տակ»: Հաղթաշավները Ռ-ուստամում, շեքսպիրյան խաղացանկը նրան ժամանակի ամենանշանավոր ողբերգակներից էր դարձրել: Իտալացի մեծամուն դերասան Էռնեստո Ռոսսին, որն ուղեկցել է նրա մահվան թափոքը, Աղամյանին համարել է իր հանդիպած արտիստական ամենամեծ ոգի ունեցող դերասանը, և որի մահը մեծագույն կորուստ էր թատրոնի համար:

Լուսավորական շարժում, լուսավորիչներ, անգրագիտության վերացում, եվրոպական քաղաքակրթության ներթափանցում, ազատախոհական գաղափարներ, նոր գրական լեզվի ու գրականության, դրամատուրգի զարգացում, դերասաններ և այլն: Ահա թե ինչ է տվել հայ թատրոնը թուրք ժողովրդին: Հանուն այս գաղափարների են գործել վերոհիշյալ թուրք մտավորականները, որոնք գրել, թարգմանել, փոխադրել են եվրոպական դասականներին և ոչ միայն դասականներին:

Այս հանգամանքը դուրս է բերել հայատառ թուրքերեն գրականությունը հայկական շրջանակներից, և այն ստացել է արևելագիտական նշանակություն: Թուրքերեն դյուրամարս լեզվով գրականություն հրամցնելը ժողովրդին՝ միշտ էլ թուրք լուսավորիչների նպատակների ու երազանքների կարևոր մասն է կազմել: Բնակավաճաքար դժվար էր թարգմանել Վոլտեր, Հյուգո, Շատոբրիան գուտ խոսակցական

<sup>1</sup> Այս մասին տես նաև մեր՝ Հ. Ստեփանյան, «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» գրքում: Եր., 2011.

լեզվով: Ուստի հասկանալի են թարգմանիչների գործադրած ջանքերը՝ բարձրա-  
նալու դեպի գրական թուրքերեն, եվրոպական փոխառյալ բառապաշարի և նոր  
ստեղծված բառացանկի շնորհիվ ստեղծել բոլորին հասկանալի թուրքերեն ոսկե  
միջինը: Հանրագումարում հայատառ թուրքերեն բոլոր հրատարակություննե-  
րը, աննշան բացառություններով՝ ինչպես իրենց ժամանակին, այսօր էլ հասու են  
թուրքերեն իմացող բոլոր ազգերին ու ժողովուրդներին: Ահա թուրք մշակույթի մի  
ասպարեզ ևս, որի մեջ դժվար է ամտեսել ու չարժևորել հայ գրահրատարակիչնե-  
րի ու թարգմանիչ-բառաստեղծների մեծ ծառայությունը:

Ինչպես հայտնի է, Տիգրան Չուխաջյանի (1836-1898) երեք օպերետների լիբ-  
րետոտները գրված են հայատառ թուրքերենով: 1924թ. առանձին գրքով հրատա-  
րակվել է Թագվոր Նալյանի և Տիգրան Չուխաջյանի «Լեպլեպիճի Հօր Հօր աղա»  
3 գործողությամբ օպերետի լիբրետոտն Կ.Պոլսում:

Թուրքական դրամատիկ և երաժշտական թատրոնի ասպարեզում ունեցած  
Տիգրան Չուխաջյանի ազդեցությունը շատերին է զբաղեցրել: Նույն Ա.Թալաստն  
պնդում է, որ ժամանակի թուրքական երաժշտական թատրոնը հենց չուխաջյանա-  
կան գործերի վրա է կայացել՝ սկսած «Արիֆ»-ից մինչև «Ձեմիրե»:

Ընդհանրացնելով մեր խոսքը, ասենք, որ հայատառ թուրքերենի օգտագործ-  
մամբ բեմադրված շուրջ 500 պիեսները հետագայում ժառանգել են մյուս հայկա-  
կան, ապա նաև թուրքական թատերախմբերը՝ հազարավոր հանդիսականների  
ներկայացնելով արդեն սիրված ու մեծ ընդունելություն գտած ամենատարբեր  
ժանրերի բեմադրությունները:

Թուրքիայում թատերական կյանքի և դրամատուրգիայի զարգացման ասպա-  
րեզում երկրորդ հիմնական շրջանը պայմանավորված է Մոլիերի երկերի դասա-  
կան թարգմանություններով: Դրանց գերակշռող մասը՝ 34 պիեսների թայգմա-  
նությունները, հիմնականում կապված են Թովմաս Ֆասուլաճյանի թատերախմ-  
բի հետ, սերտորեն համագործակցած Ահմեդ Վեֆիկ փաշայի անվան հետ: Այս  
համագործակցությունը չափազանց արդյունավետ է եղել: Փաստորեն նա հո-  
վանավորի, գեղարվեստական ղեկավարի պարտականություններ է կատարել,  
անգամ պարզևատրել է դերասաններին: Փաշայի տիտղոսակիր, կայսրության  
ամենաբարձր խավին պատկանող այս ազնվական թուրք մտավորականն ապ-  
րել է թատրոնով՝ իր գրական գործունեության մեծ մասը կապելով թատրոնի հետ:  
Մասնագիտական բարձր մակարդակ ունեցող համագործակցությունը թուրք լու-  
սավորիչ հեղինակ, թարգմանիչ, բառարանագիր և թատրոնի մեկենաս Ահմեդ  
Վեֆիկ փաշայի հետ նշանավորվել է Բուրսայում (ուր Փաշան որպես կուսակալ  
էր պաշտոնավարում), ստամբուլյան գրաքննական խստություններից հեռացած



Ֆասուլաճյանի թատերախմբի իսկական մոլիերյան թատերաշրջաններով:

Հայատառ թուրքերեն թարգմանված պիեսների թիվն աճել է Մարտիրոս Մնակյանի՝ «Օսմանյան դրամատիկ» թատերախմբի գործունեության շրջանում: Այն Վարդուկյանի թատերախմբի անկումից հետո գոյություն է ունեցել շուրջ 25 տարի՝ ընդհուպ Առաջին համաշխարհային պատերազմի տարիները: Մնակյանի թատերախումբը մեծապես տարբերվել է Վարդուկյանցի թատրոնից: Հիմնական տարբերությունն այն է, որ Մնակյանին արգելված էր հայերեն պիեսներ քերտադրելը: «Օսմանյան դրամատիկ» թատերախումբը բացառապես թուրքերեն ներկայացումներ է տվել: Հայերեն ներկայացումների հնարավորություն է ընձեռնվել միայն 1908-1914թթ., Օսմանյան Սահմանադրության վերականգնումից հետո: Թուրքերեն ներկայացումների և խաղացանկի հարստացման նպատակով Մնակյանը ֆրանսերենից հայատառ թուրքերեն է թարգմանել շուրջ 40 հայտնի մեղոդրամներ: Մնակյանի կատարած թարգմանությունները հարյուրավոր անգամներ բեմ են բարձրացել ոչ միայն նրա ղեկավարած «Օսմանյան դրամատիկ» թատերախմբի 30-ամյա գոյության տարիներին, այլև հետագայում առատորեն օգտագործվել են թուրքական նոր կազմավորվող թատերախմբերի կողմից, որոնց դերասան-դերասանուհիները նախկին թատերական ավանդույթների համաձայն տիրապետել են հայատառ թուրքերենին՝ որպես թատրոնի լեզվի:

Ինչպես Հակոբ Վարդուկյանը, այնպես էլ Մարտիրոս Մնակյանը մեծ թվով պատվերներ տալով թուրք հեղինակներին՝ մեծապես նպաստել է թուրքական դրամատուրգիայի զարգացմանը: 1912թ. Մ.Մնակյանի բեմական գործունեության 50-ամյակի առթիվ «Արշակ Կարոյան» տպարանում հայերեն և թուրքերեն լեզուներով հոբելյանական ալբոմ է հրատարակվել: Այս տոնակատարությունը փաստորեն վերածվել է համաժողովրդական շքերթի: «Վարիտե» թատրոնում քանախոսներից մեկն իր շնորհավորական խոսքում ասել է. «Եթե ֆրանսիացի-

---

1 Մարտիրոս Մնակյան (1837-1920), պոլսահայ դերասան, բեմադրիչ, թարգմանիչ: Թատերական ասպարեզ է իջել 19-րդ դ. 50-ական թթ.: 1861 թվականից խաղացել է առաջին հայ պրոֆեսիոնալ՝ «Արևելյան թատրոն»-ում: Հետագայում խաղացել է Պետրոս Մաղաքյանի, Հակոբ Վարդուկյանի թատերախմբերում, իսկ 1878թ. մասնակցել է օպերետային ներկայացումների: 1880թ. մեկնել է Թիֆլիս և հայկական թատրոնում խաղացել 2 թատերաշրջան՝ արժանանալով նույնպիսի հաջողության, որքան նույն խաղաշրջանում միասին հանդես եկող մեծ ողբերգակ Պետրոս Աղայանը: Մնակյանը հանդես է եկել դասական մի շարք դերերում, այդ թվում Շելլոյի՝ Շեքսպիրի «Լեոնտիկի վաճառական»-ում: Վերադառնալով Կ.Պոլիս, մասնակցել է Մ. Պենկլյանի օպերետային խմբի և ներկայացումներին, միաժամանակ կատարել ռեժիսորի պարտականությունները: Ստեղծել է Հօր-Հօր աղայի չգերազանցված կերպարը Տ.Չուխաջյանի համանուն օպերետում: 1885թ. Հակոբ Վարդուկյանի թատերախմբից ստեղծել է «Օսմանյան դրամատիկ»-ը, որը գլխավորել է 30 տարի՝ (1885-1912թթ.):

ներն ունեն Մունե-Մյուլլի, ապա թուրքերն ունեն Մնակյան»:

Թուրքական թատրոնի առաջադեմ գործիչներն արժանավույցն են գնահատել թուրք թատրոնի նկատմամբ ունեցած Մ.Մնակյանի ծառայությունները, թուրք թատրոնի խաղացանկն ընդլայնելու ու հարստացնելու նրա մեծ ավանդը:

Նույնիսկ շատ տարիներ անց՝ 1956թ. մի քանի թուրք մտավորականներ Մնակյանի գերեզմանին հուշարձան կանգնեցրին և հայերեն ու թուրքերեն լեզուներով գրեցին. «Դերասանապետ Մարտիրոս Մնակյան, որ թուրք բեմին վերածնունդի և բարձրացման գլխավոր սատար հանդիսացավ. 1836-1920թթ.»:

Տ.Չուխաջյանի և Տ.Գալեմճյանի (1844-1920) ղեկավարությամբ ստեղծված Օսմանյան օպերային թատերախումբը ժամանակի հանրահայտ օպերաների հետ Պոլսում, Ադրիանապոլսում, Ջնյունիայում, ապա մաս հարևան երկրներում հյուրախառնների ժամանակ ներկայացրել է հայկական օպերետները, երաժշտական պիեսներ, կոմիկական օպերաներ՝ ձգտելով Օսմանյան կայսրության հսկա տարածքում հաղորդակից դարձնել ժողովուրդներին «երաժշտական թատրոն» երևույթին:

Տ.Չուխաջյանի «Արիֆի խորամանկությունը», հայկական առաջին կոմիկական օպերայի շոնդալից բեմադրությունը 1872թ. դարձավ մաս թուրքական երաժշտական թատրոնի սկզբնավորման թվականը: Միայն հաջորդ՝ 1874-1875թթ. թատերաշրջանում այն ներկայացվել է շուրջ 100 անգամ: Չուխաջյանական շրջանը արևմտահայ թատրոնի պատմության մեջ նշանավորվել է ոչ միայն ազգային օպերայի, կոմիկական օպերետների ստեղծմամբ, իտալական օպերային արվեստի ուժեղ ազդեցությամբ, հայկական երաժշտական թատրոնի հիմնադրմամբ ու զարգացմամբ, ստեղծելով հրաշալի ստեղծագործություններ, այլև զուգակցվել է մի շարք կարևոր երևույթներով: Այն է՝ արևմտահայ իրականության մեջ դասական երաժշտական ավանդույթի ամրապնդմամբ, կոմպոզիտորական նոր, եվրոպական կրթությամբ սերնդի ձևավորմամբ: Թուրք թատրոնի պատմաբանները երախտագիտությամբ են անդրադառնում այս երևույթին՝ այն կարևորագույն հանգրվան համարելով սեփական երաժշտական թատրոնի, դրամատուրգիայի և գրականության զարգացման գործում: Գալով Տիգրան Չուխաջյանի ժառանգությանը՝ ապա մա Օսմանյան կայսրությունում հիմնադիրն է եվրոպական տիպի դասական երաժշտական մշակույթի, իր տարբեր արտահայտություններով՝ օպերա, օպերետ, քայլերգային ու սիմֆոնիկ երաժշտություն, երաժշտություն բառերական ներկայացումների համար. փոքր ծավալի և կամերային երաժշտություն, երաժշտագիտական առաջին պարբերականներ:

Հայատառ թուրքերեն թարգմանությունների շնորհիվ են ավելի քան 50 տարիներ Թուրքիայի բնակչության ամենատարբեր թրքախոս և թուրքերենին տիրա-

պետող խավերը հաղորդակցվել թատերական մշակույթի հետ: Գավառներում լուսավորական շարժումն իր շատ արտահայտություններով, նաև թատերական ներկայացումներով պայմանավորված է եղել ուսուցչության կամ մի այլ պաշտոնով այդ վայրերի ուղարկված պոլսեցի մտավորականների ներկայությամբ: Նրանց գերագույն նպատակն է եղել գավառահայությանը լուսավորելու, նրանց դեպի հայկականությունը, հայ լեզուն, առաքելական եկեղեցին վերագտնել տալու առաքելությունը: Գավառներում թատերասերների, թատերախմբերի հիմնադրումները ուղեկցվել են նաև թատրոնի համար շենքեր կառուցելու շարժմամբ: Աղաբազարում, ըստ Գառնիկ Ստեփանյանի, գործել են երկու սիրողական թատերախմբեր (Ներսիսյան և Կրթասիրաց միության):

Թոքատը, ուր մի քանի դպրոցներ ու Մայր վարժարան էր գործում, լուսավորական շարժման օջախներից է եղել:

Ստեղծվել են ընկերություններ, միություններ, ընթերցարաններ ողջ Արևմտյան Հայաստանի հայաշատ նահանգների քաղաքներում, գյուղերում: 1872թ. ուսուցչի պաշտոնով Եվդոկիայում գտնվող հասարակական հայտնի գործիչ Սկրտիչ Փոքրթուգալյանի ջանքերով այստեղ բացվել է իգական դպրոց, կազմակերպվել է թատրոն, տրվել են դպրոցական թատերական ներկայացումներ, որոնք հետապնդման են ենթարկվել: 1906թ. Թոքատում հայկական թատերախումբը պատմական դրամաներ ու կոմեդիաներ է ներկայացրել: 1908թ. Սահմանադրությունից հետո այստեղ հիմնադրվել են նոր միություններ, որոնցից «Հայ առաջադիմական» ակումբը, «Հայ դերասանուհյաց միության» հետ ստեղծել են նոր թատրոն:

Վանը 19-րդ դ. կեսերից եղել է մշակութային-լուսավորական գաղափարներով ապրող կարևոր կենտրոն: Այստեղ ևս բազմաթիվ միություններ են հիմնադրվել: Դպրոցական, տպագրական, մշակութային կյանքը եռացել է, քանզի այս նահանգը հարուստ է եղել մտավորական մեծ ներուժով: Վանը հյուրընկալել է շատ խմբերի ու առանձին գործիչների, արտիստների, երաժիշտների: Նրանք ելույթներ են ունեցել դպրոցների թատերասրահներում, անգամ գրադարաններում: Գավառներում հայկական թատերախմբերի ներկայացումներով խանդավառվել են նաև քուրքերը: Ռուս-քուրքական պատերազմի նախօրեին հայտնի նահանգապետ Ջևդեթ փաշայի խնդրանքով տեղի և հյուրախաղերի եկած թատերախմբերը ներկայացրել են քուրքերենով մի շարք պիեսներ:

Կարինում, ուր թատերական մթնոլորտը համախմբել է սահմանադրության գաղափարներով ոգևորված հայ բնակչությանը, Աբելյան-Արմենյան թատերախումբն անգամ օգնել է ոգևորված քուրք սպաներին, քուրքերենով համատեղ ներկայացնելու ամենահայտնի լուսավորիչ Նամըք Քենմալի «Հայրենիք կամ Սիլիստրա» հայրենա-



սիրական պիեսը: Պոլսահայ բեմերում ներկայացվելուց հետո այն մեծ ճանաչում էր բերել հեղինակին: Պատահել է, որ նույն օրը Պոլսի տարբեր քատրոններում ներկայացումներ են տվել Կովկասից եկած քատերախմբերը (1909, 1914, 1921 Չարիֆյան-Սևունյան, Օլգա Մայսուրյան-Չարիֆյան-Հարությունյան քատերախմբերը) հայերեն և տեղի հայկական քատերախմբերը՝ թուրքերեն լեզվով:

Իհարկե, քատերական այս բոլոր վերելքի համար պետք է արժանին մատուցել նաև Պոլսում հյուրախաղերով հանդես եկած իտալական, ֆրանսիական քատերախմբերին ու համրահայտ դերասաններին, որոնք չէին կարող իրենց ազդեցությունը չունենալ հայկական քատերախմբերի ու նրա դերասանների կուլտուրայի վրա: Ժամանակի բազմալեզու մամուլը չափազանց հարուստ նյութ է տրամադրում այս մասին: Ընդհանրապես, արևմտահայ քատերական քննադատությունը նախանձելի որակ և ավանդույթներ է ձևավորել՝ արժանի ցնամակման, մանավանդ մեր օրերում:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքական բեմահարթակներից դուրս մղվեցին շատ հայ դերասաններ: Այս պայմաններում թուրքական քատրոնի դեկավարները փորձել են վերածնել խաղացանկը: Հայատառ թուրքերենով քարզմանված պիեսներն ադապտացվել էին, թուրքացվել էին հերոսների անունները, այուժետային դեպքերի վայրը, մթնոլորտը, կենցաղի, միջավայրի նկարագրությունը: Այս ամենը հանդիսատեսին պիտի ներշնչեր այն մասին, որ ներկայացվածը մոռ, թուրքական պիես է: Հայերի նկատմամբ թշնամական վերաբերմունքն այն աստիճանի էր հասել, որ թուրքական քատրոնին մեծ ծառայություններ մատուցած Մարտիրոս Մնակյանին անգամ ազատում են Ստամբուլի քաղաքային քատրոնի դրամատիկական բաժնի ու բեմադրիչի պաշտոնից ու թոշակի ուղարկում: Այդ տարիներին հայատառ թուրքերենը որպես քատրոնի շախատանքային լեզու՝ պաշտոնապես արգելվում է: Հայերի ու թուրքերի միջև այնպիսի մի վիճի էր առաջացել, որ մինչ այդ հայերեն այբուբենը օսմաներենին փոխարինելու խնդրի մասին խոսք անգամ լինել չէր կարող:

Թատերախմբերում մնացել էին միայն մի քանի հայ դերասան-դերասանուհիներ, հիմնականում հետևելու համար դերուսուցմանը: Թատրոնի լեզուն դարձել էր օսմաներենը: Թուրք կինը ղեռ չէր գրավել բեմը, ուստի նրա տեղն ազատ էր և հայ դերասանուհիներին հնարավորություն ընձեռնվեց ժամանակավորապես զբաղեցնել այն: Միայն թե նրանց պարտադրվել է հետևել օսմաներենի հատուկ դասընթացներին՝ տիրապետելու ճիշտ հնչողությանը:

Հանրապետության հաստատումից հետո, երբ Մուստաֆա Քեմալի անմիջական կարգադրությամբ ստեղծվեց թուրքական ազգային քատրոն, այդժամ թուրք կինը ևս համարձակվեց բեմ բարձրանալ:

Ֆրանսերենից, անգլերենից հայատառ թուրքերենի քարգմանված պիեսները այնուամենայնիվ չէին մոռացվել: Այն երկար տասնամյակներ դեռ պիտի օգտագործվեր ոչ միայն թուրքական թատերախմբերի կողմից, այլև հայկական թատերախմբերի կողմից հայ գաղթավայրերում՝ Սիրիայում, Եգիպտոսում, Լիբանանում, Ֆրանսիայում, անգամ հեռավոր Ամերիկայում թրքախոս հայ գաղթականների համար կազմակերպված թատերախմբերի ու առանձին ներկայացումների ժամանակ, որոնց հաճախել են նաև թուրքերեն իմացող այլագզի հանդիսականներ:

\* \* \*

Թուրքական նոր գրականության, մասնավորապես դրամատուրգիայի իրական ուսումնասիրությունը հնարավոր է միայն արևմտահայ թատրոնի գործունեության ուսումնասիրության հետ համատեղ: Այն թույլ կտա խուսափել միակողմանի, անորամաքանական եզրահանգումներ ու արժևորումներ կատարելուց:

Բացի նյութական վարձատրություն ունենալու կարևոր խթանից, հայ թատրոնը դեպի իրեն է ձգել նրանով, որ հնարավոր է դարձել թատրոնի, բեմի միջոցով քարոզել թուրք առաջադեմ մտավորականությանը հուզող բազմաթիվ նվիրական գաղափարներ: Այն է՝ լուսավորական շարժման, ազգային ինքնագիտակցության զարգացման, կանանց ազատագրման, թուրքերեն նոր լեզվի ու գրականության ձևավորման և այլ գաղափարներ ու ծրագրեր:

Ժամանակի մամուլի էջերում բարձրացվել են հասարակական ու մշակութային հնչողություն ունեցող լուրջ խնդիրներ՝ կապված թատրոնի և դրամատուրգիայի հետ: Ժողովրդականություն են վայելել հայատառ թուրքերեն թերթերն ու հանդեսները, բոլորին հասկանալի լեզվով լինելու շնորհիվ: Թատրոնն ամենօրյա հրապարակումների նյութ է հանդիսացել: «Թատերական կյանք» խորագրերի ներքո հրատարակվել են թատերագիտական լուրջ հոդվածներ, որոնք հիմք են հանդիսանում հայ, թուրք թատրոնի և թատերագիտության պատմության համար:

Թատրոնը Պոլսի ու նաև մեծ քաղաքների կյանքի մի կարևոր մասն էր դարձել: Ցավոք սրտի, մշակութային վերելքը և եղբայրության գաղափարներով խանդավառված ժողովրդական հույսերն ի չիք են դարձել երիտթուրքերի իրականացրած խոշորագույն ոճրագործության՝ մեծ եղեռնի պատճառով:

«Հայ թատրոնն Օսմանյան կայսրությունում» գեկուցումը տպագրվել է Երևանի Թատրոնի և Կինոյի պետական ինստիտուտի «ՀԱՆՂԵՄ» գիտամեթոդական հոդվածների ժողովածույում: Հ. 13, եր., 2012, էջ 29-39:

## **ՀԱՅ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԸ, ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՐԺՈՒՎԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿՆԵՐ**

Օսմանյան կայսրության ընդարձակ տարածքները ենթադրում էին, որ այն ուշ-շուտ կոչված է դառնալու երկրագործական, գյուղատնտեսական զարգացման երկիր: Որքան էլ որ երկրի տերերն իրենց բնույթով քոչվորական տիպի ներկայացուցիչներ էին, այնուամենայնիվ, այն երկրները, որ նրանք նվաճել էին, նստակյաց ժողովուրդների պետություններ էին, ուր տարբեր ազգեր արդեն դարեր ի վեր զբաղվում էին հողագործությամբ՝ ձևավորելով ավանդույթներ, որոնք պիտի շարունակվեին արդեն որպես հպատակ ժողովուրդների գլխավոր զբաղմունք և գոյության միջոց: Գերեզարված ժողովուրդների հետ ապրելով՝ մահմեդական մասն աստիճանաբար պիտի սկսեր նրանց նման մշակել հողը, զբաղվել նստակյաց հպատակ ժողովուրդների զբաղմունքերով՝ նորովի փորձելով ապահովել իր կյանքը:

Հողագործությամբ զբաղվող ողջ Արևմտյան Հայաստանը ծանրաբեռնված էր բազմաթիվ ու բազմազան տուրքերով, որի տակ կրած ժողովուրդները, անկախ հողագործի իրենց դարավոր սովորույթներին հետևելուց, ոչ մի կերպ չէին հասցնում «օրինակելի հարկատուներ» լինել: Թշվառ, կեղեքված, անընդհատ հարձակումներից հոգնած, անիրավությունների նորանոր արտահայտություններին չկարողանալով դիմագրավել՝ ակամա ստիպված էին թողնել իրենց հայրենիքը և բռնել պանդխտության ճանապարհը: Սեր բանահյուսության մեջ պահպանված հայերեն ու թուրքերեն (հայատառ թուրքերենով գրի առնված) պանդխտության երգերը նույնքան կարոտակեզ, սրտաճմլիկ ու ողբերգական են, որքան եղերերգերը: Ահա այսպիսի սոցիալ-քաղաքական ու բարոյա-հոգեբանական ծանր վիճակում էր գտնվում արևմտահայության հիմնական հատվածը Օսմանյան կայսրության հայաշատ գավառներում, ուր չէր դադարում նրա գլխին կախված լինել բռնի մահմեդականացման վտանգը՝ դրանից հետևող իր բոլոր տխուր հետևանքներով: Այնուամենայնիվ, երբ խոսում ենք գյուղատնտեսության տարբեր բնագավառների մասին, ապա նկատի ունենք հենց այս հալածված, թշվառ վիճակի մեջ գտնվող գյուղացուն: Միայն 18-րդ դարից սկսած կարող ենք խոսել գավառների զարգացման, առաջադիմության, վիճակի փոքր ինչ բարելավման մասին: Այն մեծապես կախված էր քաղաքների ու գյուղերի կապի, հայ վաճառականների, իսկ ավելի ուշ՝ հայ նոր ձևավորվող բուրժուական դասի, ամիրաների ազգօգուտ քաղաքականության հետ, երբ Պատրիարքարանի հետ մեկտեղ աշխատանք էր տարվում, որպեսզի գավառում հայը ուժացման չենթարկվի, պահի իր ազգային ավանդույթները:



րը, վերագտնի հայերենը թուրքախոս շրջաններում, հավատարիմ մնա իր կրոնին: Բնականաբար Օսմանյան կայսրության գավառները սարքերվել են իրենց գյուղատնտեսական, անասնաբուժական զբաղումների յուրահատկությամբ:

16-17րդ. Սվազը, Թուրատը հողագործական արտադրության կենտրոններ են եղել: Անկյուրան՝ բրդի և թիֆթիկի (անգորայի այծի բուրդը, մոհեր): Բուրսան՝ մետաքսի և ծխախոտի կենտրոն, Կուտինան՝ հախճապակու:

Թուրքիայում գիտական հողամշակութային առաջին մասնագետները եղել են հայերը: Հայտնի առումներ են այս ասպարեզում կայսրության առաջին քրիստոնյա մախարաբ Գրիգոր Աղաթոնը, Գևորգ Սքինարճյանը, Հակոբ Ամասյանը (Հողագործության վարչության պետ), Կարապետ Սիրունյանը, Հովհաննես Թոյսյուզյանը և շատ ուրիշներ: Նրանք ուսանել էին Ֆրանսիայի երկրագործական հայտնի ուսումնական հաստատություններում և վերադառնալով՝ դարձել կայսրությունում գիտական երկրագործության 5 մունետիկները և իրենց նշանակալի ներդրումն ունեցել Թուրքիայում: Նրանք հիմնադրել են եվրոպական տիպի հողագործական, երկրագործական վարժարաններ, միություններ, ընկերություններ, գյուղատնտեսական բանկեր, մասնագիտական պարբերականներ, եղել հիմնադիրները մնացած հաստատությունների ոչ թե հայկական, այլ Օսմանյան կայսրության մակարդակով, ղեկավարել դրանք, նշանակալի ավանդ ունեցել երկրի տնտեսության զարգացման մեջ:

Արտասահմանում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացածները եվրոպական մակարդակի գյուղատնտեսություն կազմակերպելու համար չափազանց մեծ ջանքեր են գործադրել: Նրանք իրենց հերթին ջանացել են հնարավորինս շատ հայ երիտասարդների ուղարկել սովորելու ֆրանսիական հողագործական, անտառագործական և գյուղատնտեսական ուսումնական կենտրոններ՝ ձգտելով այդ խմբերի մեջ առավելագույն ներգրավել գավառահայությանը: Ուղղորդվելով Մոնպելյեի, Գրինյոնի, Ռեյնի, Նանսիի և Փարիզի երկրագործական համալսարանների ծրագրերով՝ այդ փորձառու, դիպլոմները նոր պաշտպանած ու Թուրքիա վերադարձած գյուղատնտեսները, հողագործ իմժեներները, անտառագետները, անասնաբուծության և տարբեր ոլորտի մասնագետները միասին որակ են կազմել Պոլսում, գավառներում: Ի դեմս նրանց՝ ունեցել ենք կարևորագույն առիթներ ու պաշտոնյաներ Օսմանյան կառավարական մակարդակի հաստատություններում, կայսերական մասնագիտական միություններում: Նրանք ջանացել են լավագույնս կազմակերպել երկրի տնտեսական զարգացման հնարավոր բոլոր ուղղությունները, տնօրինել Երկրագործության մախարարության գիտական առաջընթացի և քաջալերության բաժինը, մասնագիտական բարձրագույն վարժարաններ: Հետո

հիմնվեցին Անտառաբանական վարժարանները՝ կրկին ֆրանսիական նմանատիպ վարժարանների ծրագրերի հիման վրա: Այստեղ ևս արտեր, ազարակներ, վարդի տնկարաններ ստեղծվեցին: Վերջինները նախատեսված էին վարդի յուղի արդյունաբերության համար (Սպարտայում): Հայ ծաղկաբույծների համբավը դուրս գալով երկրի սահմաններից, մինչև Հեռավոր Արևելք էր հասնում: Պոլսի «Թիջարեթ» օդաչը նիզամնամեսի»-ի (Առևտրական սենյակի կանոնադրություն) հեղինակային խմբում 15 անդամներից 5-ը՝ թուրքեր, 5 հայեր ու 5 հույներ են եղել: Այն երկար տարիներ Արիստակես Ազարյանն ու այլ հայ մասնագետներ են նախագահել:

Պարտադիր չէ պնդել, ապացուցել հայ մասնագետների ավանդի մասին այս կամ այն ասպարեզում: Նրանց բարձրագույն ու սլատասխանատու պաշտոններում ներգրավված լինելը օսմանյան կայսրության նման մի երկրում՝ արդեն անհերքելի ապացուց է նրանց ունեցած մեծագույն նպաստի: Առանձին կենսագրությունների ներկայացումն անգամ կօգնի վերագտնելու բազմաթիվ արժանավոր մասնագետների անուններ, վերիշել նրանց գործերը, պատմության թողած անարժան փոշուց վեր հանել բազմակողմանի զարգացած, տաղանդավոր մասնագետների կերպարներ: Օրինակ՝ 1892թ. Հակոբ Ամասյանի նախածեռնության անասնաբուժական քաղաքային վարժարան է հիմնադրվել Պոլսում: Պոլսի շրջակայքում՝ Ման-Սթեֆանո (Եշիքոյ)ի մոտ հիմնադրվում է Հալքալըի համբավավոր երկրագործական վարժարանը, որ մինչ օրս գործում է: Նա է, որ առաջին անգամ ծավալեց կարտոֆիլի, եգիպտացորենի, բամբակի լավագույն տեսակների մշակումը, «թիֆթիկ» կոչված այծերի ու արաբական մժույզների բուծումը, փորձարարական արտեր ու տնկարաններ տարածեց, նախածեռնեց երկրագործական կենտրոնների (սենյակների) հաստատումը նաև արևելյան գավառներում, աջակցեց երկրագործական դրամատան (ագրոբանկի նախատիպի) հիմնադրման հաստատմանը:

Հայերն առաջին անգամ շերամաբուծությունը արդյունաբերական ճյուղի վերածեցին: 1846թ. մետաքսաթելի արտադրության առաջին ֆաբրիկան է բացվում, իսկ 1862թթ. Բուրսայում արդեն կային մոտ 90 նման ֆաբրիկաներ, որոնց աշխատողների 95 %-ը հայեր ու հույներ էին: 1860թ. հիմնադրվում է մետաքսի գործարան: Բուրսան դառնում է շերամաբուծության կենտրոն՝ իր շրջակայքով, թթաստանների ազարակներով, իսկ այդ ամենի հոգին Բուրսայի շերամաբուծական բարձրագույն դպրոցն էր՝ միջազգային, հանրահայտ համբավի տեր մասնագետ, ֆրանսիական Ակադեմիայի ասպետ (Officier d'Academie) Գևորգ Թորգոմյանի տնօրինությամբ: 1888թ. Բուրսայում հիմնադրել է Շերամաբուծական ինստիտուտ: Գոյություն ունեն այս ինստիտուտի շենքի նկարով փոստային բացիկներ:

Ամենամյա մրցույթներ, տեղական, գավառային մասշտաբով, ինչպես նաև մասնակցություն միջազգային ցուցահանդեսներին՝ Օսմանյան կայսրության պատվիրակության կազմում, ուր միշտ էլ մեղավների մեծ բաժին է ընկել հայերին: Կայսրության և միջազգային գյուղատնտեսական, արդյունաբերական ցուցահանդեսներում, հողագործական ու այլ կոնգրեսներում տարբեր երկրների բազմաթիվ մեղավների, մրցանակների տեղ դառնալը որակի ցուցանիշ է եղել հայ մասնագետ-գործարարների համար: Նրանցից շատերը միջազգային տարբեր ցուցահանդեսներում ներկայացրել են Օսմանյան կայսրությունը, ընդունվել այդ երկրների թագավորների կողմից:

Ադանայում հիմնադրվեցին միայն կտավի, բամբակի (տարբեր պրոցեսների համար՝ մշակումից մինչև թելերի արտադրությունը) ու սառույցի 15 գործարաններ: Բամբակամշակման հետ կապված ֆաբրիկաներ են գործել Մերսինում, Տարսուսում և այլուր: 1884թ. Արաբկիր-Մեզիրեյում Գրիգոր Ֆաբրիկատորյանը (գործարար հայտնի եղբայրներից մեկը) բացում է բամբակի ու մետաքսի բարձր որակի ֆաբրիկա, մասնակցում Լիոնի միջազգային ցուցահանդեսին և Առաջին մրցանակ ստանում: Մանածագործական մեծ թվով ֆաբրիկաների հիմնական աշխատուժը եղել են կանայք, որոնց աշխատանքային չափազանց ծանր պայմանները տեղիք են տվել արևմտահայ մթնոլորտում, ի պաշտպանություն նրանց իրավունքների՝ բողոքի ձայն բարձրացնելու<sup>1</sup> :

Ծխախոտի արտադրությունը կայսրությունում, տասնյակի մոտ գործարանները մեծապես կապված են եղել հայ ֆաբրիկանտների անվան հետ: Դրան ուղեկցել է ծխախոտի թղթի, ստվարաթղթի արդյունաբերությունը: 1882թ. Բարունակ Փոլադյանը ձեռք է բերում ծխախոտի տուփերի պատրաստման մեքենայի պատենտ: Ծխախոտի կայսերական վարչության, «Թուրք Ռեժի»-ի ներկայացուցիչներ են եղել հիմնականում հայ մասնագետները:

Պետությունը մենաշնորհներ էր տալիս, խրախուսում, նաև մարտերից ազատում, երբ գործարարը տեխնիկական առաջընթացն ապահովելու համար հաստոցներ, մեքենաներ էր ներկրում արտասահմանից, նույնիսկ եթե այն ակոհոլի պատրաստման համար է եղել: Գլխական հայտնագործությունների մասին գրում էին հայկական պարբերականները, մասնագիտական մամուլը: Այս առթիվ քննարկումներ էին կազմակերպվում համապատասխան նախարարություններում, վարկավորում տվյալ ծրագրերը և այլն:

<sup>1</sup> 1908թ. Մեջլիսի դեպուտատ Վարդգես Էֆենդին իր խոսքում գեկուցում է կանանց ծանրագույն վիճակի, մանավանդ մանածագործարաններում 14-15 ժամյա և նույնիսկ հոյ վիճակում նրանց աշխատանքի մասին: Աշխատում էին նաև երեխաները:



Հայկական ջուլիակագործությունը տարածված էր տարբեր գավառներում: Մարաշի ջուլիակների արտադրանքը արտահանվում էր Կեսարիա, Փոքր Ասիայի քաղաքներ, Սիրիա: Գորգի հայ վաճառականները մայիսը մտնելի գործարարների թվում էին ողջ աշխարհում: Այս ասպարեզը գտնվում էր հայ վաճառականների անընդհատ հսկողության ու ղեկավարության ներքո:

Երբեմն գործարար մի միտք որոշում էր մի ամբողջ քաղաքի ու նրա հարակից շրջանների հիմնական զբաղումների ուղղությունը: Իզմիրում 1881թվականից Վահան անունով վաճառականը տարբեր երկրների չոր ուտելիքներ ու չոր մրգեր է վաճառել: Շուտով այս գործով սկսում է զբաղվել ողջ գավառը:

Չափազանց կարևոր էր, որպեսզի պտուղների ու քաղցրավենիների պահածոյացման արդյունքում պահպանվեր դրանց համն ու հոտը: Կեսարահայ Մ.Սերայլյանը ստանալով համապատասխան մեճաշնորհային արտոճագիր, սկիզբ դրեց մի շարք հայկական պահածոների հայտնի ֆաբրիկաների գոյությանը:

Հայաստառ թուրքերեն լեզվով մեզ հասած մաքսատան երկու սակագույցներ իրենցից ներկայացնում են չափազանց հետաքրքիր ցուցակները: Այն պատկերացում է տալիս տարբեր երկրներից ներմուծվող ու արտասահման արտահանվող ապրանքների, դրանց տեսականու, մպատակների, չափաբաժինների, գների մասին: Սա միջազգային առևտրի հետաքրքիր փաստաթղթերից կարելի է համարել:

Թուրքիան մշակում էր իր հողերի միայն քառորդ մասը: Հացահատիկային կուլտուրաներից Թուրքիայում մշակում էին ցորեն, գարի, հաճար, վարսակ, եգիպտացորեն, բրինձ: Այս կուլտուրաները և՛ արտահանվում էին, և՛ ներմուծվում: Գյուղատնտեսական որոշ մեքենաների հայտնագործություններ հայերին են պատկանել: Դրանք նույնիսկ ավելի լավն էին, քան եվրոպական երկրներից ներկրվողները: Այն ներդրվում էր տարբեր գավառներում՝ զարկ տալով գյուղատնտեսության զարգացմանը: Աղաթոն ընտանիքի կողմից առաջին անգամ Թուրքիա է ներմուծվել կարտոֆիլի սերմացուն, սերմնացան մեքենան, սկսվել կարտոֆիլի արտադրությունը: Մամուլն արձագանքել է կալսող մեքենաների, շոգեքարշ- տրակտորների հայերի կողմից արտոճագրված արտադրության ու գործարկման հարցերին, արտեզյան ջրհորների հայտնաբերման և այլ գյուտերին:

Երկար տարիներ հայերը եղել են այս կամ պարենի մատակարարը երկրի տարբեր գավառներում, և, որ ավելի պատասխանատու է՝ եղել են պալատի, մայրաքաղաքի, օսմանյան բանակի մատակարարներ՝ գնելով Սև և Միջերկրական ծովի շրջանի ցորենը, գարին: Հացագործների մասին խոսելիս միայն Ստամբուլի շրջակայքում 700 փուտերի մասին է հիշատակվում, որոնց մեծ մասը հայերին է պատկանել: Դա նշանակում է արդյունաբերական մի ողջ շրջագիծ, երբ հացա-

հատիկը գնվում է և ի վերջո դառնում հաց: Այս բազմաստիճան գործունեության մեջ կարևորագույն հանգրվաններից է եղել արտադացների հարցը: Ոչ միայն Պոլսում, այլ ողջ անատոլիական գավառներում արտադացները պատկանել են հիմնականում հայերին: Նրանք են աղացել այլուրը ու մատակարարել հացթուխներին: Մինչև 1960-ական թթ. սերաստացի հայ վաճառականներն ու եվրոպական կրթությամբ մասնագետներն էին, որ զբաղվում էին ջաղացքարերի ներկրմամբ, վաճառքով ու ջրաղացպանությամբ: 1912թ. Քարագյուղում արդեն հիմնվել էր հայկական այն ընկերությունը, որ ջրաղացներ էր մատակարարում ողջ Անատոլիային, ներառյալ ամենավերջին արտադրության արտադացի համար անհրաժեշտ բոլոր ավանդական մասերը: Դրանք 90,100,120 մինչև 2 մետրանոց տրամագծով ջաղացքարեր են եղել:

### **Հանքարդյունաբերություն**

Կայսրության տարածքը հարստագույն հանքարդյունաբերություն էր ակնկալում, որի ուսումնասիրողների ու արդյունահանողների, հանքի տերերի մեջ հայերի անուններն ակնհայտ գերակշռում են: Ածխահանքեր, աղ, նավթ, պղինձ, երկաթ, արծաթ, կապար, արճիճ, ծծումբ, սնդիկ, արսենիում (մկնդեղ) մարմար, բորաքս, ալեքաստր, կուպր, սպումգ, հանքային ջրեր, մանգան, խրոմ, կիսաթանկարժեք քարեր: Հանքերի հայտնաբերման, հետազոտման գործում 19-րդ դարի վերջին տասնամյակներից սկսած, նշանակալի է եղել ռուսական մասնագիտական արշավախմբերի, առանձին մասնագետների ներդրումը, նրանց կողմից համապատասխան քարտեզների պատրաստումը: Հանքերը՝ 40, նաև՝ 99 տարով շահագործման են հանձնվել հայ արդյունաբերողների, մասամբ նաև բելգիական, ֆրանսիական ընկերությունների: Նրանք հիմնել են երկաթաձուլարաններ, հաստոցաշինարաններ, կապարե խողովակների արդյունաբերություն: Պարզապես թվարկենք ֆաբրիկաների, գործարանների տեսակները, որ հայ արդյունաբերողներն են աշխատեցրել, իսկ հայ վաճառականները դրանք տարածել են երկրով մեկ ու երկրից դուրս:

Հացի, այլուրի ու տարբեր ման արտադրանքների գործարաններ, չոր մրգերի, «Բիլեջիկ», «Ռաքը» օղու ֆաբրիկաներ, «թարմ լոլիկի մածուկի» ֆաբրիկաներ, ծաղարաններ, անգամ սուրճ աղալու, շաքարի եղեգնի ու նրանից շաքար պատրաստելու գործարաններ: «Քարթալ», «Էրմիս» պահածոյի գործարաններ՝ կերակուրներ, ձիթապաղի յուղով պատրաստված բանջարեղենի ճաշեր, «յալանճը դովմայի» պահածոներ, կոմպոտներ, մարմելադներ: Այս արտադրությունների համար գովազդային լավագույն արտահայտություններ կարելի է համարել ժամանակին

արտասահմանյան բազմաթիվ պատվիրատուների գոյությունը: Հայկական «Նեկտար» անունով գինիների, գաբեջրի, պանիրի, այդ թվում՝ թել-պանիրի գործարան, լոխումի ու հալվայի, սպիրտի գործարաններ: Կաթի օրինակելի ֆաբրիկա՝ հիվանդների և երեխաների համար պատվերով կաթի ապահովմամբ:

Մածունը Ֆրանսիա, եվրոպական շուկա է մտել պոլսահայ Արամ Դոբմենյանի և ուրիշ հայերի շնորհիվ: «Պաստյոռ» բժշկագիտական հասցուի կենտրոնի տված տեղեկագիրը դարասկզբին կանգն լույս ապահովեց սպագա մեծահարուստի՝ փաստելով, որ մածունն օգտակար սնունդ է հանդիսանում: Ավգրում այն տարվում էր Պոլսից: Քիչ ավելի ուշ Փարիզում և այլ քաղաքներում «Դանոն»-ը կաքնամթերքի ամենահայտնի արտադրողներից մեկը դարձավ: Այս անունը գոյատևում է մինչ օրս:

Առևտրի ու գյուղատնտեսության նախարարության պաշտոնական թույլտվությամբ շարժիչներով(մոտոր) աշխատող ճշգրիտ իրերի ֆաբրիկա է բացում:

1804 բվականից չուխայի և թղթի արդյունաբերություն, արևելյան գորգերի ֆաբրիկաներ, յազմայի, նուրբ բատիստի մանուֆակտուրա, (չմշակված) հում մետաքսի, Բուրասայի գործարաններում գործված սրբիչների, սեղանի ծածկոցների, անձեռոցների, շղարշների, ոսկեթել, արծաթաթել ու մետաքսե ասեղնագործությունների ֆաբրիկա, օժիտների պատրաստման, վերնաշապիկի արտադրություններ, մանածագործական ֆաբրիկաներ, տղամարդու և կանացի հագուստներ արտադրող, գլխաշորի, շալի, գուլպայի, կոշիկի, գլխարկների, գոպակների տարբեր տեսակների ու դրանց կաղապարների ֆաբրիկաներ: Այս շարանն անընդհատ ուղեկցվել է այս կամ այն արտադրանքի նորարարությամբ, հայտնագործությամբ: Պոլսահայ Կարապետ Համաճյանը (1820-1909), հնարել է ֆեսի «տոպլին» ծոպքը, հնարել են Արևելքում հանրահայտ դարձած գլխաշորը<sup>1</sup> յազման: Կուտինայի հռչակավոր հախճապակին հայ վարպետներն ու վաճառականները դարձրել են երկրի կարևոր այցեքարտերից:

Ամենաուրբ օճանելիքների ու օճառների արտադրություն, շերամաբուծության և սերմացուների հունդերի, լուցկու, մոմի, ձկնորսական ուռկանների ֆաբրիկա, քի-

1 1790թթ. Պոլսի Գուգուեճուր բաղում մի հայ հնարեց եազմա կոշված գլխաշորը: Դա քառակուսի, մեկ արշին մեծությամբ բարակ կտոր էր, որի վրա նկարված էին գույնզգույն ծաղիկներ, կամ զարդեր, հուլունքներ: Գլխաշորի վրայի նկարները դաշում էին մի քանի տեսակ կաղապարների օգնությամբ: Այս «եազման» ծառայում էր արքաու կանանց իբրև գլխաշոր: Ցազման թեև բարակ, սակայն դիմացկուն կտորից է, իսկ դաշված զարդանախշերի ներկերը դիմակայում են արևի, լվացքի դեպքում: Այս գյուղը տարածվեց հայերի շրջանում, նրանց դարձնելով դրա արտադրողներից, արտահանողներից: Քելյուրի, Իգմիրի, Կահիրեի, Ալեքսանդրիայի շուկաներում հայերը դրա վաճառքով էին զբաղվում: Մինչև վերջին տարիներին յազմա արտադրող ֆաբրիկաներից որոշները պատկանում էին հայերին:



քեղյա տուփերի, կաթսաների ու ամանեղենի մեծ գործարան: Երկրագործական նյութերի, մեղվաբուծության, կարագ պատրաստելու և այլ գործիքների արտադրություն, վաճառք ...

Փայտամշակման, ատաղձագործության և կահագործության, պաստառապատման մեծ գործարաններ, վերանորոգման ֆաբրիկաներ, որոնք եվրոպական հրավիրյալ վարպետների շնորհիվ բարձր որակ էին ներկայացնում:

Ալյուսի, կոմլինդրի, մոզաիկի, գիպսի, ցեմենտի գործարաններ, կրի, գաճի և այլ շինանյութերի մասսայական արտադրություն էր կազմակերպված, հիմնականում՝ հանքերին կից: Տեղական արտադրությանը զուգահեռ հայ վաճառականները Մարսելից, Լիվոռնիոյից, Մալթայից, Ժնևից, Իտալիայից երկիր էին բերում շինանյութերի լայն ընտրանի:

Ի տարբերություն կայսրության մյուս վաճառականների, որոնք կայսրություն էին բերում արտասահմանյան ապրանքներ, հայերը ապրանք ներմուծելուն զուգահեռ արտաքին շուկա էին հանում կայսրության ապրանքը, արտադրանքը՝ նախապես կազմակերպելով դրանցից շատերի արդյունահանումը, դրա կազմակերպումն ու այդ առևտրի զարգացումը:

Մենք չանդրադարձանք բազմաթիվ այն արհեստների խնդրին, որոնք վաճառականական գործի մաս են կազմել: Չանդրադարձանք նաև երկաթուղային ու բանկային գործին, մի հսկա ոլորտի՝ քաղաքային մեծածավալ շինարարությանը, խաների, հյուրանոցային բիզնեսին: Բազմաթիվ եվրոպական տիպի խոշոր պետական կառույցներ, անհատական խաներ, վարձու շենքեր, ապարանքներ, որոնք այսօր էլ ծառայում են որպես պետական և դիվանագիտական ներկայացուցչությունների նստավայրեր, ճարտարապետական հրաշալի կոթողներ են, որ զարդարել են Պոլիսը ու կայսրության տիրապետության տակ գտնվող երկրները: Մի խոսքով՝ անսահման նյութ...

Որպես զեկուցում կարդացվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում. Տպագրվել է՝ «Մերձավոր Արևելք և Կովկաս. պատմություն, իրականություն, հեռանկարներ». Երևան, 2008, Նոյեմբեր 5-6

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՏՈՒՊԱԿՈՒՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որոշ վարկածների համաձայն հախճապակին ծնունդ է առել Սյջագետքում: Բաբելոնում (մ.թ.ա 9-րդ դ.), Սուգում և Նինվեյոնում հախճապակե սալիկներ են գտնվել մ.թ.ա. 7-րդ դարում:

Հույն մատենագիրներից մեկը խոսում է Բաբելոնի պալատի հախճապակե գմբեթի մասին: Հախճապակին Եվրոպա է մուտք գործել խաչակրաց արշավանքների ժամանակ: Ջարգացման հիմնական միջավայրը Պարսկաստանն է եղել: Սելջուկյան առաջին շրջանի նման շինություններից է Կոնիայի Սըրչալի մեդրեսեն, որը 1243թ. շինել է Բեդրեթթինը, սպա Կոնիայի իշխան Էմիր Ջելալեդդինի շինած Կարաթայ մեդրեսեն<sup>1</sup>:

Էյրօսիայում այս արհեստը հայտնի է եղել դարեր շարունակ, հիթիթների շրջանից ի վեր: Չափազանց հարուստ թանգարանային նյութ կա դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակից: Դրանք տարբեր գունավորումներով կենցաղային առարկաներ են, կնիքներ, զարդեր, դրամներ: Բյուզանդական շրջանի հախճապակե իրերը շատ նուրբ ու գեղեցիկ են<sup>2</sup>: 14-15-րդ դդ. սելջուկյան և օսմանյան շրջանում այն որոշակի տեսք ու գունավորում է ստանում, կախված օգտագործման շրջանակներից: Չինական ազդեցությունն ամենաբնականին է մասնավորապես մզկիթների, դամբարանների կենցաղային իրերի պատրաստման մեջ, իսկ 16-րդ դարից՝ նաև պալատական ճարտարապետության մեջ:

Դեռևս Ֆաթիհ սուլթանի օրոք այս արհեստին նոր փայլ է տրվում, այն նկարագրողով մուսուլմանական դասական զարդանախշերով (ռումի), շինականին նմանվող ծաղիկներով (հաթայի): Յըլլըզ պալատի ճեմապակու ֆաբրիկայում 120 և ավելի տարիներ առաջ արտադրված բազմաթիվ թանգարանային մուշկներ՝ նկարազարդ տարբեր չափսերի ու նշանակության ավաններ, ծաղկամաններ, փոքրիկ իրեր, զարդատուփեր այսօր նույն, վերականգնված ֆաբրիկայի կողմից կրկնօրինակվում են: Այն Վանի ու «Ազնավոր» արծաթե սքանչելի իրերի հետ միասին վաճառվում են որպես թանկարժեք հուշանվերներ, որոնք ստորագրված են եղել հայ վարպետների՝ Մարտիրոսի<sup>3</sup> և ուրիշների կողմից: Երկրի տնտեսության համար կարևոր այս ասպարեզում օգտագործվող հումքի կարևոր մի մասը, երկաթի օքսիդով հարուստ կավի մի տեսակը «հայկական կավ» է կոչվել: Բրու-

1 Կ. Պոլսի Ս. Փրկիչ Ազգային Հիվանդանոցի 1948թ. Տարեցոյց:

2 Ստամբուլի Հնագիտական թանգարանի հավաքածոն հավանաբար ամենահարուստներից ու բազմազաններից է:

3 Portakal Sanat ve Kültür Evi, Osmanlı Sanat Eserleri Heykel, Tablo ve Hat. İst., 1998, N 60-63.

տագործների կողմից իրերի մի մասի հատուկ ձևով (երկաթի օբյեկտի առատ օգտագործմամբ) պատրաստելու եղանակն անվանվել է «հայկական բանալի» (երմենի բիլի): Այս բնագավառում հայտնի անուններ են եղել Գևորգը, Դավիթ Հովհաննիսյանը, Արթիմ Մյուսայանը, Հաջի Կարապետ Մյուսայանը և շատ ուրիշներ:

16-րդ դարը օսմանյան գեղարվեստի պատմության համար կարևոր շրջաններից է: Սուլթան Սելիմ Ա-ն, 1514թ. պարսից Շահ Իսմայիլի դեմ հաղթանակ տանելով մտնում է բազմաթիվ արհեստավորներով, արվեստագետներով քնակեցված մշակութային կարևոր կենտրոն համարվող Թավրիզը: Դրանք որպես գերիներ բերվել են Ստամբուլ: Շնորհիվ գաղթական այս մասնագետների, երկիրը շուտով լցվելու էր նրանց պատրաստած համբավավոր երփներանգ հախճապակիներով՝ երկրաչափական ու բուսական ճոխ ձևերով ու զծագրություններով, նկարազարդված գեղեցիկ ծաղիկներով, տերևներով, շինական լուսոսով, «Սազ» կոչված ոճավորված խոշոր բոյսերով: Տիրապետող գույներն էին դեղինն ու կանաչը, գույգ կապույտները, մանուշակագույնն ու դարչնագույնը, սևն ու սպիտակը: Այդ շրջանի հախճապակու օգտագործմամբ հայտնի հուշարձաններից են Մուրադ Գ-ի հախճապակեզարդ դամբարանը (1583), Սելիմ Ա-ի դամբարանը (մահացել է 1520թ.) և Սելիմ Ա-ի մզկիթը, Շահգադեի դամբարանը (1543), Սիլիվրա Գավուռի Իբրահիմ փաշայի մզկիթը (1551), Սուլթան Ահմեդ Ա-ի կառուցած Թուփգափուրի պատի որոշ մասերը (1608): 16-րդ դարում գույներն ավելի են ճոխանում՝ վառ կանաչ, լոլիկի կարմիր, սպիտակի վրա տարբեր բուսածեք, կոկոններ, կակաչներ ու տերևներ են հավելվում: Թավրիզյան այս ազդեցության արդյունքն էին Կարաբեքիրում, Պրուսայում, Իզմիրում, Կուտինայում (Քյոթահիա) բացված գործարանները: 18-րդ դարում Քյոթահիան դառնում է հախճապակեգործության հիմնական ու այս արհեստին, արվեստին տոն տվող գլխավոր կենտրոնը:

Հայ բրուտագործների ու նրանց խանութների մասին հիշատակել է նաև բուրբ հայտնի մատենագիր Էվլիյա Չելեբին, իր հայտնի «Սեյահաբնամեյում»: 1630-ականներին Հալիճում 250 բրուտագործների խանութներ է հիշում: Էվլիյա Չելեբին իր ճանապարհորդությունները նկարագրելիս անդրադառնալով այս բնագավառին, նշում է, որ Իզմիրի ու Քյոթահիայի գործերը միմյանց նման էին և եղած գործարանները բրիստոնեական թաղերում էին գործում: Նա նկատի է ունեցել Քյոթահիայի հայկական 3 թաղերն իրենց 3 հսկա եկեղեցիներով: Այս առնչությամբ հույների միասին չի խոսվում, մինչդեռ հայերի մասին հիշատակությունները շատ-շատ են: Նրա և Երեմիա Քյոնուրճյանի վկայությամբ Կուտինայի, Իզմիրի հայ բրուտների վառարաններում կենցաղային ամենատարբեր իրերն այնպիսի որակ և գեղեցկություն են ունեցել, որ դրանք զնվել են մոտ 13 ոսկու արժեքով, նվեր ու-



դարկվել վեզիրներին, սուլթաններին: Սուլթան Մեհմեդ Բ Ֆաթիհի ժամանակաշրջանում (1444, 1451-81թթ) բրուտագործությունը նոր որակ է ստանում, երբ միաձուլվում են բյուզանդական, չինական ու արևելյան ոճերը, վերաճում ծաղկազարդ դասական մահմեդական օրինակների: Այդ շրջանում արդեն հայ վարպետներից հայտնի անուններ են եղել Քյուրսահյացի Աբրահամ կան Բաբա Նաղաշը, Մեսրոպ, Կարապետ, Մարտիրոս, Ուստա Ադամ, Գևորգ վարպետները, Դավիթ Հովհաննիսյանը, Արթին Մինասյանը, Հաջի Կարապետ Մինասյանն ու ուրիշներ<sup>1</sup>: Հայ վարպետների արհեստանոց-խանութները աչքի են ընկել իրենց նեղ մասնագիտական տարբերակումներով: 18-րդ դարում այստեղ 50 հայկական խաներ են եղել, որոնց մի մասը «ֆիմջաններ» (սուրճի բաժակներ) էին պատրաստում<sup>2</sup>, իսկ մյուս մասում՝ դերձակներ էին: Միայն սուրճի բաժակներ պատրաստող վարպետների ցուցակը 22 հայ վարպետներ ու նրանց ընտանիքների անուններն են գլխավորում: Հայկական շրջանակներին միտված իրերում առկա են մարդկային պատկերները, հայերեն, հայաստառ թուրքերեն արձանագրությունները, ավետարանական պատկերներ: Երեսապատման սալիկները, պատմական բովանդակության նկարազարդումներով ու արձանագրություններով մեզ են հասել տարբեր վանքերից, եկեղեցիներից: 1719թ. Երուսաղեմի Ս.Հակոբյանց վանքի սալիկներում տեսնում ենք բյուզանդական պատմությունից վերցված նկարազարդումներ: 1764թ. Քյոթահիայի հայտնի խեցեգործ «խալֆա»ների 69 և վարպետների 34 անուններ են հայտնի: 1766թ. հայտնի են խալֆաների 20 և վարպետների 37 անուններ, որոնք արտադրել են հիմնականում սուրճի և բեյի թափանցիկ, նուրբ բաժակներ, անցքերով զարդարված ժանյակավոր փսեսներ աղանդերի, մրգերի համար, շերբեթի, օշարակի բաժակներ, փսեսներ, մեծ ու փոքր սափորներ: Նկարազարդողների մեծ մասը եղել են կանայք, որոնք արհեստանոցում սեղանների շուրջ նստած միմյանց են փոխանցել գունավորվող, ծաղկազարդվող կամ նվիրատվության կամ այլ առիթներով արձա-

1 1914թ. կեսարահայ Տիգրան խան Քելեկյանը, իր ժամանակին հնագիտության ճանաչված մասնագետներից է եղել: Լոնդոնի «Ռաուր Քենսինգտոն» քանդաքանում նա ցուցադրել է պարսկական հնագույն խեցեղենի հրաշալի հավաքածու, որը 200 000 անգլ. սուլի է գնահատվել: Եղել է Պարսկաստանի պատվո իյուպատոսը Նյու Յորքում: Չիկագոյի միջազգային ցուցահանդեսին ներկա է գտնվել պարսկական կոմիսերի տիտղոսով: Այս տիտղոսները նրան շնորհիվ էր Շահի կողմից: Մարզվածում հիմնել է Քելեկյան որսանոցը, Հայ բարեգործական միությանը նվիրել է խոշոր միջոցներ: Հայտնի է, որ Կոմիտասի ծառի տակ նստած նկարը Թերլենեգյանը նկարել է 1912թ. երբ Տիգրան խան Քելեկյանի հետ միասին Քյոթահիայի անտառներում հանգստանում էին:

2 Այս նյութի շուրջ վերջին տարիներին լույս են տեսել մի շարք թուրք, եվրոպացի հետազոտողների ուսումնասիրություններ: Դրանցից լավագույններից է պոլսահայ հայտնի գիտնական Կարո Քյուրքմանի գործը: Garo Kürkman, *Toprak, Ateş, Sir: Kütahya çini ve semikleri*, İst. 2005

նագրվող իրերը, որից հետո դրանք վառարաններն են դրվել: Այս իրերի, վարպետների թողած կնիք-ձեռագրերի, օսմաներենով, հայերենով արձանագրությունների շնորհիվ կարող ենք նույնիսկ բաղդատել տարբեր արհեստանոցներից դուրս եկած իրերը: Այս առթիվ մեզ համար պարզվում է, թե ինչպիսի մեծ ընգրկում է ունեցել այս բնագավառը և ինչպիսի տարածում է ունեցել հատուկ, մասնավոր, առանձին պատվերների բաղաբաղանությունն այստեղ: Ամենից հաճախ հանդիպող վարպետների կամ արհեստանոցների ինքնուրույն մասին գրությունները, ստորագրությունները եղել են օսմաներենով: Օրինակ՝ «Այվազ» բառը բոլորից ավելի օսմաներենով է, որ պահպանվել է: Իհարկե, տարբերվում են հայկական այն արտադրանքները, որոնք գոտ մոտովմանական շրջանակների համար են նախատեսված եղել: Դրանց մեջ կան բրոնզով կամ արծաթով շրջափակված, գոտևորված շքեղ իրեր: 18-րդ դ. վարպետներից հռչակ են վայելել Գևորգը, Աբրահամ վարդապետը (1719թ. հեղինակային արձանագրությամբ), Թորոսը (1722թ. թվագրված իր), Ուստա Կարապետը և ուրիշներ: 19-րդ դարում «Ֆայանսի» այս ֆաբրիկաները մեծ հռչակ են վայելել: Թանգարանային արժեքի իրերի հեղինակների անուններից արժե հիշել հայտնի վարպետներից Արթին Մինասյանի, Դավիթ Հովհաննիսյանի, Հաջի Կարապետի, Ստեփան Վարդանյանի, Վահրամ Վարդանյանի անունները: Այս բնագավառն իր մեծ համբավով պարտական է եղել ձեռքի աշխատանքների տարեկան ու արտասահմանյան, միջազգային բազմաթիվ ցուցահանդեսներում այս ճյուղի ներկայացմանը: Մանավանդ տեղական ցուցահանդեսները ավանդական բնույթ են կրել և նվիրված են եղել տարբեր տոների, առիթների, ուխտագնացությունների: Ցուցահանդես-վաճառքների ժամանակ սովորաբար մրցանակներ էլ են տրվել, որոնք ոգևորելուց ավել, նյութական միջոցների նոր ներդրումների առիթ են հանդիսացել: Դա էլ իրենց հերթին զարգացման խթաններից է եղել:

Այսօր էլ, երբ Զյոթսիայում պեղում են հայկական թաղերը, հին հնոցների փլատակներ են գտնում: Մինչ Առաջին համաշխարհային պատերազմն այստեղ բազմաթիվ արհեստանոցներ գոյություն ունեին: Դրանց արտադրանքը ոչ միայն սպառվում էր Օսմանյան կայսրության մեջ, հայկական եկեղեցիների, մոտովմանական կառույցների, պալատների, դամբարանների ու այլ շինությունների կարիքների համար, այլև տարվում էր հարակից երկրներ, մասնավորապես հայկական գաղթօջախներ, ուր հայերն իրենց նոր բնակավայրերում սեփական եկեղեցիներ էին կառուցում: Նրանք մասնավոր պատվերներ էին տալիս, իրենց անհրաժեշտ գույներով ու մաւ գաղղանախշերն ու պատվերները նախապես որոշելով: Այստեղ արհեստն ու արվեստը համաքայլ էին: Կուտիմայի արտադրություններ են Երուսաղեմի հայոց պատերազմաբանու եկեղեցու կապույտ-սպիտակ ու ավետարանական տեսա-

րաններով աշխատված սալիկները, որոնք 1791 թվականի են արտադրվել: Կեսա-  
րիայի ս.Արարայետ վանքի ս.Հրեշտակապետ եկեղեցու 3 սեղանները, ներքին պա-  
տերն ու սյուները 1797թ. գործեր են ու այսպես շատ ու շատ հայկական եկեղեցի-  
ներ ճոխացվել են Քյոթահայալի, Իզմիթի սալիկների շնորհիվ: Ֆրանսիական Սևրի  
քանգարանում կրոնական տեսարաններ ներկայացնող հախճապակե 2 սալիկներ  
կան, որոնցից մեկը հայերեն հետևյալ արձանագրությունն ունի. «Ողջոյն Մարիամի  
Եղիսաբեթի ...թողարքի մխարայ»: Երկու սալիկներն էլ 19-րդ դարի գործեր են: Մ.Եջ-  
միածնի թանգարանի 1778թ. կապույտ ծաղկանկարներով, հավանաբար ջրի կամ  
դեղի փոքր սրվակի վրայի արձանագրությունը հայատառ թուրքերեն է՝ «Աստված  
ողորմի. Փանոս իշխիտիր սաղլըքլան կոլ անըլսըն: Գարապ իճմելի պունտան թվին  
1200 (արաբատառ) սենէ յօնվար 1» (Աստված ողորմի. Փանոսի արած գործն է. Ող-  
ջությամբ հիշատակվի նրա ձեռքը. դարիբը թող խմի այստեղից. 1 հունվար 1778թ.):

Արվեստի այս ճյուղի հետագա բուռն զարգացմանը 1756 թվականից սկսած  
խանգարեց վիեննական ու իտալական հախճապակու մուտքը Թուրքիա: Նրանցով  
սկսեցին զարդարել Թոփզափուկի և սուլթանական բարձաստիճան պալատական-  
ների ապարանքները: Դատելով Պոլսի մաքսատան հայատառ թուրքերեն 2 սակա-  
ցույցների ներկրվող իրերի ապրանքացուցակներից, եվրոպական գեղարվեստա-  
կան այս ապակին որշակի տոկոս է կազմել Կայսրությունում պահանջարկ ունեցող  
ապրանքների ցանկում<sup>1</sup>: Այսօր թուրքական մի շարք վայրերում մեծ թափով փոր-  
ձում են շարունակել քյոթահայական, իզմիթյան հախճապակու արտադրությունը,  
սակայն հին մնուշները, որոնց մենք հանդիպում ենք Թուրքիայում կամ այլուր՝ իրենց  
աննկարագրելի ճաշակով ու փայլով տարբերվում են նոր գործերից: Նոր արտադ-  
րության մի մեծ մասն ուղղված է հին, թանգարանային մնուշների կրկնօրինակներ  
պատրաստելուն, ձեռքի աշխատանքները զարգացնելու թաղաքականությամբ<sup>2</sup>:

Մեծ եղեռնից մազապուրծ որոշ հախճապակեգործ հայ վարպետներ հայտնվե-  
լով տարբեր երկրներում, փորձել են շարունակել իրենց գործը<sup>3</sup>:

1 Տես՝ ՄՄ, ձեռ. 8015 և 8016.

2 Ստամբուլի Ս.Փրկիչ Ազգային հայ հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի ատենապետ,  
գեղարվեստասեր Պետրոս Շիրինզողուի 2005թ. հիվանդանոցին նվիրաբերած և այժմ գործող  
հայտնի թանգարանում Կուտիճայի արտադրանքները որոշակի թիվ են կազմում: Դրանք  
ամենատարբեր գործառության ընտրանի մնուշներ են: Դրանք հավաքվել ու գնվել են տարբեր  
տեղերից. մեկ պարզ քառակուսի սալիկին վճարելով մինչև 1000Տ: Դրանք հայ վարպետների  
հեղինակած հիսարանց գործերի նուշներ են, որոնք 16-20-րդ դդ. Օսմանյան կայսրությունում  
կիրառական արհեստի ու արվեստի մի ողջ բնագավառ են ներկայացրել, կնքելով այն որպես  
Քյոթահիայի հախճապակի՝ հայտնի ողջ աշխարհով մեկ:

1902թ. սուլթանական պալատի համար ստեղծված Կասեթական հախճապակու ֆաբրիկայի  
նկարիչ Մարտիրոս Էֆենդիին ստանում է *Rüthe i Sälise* մեդալ:

3 Մեծ եղեռնի շրջանում Քյոթահիայի հայերը նահանգապետ Ֆաիթ բեյի շնորհիվ փրկվում



1909թ. Զյոթահիայում Հաջի Կարապետը ու Հաջի Հարություն Մինասյան եղբայրները իրենց արտարած խեցեղեն և ճենապակի (պորսելեն) ապրանքները ցուցադրում են Բուրսայի արդյունաբերական ցուցահանդեսում ու մեծ հաջողություն, շահ ունենում: 1918թ. Հաջի Կարապետի և Հաճի Հարություն Մինասյան եղբայրների ճենապակու ֆաբրիկան վերսկսում է իր հաջող գործը: Իսկ այն հայերը, որ մնացել էին, շարունակում էին վերականգնել իրենց գործը: Վերապրողների համար 1919թ. Մխիթարյանները մի դպրոց են հիմնում Կուտինայում:

Հրատարակվել են արհեստներին ու նրանց զաղտնիքներին վերաբերող գրքեր, ուղեցույցներ, դասագրքեր<sup>1</sup>: Յըլդզի, Դոլմաբահչեի, Ս. Փրկիչ Հիվանդանոցի, Պուսի արհեստների, Մխիթարյանների, հայկական վանքերի ու եկեղեցիների թանգարաններում Կուտինայի ու Իգնիկի վարպետների գործերը այսօր էլ հիացմունք են առաջացնում: Թուրքիայի հայտնի թանգարաններին կից կրպակներում վաճառվում են նախկին եղանակով արտադրված պալատական, թանգարանային նմուշներից հուշանվերների շարքեր, որպես օրինակ՝ Օսմանյան կայսրության զեղեցիկ արվեստներից մեկի:



են: 1915թ. Ամասիայի վալի Ահմեդ Մեջիդը եւ հայերի վրկիչ է դառնում: Ե՛կիտ է, այնքան մամանակ, որքան որ պաշտոնի են կարողացել մնալ այս ազնիվ նահանգապետները:

1915թ. Էսկիշեհիրցի **Գավիթ Հովհաննիսյանը** գնում է Պաղեստին և Երուսաղեմի վալիի օգնությամբ Զյոթահիայի ճենապակու մշակույթի վերականգնման նպատակով ճենապակու ֆաբրիկա է հիմնում: Մինչ այդ նա հայտնի էր դարձել 1910թ. Բուրսայի ցուցահանդեսում Զյոթահիայի ճենապակու արտադրության եղանակով Էսկիշեհիրում պատրաստված իր իրերի համար վարպետի ոսկե *Sanayi Nefise Madalyası* ստանալով:

1 1885թ. Միհրան Աջունին պատկանող «Ձիհան» գրատունը սկսեց հրատարակել Մամի Փաշազադեի Սեզափի, Հալիթ Ջիյա Ուշաքըզիլի, Մեհմեդ Ռաուֆի, Մուլեյման Իսգիֆի, արհեստներին վերաբերող գրքույկները, 53 մասից կանոնագրեր և այլ գործեր:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՏՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՌ-  
ԹՈՒՐԲԵՐԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՂԱՐԻԱՅՈՒՄ 19-ԲԴ Գ.**

Օսմանյան կայսրությունը կազմված էր 30 մահաճգներից, դրանք էլ իրենց հերթին՝ գավառներից (սանջակ) ու գավառակներից (գազա), որոնք քաղաքական, սոցիալ տնտեսական տարբեր իրավիճակներում են գտնվել: Օսմանյան կայսրության առանձնաշնորհյալ մահաճգներ են համարվել՝ Եգիպտոսը, Թունիսը, Բուսնիան, Բուլղարիան<sup>1</sup>, Արևելյան Ռումելիան և Սամոսը:

Բուլղարիան մեզ համար հետաքրքիր է այնքանով, որ այն պատկանում էր կայսրության՝ մասամբ հայատառ թուրքերենով ստեղծագործած որոշակի շրջանների թվին: Մա ապացույց է այն ողբերգական երևույթի, որն այնքան տարածված էր ողջ երկրով մեկ: Այն է՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական ծանր հետապնդումների արդյունքում բռնի թուրքալեզու դարձած հայ ժողովրդի մի հատվածի գոյության: Այս հատվածի ողջ ստեղծագործական միտքը մեզ է հասել մասամբ կամ լիովին՝ հայատառ թուրքերենով: Նրանց ուժացումից փրկելու, դեպի մայր ժողովրդի գիրկը վերադարձնելու, հայախոսությունը վերականգնելու, առաքելական կրոնին հավատարիմ մնալու համար հայատառ թուրքերենը որպես կարևոր ինստիտուտ, մեծ առաքելություն ունեցավ: Այն մնան էր մահամերձին փրկելու համար արյուն ներարկելուն: Հայատառ թուրքերենով ստեղծվեց հսկայածավալ ձեռագիր ու տպագիր գրականություն, որը հետագայում այնքան տարածվեց ու ինքնաբավ դարձավ, որ սկսեց ծառայել ոչ միայն հանուն իր նախնական առաքելության, այլև դարձավ հայերեն իմացողների ու օտարների համար ևս՝ մշակութային կարևոր գործոն: Հայատառ թուրքերեն գրահրատարակչությունը, պարբերական մամուլն այնպիսի հարուստ ու հզոր ուժ դարձան, որ ականա սկսեցին ազդել կայսրության բոլոր թուրքախոս ազգերի մշակույթի վրա, հասանելի ու ցանկալի դարձան տարբեր ազգերի համար: Այն խթան հանդիսացավ Օսմանյան կայսրությունում ընդհանուր զարթոնքի շրջանի բուռն զարգացման, դարձավ եվրոպական իրականության, մթնոլորտի, մշակույթի, առաջադիմական գաղափարների Թուրքիա ներթափանցման գործիք, միջնորդ: Պետք է խոստովանել, որ ամենամեծ օգուտն այս գրականությունից ունեցավ նախևառաջ թուրք ժողովուրդը: Հայատառ թուրքերեն գրքերն ու պարբերականները կարողում էին պալատում, կառավարությունում ու պաշտոնական վայրերում, տարբեր ազգերի ու խավերի ընտանիքներում, սրճարաններում ու անգամ՝ հարեմներում: Հայկական բատերակյան խմբերի թուրքերենով ներկայացումները ողջ կայսրությունով մեկ հեղափոխական մշակակութային ունեցան և՛ մշակութային առումով, և՛

1 1876թ. 60 հազար բուլղարներ ոչնչացվել են թուրքական զորքերի կողմից :

գաղափարախոսական: Մեծ եղավ հայատառ թուրքերենի նախստը գիտության, տեխնիկայի, գրական ուր թուրքերեն լեզվի, լրսավորական գրականության ու նրա գործիչների կազմավորման, լրագրողական արվեստի, երաժշտության ու թատրոնի, կյանքի ամենատարբեր ճյուղերի զարգացման տեսանկյունից:

Բուլղարիայում ստեղծված հայատառ թուրքերեն ձեռագրական ժառանգության մի մասը գտնվում է Երևանի Մատենադարանում: Դրանց թիվն անցնում է մեկ տասնյակը և ստեղծվել է հիմնականում 1830-70-ական թվականներին: Մատենադարանում է գտնվում Մահտեսի Տեր Հարություն Քահանա Պողոսյան Վառնացիի կողմից գրված կրոնադավանաբանական քովանդակության 3 ձեռագիր: Նա կազմել է նաև առածանի, թարգմանել, գրի առել շափազանց հետաքրքիր ու ժամանակի համար կիրառական բարձրարժեք երեք ձեռագրեր: Տեր Հարություն Քահանա Պողոսյան Վառնացին կազմել, հեղինակել է գյուղատնտեսությանը վերաբերող երկու գործ: Այն է՝ ուղեցույց-դասագիրք պտղատու ծառերի, հացահատիկային կուլտուրաների մշակման համար, պայքար նրանց վնասատուների դեմ, պայքար-տանջուրների մասին և այն ամենի, ինչն առնչվում է այգեգործության հետ: Մյուսը՝ մրգերի ու բանջարեղենների պահպանման, մշակման եղանակների մի ողջ դասընթաց է: Մահտեսի Տեր Հարությունի հեղինակած մյուս ձեռագիրը բառերի, անունների, մականունների հայերեն ու հայատառ թուրքերեն բառարան է: Նա հայատառ թուրքերենի է թարգմանել ու գրի է առել երեք կարևոր պատմական գործեր: Դրանցից մեկը վերաբերում է խաչակիրների շրջանի պատմությանը և կոչվում է «Եղիսաբեթ»: Մյուսը՝ Հուստինիանոսի զորավարներից Բելլիսարիոսի մասին է: Երրորդ ծավալուն պատմական երկը Կոստանդին Մեծի պատմությունն է:

1884թ. Վառնայում հայկական տպարան է հիմնադրվում: Հայկական գրքեր և պարբերականներ տպագրվել են նաև բուլղարական տպարաններում:

Բուլղարիայում դարեվերջին 11 հայկական եկեղեցի կար: Այդ թվում՝ Սոֆիայում, Վառնայում, Թաթարբագարչիկում, Բուրգասում, Սիլիստրայում, Կալաչում, Շումլու, Ռուսչուկ, Իսլիմիյե և Դոբրիչ քաղաքներում՝ մեկական և 2-ը՝ Ֆիլիպետյում (Պլովդիվում), ուր բազմաթիվ դպրոցներ էին գործում:

Հայկական գաղութը հիմնականում կենտրոնացած է եղել Վառնայում, Ֆիլիպետյում, Ռուսչուկում: Վառնան մշակութային մթնոլորտ ունեցող կենտրոն է եղել, իր գրական ավանդույթներով հանդերձ: Մանավանդ 19-րդ դարում, երբ բոլոր տեսակի հասարակական-մշակութային կազմակերպությունները վերելք էին ապրում, Բուլղարիան ևս համաբայլ էր այս զարգացմանը: Պոլսահայ գաղութի հետ սերտ կապն իրականացվում էր նաև շնորհիվ հայատառ թուրքերեն պարբերականների, որոնք բաժանորդներ ունեին Բուլղարիայում:



Բուլղարահայ գաղութը շատ զգայուն է եղել Պոլսի, Արևմտյան Հայաստանի գավառներում դարեվերջին կատախվող իրադարձությունների նկատմամբ: 1897թ. մարտի 8-ին Վառնայի քատրոնում հայկական քատերախումբը ներկայացնում է «Կոտորած Սասնա» պիեսը: Հայկական քատերախմբերը, որ Աբդուլ Համիդ Բ-ի ժամանակ զրկված էին հայերեն լեզվով ներկայացումներ տալու իրավունքից, այս մեծ բացն իրականացնում էին իրենց հյուրախաղերի ընթացքում: Դասական ու ազգային ողջ խաղացանկը, օպերետները ներկայացվում էր նաև բուլղարահայտությամբ՝ լավագույն դահլիճներում: Բուլղարիայում՝ Վառնայում և Պլովդիվում գործում էին հայկական քատերախմբեր: Թուրքերեն լեզվով քատերական ներկայացումները դիտել են նաև Բուլղարիայում: Թատրոնի լեզուն հայատառ բուրբերենն էր և ավելի քան 500 պիեսներ, եթե մեծ մասամբ մուլմիսկ չեն հրատարակվել, ապա ոչ պակաս նշանակություն են ունեցել Օսմանյան կայսրության բուրբախտս, հիմնականում անգրագետ ու եվրոպական հասկացությամբ քատրոնին մոր-մոր ծանոթացող ունկնդիրների վրա:

1895թ. Դոբրիչում հիմնադրվում է հայ կանանց պարախումբ: 1911թ. Ռուսոլուկում «Արարատ» սպորտային միությունը, իսկ ավելի ուշ՝ Պլովդիվ, Վառնա, Ռուսե քաղաքներում հիմնադրվում են Հայ մարմնամարզական Ընդհանուր միության մասնաճյուղերը (1921թ.):

Դարասկզբին բուլղարահայության զարգացման համար կարևոր ազդակ է լինում 1911թ. Վառնայում և մյուս քաղաքներում ՀԲԸՄ (Հայկական-բարեգործական ընդհանուր միություն) մասնաճյուղերի հաստատումը:

1912թ. առաջին հայ զինվորական դպրոցն է հիմնադրվում Բուլղարիայում:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում պոլսահայ ճարտարապետների համագործակցությունը Բուլղարիայում: Դարեվերջին այստեղ կառուցվում են լավագույն ճարտարապետական-մշակութային հուշարձաններ:

---

1 1888թ. Բուլղարիայի Ռուսե քաղաքում ճարտարապետ Սարգիս Կուլումճյանը Առևտրի կենտրոն հիմնեց, ապա նաև՝ Հայ մշակույթի կենտրոն:

1895թ. Վառնայի պետական օպերայի քատրոնի շենքը կառուցվել է պոլսահայ նշանավոր ճարտարապետ Հովսեփ Ազնավուրի կողմից:

1900թ. Ռուսեյում ճարտարապետ Նիկողոս Պետրոսյանը կառուցում է Սիմերնովա առանձնատունը, Մշակույթի պալատը, Ժողովրդական Բանկը: 1898թ. պոլսեցի ճարտարապետ Լևոն Կյուրելյանը կառուցում է Վառնայի քաղաքապետարանի քատրոնի շենքը (կա այդ շրջանի փոստային բացիկ): Նույն ճարտարապետը Պոլսում այդն է կառուցել էր Գյումուշտույու փայտաբ: Կառուցվում են հայկական դպրոցներ, նախակրթարաններ («Վարդանանց» արական ու «Վառվառյան» աղջկանց դպրոցները, 1894թ.վականին): 1901թ. բացվում է «Կարապետ Պիոնյան» մասնավոր դպրոցը: 1895թ. Դոբրիչում վերականգնվում է «Վարդան Մամիկոնյան» նախակրթարանը, 1896թ. Սոֆիայում սկսում է գործել նաև «Արամյան» դպրոցը: Կառուցում, վերակառուցվում են հայկական եկեղեցիները:

1898թ. սեպտեմբերի 8-ին Պուլսի Ֆեներ բաղուն բացվում է Սվետի Ստեֆան բուլղարական երկաթե եկեղեցին: Ծառտարապետը՝ Հովսեփ Ազնավուրն էր: Ասեղ-նագործ երկաթե գեղեցիկ եկեղեցին ուզածո ժամանակ ենթակա է հավաքման ու տեղափոխման:

Իհարկե, Բուլղարիայում ևս հետապնդումներ ու հալածանքներ են եղել ազատ խոսքի համար: Հայ կոմպոզիտորների մեծն այստեղ էլ սուլթաններին, Արդուլ Համիդի նվիրված քայլերգեր են գրվել: Օրինակ, երաժշտության պրոֆեսոր Ժյուլ Կրեցչմանի Երկրորդ բուլղարական ռապսոդիան նվիրվել է Արդուլիամիդ Բ-ին: Բուլղարիայի դաշնակցական կուսակցության հայերեն «Շարժում» պարբերականի գլխավոր խմբագիր Վարդան Պատրիկյանը Ռուսջուկում սպանվում է տեռորիստ ընկերների կողմից (1907թ. նոյեմբերի 22-ին): 1908թ. Ֆիլիպեյում «Ռազմիկ» քերթի գլխավոր խմբագիր Ռուբեն Չարդարյանը Քասաբանոն է աքսորվում և այլն: Մյուս կողմից՝ սուլթանական պարզևների է արժանանում 1879թ. արքեպիսկոպոս Խորեն Նար-Պեյը: Նա ստանում 3-րդ, ապա՝ 2-րդ աստիճանի «Սենիտիյե» շքանշան՝ Ռումիմիայի և Բուլղարիայի հայոց հոգևոր գործերը բարեմորոգելու համար: Շքանշաններով են պարգևատրվում 1879թ. Օսմանյան կայսրության Մոֆիայի սուլթանական հանձնաժողովի հայ անդամները, քայգանցիներ, հանձնաժողովի քարտուղարը: Այս հանձնաժողովի նախագահ Յահյա փաշայի քարտուղարն է եղել ապագա արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանը<sup>1</sup>:

Բուլղարիան մոտ լինելով Պուլսին, առևտրական, գործարար կապերով դեպի իրեն է ձգել հայ վաճառականներին<sup>2</sup>:

Բուլղարիայի 10 քաղաքներում ըստ մատենագիտական աղբյուրների հայկական 80 պարբերականներ են հրատարակվել: Գրքեր սպազորվել են Մոֆիայում, Պլովդիվում (Ֆիլիպպե): Դրանցից մի քանիսը գիտական որոշակի արժեք են ներկայացնում: Այստեղ քարգանվել է Գուրանը, սպազորվել Վառնայում, Դոբրի Թոբորովի տպարանում: 1910թ. Վառնայում Արշակ Ալադյանյանը «Իրավունք» քերթի տպարանում հրատարակում է «Պուլկարաց պատմությունը. Ամոնց ծագումեն մինչև մեր օրերը» (արտատպված «Բիզանդիոն»-ից): Լյուքֆեյան Տաճաղը հրա-

1 Բուլղարիայում ժամանակ առ ժամանակ սուլթանական քաղաքական հանձնաժողովների կազմում որպես կանոն եղել են հայ անդամներ:

2 19-րդ դարի կեսերից սյուլսահայ գործարարները ծխախոտի ֆաբրիկաներ են հիմնում Եգիպտոսում, Հունաստանում, Բուլղարիայում: 1908թ. Պլովդիվում «Գրիգոր Թովմասյան և որդի» ընկերությունը ծխախոտի ֆաբրիկա է հիմնում: Ֆիլիպեյում 1909թ. իրենց մասնաճյուղն են բացում «Մ և Գ. Շամստանճան ընկերությունը», որը քաղմատեսակ ու շքեղ կերպասեղենի մեծաքանակ վաճառականությամբ էր զբաղվում: Եղեռնից հետո Մոֆիա հաստատված Տատուրյան եղբայրները կաշվի մշակման ֆաբրիկա են բացում: Եվ այսպիսի շատ ու շատ օրինակներ: 1914թ. Պլովդիվում դոկ. Պետրոս Օրմանյանը հիմնում է առաջին առողջարանը:

տարակում է «Արևելյան Ռումելիան և հայերը» 34 էջանոց գրքույկը Գրասիրաց տպարանում (Ֆիլիպպե, 1885): Ասատուր Մկրտիչյանի հեղինակությամբ պատկանելի ծավալով բուլղարերեն-հայերեն-տաճկերեն բառարան է լույս տեսել (Մոֆիա, 543 էջ, Գ.Չենդոֆի տպարանում, 1904): Սա նշանակում է, որ հայերեն տառերը եղել են համարյա բոլոր տպարաններին հասու:

Պոլսում 1909թ. տպագրվել է հեղափոխական Ջաքարեա Ստոյանովի մասին, որպես հայրենասիրության օրինակ<sup>1</sup>, հայատառ թուրքերեն գիրքը: Այս և հայատառ թուրքերեն որոշ գրքեր մեզ ծանոթ են մատենագիտական աղբյուրներից: Պոլսահայ անվանի գիտնական Բարսեղ Թուղանիի «Արևմտահայերը պատմության մեջ» գրքում եղած տիտղոսաբերքերը հաստատում են նրանց տպագրության փաստը:

Վառնայում հայատառ թուրքերենով տպագրվել են կատակերգություններ, պիեսներ, զավեշտներ, արտատպված հիմնականում Վառնայի հայատառ թուրքերեն մամուլից:

Բուլղարիայում հրատարակված պարբերական մամուլը երբեմն արտահայտվել է երկեզու, եռալեզու հրատարակություններով: Հայատառ թուրքերեն պարբերականների հրատարակությունների կենտրոնը եղել է Վառնան՝ 10 անուն պարբերականներ:

Առաջին հայատառ թուրքերեն պարբերականը եղել է՝

1. «Իրավունք» (1884-1885), հայերեն և հայատառ թուրքերեն: Վառնայի երիտասարդաց միությունն է հրատարակել Անդրանիկ Եօանեսկուլի խմբագրությամբ, տպագրվել է «Ռումանահայ Անդրանիկ Եօանեսքուլի» տպարանում: Հրատարակել է մաս ֆրանսերեն հոդվածներ:
2. «Իրավունք» (1896-1911)<sup>2</sup>, Վառնա: Հայերեն այս երկշաբաթաբերքը, ապա՝ եռօրյան, պարբերաբար հրատարակել է հայատառ թուրքերեն նյութեր: Բաղաբական լուրերի համար ունեցել է հավելված՝ 4-րդ էջ: Մի քանի համար ունեցել մաս բուլղարերեն հավելված էջեր: Մյուս սեփական տպարան ունենալը տպագրվել է «Վզախմնոստ», «Դ.Տողորով և որդիք» տպարաններում:
3. «Կատակ» (1897), Վառնա: Ազգային ու զավեշտական եռօրյա թերթ: Այն տպագրվել է Կ.Նիկոլովի տպարանում: Իր էջերում որպես կանոն տպագրել է հայատառ թուրքերեն նյութեր:
4. «Այինեի Լիթայիֆ» (Ջվարնալի հայելի) Վառնա, (1897). Տպ. «Հայելի» և

1 Տես՝ Յ.Ստեփանեան, Հայատառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն, Իսթանպուլ, 2005, հ.1300.(այսուհետև տես՝ Մատենագիտություն...)

2 1889-903թթ. և 1907թ. հավաքածուները գտնվում են ՀՀ Ազգային գրադարանում: Այս պարբերականի մասին տես՝ Մատենագիտություն, էջ 662, հ. 113, 114, 115, 61:



«Վզախմնուտ»: Տնօրեն՝ Տիրան Փափազյան: Այս զավեշտաբերը 1897-1903թթ. Վառնայում և 1903-4թթ. Ալեքսանդրիայում հրատարակված «Հայելի» ազգային և զավեշտաբեր-շաբաթաբերի հայատառ թուրքերեն հավելվածն է եղել:

5. «Տավրոս» (1898) հայ ազգային, քաղաքական, գրական և քննադատական թերթ, որը շարունակությունն է հանդիսացել «Կատակ»-ի, տպագրվել «Վզախմնուտ» և Վոյնիկովի տպարաններում, շարունակել հայատառ թուրքերեն հրատարակությունների ավանդույթը. նույն խմբագիր տնօրենի՝ Հարություն Չաքրյանի օրոք :
6. «Շարժում Իվալեսի» (1901) Վառնա: Երկշաբաթաբեր, 4 էջ: Տնօրեն՝ Սիրտիչ Վարդան: Տպարան «Օրինետալ» (Արամյանի): Հայերեն «Շարժում»-ի քաղաքական լուրերի հավելվածն է:

Հրատարակությունների թվում զարմանալիորեն որակ են կազմել զավեշտաբերները, տարեցույցները:

Բուլղարիայում կան վայրեր, անուններ, որոնք այս երկրում հայերի բարի անվան ապացույցներից են:

1877թ. Բուլղարիայի Թաթարբազարջըք քաղաքում (Պլովդիվից 30 կմ հեռու) մի փողոց անվանվում է **Հովհաննես Սվաճյան** անունով: Ռուս-բուլղարական պատերազմի ժամանակ, երբ թուրք Մուլեյման փաշան գրավում է այս քաղաքը, հրամայում է կայարանապետին, որպեսզի հեռագրով սուլթանին հայտնի քաղաքի գրավման մասին ու սպասի նրա հետագա ճակատագրի շուրջ սուլթանական հրամանին, թե ինչպե՞ս վերաբերվի քաղաքի հետ: Սուլթանի պատասխանը լինում է՝ «այրել, ավերել, հեռանալ»: **Հովհաննես Սվաճյանը**, որ մորգեի այբուբենով թխթխացնում էր պատասխանը, հայտնում է, որ սուլթանը հրամայում է՝ «չայրել, չավերել, հեռանալ»: Հրամանը կատարվում է: Քաղաքը փրկվում է ու երախտապարտ բազարչիքցիները նրա անունով փողոց են կոչում:

Թադեոս Տիվիթճյան (1810-1878), պոլսահայը, որ տիրապետում էր հունարեն, բուլղարերեն, իտալերեն լեզուներին, Օսմանյան կայսրությունում առաջինն էր, որ բուլղարերեն տառեր ձուլեց, տպագրեց բազմաթիվ գրքեր: Դրանք ուղարկվում էին Բուլղարիա, մտավոր, հոգևոր սնունդ հասցնում այդ երկրին: Տպիին երկու անգամ Տիվիթճյանն ինքն էր ճամփորդում այնտեղ, հակերով գրքեր տանում, որոնց մեծ մասը ապառիկ էր վաճառում, տարածում: Նա տպագրական գործ էր սովորեցնում բուլղարներին, նպաստելով այդ երկրի ու ժողովրդի լուսավորական գործին: Իրավմամբ նրան կոչել են «Բուլղարների Գրիգոր Լուսավորիչը»: Բուլղարական հեղափոխության ժամանակ ծխախոտի թղթի մետաղե տուփերի կափարիչների վրա

ստրկության լուծը թոթափելու սրտառուչ կոչեր էր տպագրել, որի համար էլ ձեռք-կալվել էր, տուգանվել: Երախտապարտ բուլղարները ժամանակին սովորություն են ունեցել տարին մեկ անգամ Սոֆիայի Մայր եկեղեցում նրա հոգեհանգիստը կատարել, իրենց ժողովրդի բարերարների հետ միասին ոգեկոչելով նաև նրա անունը: Այսօր, չգիտենք, մնացե՞լ է վերիուշի այդ վեհ զգացումը բուլղար ժողովրդի մոտ:

Որպես գեկուցում կարդացվել է «Հայաստան և Բուլղարիա. անցյալը, ներկան, ապագան» միջազգային գիտաժողովում. 29-30 սեպտեմբեր 2008թ., ԵՊՀ Տպագրվել է *Մերջակոր և Միջին Արևելքի Երկրներ և Ժողովուրդներ*. Հ. XXVII, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2009, էջ 254-259.

## **ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԳԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐԲԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հայատառ թուրքերեն գրականությունը մեր մշակութային ժառանգության անքակտելի մի մասն է, որը, ցավոք սրտի, մինչ օրս մեր կողմից շատ քիչ է ուսումնասիրված: Մասնավորապես պարբերական մամուլն իր մեջ ներառում է անասի-ման վավերական նյութ Օսմանյան կայսրության պատմության, նրա ժողովուրդների կյանքի բոլոր կողմերի մասին: Այն նաև կայսրության քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումների փայլուն էջերի ու եղերական շրջանների մասին կարևոր աղբյուր է, որի վրա էլ ուզում ենք գրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Կայսրության բոլոր ծայրերում, քիչ թե շատ մտավորական խավերը, սկսած պալատական պաշտոնյաներից մինչև գավառի այլազգիները, օսմաներենով պարբերականներից ավելի, նախընտրում էին մի քանի ժամում սովորելով հայկական տառերը, կարդալ հայատառ թուրքերեն պարբերականները, որոնք պարզ ու հասկանալի լեզվով էին գրված և թարմ նորությունների լավագույն աղբյուր էին հանդիսանում: Հայատառ թուրքերենի ժողովրդականությունը պայմանավորված է եղել ժամանակի ամենազարգացած մարդկանց գործունեությամբ: Հրաշալի կրթություն ստացած, բազմաթիվ լեզուների գիտակ, լեզվական հրաշալի հոտառություն ունեցող այս գործիչները, թվում է, իրենց ուսերին են վերցրել Օսմանյան կայսրության բազմալեզու պարբերականների տպագրության ողջ ծանրությունը: Մոտ երկու հարյուր հայատառ թուրքերեն, օսմաներեն, եռալեզու, քառալեզու մամուլ, շուրջ երկու տասնյակ ֆրանսերեն պարբերականներ... Դրանք բոլորն էլ հիմնականում բաժանորդներ են ունեցել երկրի տարբեր ծայրերում ու արտասահմանում, թրքակիցներ

ունեցել անգամ հեռավոր հայկական մահանգներում, ուր այս մամուլը ստացվում էր շաբաթը մեկ և շրջում տնից տուն: Հայաստան թուրքերեն գրքերն ու պարբերականները կարդում էին պալատում, կառավարությունում ու պաշտոնական վայրերում, տարբեր ազգերի ընտանիքներում, սրճարաններում ու անգամ՝ հարեմներում: Հայաստան թուրքերեն պարբերականների մեծագույն առավելությունն այն էր, որ նորությունները (մանավանդ արտասահմանյան) 1-2 օր անց ընթերցողի սեղանին էր լինում: Իսկ հրատարակվում էին նրանք ֆրանսիական մամուլի օրինակով՝ ունենալով բազմաթիվ ենթակերնագրեր, որոնք ոչ մի բաց անկյուն չէին թողնում ընթերցողների հետաքրքրությունը բավարարելու համար: Ամենահայտնի պարբերականներն են եղել «Մանգումէի Էֆթեար», «Մեճմուայի Ալպար», «Մեճմուայը Հավատիս», «Մյունատիի Էրճիաս», «Թերճանը Էֆթեար», «Ճերիտի Շարքիե»<sup>1</sup> և էլի անուններ: Այս դեպքում մեզ համար կարևոր են բոլոր այն բաժինները, որոնք ներկայացրել են գավառը: Նույնքան կարևոր են գավառում լույս տեսած պարբերականները, ինչպես՝ «Էնվարը Շարգիյե»(Կարին), «Կիլվարը Գասյերիեի»(Կեսաբիայի համար, սակայն տպագրվել է Պոլսում), «Մենտոր» (Այնթապ) և այլն: Եթե նկատի ունենանք, որ անգամ 40 տարի հարատևած հայաստան թուրքերեն պարբերականները բաժանորդագրություններ են ունեցել գավառում (ներառյալ տեղական պարբերականները), արտասահմանում, և օր օրի տպագրել նրանց թղթակցությունները, ապա կարող ենք պատկերացնել այս հսկայական գրականությունը՝ որպես արևմտահայության ու Պոլսի ամենօրյա կյանքի հայելի՝ իր դաժան ու հալածվող առօրյաով, մշակութային ու հոգևոր կյանքով, նրա զարթոնքով, եվրոպականցման շարժման հովերով և այլն: Այն արտահայտել է հնարավոր բոլոր իրադարձությունները՝ սկսած դպրոցի բացումից, թատերական ներկայացումից, հարկահավաքների ու քրդական հրոսակների ճնշումներից, հայ մասնագետների պալատական, կառավարական ու դիվանագիտական պաշտոնների նշանակումներից, գյուղատնտեսական մրցույթներից մինչև մահմեդականացման առանձին դեպքերն այս կամ այն գյուղում: Հայաստան թուրքերեն մամուլն իր բովանդակությամբ, իր խաղացած հասարակական-քաղաքական դերով անքակտելիորեն կապված է արևմտահայության պատմության հետ: Հայկական որոշ պարբերականներ ունեցել են անգամ հայաստան թուրքերեն հավելվածներ կամ տպագրել են հայաստան թուրքերեն հոդվածներ՝ նկատի ունենալով քրքրախոս ընթերցողներին, երբեմն էլ՝ թուրքերեն թղթակցությունն ամփոփոխ ձևով ներկայացնելու համար: Երբեմն թերթերը հաճախակի

<sup>1</sup> Հայաստան թուրքերեն գրքերի և պարբերական մամուլի մասին տես՝ Յասմիկ Ա.Ստեփանեան, Հայաստան թուրքերեն գրքերի եւ հայաստան թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն. Ստամբուլ, «Թուրքուագ» հրատ., 2005թ.



փակվել են, խմբագիրները՝ բանտարկվել: «Մանգումէի Էֆբեար» թերթի տնօրեն Կարապետ Փանոսյանը, որը բոլոր խմբագիրներից առավել մոլեգնորեն է պայքարել հայ ժողովրդին ստրկացնելու, ջլատելու, ձուլելու դեմ, տպագրել է ծանրագույն փաստերով թղթակցություններ գավառից, բազմիցս բանտարկվել է ու ամեն անգամ՝ մորից է սկսել: Տպագրվել են հողվածներ, որոնք աղմուկ են առաջացրել մայրաքաղաքի ոչ միայն հայկական, այլև եվրոպական դիվանագիտական շրջանակներում (ուր որպես կանոն հայ թարգմանիչներ, բժիշկներ էին ծառայում), կառավարությունում: Այդպիսի պարբերականները լավագույն դեպքում կարողացել են վերաբացվել նախկին կամ նոր անվանմամբ՝ շարունակելով մամուլի իրական առաքելությունը: Եթե դրանց հավելենք Պոլսում մոտ երկու տասնյակ օսմաներեն, եռալեզու, քառալեզու թերթերի, մաս հայերի կողմից հրատարակվող ֆրանսերեն մոտ մեկ տասնյակ պարբերականների նյութերը, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ ահռելի նյութ է պարփակված հայատառ թուրքերեն մամուլի էջերում, մանավանդ ազգային ազատագրական շարժումների, հայ ժողովրդի եղերական իրավիճակների, դրանց լուսաբանման, հարցի հետապնդման (մաս միջազգայնացման) առումով: Այսպիսի ողբերգություն դարձավ 1909թ. Ադանայի կոտորածը, որը մաս հայատառ թուրքերեն մամուլի միջոցով, անմիջապես իր բազմաթիվ մանրամասություններով հրապարակ իջավ՝ ներկայացնելով փաստական ահռելի նյութ, լուսանկարներ, պկանատեսների վկայություններ: Դրանք հիմնականում օտար դեսպանատների միջոցով հայտնվեցին սահմանից այն կողմ, արտասահմանյան շրջանակներին հասու՝ ռուսի հանելով այն, հանձնաժողովներ կազմելու և դեպքի վայր պատվիրակություններ ուղարկելու պատրաստակամությամբ:

Ադանան այդ ժամանակ լուսավորական շարժման առաջամարտիկներից էր՝ եվրոպականացման բուռն հովերով տարված: Այնտեղ մի քանի դասական նվագախմբեր էին գործում (1901թ. առաջին հայկական նվագախումբը՝ Սահակ տեր Սահակյանի և Արսզործնախարարությունում, որպես իրավաբան-օգնական: Գալով ծննդավայր, ստանձնել է առևտրական դատարանի 1-ին քարտուղարի պաշտոնը: 1881թ. 2 տարի աշխատել է իրավագիտական ասպարեզում և ապա նշանակվել է Ադրիանապոլիսի վերահսկիչ առյանի անդամ: 1891թ. եկել է Պոլիս և զբաղվել փաստաբանությամբ: 1907թ. վերադարձել է ծննդավայր: 1908թ. Ռոդոստոյի մահանգի կողմից Օսմանյան խորհրդարանի

1 Հակոբ Բաբիկյան (1856-1909թ.), Օսմանյան խորհրդարանի երեսփոխան, ադրիանապոլսեցի: Կրթությունը ստացել է ծննդավայրի ֆրանսիական ուսումնարանում: 1873թ. պետական պաշտոնով ուղարկվել է Սոֆիա: 1877-79թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին աշխատել է Արսզործնախարարությունում, որպես իրավաբան-օգնական: Գալով ծննդավայր, ստանձնել է առևտրական դատարանի 1-ին քարտուղարի պաշտոնը: 1881թ. 2 տարի աշխատել է իրավագիտական ասպարեզում և ապա նշանակվել է Ադրիանապոլիսի վերահսկիչ առյանի անդամ: 1891թ. եկել է Պոլիս և զբաղվել փաստաբանությամբ: 1907թ. վերադարձել է ծննդավայր: 1908թ. Ռոդոստոյի մահանգի կողմից Օսմանյան խորհրդարանի

յունն ուսումնասիրելու և զեկուցելու համար: Հակոբ Բարխլիյանը դավադրաբար սպանվում է: Նրան ևս զարմացրել էր ծովափին կանգնած անգլիական երկու զրահանավերի և տեղի Անգլիայի հյուպատոսի լռությամբ, չմիջամտելու փաստը: Չմոռանանք ասել, որ հյուպատոսը մեծածախ ու մաքսագերծ առևտրով էր զբաղվում՝ Անգլիա արտահանելով (առանց մաքսային հայտարարագրման) բրդի թանկարժեք հումք և այն ներմուծելով որպես կտորեղեն ու կենցաղային առարկաներ՝ մեծազույց շահույթ ստանալով: Հայկական շրջանակների կողմից գյուղատնտեսության ու դրանց գործիքների զարգացմանն ուղղված ջանքերը խոչընդոտում էին անգլիացի գործարարների քուրքական հսկողությունից դուրս տարիներ շարունակ կատարվող կայսրության թալանը:

Փարիզյան «Յառաջ»-ում (11.09.2002) Ա.Բելլերյանը մի գրախոսական էր հրատարակել Ռուլանդ Պաղեյի «Le Crepuscule Ottoman» (Օսմանյան արևամուտ, մթնշաղ) գրքի, որը մտավորական ֆրանսիացու պատմությունն է «վերջին մեծ սուլթանի մոտ» 1875-1933թթ.: Խոսվում է այն մասին, որ Ռուլանդ Պաղեյը խիստ քննադատում է Ֆրանսիայի արտագործմասարարին՝ (Հանօթոյի) արևմտահայաստանյան գավառներում հայկական կոտորածների ընթացքում ցուցաբերած քաղաքականության համար, մինչդեռ դեսպան Գամպոն իրադարձությունների մասին ամենայն մանրամասնությամբ հեռագրերի տարափ էր ուղարկել: Հեղինակն ավելացնում է, որ փարիզյան 17 օրաթերթեր օսմանյան դեսպանատնից նպաստներ էին ստանում ոչ միայն կոտորածների շուրջ լուրերը չհաղորդելու, այլ նույնիսկ՝ զոհը ոճրագործ ցույց տալու համար:

Այսպիսով, հիմնական ծանրությունը կրկին հայերի արտոնության տակ գտնվող բազմալեզու պարբերականներն էին կրում: Հայաստառ թուրքերեն մամուլում, ավելին քան հայալեզու և մյուս պարբերականներում, արտասուպվել են արտասահմանյան, հիմնականում ֆրանսիական, սուլթանական, հայկական շրջանակների տարբեր հանձնաժողովների գործունեության արդյունքները: Պատկառելի թիվ էին կազմում Արդուլիամիդ սուլթանին նվիրված գրքերն այնպիսի բացասական վերնագրերով, ինչպես «Կարմիր գագանի որջը» (1909), «Կոշմարներ» և այլն: Հրատարակվել են Պատրիարքարանի Ազգային ժողովի

---

երեսփոխան է ընտրվել, միաժամանակ եղել «Օսմանյան օրենքի քննիչ հանձնաժողով»-ի անդամ: Անդամակցել է «Իթքիսիադ վէ Թերաքքը» (Միություն և առաջադիմություն) կոմիտեին: Իրավարան Հակոբ Բարխլիյանը 1909թ. ջարդերի ուսումնասիրության համար ուղարկվում է Ադանա և սպանվում: Ադանայի և Հալեպի արյունոտ դեպրեի մեղավորներից գտնելու և քննելու եկած հանձնաժողովի անդամի նրա տեղեկագիրը ցնցող բացահայտումներով է հայտնի եղել:

Դիակը բերվում ու մեծ սզով քաղվում է Եշիլբեյի հայկական գերեզմանոցում: Այդ օրը չեն աշխատում հայ վաճառատները, դպրոցները փակ են լինում:

ատենագրություններն ու տեղեկագրեր Կիլիկիո որբախնամ ու այլ հանճնածո-  
ղովների գործունեության մասին:

Լույս են տեսել հայերեն ու հայատառ թուրքերեն գրքեր, որոնք հիմնականում  
տպագրվեցին Եփեսոսում, Ֆրանսիայում: Պոլսում տպագրվեցին գրքեր<sup>1</sup>, որոնց  
հասույթը տրամադրվում էր Ադանայի որբերին: Համարյա բոլոր մեր անվանի  
մտավորականներն անդրադարձան այս ողբերգական խնդրին՝ գործուն մասնակ-  
ցությամբ ունենալով «Կիլիկիոյ աղետավաներու» հանճնածողովների աշխատանք-  
ներում: 1909թ. մայիսի 15-ին Փարիզի *Illustration*-ը տպագրել է Ադանայի հայկա-  
կան ջարդերի արդյունքում այրված, առանց տանիքների հայկական բարուքանդ  
թաղերը, հայ կաթոլիկ եկեղեցու, հայկական այրված դպրոցների, դիակների,  
հայտնի, պաշտոնյա զոհերի լուսանկարները: Վենետիկի Ս.Ղազարի «Գեղունիմ»  
տպագրել է հայ որբերի, որբանոցների խմբանկարներ: Նաև՝ ականատեսների  
վկայություններ՝ տարբեր պարբերականների էջերում: Հանդիպում ենք Ադանայի  
վալի դարձած Էնվեր փաշայի աղետյալ որբերին ցուցաբերած օգնության ցույցե-  
րին<sup>2</sup>, տարբեր տեսակի ելույթների արձանագրմանը, հաշտեցման միջոցառումնե-  
րին<sup>2</sup>, հայ կանանց միությունների՝ տարբեր լեզուներով օգնության կոչերին, Ադա-  
նա մեկնած հայ հոգևոր ու աշխարհիկ գործիչների զեկուցագրերի տեսքատերին:

Այս թղթակցությունները 1908թ. լույս տեսան հայտնի երաժիշտ, նվագախմ-  
բերի ղեկավար Հարություն Մինանյան հեղինակած «Իթֆիհալ վե Թերաքքը»  
բալլերդի մասին հոդվածին կից: Քայլերզը 2-րդ ասիմանադրության խանդավառ  
շրջանում տարածվել ու կատարվում էր ողջ կայսրությունով մեկ, նույն այդ առի-  
թով գրված «բրբաբարբառ» այլ երգերի հետ միասին: Ադանայի մասին լուրերը  
տպագրվում էին դեռևս 1908թ. հուլիսի 11-ին երիտթուրքերի հետ իրենց համե-  
քաշխության մասին հայտարարած դաշնակցական ու հնչակյան «կոմիտեճիներ-  
քի» մասին նյութերի կողքին: Ավելին, նյութերի հետ միասին տպագրվել են բազ-

1 Տես՝ մի քանի գրքեր Ադանայի ջարդերի մասին՝ Միրան Թապագեան, «Ատանայի ծննդեան  
ծառը», Կ.Պոլիս, 1910: Արշակունիի Թեոդիկ, «Ամիս մը ի Կիլիկիա, Դատատան», Կ.Պոլիս,  
1910: Յակոբ Թերզեան, «Կիլիկիոյ աղետը», Կ.Պոլիս, 1912: Նույնի՝ «Ատանայի կյանքը»,  
Կ.Պոլիս, 1909: Գրիգոր Գոտտուլեան, «Հայ լեռը. Կարմիր Դովազներ Կիլիկիոյ աղետն».  
Կ.Պոլիս, 1912: Georges Brezol, Les Turcs ont passé In... , 1911. Paris. Մուշեղ եպիսկ.,  
«Ադանայի ջարդը եւ պատասխանատուները», Կ.Պոլիս, 1909: Հակոբ Թերզեան, «Ատանայի  
կեանքը», Կ.Պոլիս, 1909: Սուրեն Պարբեևան, «Կիլիկեան արհալիրը», Կ.Պոլիս, 1909):  
Ապանեան Հարություն Այնթապցի, «Ինչպես դատվեց արդարությունը Ատանայի մեջ  
1909թ.» (հայատառ թուրքերեն): Պեհնիլեան Ե., «Նահատակների հուշգիրքը» (հայատառ  
թուրքերեն), Կ.Պոլիս, 1910: Չալեան Կ., «Ատանայի դեպքերը եւ պատասխանատուները»  
Կ.Պոլիս, 1910թ. և այլն:

2 1910թ. Ադանայի վալի Ջեմալ փաշան 300 հոգու, մաս օտար (անգլիական) հյուպատոսական  
կազմի մասնակցությամբ հաշտեցման ժողով է հրավիրում:



մաքիվ լուսանկարներ, որոնք ներկայացնում են դրանից կես տարի առաջ, 1908թ. հուլիսի 19-ին, վերջիններիս կազմակերպած շքերթի ելած հայերին, օսմանյան դրոշմներով՝ ս.Երրորդություն եկեղեցուց դեպի Պերայի Մեծ փողոց:

Այս շրջանում Աբդուլ Համիդ Բ-ի «Յըլդյան գրասենյակի» հանձնարարությամբ հայտնի մտավորական, պետական պաշտոնյա Տիրան Քելեկյանը 3 անգամ մեկնում է Ժնև: Նա սուլթանի անունից բանակցություններ է վարում դաշնակցական ու հնչակյան գործիչների հետ, խաղաղության, համաձայնության առաջարկներ ուղղում նրանց, համոզում զերծ մնալ եվրոպական երկրներում, մասնավորապես Ֆրանսիայում կենտրոնացած հակասուլթանական թուրք խմբավորումների հետ համագործակցելուց: Տիրան Քելեկյանը նրանց առաջարկում էր դադարեցնել վերջիններիս ազդեցությամբ երկրի ներսում և դրսում խառնակչություններ կազմակերպելու գործը և վերադառնալ երկիր: Ցավոք սրտի, հաշտարար այս առաքելություններն արհամարվեցին և ապարդյուն անցան:

Սվյառոբահայ մեր հայրենակիցների օջախներում մինչ օրս սրբությամբ են պահվում հայերեն, հայատառ թուրքերեն լեզուներով ձեռագիր տետրակներ, գրքեր, պատառիկներ, որոնք եղեռնն անցած տարաբախտ մեր հայրենակիցների կյանքի սև օրերի պատմություններն են: Այն չի կորցնում իր այրող մորմոքը մի քանի սերունդներ անց ևս: Այս պատմություններից որոշները լույս են տեսել հենց ականատեսների կողմից, մի մասը նրանց ժառանգներն են հրատարակում: Մենք առիթ ենք ունեցել տեսնելու մի քանի հայերեն ու հայատառ թուրքերեն ձեռագիր հուշագրություններ: Նրանց այսօրյա ժառանգները նույնիսկ եթե չգիտեն հայերեն, առավել ևս հայատառ թուրքերենը և չեն կարող կարդալ, այնուամենայնիվ, սրբությամբ են պահում դրանք, այն քարզմանելու, մի օր լույս տեսնելու ջանքեր գործադրում:

Մատենադարանի նոր հավաքածուի 361 համարի ձեռագիրը գրվել է Ադանայում, վերնագիրն է «Թուրքիադա էրմենի հայաթը» (Հայերի կյանքը Թուրքիայում): 1950-ական թթ. երկմաս, 80 թերթից բաղկացած ձեռագիրը պատկանում է Լևոն Էպեյանի գրչին: Բովանդակությունը նվիրված է Ադանայի ողբերգական դեպքերին: Առաջին մասը 3 բաժիններից է բաղկացած: Այն սուլթանների երկրում հայ կյանքի մասին ու Ադանայի «գուլումի» մասին է: 47 թերթից սկսվում է ձեռագրի երկրորդ մասը, որը չափածո է, բաղկացած քառյակներից՝ դազալ, դիվան, քոշմա... Բոլորն էլ շարդերի շուրջ: Այսպիսի հեղինակային կամ ժողովրդական եղերերգեր կարող եք գտնել Արևմտյան Հայաստանի, մանավանդ քրքախոս շրջանների բանավոր ու գրավոր մշակույթում: Հայատառ թուրքերենով հայտնի են մի շարք հրատարակություններ, չափածո գործեր Այնթապի «պատերազմներին» մասին:

Համիդյան շրջանի մասին թուրք հայտնի գրող Ջելալ Նուրիի «Կոշմար» վեպը ֆրանսերենից հայերեն է թարգմանում Ենովք Արմենը: 1911թ.Պոլսում տպագրված այս գրքի առաջաբանում հայտնի լրագրող ու քաղաքական դեմք Ջելալ Նուրին գրում է, «... որ համիդյան շրջանում մի շարք զոհերի, ոճրագործությունների պատճառով շատ դառնություններ են ունեցել: Մենք նրանց (հայերին) ենք պարտական մեզ համար մոտ լեզու ունենալը<sup>1</sup>: Մահմուդ Բ-ի օրոք մեր երկիրը շրջած մարշալ Մոլթթըզ գրեց, որ երկու տեսակի թուրք կա՝ մահմեդական ու քրիստոնյա, նկատի ունենալով հայերին: Համիդյան շրջանում թուրք բառը հայերի կողմից կրելը ամոթ համարվեց ու ճիճրներ եղան: Դրա համար էլ այս գիրքը թարգմանվել է մեր հայ եղբայրների համար»<sup>2</sup>:

Յավոզ սրտի մեր մշակույթի այս հատվածը բավարարար չի ուսումնասիրված: Չուսումնասիրելով հայատառ թուրքերեն մամուլը, նշանակում է լիարժեք չուսումնասիրել մեր ժողովրդի արևմտահայ հատվածի պատմությունը: Գուցե մենք մի օր կունենաք մեր ազատագրական շարժումների պայթույթ ու եղեռնագործությունների ցավից հյուսված արծակ ու չափածո, հայերեն ու հայատառ թուրքերեն, մասն ալալեզու գրականության հրատարակության մի նոր շարք, դուրս հանելով այն ժամանակի պարբերականների ու գրքերի, տարիների ու մարդկության պատմական հիշողության մոռացությունից<sup>3</sup>:

Որպես գեկուցում կարդացվել է Յեղասպանության քանգարանում՝ Ալանայի կոտորածների 100-ամյա տարեկիցին նվիրված միջազգային գիտաժողովում  
Երևան, 2009թ. ապրիլի 20-21.

- 1 Հեղինակը նկատի ունի գրական նոր թուրքերեն լեզվի կազմավորումը:
- 2 Պատմությունը պահպանել է մի քանի թուրք արժանապատիվ այլերի ամուներ, որոնք իրենց կյանքի ու ասպագայի գնով փորձեցին պաշտպան կանգնել իրենց հայ հայրենակիցներին: Ռեշիդ փաշան, որ Օսմանյան կայսրության եզակի առաջադեմ պետական գործիչներից էր, Քասրեմուհիի կուսակալը, ինչպես և Կուտիմայի կառավարիչ Ալի Ֆայիլը, որքան որ մնացին իրենց պաշտոններում, փորձեցին տեղահանությունից զերծ պահել իրենց շրջանների հայությանը, միաժամանակ պաշտպանելով իրենց տարածքներով անցնող աղետոյալ հայերի քարավանները: Ձիհադադարից հետո Սվազի կուսակալ Ռեշիդ փաշան ամեն ինչ աճում էր՝ պաշտպանելու Թուրքիայում մնացած հայերին: Նա ընդհանուր քննիչ էր «Հայ և թուրք բարձրագույն Միության»:
- 3 Եղեռնից մազապուրծ ազատված կամ հետագայում երկիրը լքած հայ մտավորականների մեծ մասը մինչև իրենց կյանքի վերջին օրերը տառապել են «փրկված» լինելու զգացումից: Նրանցից շատերի ստեղծագործությունների հիմնական մեխը այդպես էլ մնաց եղեռնի քեման: Հովսեփ Ազնավուրը, Օսմանյան ճարտարապետների միության առաջին նախագահը (1913թ.), որը եղել է Մահմեդադրական ժամկավար կուսակցության հիմնադիրներից, ՀԲԸՄ անդամ, մեծ ազգային, Մոաջին համաշխարհայինից հետո չէր կարողացել այլևս մնալ Թուրքիայում: Նա տեղափոխվել էր Կահիրե, ուր և ապրել մինչև կյանքի վերջը: Նրա կարապի երգը մեկ ու կես միլիոն նահատակների հիշատակի կորոշի նախագիծն էր, որ սպազայում պիտի կառուցվեր Հայաստանում...

**ՀԱՅԱՍՏԱՌԹՈՒՐՔԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱՍՄՔԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՈՒ ԹՈՒՐՔԵՐԵՆ  
ԼԵԶՎՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԸ 18-19-ԲԳ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՆՅ ԿՅԱՆՔՈՒՄ**

Հայ կինը և մայրը պատմության ընթացքում մեր ժողովրդի փյուխտփայտության ու հոգեբանության մեջ ունեցել են իրենց ամենապատվավոր, սրբացված տեղը, նկատվել տղամարդուն հավասար արժանիքներով: Այսպիսի վերաբերմունքը շարունակվում է մինչ օրս: Մեր ուսումնասիրությունը նվիրված է 18-19դդ. Օսմանյան կայսրությունում կնոջ դերին, տեղին՝ հայ, պոլսահայ կնոջ օրինակի քննության հիման վրա: Նրանց մասին կան նաև օտար, հարուստ աղբյուրներ, որոնցից են Պոլիս այցելած տարբեր ազգերի ճանապարհորդ-նկարիչների թողած կտավները, նյութերը: Դրանք պատմում են պոլսահայ մթնոլորտում հայ կանանց կյանքի տարբեր կողմերի, նրանց կրթության, դաստիարակության, արտաքինի, տարագների, հագուստների, զբաղմունքների մասին: Հայտնի են հռչակագրի նկարիչ Վան Մուրի կտավները, որոնց մի մասը նվիրված է եղել Պոլսի տարբեր ազգերի կանանց զբաղմունքին: Սեղանի շուրջ թղթախաղի բռնված հայուհիների նկարում կանայք բոլորն էլ փարիզյան նորածնությանը են հագնված: Երկրորդ նկարը Պոլսի հայ ընտանքներից մեկում խնջույքի տեսարան է պատկերված, ուր կանայք և տղամարդիկ միասին, հավաքված են մեկ սեղանի շուրջ: Սա քաղաքային հայ կենցաղի նկարագրություններ են: Անգլիացի արևելագետների, այդ թվում Ջոն Ֆրեդերիկ Լեվիսի (1873թ.) գեղեցիկ հայուհիների յուզանկարները ցուցադրվել են վերջերս նաև Պերայի քանդախանում, Օսմանյան կայսրություն այցելած դիվանագետ-նկարիչների ստեղծած կտավների շարքում: Օսմանյան կայսրության բազմաթիվ հայ նկարիչների կտավներ, փորագրանկարներ (գրավյուրաներ), սպա նաև՝ հայ արքունի լուսանկարիչներ Աբդուլահ եղբայրների և մյուսների տարբեր նկարչական շարքերում Պոլսի և հայաշատ գավառների կինը երևում է իր յուրահատուկ միջավայրում: Մեծ քաղաքների, մասնավորապես Պոլսի կանանց մասին խոսելիս նկատի պիտի ունենանք ծայրահեղորեն տարբեր վիճակներ: Այն է՝ ավանդական մուսուլմանական Արևելքի կինը, որը գայթակղել է իր վարագույրված խորհրդավորությամբ: Մյուսը՝ եվրոպասեր կինն է, որը հնարավորինս բաց ու ազատ է՝ էմանսիպացիայով տարված: Այս խառնուրդ կարելի է դիտել արքունի կանանցից (արքայադուստրեր, տարբեր ազգերի պատկանող երևելի պալատականների, ամիրաների ու փաշաների կանայք) մինչև ավելի պարզ միջավայրի կինը:



● Եվրոպական նորածնությունն արևելյան հմայք էր ձեռք բերել: Հարյուրից ավելի եվրոպացի կոմպոզիտորներ և ավելի շատ՝ գրողներ, արվեստագետներ (նկարիչներ, քանդակագործներ) արևելյան թեմաներով ստեղծել են մոտ 300 օպերա, բալետ, սիմֆոնիկ պատկերներ, նկարներ ու քանդակներ, վեպեր, դրամատուրգիական երկեր ու շավաձո գործեր: Դրանք հիմնականում իրականությանը քիչ համապատասխանող, ավելի երևակայական բնույթի ստեղծագործություններ են եղել: Չալմաները, ատլասն ու մետաքսե խալաթները, թափանցիկ շղարշներն ու ոսկեկար, արծաթեկար հագուստները, լայն շավվարները, անգամ մետաքսե բարձերն ու գորգերը, կահկարասին ու դելյանը այնքան են սիրելի դարձել Եվրոպային, որ առատորեն նմանակվել են նրանց կողմից սեփական կենցաղում: Եվրոպական երևելի այրերն ու կանայք իրենց նկարները պատվիրել են հենց արևելյան հագուստներով, արդուզարդով, իսկ ոմանք էլ իրենց սպարանքներում արևելյան մթնոլորտ են ստեղծել: Իր խորհրդավորությամբ, միատիկայով շղարշված, ճոխությամբ, մարմարե ավազաններում մերկ լողացող, սև խափշիկներով ու ներքինիներով շրջապատված հարեմական կին-գեբուռիհն, որին կարելի էր սիրել, սպանել, նվիրել կամ երբևէ երեսը չտեսնել, դարձել էր արվեստի ամենատարբեր ու բազմաթիվ գործերի հիմնական սյուժեներից:

Մյուս կողմից՝ 18-19-րդ դարերի պոլսահայ կինն աչքի է ընկել նախևառաջ իր կրթվածությամբ, քանի որ արդեն գործում էին աշխարհիկ դպրոցներ, իսկ ավելի ուշ՝ նաև բարձրագույն հաստատություններ, տարբեր մասնագիտություններ սովորեցնող պրոցներ, իսկ զավառցիների համար նաև՝ իզական որբանոցներ, արհեստանոցներ: Դպրոցները պատրաստում էին ուսուցչուհիներ, հիվանդանոցների գթության բույրեր, գորգագործներ ու կարպետագործներ, կարուհիներ, որոնք հայտնի խանութ-արհեստանոցներում պատրաստի հագուստի, օժիտի սպիտակեղենի, ոսկեկար ու արծաթեկար, ասեղնագործի, ժանյեկագործի ու էլի տարբեր արհեստների մեջ վարպետացած, իրենց ընտանիքի հոգսերը կիսողներ էին կամ պիտի այն դառնային:

Աչքի էին ընկնում հայ ամիրաների, երևելիների կանայք: Երբ օտար երկրի թագավորական կամ մի այլ բարձրաստիճան հյուր էր ժամանում Պոլիս, Մուլթանի հրամանով հյուրընկալության ողջ ընթացքի պատասխանատու ուղեկցորդուհիները դառնում էին այս ամիրայական գերդաստանների տիկնայք, դուստրերը՝ ընկերակցելով նաև սուլթանական պալատի արքայադուստրերին: Նրանք երբեմն իրենց հարկի տակ էին հյուրընկալում մեծապատիվ անձանց, թագավորների, թագուհիների<sup>1</sup>, երբեմն նաև Մուլթանին:

<sup>1</sup> Երբ 1870թ. Ֆրանսիայի Լժեռնի թագուհին ժամանում է Ստամբուլ, իջևանում է Դոլմաբահչեի ու բազմաթիվ շքեղ շինությունների, մզկիթների ու ապարանքների արքունի ճարտարապետներ

Հայ երևելիների ընտանիքներում հյուրասիրվող, հյուրընկալվող սուլթանական պալատի հյուրերն իրենց գտնում էին շքեղ, ճաշակավոր, եվրոպական կահույքով, բյուրեղապակե ջահերով, արևելյան շքեղ գորգերով, արծաթեղենով ու վեներտիկյան հայելիներով, Մյախենի ու Սարսի սպասքով, Քյուբահայայի անցկարագրելի նուրբ ու ճաշակավոր ճենապակե իրերով զարդարված ապարանքներում՝ վայել հյուրընկալվող թագավորական ու բարձրաստիճան հյուրերի բարձր աստիճանին: Հայ աղիստոկրատ կանայք, որ հրաշալի, բազմակողմանի կրթություն էին ստանում տանը, հետևելով 18-րդ դարի ֆրանսիական հայտնի մի քանի տիկնանց գրական սալոնների օրինակին, իրենք էլ 19-րդ դարում Ստամբուլում հիմնել են իրենց բարձրաշխարհիկ սալոնները: Ամենահայտնիներից հիմնականում ամիրայական երեք տոհմերի կանայք են եղել: Առաջինը՝ արքունի վառողապետ Տառյան ամիրայական ընտանիքից տիկ. Գևորգ Ալանի հայտնի սալոն է եղել: Այս մեծ ինտելեկտի տեր կենսուրախ կնոջն անվանել են «Շոլի-Լեդ», անանցնելով իշխանուհի Սետերնիխին՝ Նապոլեոն Գ-ի արքունիքում Ավստրիայի դեսպանի կնոջը: Նրա դուստր Աննան ամուսնացել էր եգիպտական պալատի հայտնի ազնվական, վարչապետ Նազիպ փաշա Բուտրոս Ղալիի հետ:

Երկրորդ հայտնի սալոնը պատկանել է արքունի դրամահատարանի տնօրեն ու ոսկերչապետ Տիկին Էդգար բեյ Տյուզին, Հովհաննես ամիրա Ալլահվերդիի դստերը: Առանձնահատուկ այս կինն իր սալոնում է հավաքել Պոլսի ողջ մտավորական սերունդը, արտասահմանյան դիվանագետների և արվեստագետների: Նա ֆրանսիացի ակադեմիական Պիեռ Լոթիի համակիրներից է եղել, որը փոխադարձաբար սքանչացել է նրանով: Սակայն երբ Պոլիս հաստատված Լոթին իր գրքում վիրավորական տողեր է գրել ի վնաս հայերի, ապա տիկին Տյուզը նրան նախագգուշացնող մի խիստ մանակ է գրել՝ փակելով հանրահայտ հյուրի առջև իր տան դռները՝

Երրորդ գրագիտուհին Առաքել ամիրա Տառյանի կրտսեր դուստրն է, Աստինե Վահանը, որը դարձել էր տիկ. Գաբրիել Մերվիչեն (հայտնի դուկ. Մերվիչենի հարսը): Նրա տան հավաքույթներում ներկա են եղել ֆրանսիացի հայտնի ազնվական-

---

Հակոբ և Սարգիս Պալանների կառուցած Բելլերբեյի ապարանքում: Ծանապարհորդությամբ ժամանակ որպես թարգմանիչ նրան ուղեկցում են արքունի ոսկերչապետ Միհրան Տյուզի կինը և հայ երևելիների կանայք: Մայր Սուլթանը չի համբուրում էժեն քագուհուն, որը վիրավորվում է ու մերժում Վալիդե-սուլթանի առաջարկած սուրճը: Դա էլ վիրավորական էր Արևելյի տվորույթներին: Թագուհու հայ թարգմանչուհիներից Մարիոնկան «փրկում է» իրավիճակը, ասելով, որ սուրճը վնասակար է քագուհուն: Իհարկե, քագուհուն չհամբուրելու այս անկիթը վերաբերմունքի համար Աբդուլ Ազիզ սուլթանը նախատում է իր մորը:

- 1 Հետագայում հրատարակվում է մի խումբ մտավորականների կողմից մույն Լոթիի դեմ ուղղված «Ոճրագործների բարեկամը» Réponses à Pierre Loti ami des massacreurs. Articles d' Auguste Gauvain, Camille Maclair, Herbert Adams Dibbons 4 F. Jean Desthieux etc. Correspondances et Documents Officiels. Paris, imp. H. Turabian, 1919

ներ, զինվորականներ: Այս ընթացքում, հիացած հայ օրիորդների կրթությամբ ու հմայքով, մոտ հիսուն ամուսնություններ են կնքվել հայ ընտանիքների օրիորդների և ֆրանսիացի ամենահայտնի ազնվականական տների միջև: Նրա դուստր Լուիզ Սերվիլենը եղել է Թոմաս Մաննի հայտնի ու լավագույն թարգմանիչը ֆրանսերենից: Վերժինե Սերվիլենն իր «Սուրճ մատուցող չերքեզուհին» կտավով օսմանյան պատվիրակության կազմում մասնակցել է 1867թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսին:

Այս կանայք ներկայացրել են ֆրանսիական լուսավորական մթնոլորտը, եղել Կայսրության առաջին ֆեմինիստները՝ արձանագրելով ֆրանսիական էմանսիպացիայի մուտքը Պոլիս ու ներկայացրել հայ կանանց փայլուն միտքն ու հմայքը: Այս տարիներին հայատառ թուրքերենով հարյուրավոր վեպեր, ռոման-ֆելիետոններ են թարգմանվել ֆրանսերենից, որոնք կարող էին գտնել ամեն մի պոլսեցի կնոջ ու մանավանդ օրիորդի բարձի տակ: Հրատարակվում էին հատուկ պարբերականներ կանանց կողմից, կանանց համար, որոնք ֆեմինիզմի առաջին ծիլերն էին Օսմանյան կայսրությունում: Դրանք տաղանդավոր կին գրողներ էին, որոնք դասական անուններ դարձան (Հայկանուշ Մառք, Էլբիս Կեսարացյան, Սրբոտի Տյուսաք և մյուսները): 1906թ. մահմեդական առաջադեմ թուրք կանանց կողմից հրատարակվող *Դեմեր* շաբաթաթերթի առաջին էջերում տպագրվում են Ջապել Ասատուրին (Սիպիլ), Ջապել Եսայանին, Հայկանուշ Մառքին և էլի մի քանի հայ կին գրողներին ծանոթացնող հոդվածներ: Ստամբուլի «Արաս» երկլեզու հայտնի հայկական հրատարակչությանն ենք պարտական նրանց ստեղծագործությունների այսօրյա թուրքերեն տպագրությունը<sup>1</sup>:

Հայկական թատերախմբերի կողմից շուրջ 1000 ներկայացումներ են քեմադրվել, այդ թվում 500-ը՝ թուրքերեն լեզվով, երազել տալով հանդիսատես կանանց եվրոպական ազատախոհության, ինքնաբացահայտման շուրջ: Ֆրանսիացի հեղինակների պիեսները քեմից համոզում էին, որ աստված կնոջը չի ստեղծել միմիայն տղամարդուն ու նրա քմահաճույքներին ծառայելու համար, և որ կինը կարող է մերժել տղամարդուն, ուսյալ լինել, հասարակության լիարժեք անդամ հանդիսանալ: Մուսուլման կինը, հարեմի կինը մեկը մյուսին հորդորում էր գնալ «Պապա Մնակի» (Մարտիրոս Մնակյանի) թատրոն՝ տեսնելու իրական կյանքը: Նույն այս կանայք, անգամ հարեմում, անհագորեն կարդում էին հիմնականում ֆրանսերենից թարգմանված հայատառ թուրքերեն արկածային վեպերը, ռոման-ֆելիետոնները: Նրանք սկսել էին քաղաք գրեսանքների դուրս գալ, հեծանիվ բշել, լուսանկարչությամբ և այլ «ժամանակակից» զբաղումների նվիրվել՝ ինտելեկտուալ շող մտցնելով իրենց տաղտուկ կյանքում:

Էմանսիպացիայի դրոշակակիր հայկական թատերախմբերը, հայերեն ու մանա-

1. Stü' Bir Adalet Feryadi, Beş Ermeni Feminist Yazar, İst., Aras yayıncılık, 2010.416s.



վանդ թուրքերեն ներկայացումներով դահլիճ են բերել անգամ հարեմի կնոջը, կիրակնօրյա հատուկ ցերեկային ներկայացումներ կազմակերպել ու հատուկ օթյակներ տրամադրել նրանց: Այս առումով Մարտիրոս Մնակյանի, Գյուլիշ Հակոբի (Հակոբ Վարդուկյանի), Պենկլյանների, Թ.Ֆասուլաճյանի թատերախմբերը մեծագույն ավանդ ունեն Օսմանյան կայսրության կյանքում առաջընթացի, եվրոպական հեղափոխական մտքի, արվեստի ու գիտության ներթափանցման գործում: Հայ առաջին դերասանուհիները՝ Արուսյակ Փափագյանը, Ազնիվ Հրաչյան, Սիրանուշը, Մանի Նուարդը, Էլիզ Գուլամն իրենց տաղանդով հեղափոխություններ են առաջացրել բուրբ մտավորականությամբ, առաջին լուսավորիչ-դրամատուրգների շրջանում, ներշնչելով նրանց բազմաթիվ նոր ստեղծագործությունների ստեղծման գաղափարներ, առանձնակի թափ հաղողելով թուրք նոր գրականության ու դրամատուրգիայի ստեղծման, զարգացման գործընթացում:

Կարևորագույն հանգամանք է եղել պոլսահայ մթնոլորտում հայ կանանց կողմից կազմակերպվող բարեսիրական գործունեությունը, հասարակական, մշակութային հարյուրավոր կազմակերպությունների ստեղծումը, որոնք շատ արագ տարածվել են ողջ Օսմանյան կայսրությունով մեկ: Ուշադրության է արժանի մի հանգամանք: Տարբեր ազգերի որբերին, տարբեր դպրոցների, երիտասարդ տաղանդների արտասահմանում կրթության ուղարկելու համար, այս կամ այն առիթով բարեգործական հավաքույթների, պարահանդեսների, տարեկան դիմակահանդեսների, դաշտահանդեսների, շքեղ հյուրանոցներում ու թատրոններում համերգների, բենեֆիսների, մկարչական ու լուսանկարչական սալոնների կազմակերպողների թվում հայ տիկնանց կողմից տեսնում ենք այլ ազգերի կանանց, օտար դիվանագետների ու նրանց կանանց, օսմանյան արքայադուստրերի ու արքայազների:

Այդ միջոցառումների հայտարարություններում հովանավորների մեջ տեսնում ենք սուլթանների ու արքայազների, օտար դիվանագետների, բանկիրների: Հայ ամիրաների, փաշաների ու մյուս երևելիների մայրերը, կանայք, դստրերը սուլթանական պալատից բազմաթիվ «Շեֆակաթ» շքանշանների ու շնորհների են արժանացել իրենց բարեգործությունների ու կայսրության տարբեր ազգերին մատուցած ծառայությունների համար:

1917թ. Գեորգ Ե Կաթողիկոսը Ս.Աստվածածնի տոնի (ապրիլի 17-ին) կոնդակով թույլատրում է հանրային կյանքում գործելու հայուհիների իրավունքը: Անգլիայում կանանց իրավունքներն արտոնվել են միայն մեկ տարի անց, 1918 թվականին:

18-19-րդ դարի այսպիսի համերաշխությունը Օսմանյան կայսրությունում, հանուն երկրի առաջընթացի, խաղաղության, գիտությունների ու արվեստների զարգացման՝ կարելի էր միայն ողջունել:

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ<sup>1</sup>

Մինչև Սուլթան Մահմուդ Բ-ի գահակալության շրջանը (1808-1839), հայերը միշտ հեռու են գտնվել երկրի ղեկավարման աստիճաններից: Դրանք վերապահված են եղել տիրող՝ թուրք ազգին: Վերջինս երկար ժամանակ իր համար անհարիր է համարել նստակյաց ազգերին հատուկ զբաղումները՝ արհեստները, երկրագործությունը, առևտուրը: Այն թողնվել է հայատակ ազգերին, որոնք և իրենց վրա կրելով երկրի տնտեսական զարգացումը շարունակելու պարտականությունը, այնքան են առաջադիմել որոշ բնագավառներում, դարձնելով այն իրենց մենաշնորհը, որ մույնիսկ սկսել են ղեկավարել այդ բնագավառները, որպես պետական բարձրաստիճան պաշտոնյաներ:

1721թ., երբ Ահմեդ Գ-ն Փարիզ, Լյուդովիկոս 15-րդի պալատ պետք է ուղարկեր իր դեսպանին՝ Մեհմեդ Չեկեյի էֆենդիին, ապա, նախապես հայտնի թուրք ընտանիքների շատ երիտասարդներ, որպես դեսպանատան աշխատակիցներ ուղարկվել էին արտասահման՝ սովորելու քաղաքացիական մասնագիտություններ և իհարկե՝ զինվորական գործ: Ֆրանսերենն այդ ժամանակներում համարվում էր դիվանագիտության լեզու: Այս երիտասարդներից շատերը, ինչպես նաև սուլթանական շատ ու շատ բարձրաստիճան հայատակներ, էլնելով ազգային ավանդույթներից, չէին համաձայնում որպես դեսպաններ, մույնիսկ կարճ ժամանակով, մեկնել քրիստոնյա երկրներ: Այս պատճառով է, որ եվրոպական, օտար երկրներ դեսպաններ պատրաստելու առաջին փորձերն անհաջողության մասնվեցին:

Մի քանի պետական գործիչներ, որոնք եղել էին այդ երկրներում, տեսել ու հասկացել որոշ շահով Եվրոպան, գտան, որ եվրոպական տերություններից այդչափ են մնալն իրենց երկրի համար կարող է պատճառ դառնալ վաղահաս կործանման:

Մինչև 19-րդ դարի առաջին տասնամյակները թուրքերը համարյա ծանոթ չէին եվրոպական պետություններին, նրանց քաղաքականությանը, կյանքին, կենցաղին, մշակույթին և այլնին:

Իրապես, եվրոպական տերությունների կարծիքով Օսմանյան կայսրության պետական ու դիվանագիտական համակարգը հիվանդ մարմնի էր նման, որը ոչ թե բուժել էր պետք, այլ բաժանել, օգտագործել, նաև՝ հայերի օգնությամբ:

19-րդ դարի սկզբին սուլթանական պալատը հասկացավ, որ արտաքին քաղաքականության ասպարեզը շտապ կարիք է զգում արմատական փոփոխություն-

1 Այս մասին տես Հ.Ստեփանյան, Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Դիվանագիտության մասին գլուխը, Երևան, 2011, Ա տպ. 744էջ:

ների ու նոր մտտեցումների, մեթոդների: Նրանք ստիպված էին հրաժարվել եվրոպական երկրների նկատմամբ մեծապետական ու առավելություններ ունեցողի կեցվածքից ու պատրաստ լինել գոնե հավասարը հավասարի նկատմամբ գործելակերպի: Միայն այդպես էր հնարավոր կլիներ գուցե պահպանել Օսմանյան միապետության ամբողջականությունը:

Այն, ինչ այդեն հնարավոր չէր լուծել զենքի ուժով, հույս ունեին հասնել դիվանագիտության օգնությամբ:

Այս պատմական շրջանի համար հետաքրքրական աղբյուրներ կարող են ծառայել թուրք դեսպանների կողմից պարբերաբար Յիդըզի պալատ ուղարկվող պաշտոնական գրությունները: Ձեկուցագրերից շատերը հեռու են անգամ դիվանագիտական զեկույցների ընդունված ձևերից ու ավելի շատ ճանապարհորդական հուշեր են հիշեցնում:

1846թ. Աբդուլ Մեջիդի օրոք Ստամբուլում հիմնվեց համալսարան, որը սլիտի ապագայի համար դիվանագետներ դաստիարակեր: Թուրք ապագա դիվանագիտական կորպուսը սկսեց սովորել լեզուներ, ծանոթանալ եվրոպական դիվանագիտական մշակույթին ու օրենքներին: Իսկ մինչ այդ օսմանյան դիվանագիտական կորպուսի համար անհրաժեշտ մի հզոր բանակ կարող էր տրամադրել միայն Պոլսի հայ կրթյալ գաղութը: Եվ այս հանգամանքը փրկարար օղակ հանդիսացավ կայսրության համար անելանելի թվացող ժամանակաշրջանում:

Հայերը ճանաչված էին որպես մտավոր մեծ հնարավորությունների տեր ներուժ: Բազմիցս ապացուցվել էր նրանց, որպես կայսրության հավատարիմ ժառանգորդ հպատակներ լինելու հանգամանքը: Մուլթանները հիմնականում նրանց հարստությանը չեն խանդել, համոզված լինելով որ անհրաժեշտության դեպքում այն անպայման կծառայի կայսրությանը: Պալատն ունեցել էր հայագոյի վեզիրներ, ծովակալներ, հայագոյի զորավարներ, թող որ մի մասը՝ դեշիրմենը՝ (մանկասիական եզիպտական խտիվության: Նրանք լծվեցին դիվանագիտական այս առաքելությանը, ծառայելով իբրև ոչ թե զուտ օգնական օղակներ, այլ որպես գործունեության կարևոր ու հիմնական ծանրությունն ապահովող լծակներ: Թուրք նախարարների հետ միասին նրանք վարեցին մի շարք նախարարությունների նախարարների, փոխնախարարների ու գերատեսչության ղեկավարների պաշտոններ:

Այս մեկդարյա շրջանը հայերի համար եղավ երկրի կառավարության տարբեր բնագավառներում, վարչական ասպարեզում, իրավական կյանքում որոշակի դեր խաղալու և բարձր աստիճաններ գրավելու ժամանակաշրջան: Այն ոչ միայն օգ-



նեց ներկայացնելու պատշաճ մակարդակով Կայսրությունը եվրոպական քաղաքական, տնտեսական հարթություններում, այլև ի դերև բերեց հայկական մտքի, տաղանդի, ուշիմության ու հավատարմության արժանիքները: Հայերը ճանաչվեցին և ընդունվեցին եվրոպական ամենաբարձր մակարդակներում, թագավորական տներում ու արքունիքներում, գիտական ու մշակութային ամենատարբեր ասպարեզներում, արժանանալով այդ երկրների տիրակալների ու կառավարությունների, տարբեր հաստատությունների մեծագույն պարգևներին ու փառքի:

Եվրոպական երկրներ, միջազգային ցուցահանդեսների պաշտոնական պատվիրակություններ (մասնավորապես սուլթանին ընկերակցող) կամ որևէ դիվանագիտական ներկայացուցչության կազմ անհնարին էր պատկերացնել առանց հայազգի պաշտոնյայի: Փաստ է նաև, որ շատ քիչ բացառությամբ, դիվանագիտական ողջ ներկայացուցչությունների ու նախարարությունների հիմնական աշխատուժը եղել են հայերը և որ նրանց ուսերին է եղել հյուրընկալ երկրներում Օսմանյան կայսրությունը ներկայացնելու, երկուստեք բազմապիսի փոխհարաբերություններ հաստատելու առաքելության ողջ ծանրությունն ու պատասխանատվությունը: Եվ դա վերաբերում էր ոչ միայն կայսրության օտարերկրյա դեսպանատներին ու հյուպատոսարաններին, այլև նույն այդ օտար երկրների Պոլսում գործող դեսպանատներին ու կայսրությունով մեկ տարածված հյուպատոսարաններին:

19-րդ դարի 30-ական թթ. բուրբական դիվանագիտության պատմության մեջ սկիզբ դրվեց նոր դարաշրջանի: Հայազգի դիվանագիտական կորպուսը ներկայացնող դեսպանները, հյուպատոսները, ավագ թարգմանիչները, խորհրդականները, լինի Արտաքին գործերի նախարարության ներսում թե երկրից դուրս՝ լծվեցին այս առաքելությանը, ծառայելով որպես հիմնական ծանրությունն ասպահովողներ:

Նրանց ուսերին է եղել թարգմանական, արտասահմանյան, իրավաբանական (մասնավորապես միջազգային հարաբերությունների գծով) խորհրդակցանների, քարտուղարության, մինչև անգամ երկիր նոր մուտք գործած իտալական մեթոդով հաշվակալական բաժինների ողջ ծանրությունն ու պատասխանատվությունը: Ավելին, հայտնի են պոլսահայ դիվանագետներ, որոնք եվրոպական տերություններն էին ներկայացնում մի այլ եվրոպական պետության մեջ, ինչպես օրինակ հայտնի պատմաբան հայր և որդի Մուրաջա և Կոնստանդին դ' Օհսոնները: Այս բոլոր գործիչները ոչ միայն բարձրացրին միջազգային ասպարեզում Օսմանյան կառավարության հեղինակությունը, այլև իրենց գործունեությամբ պատիվ ու բարի համբավ բերեցին իրենց ազգին, լավագույնս ճանաչել տվին հային քաղաքական ամենաբարձր մակարդակներում: Նրանք հավատարմորեն ծառայեցին ոչ միայն սուլթանական արքունիքին, Բարձր Դռանը, այլև ազգաշահ գործերով ու

բարեգործություններով շռայլ ու պայծառ էջեր գրեցին և արևմտահայության պատմության մեջ: Մենք հակված ենք այն մտքին, որ շուրջ 1000 հայազգի մասնագետներ դրսու՞մ և ավելին՝ երկրում, զբաղված էին դիվանագիտական ծառայությամբ: Մենք անվանաբար գիտենք միայն նրանց մասին, ովքեր սուլթանական կառավարությունից տարբեր աստիճանների պարգևներ, շքանշաններ են ստացել: Նրանց նշանակման և պարգևների մասին սովորաբար տեղեկանում ենք հայերեն ու հայատառ թուրքերեն պարբերականներից: Սինչդեռ դիվանագիտական ներկայացուցչություններում հայ թարգմանիչների, քարտուղարների, գրասենյակի պատասխանատուների, բժիշկների մեծ քանակի առկայությունն անհերքելի է:

19-րդ դարում Օսմանյան կայսրության դիվանագիտական արտաքին ու ներքին կորպուսի, տարբեր նախարարություններում կարևորագույն պաշտոններ ունեցող հայազգի գործիչների մի որոշակի մասը, մաս արտասահմանում եղած ժամանակ հարել են ֆրանսիական ու շոտլանդական մատնական օբյակներին և չեն բաքցրել այդ փաստը:

Նրանք հիմնականում ռոմանտիկներ են եղել, վեհ գաղափարների կրողներ ու զարմանալիորեն շուտափույթ գերի են դարձել առաջադիմական հովերին, տարվել դրանցով ու հավատացել, թե լուսավորական, եվրոպական առաջադեմ գաղափարները գնահատող ու կողմնեղ կարող են իսկապես եղբայրներ լինել՝ անկախ դավանանքից, անկախ երկրում տիրող իրավիճակից: Այդ մարդիկ, որոնք սերուցքն են կազմել ազգի, փարվել են ամեն մի առիթի, որը երկրին ու այնտեղ ապրող ազգերին, մասնավորապես հայերին, մարդկային արժանապատիվ սպազա կյտստանար, ավելի ուշ՝ գուցե մաս ազատություն: Կարևոր շարժառիթ է հանդիսացել այն հանգամանքը, որ ինչպես բոլոր հպատակ ժողովուրդներն Օսմանյան կայսրությունում, այնպես էլ հայերը, բարենորոգումների քաղաքականությունից (Թամզիմաթի շրջանից) չստացան իրենց երազանքների, հույսերի իրականացման տեսանկյունի մի գործոն և հույսերի իրականացումն ու ազգի փրկության ճանապարհը փորձելու էին փնտրել նոր, տարբեր ուղիներում ու օտարների «խոստումնալից» հնարավորություններում: Այսպիսի առիթներից էր եվրոպական ազդեցության ամենահին տեսակներից մեկով անհիմն խանդավառվելը: Այն է՝ եղբայրանալ մատնական օբյակների շնորհիվ: Իսկ դրանց թիվը Պոլսում, 19-րդ դարի վերջերին, 50-ից էլ ավել էր: 19-րդ դ. և 20-րդ դ. սկիզբը նշանավոր է եղել հայկական մատնական օբյակների հիմնադրմամբ:

Իրարամերժ կուսակցություններ ու միություններ, տարբեր եկեղեցիներ, դասակարգեր, մատնականություն... Այս ամենը բերում է ազգային մի «հիվանդության ծայրակետի», երբ սկսում են «համարձակորեն» բարձրաձայնել սեփական ազգի խոցերի մասին՝ ավելորդ սորկամտություն, այլ ազգերի նկատմամբ չափից

ավելի երկրպագում, ի վնաս սեփական ժողովրդի, և անհանդուրժողականություն՝ ազգակցի նկատմամբ: Չէին կարողանում անվերապահորեն ընդունել ամենակարևորը՝ թե *հայ ժողովրդի ուժը յուր միասնությունն մեջ է*: Հենց այսպիսի ծվատված վիճակն է ժողովուրդներին մեծագույն ողբերգությունների հասցնում:

\* \* \*

Օսմանյան կայսրության դիվանագիտական առաքելությունները չեն սահմանափակվել տարբեր երկրների ներկայացուցչությունների մաս կազմելով ու զխավորելով: Սուլթանի կողմից եվրոպական արքայական դեմքերին տարբեր առիթներով ներկայանալու, մվերներ, շքանշաններ հանձնելու կարևոր արարողությունների, միջազգային ցուցահանդեսներում և արքայական ընդունելություններում, ուր անհրաժեշտ է եղել ելույթներ ունենալ, որպես կանոն, տեսնում ենք ոչ թե դեսպան թուրք փաշաներին, այլ հիմնականում նրանց հայ խորհրդականներին: Նրանք լավագույն փոխհարաբերություններ են ունեցել այդ երկրների մտավորական, գիտական, մշակութային ասպարեզները ներկայացնող գործիչների հետ. դարձել բազմաթիվ գիտական կենտրոնների ու ակադեմիաների անդամներ, պատվավոր կոչումների արժանացել:

Հայազգի պաշտոնյաները, մույնիսկ՝ թարգմանչի կամ բժշկի, պալատական մատակարարի պաշտոնում իրավունք են ունեցել անդամակցելու դիվանագիտական բանակցություններին: Մասնավորապես պատերազմական ժամանակներում տարբեր տիպի բանակցությունների ու հաշտության դաշնագրերի ստորագրմանը, միջազգային կազմակերպությունների համաժողովներում, մաս՝ միջազգային ցուցահանդեսներում ներկայացրել են Կայսրությունը, ստորագրել **բազմաթիվ կարևոր համաձայնագրեր, վարել կարևորագույն բանակցություններ**: Մեծ է եղել հայ մասնագետների ներդրումը միջազգային կազմակերպություններում թուրքական կողմի ներգրավման գործում (Կարմիր Խաչ, Կարմիր Մահիկ (հիմնադրաման), Փոստ-հեռագրական, երկարուղային ճանապարհներ, տարբեր ասպարեզների միջազգային ցուցահանդեսներ և այլն):


Մինչ Մեծ եղեռնը նրանց մի մասի պաշտոնաթողությունը և արտագաղթը երկրից սկսվեց Ադանայի կրկնակի կոտորածներից հետո: Մինչ սուլթանական կառավարությունն ամեն ինչ անում էր այն կոծկելու համար<sup>1</sup>, հայ մտավորական և դիվանագիտական խավի մի մասը ամեն ինչ արեց իր համակիր շրջանակի միջո-

1 Փարիզում, օրինակ, շուրջ երեք տասնյակի չափ ճանաչված պարբերականներ, որոնք կաշառվել էին սուլթանական պալատի կողմից, լուրջում պահպանեցին Ադանայի ջարդերի առթիվ:



ցով, որպեսզի եվրոպական տերություններն իրագեկվեն այս ոճրի մասին և Եվրոպան ցնցվեց այդ ջարդերից: Սստեղծվեցին հայերի օգնության ու բարեկամության առաջին միությունները: Մուքանական դիվանագիտության կարկառուն հայազգի շատ դեմքեր համիդյան ջարդերից հետո հուսալքված էին: Նրանց մի մասը հրաժարվեց իր պաշտոններից և արտագաղթեց՝ չցանկանալով կամ չկարողանալով ծառայել այն երկրին, որին նվիրվել էին, հուսալով որ սեփական ազգի ապահովության ու անկախության համար իրենց ներդրումն են ունենալու: Նրանց որոշ մասի սպանությունն ու արքորը թուրքական կառավարության երախտագիտության ապացույցներից կարելի է համարել:

**Զիկուցունը կարդացվել է Հայագիտական 2-րդ միջազգային գիտաժողովում (Երևան, 17-19 հոկտեմբեր, 2013թ.)**



**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ ՍԵԼՁՈՒԿՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ  
ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ  
11-139-Գ. ՀԱՅԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՍԵԼՁՈՒԿՅԱՆ  
ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ**

Հայկական մատենագրությունը հարուստ նյութեր է տրամադրում ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների ու ժողովուրդների պատմության մասին:

Պատերազմների և բազմաթիվ արշավանքների պատճառով, դժբախտաբար, այս ձեռագրերի մեծ մասն անվերադարձ կերպով ոչնչացվել է: Շնորհիվ մեզ հասած մի քանի աղբյուրների հնարավոր է դառնում շրջնիատել պատմության ժամանակագրական թելը: Դրանք հայ ժողովրդի փառավոր և կամ՝ ողբերգական պատմության տարբեր շրջանների մասին փաստող ժամանակագրություն-պատմություններ են: Վերջիններիս թվին են պատկանում սելջուկյան արշավանքների շրջանում և այդ մասին ստեղծված որոշ ձեռագրեր:

Հայկական ժամանակագրությունների անհերքելի առավելությունը դրանց անվերապահ վստահելի աղբյուրներ հանդիսանալու հանգամանքն է, մանավանդ որ այդ ձեռագրերը հիմնականում ականատեսների վկայություններ են: Սիայն այսպիսի վավերական վկայություններն են, որ կարող են դիմանալ ժամանակի քննությանը:

Համաձայն հայկական և բյուզանդական սկզբնաղբյուրների, մեր երկրի վրա սելջուկյան առաջին արշավանքները սկսվել են 1016-1021թթ., երբ նրանք արշավել են Արծրունիների Վասպուրականի թագավորության վրա: Հետագա արշավանքները տեղի են ունեցել 1029-1045թթ., որոնք ուժասպառ են արել Հայաստանը, կործանման հասցրել Բագրատունյաց թագավորությանը:

Արշավանքների 2-րդ շրջանը սկսվել է 1045-1063թթ., Թուրքիի Բեկի հրամանատարությամբ: Մինչ այդ, հայկական 50 հազ. բանակը, որ գտնվում էր հայկական թագավորության սահմաններին, բյուզանդացիների կողմից ցրվում և փոխարինվում է վարձական զորքերով: Այս փոփոխությունից մեծապես օգտվում է սելջուկյան առաջնորդ Ալփասլանն (1063-1072թթ.), իր 100 հազարանոց զորքով Հայաստան ներխուժելիս:

**Արիստակես Լաստիվերցի** (Ա.Լ.) 11-րդ դարի պատմաբան, որն ականատեսի իր վկայություններն է մեզ թողել: 1072-79թթ. սելջուկյան արշավանքների մասին պատմող նրա երկի ձեռագրերը գտնվում են Երևանում, Վենետիկի, Երուսաղեմի հայկական միաբանությունների ձեռագրատներում: Արիստակես Լաստիվերցու «Պատմությունը» բաղկացած է 25 գլուխներից, հիշատակարանից: Առաջաբանը

գրի է առնված ողբի ձևով և նկարագրում է 1047-1048թթ. ահասարսուռ դեպքերը:

1045թ. կործանվեց Անիի թագավորությունը: Համաձայն Լաստիվերցու, Հայաստանը 3 ավերիչ արշավանքների զոհ էր դարձել, մինչև որ «երկիրը չը ցամաքեց և անասունների ձայնն էլ լռեց»:

Սելջուկների 15 հազ. զորքը գրավեց Վասպուրականը: Իր «Պատմության» 23-25 գլուխները եզակի են իրենց աղբյուրագիտական արժեքով և ներկայացնում են 1042-1043թթ. պատմությունը: Այս մասին ուրիշ աղբյուր գոյություն չունի: Այս 3 գլուխները լույս են սփռում Բջնիի մատույցներում Գազիկ Բագրատունի թագավորի և Գրիգոր Պահլավունու ղեկավարությամբ հայերի տարած եզակի հաղթանակներից մեկի վրա: Սելջուկները ստիպված էին վերադառնալ Ատրպատական:

Առաջին անգամ Ա.Ն. «Պատմություն»-ը հրատարակվել է 1844թ. իսկ գիտական հրատարակությունը՝ 1963թ.: Այս աշխատասիրությունը երկու անգամ թարգմանվել է ֆրանսերեն, ապա՝ վրացերեն ու աշխարհաբար:

Մատթեոս Ռոտհայեցի (Մ.ՌՌ) պատմագիրը ծնվել է 11-րդ դ. երկրորդ կեսին, Եղեւսիայում: Մահացել է 1144: ՄՌՌ. հոգևորական էր: Իր «Ժամանակագրություն»-ն ընդգրկում է 1112-1138թթ. շրջանը և բաղկացած է 3 մասերից: Ըստ իր նկարագրության՝ «սելջուկներն ունեցել են կանանց մեծ մազեր, սարսափազոտ դեմք և կռվելու որոշակի եղանակ: Անկարելի էր պաշտպանվել նրանց արձակած նետերից: Նրանք չէին պատվում ծերունիներին, չէին մեղքանում երիտասարդներին և չէին խնայում մանուկներին: Ամենուրեք ծերունիների հոշոտված մարմիններ էին ու ճերմակահեր գլուխներ՝ արյան կույտերի մեջ»: Այս կորուստներն անդառնալի էին: Մ.Ռոտհայեցու գործը շարունակեց Գրիգոր Երեցը, որի նկարագրած ժամանակաշրջանը հասնում է մինչև 1162թ.:

Պատմվում է պատմական Աղձնիք քաղաքի ողջ բնակչության կործանման մասին: Այն մասին, որ Բասենի հովտի Կապուտրիի բերդի մոտի ճակատամարտից հետո բազմահազարանոց զերիների թվում եղել են մաս բյուզանդացի ազնվականներ:

1053 թվականը նշանակալի դարձավ Գ-ղմուշի հրամանատարությամբ սելջուկյան 60 հազ. զորքի դեմ հայերի տարած հաղթանակով: Գ-ղմուշը ստիպված է եղել նահանջել մինչև Դվին:

Մ.Ռոտհայեցին, ինչպես նաև Մմբատ Սպարապետը հայերի բոլոր անհաջողությունների ու ողբերգությունների համար պատասխանատվությունը բյուզանդական պալատին ու նրա վարած քաղաքականությանն էին վերագրում:

Չմոռանալ նշել, որ բյուզանդական կայսրերը նահանջելով սելջուկներից, իրենք ևս կործանել են հայկական քաղաքներն ու վանքերը:



Հերթական անգամ Հայաստանը պարտվում է Թուրքիլ Բեկի (1025-1063) և Ալփասլանի (1063-1072թթ.) արշավանքների արդյունքում:

Հարավային Հայաստանի վրա կատարված արշավանքների հետևանքով 1029թ. ականատեսների վկայությամբ «չքնաղ գեղուհի ստրկուհիների թիվն այնքան մեծ էր, որ նրանց վաճառում էին 5 դինարով, իսկ ստրուկ տղամարդիկ ձրիաբար էին տրվում»:

Պատմաբան Վ.Գեյցերի կարծիքով 1071թ. Մանազկերտի ճակատամարտը հանդիսացել է Բյուզանդական կայսրության «հուղարկավորման օրը»: Մելչուկյան բարեօրոշության եզակի վկայություն կարել է նկատել Ալփասլանի կողմից Ռոմանոս Դ. կայսեր ազատ արձակումը և խաղաղության դաշնագրի ստորագրումը: Մակայն, թագադրված Միքայել է Դակուկաս Պարապիմակես կայսրը (1071-1078) ոչ միայն չընդունեց այս դաշնագիրը, այլև կուրացրեց նախկին կայսերը:

1097-1165թթ. գրավեցին Մեթաստիան, Կեսարիան և Մելետինը:

Կան կարծիքներ այն մասին, որ Դանիշմենդների ամիրայական տոհմի հիմնադիր Տիլու Դանիշմենդը ծագումով հայ էր, որը հետագայում կրոնափոխ էր եղել ու մուսուլման դարձել: Նրա նախկին անունը Ռադ Լիպարիտյան է եղել: Այս մասին հատուկ ուսումնասիրություններ ունեն Վ.Գարբուզևան, Ս.Երեմյանը, Արամ Տեր-Ղևոնդյանը և ուրիշներ:

Վերոհիշյալ հարցերի մասին ուսումնասիրություններ ունեն հայտնի պատմաբաններ Մ.Ջուլյանը, Ս.Աղաջանովը, Կ.Յուզբաշյանը, Ստ.Օրբելյանը, Ա.Ալպոյաճյանը և ուրիշներ:

13-րդ դ. Դանիշմենդների հզորությունն այնքան մեծ էր, որ նրանք սկսեցին սպառնալ Իկոնիայի սելջուկներին: Այդ թվականներին Հայաստանը բաժանվեց էմիրությունների, իսկ քաղաքական միասնությունն իսպառ կորավ:

\* \* \*

Մելչուկյան շրջանից մինչև մեր օրերն են հասել հուշարձաններ, որոնց ճարտարապետներն ու շինարարները գլխավորապես հայեր են եղել: Մենք նկատի ունենք

- Սվազի «Գյոթ մեդրեսեն», որի ճարտարապետն է եղել Արդուլլահի որդին Գ-այուկը (կամ Գելուկը, 13-րդ դ.), Արդուլլահ անունը, որպես կանոն, տրվում էր հայ որդերին: Այստեղ, «Բուրջիյե մեդրեսեի» մեջ, հանգչում է կաթոլիկ եկեղեցու ամենասիրված սրբերից հայագրի սուրբ Վլասը (3-րդ դար), որի տապանաքարի վրա արաբերենով մարդկանց ու կենդանիների բուժելու բազմաթիվ դեղատոմսեր են արձանագրված: «Գյոթ մեդրեսեն»-ի խոյա-

կի տակ կա արձանագրություն. «կառուցել է Գալուկը 1229թ.»։ Այսպիսի արձանագրություն կա նաև կողքի շատրվանի վրա:

- Տիվրիկի մեծ մզկիթը և հիվանդանոցը կառուցված 1228-29թթ. Ահմադ շահի պատվերով: Կամարի վրայի արձանագրությունն ասում է, որ շինությունը կառուցված է Ախլաթցի Խուրշահ իբն Մուղիթի կողմից: Մուղիթ անունը արաբները տալիս էին քրիստոնյաներին: Խուրշահի հայերեն հնչյունն է՝ «Խոսրով»: Այս անունը, որ նախապես տրվում էր հայ արքաներին, հետագայում ժողովրդական անունի վերածվեց: Մահմեդական աշխարհում այս անունը չի հանդիպում:
- Մալաթիայի մզկիթի հարավային դռան վրայի 1247թ. հուլիսի 6-ի արձանագրությունն ասում է այն մասին, «որ այս մզկիթը կառուցել է Սելջուկյան սուլթան Ջալալուսովը»: Մյուս դռան արձանագրությունը վկայում է, որ հուշարձանը կառուցված է Ստեփանի որդի Թագվորի կողմից: Երկու անուններն էլ զուտ հայկական են:
- Ռաբիյա խաթունի դամբարանը 13-րդ դարում ըստ մասնագետների կառուցված է հայկական ճարտարապետության ավանդույթներով:
- Կոնիայի հայաճի ճարտարապես Գալուստը, որի անունը «Ինչե միմարե-լի մեղրեսե»-ի և շատրվանի վրա արձանագրված է 1264 թվականով, կրկին հայկական ծագում ունի: Նրա տաղանդը հաճախ համեմատվել է մեծն Միմար Սինանի արվեստի հետ:
- Իգդիրից հարավ, դեպի Քալե դաղ, գտնվում է Ջօրի քարվանսարայը, որի ճարտարապետն է 13-14դդ. Աշոտը: Այս մասին արձանագրությունն ուսումնասիրել և վերականգնել է Լորիս Քալանթարը: 1913թ. արձանագրությունն արդեն ոչնչացված էր, սակայն 1984թ. այս արձանագրությունն ուսումնասիրել է Ժամ Մյշել Թիերին, որը հաստատում է հուշարձանի հայկական ծագումը: Արձանագրությունները ոչնչացնելու դեպքերը, որ հաճախ են պատահում, մեծապես վնասում են հուշարձանների պատմական արժեքի վերականգնմանը:

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ԹՈՒՐԲԱԿԱՆ  
ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ**  
(“TARİH ve TOPLUM” ամսագրում)

“TARİH ve TOPLUM” պարբերականը Թուրքիայում (Ստամբուլում) հրատարակվող հանրագիտարանային ամսագիր է, որը մեծ ժողովրդականություն է վայելում: Այն գլխավորապես պատմաբանասիրական, մշակութային ուղղություն ունի: Ամսագրի մեծ հաջողությունը պայմանավորված է տարբեր շրջաններում նրա հրատարակիչների, հեղինակների գիտական նախասիրությունների բազմազանությամբ, նյութերի ընտրության շահեկանությամբ: Տասնամյակներ շարունակ ամսագրի էջերում ներկայացվում են Օսմանյան կայսրության, հանրապետական շրջանի Թուրքիայում ապրող բազմազգ ժողովուրդներին վերաբերող նյութեր: Դրանք վերաբերում են այս ժողովուրդների կյանքի տարբեր կողմերին՝ սկսած նրանց ծագումնաբանության խնդիրներից, վերջացրած մշակույթի, լեզվի հարցերով, մասնավորապես նրանց ստեղծած բուրբալեզու գրականություններին: “TARİH ve TOPLUM”-ի էջերում հաճախ են հանդիպում հայկական մթնոլորտին առնչվող նյութեր, որոնց մի մասի հեղինակները հայեր են:

Հայերին վերաբերող նյութերում օտար հեղինակների մի որոշակի մասը հետևողականորեն ջանում էր հնարավորինս նսեմացնել հայերի ու հայ գործարար, մշակութային, կառավարող շրջանակների ունեցած ներդրումը՝ դիմելով խեղաթյուրումների ծայրահեղ արտահայտությունների, որոնք, ցավոք սրտի, պոլսահայ նշանավոր մատենագետ Գևորգ Բամպուկճյանի մահվանից հետո մնացել են անպատասխան:

Չմոռանա՞նք ասել, որ բուրբական հանրագիտարանային շատ հրատարակություններ իրականացվել են հայերի կողմից, լինի դա լեզվաբանական, ինչպես Բարսեղ Թուղլաճիի հեղինակային «Օվկիանոս»ը, քե տարբեր ուղղությունների հանրագիտարաններ, հեղինակային մեծ ու փոքր կազմերով: Բնականաբար, այս բոլոր հրատարակությունները պետք է համապատասխանեին բուրբական պատմական ընկերության հիմնական կարգախոսին: Այն է՝ «պատմություն գրելը նույնքան կարևոր է, որքան պատմություն իրագործելը»: Ավելի հակագիտական մոտեցում՝ դժվար է պատկերացնել: Տասնամյակներ շարունակ այս մոտեցումն իրագործվել է հիմնականում օտար գիտնականների ու արտասահմանյան համալսարանների բուրբագիտական ամբիոնների գործունեության շնորհիվ: Այս նպատակով պետական միջոցներից ծախսվել են միլիոնավոր դոլլարներ: Օտար գիտնականների համար Թուրքիայում կազմակերպվել են վերապատրաստման, երկրին ու մշակույթը



«Ծանոթացնող» հատուկ հյուրընկալություններ, գիտական խորհրդատվություն: Միանք ծայրաստիճան քաղաքականացված միջոցառումներ են եղել:

Ամերիկյան մի գիտնական Երևանում մասնավոր գրույցի ժամանակ խոստովանեց, որ իրենք ամեն ինչ յմանալով ու հասկանալով հանդերձ չեն կարող՝

ա. արդար, հայանպաստ գործունեություն ունենալ և

բ. նախընտրում են հայաստանյան իրենց այցելությունները չլուսաբանել, թուրքական կողմի համար տեսանելի չդարձնել, չզրկվելու համար թուրքական սիրալիությունյան հետագա արտահայտություններից:

Արևելագիտական ամենահին (շուրջ 180 տարի առաջ ստեղծված), ամենահզոր միջազգային գիտատնօրվը՝ *ԻԿԼԸԱՄ 38*-ը 2007թ. հյուրընկալվում էր Անկարայում և այն անցավ պետական քարձրագույն մակարդակի վրա: Բացումը կատարեց վարչապետ Էրդողանը, իսկ նրան հաջորդող հայտնի բանախոսներից մեկը քառացի ասաց, որ «իրենք հնագույն, խաղաղասեր ու հրաշալի ժողովուրդ են, որում կհամոզվեն գիտատնօրվի բազմազգ մասնակիցները, սակայն ունեն վատ հարևան, որը միջազգային ասպարեզում շարունակաբար խաղում է իրենց հեղինակության հետ»: Բանախոսն իր դիմում-խնդրանքը գիտատնօրվի մասնակիցներին ներկայացրեց հետևյալ կերպ. «... միջազգային տարբեր հարթակների վրա աջակցեք մեզ մեր այդ թշնամուն հաղթելու, վնասագերծելու համար»: Նույն այս խորհրդատվության շրջանակներում տեղի ունեցավ աղբբեջանա-թուրքական ծայրաստիճան հակահայ քաղաքական մեկօրյա պանել՝ շուրջ 4 ժամ տևողությամբ, ավելի քան 400 աղբբեջանցի և թուրք մասնակիցների ներկայությամբ:

Խեղաթյուրումները, ոտնձգությունները և հակահայ ուղղվածության ուսումնասիրությունները՝ հողվածներից սկսյալ մինչև առանձին ուսումնասիրություններ՝ թուրքագիտական հիմնական քաղաքականության մի քանի արտահայտություններն են՝

- Լուրջամբ անցնել այն ամեն դրականի, կարևորի վրայով, որը հայկական է:
- Թուրքացնել հնարավորինս շատ քան (սա հիմնականում հաջողությամբ է ընթացել հայկական բանախոսության, աշուղական գրականության և թուրքերենով արտահայտված աշուղներին թուրք ներկայացնելու մեջ):
- Խեղաթյուրել հայկական մթնոլորտի որոշ ասպարեզներ, ներկայացնել այն որպես թուրքական և ավելին՝ այս ամենը պատճառաբանել հայերի ինքնակամ ցանկությամբ, որոնք սիրով լքել են իրենց լեզուն, ծովվել թյուրքական ազգերին, համատեղ ստեղծելով իրական արժեքներ (հայաստառ ղփչաղներենը ներկայացվում է որպես «քոչվոր հայերի»)՝ ինքնակամ ղփչաղ դարձածների գրական համատեղ ժառանգություն):

- Գնակատագրական տարբեր առիթներով հայերին մեղավոր ճանաչելու հետևողական քաղաքականություն:
- Առանձին հայ անհատների թուրքացման, կամ նրանց զուտ թուրքական մթնոլորտի ու դաստիարակության, սուլթանական շնորհների արգասիք հանդիսանալու ձգտում:
- Քիչ չեն ուղղակի ու բողազերծ սուտ մեղադրանքները, տարբեր առիթներով, տարբեր մակարդակներով հեռու գնացող որոգայթ-ուսումնասիրությունները և հարձակումները: Այն այսօր հիմնականում թուրքական մթնոլորտին ծառայող օտար ծագումով հեղինակների գործունեության քնորոշ գիծն է:

“**TARİH ve TOPLUM**” ամսագրում նյութերը վերաբերում են ամենատարբեր ժամանակաշրջանների, տարբեր ասպարեզների, որոնք այս կամ այն չափով աղերսներ ունեն թուրքական իրականության հետ: Ահա մի համառոտ ցանկ՝ ամսագրում հրատարակված հայկական բովանդակությամբ հոդվածների. «Օսմանյան կայսրության ամենաերևելի դիվանագետներից, երկարամյա արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանի մասին», հայ ամիրայական տոհմերից արքունի ճարտարապետներ Սերվերյանների, Պալյանների գործունեության մասին, թուրքական դասական երաժշտության ու երաժշտական քատրոնի հիմնադիր Տիգրան Չուխաճյանի, հրատարակիչներ Ջարդարյան տոհմի, մատենագետ Երեմիա Չելեպի Քյոնուրճյանի թուրքերեն երկերի, Մյսիթարյան միաբանության հրատարակությունների, թուրքերեն լեզուն ընդլրկող ձեռագիր և տպագիր հայկական բառարանների, հանրագիտարանների հեղինակներ Արմենակ Բեդեյանի, Մլքայել Ռեստունի, լեզվաբան Արթին Հինգոլյուի, առանձին հայատառ թուրքերեն պարբերականների, օսմանյան որոշ սուլթանների ժամանակագրությունը ներկայացնող հայերեն և հայատառ թուրքերեն եզակի ձեռագրերի, հայատառ թուրքերենի, հայատառ դիշաղերենի, Մտամբուլի պատմության կարևոր դեպքերի մասին վկայող հայկական մատենագրական աղբյուրների, ճարտարապետ Սինանի հայկական արձատների (հեղինակ՝ Հակոբ Սվալյան), ժամանակակից նշանավոր թուրք գյուղագիր Գրիգոր Մարկոսյանի, հայկական թատերախմբերի ու առանձին դերասանապետերի մասին, միջազգային ցուցահանդեսներում հայերի կարևոր մասնակցության (սկսած 1867թ. փարիզյան ցուցահանդեսից), ամգամ հայերի կողմից ստեղծված հայատառ քրդերեն գրականության մասին և այլն: Քանի որ դրանց գերակշռող մասի հեղինակը պոլսահայ մատենագետ Գևորգ Բամպուկճյանն էր, ապա հնարավորինս ներկայացվել է ոչ միայն հոդվածում ներկայացվող անձը, գործը և ներդրումը Օսմանյան կամ Հանրապետական Թուրքիայի կյանքի տարբեր ոլորտներում, այլև նրա ազգաբանությունը, երկրին ունեցած նրանց ծառայությունները:

Որպես ներդիրներ՝ տուպագրվել են հայ կոմպոզիտորների օսմանյան սուլթաններին նվիրված քայլերգերը, որոնցից շատերը երաժշտական գոհարներ են՝ մեզ համար համարյա անհայտ ու չգնահատված: Հայկական մշակույթի այս կամ այն ոլորտի թուրքացմանն ուղղված հողվածներն ու ուսումնասիրությունները շարունակվում են: Այն մաս է կազմում Թուրքիայի գիտական քաղաքականության:

Թուրք հեղինակների բավականին կարևոր և հետաքրքրություն ներկայացնող հողվածներում, եթե տրվում են անզամ հայկական անուններ, ապա՝ առանց նրանց հայության վրա շեշտադրումներ կատարելու: Բազմաթիվ հողվածներում, ուր նյութն անմիջականորեն առնչվում է հայազգի պետական այրերի գործունեության հետ, ազգային պատկանելության հարցը հիմնականում շրջանցվում է: Այսպիսին են թուրքական տնտեսությանը, ֆինանսական, փոստային համակարգին վերաբերող ուսումնասիրությունները, որոնց կայացման մեջ հայ նախարարների ու մասնագետների դերն անգնահատելի է եղել: Սա մենք փորձում ենք քննադատել մահ հայկական աղբյուրներին անձանոք մնալու փաստով: Արևմտահայ մթնոլորտում տեղ գտած տիաճ, աղմկահարույց կողմերի մասին գրել են հիմնականում Պոլսում գործող հրեա գիտնականները, որոնցից ամենահայատյացներից է Ռոբերտ Անհեզգերը, Հալաճողուն: Առաջինի գրչին են պատկանում առաքելական-կաթոլիկ՝ հասունյանական պայքարի շրջանին վերաբերող ծաղրանքով պարուված հողվածները:

Ընդհանրապես թուրքական պատմագիտական գրականությունը, որ մինչ օրս լեցուն է եղել արևմտահայության պատմության, մշակույթի խեղաթյուրմանն ուղղված աշխատություններով, այսօր մի պահ կարծես զգոնացել է: Գիտակցվում է առանց հայկական աղբյուրների սեփական իրական պատմագրություն ունենալու անհնարինությունը: Գրադարաններում ու քաղաքային արխիվներում հայերեն ու հայատառ թուրքերեն առեղի քանակի նյութերը անձեռնմխելի են մինչ այսօր, որոնք պիտի մասամբ լրացնեն պատմության քաղմաթիվ ճեղքակ էջեր: Ամենակարևորը, որ ուզում է իմանալ թուրքական կողմը, այն է, թե ինչ են ներկայացնում իրենցից այս նյութերը: Այս խնդրի լուծմանն են ուղղված հայկական դասաժամերի քացման գործընթացը՝ թուրքական տարբեր համալսարաններում:

Հրատարակվում են մի շարք աշխատություններ, որոնցում օգտագործված արխիվային նյութը մինչ օրս մեզ անհասանելի էր: Իհարկե, դրանց մի մասը հրատարակվում է դրսում, սակայն Թուրքիայում հրատարակվածների արժեքն էլ շատ մեծ է: Եթե դրանց հեղինակները հայեր չեն, ապա զգալի է հայկական նյութի օգտագործմամբ դրանց լիարժեք լինելու պակասը: Մեծ աշխատանք է տարվում Արևմտահայաստանի հայաշատ մահանգների մասին ուսումնասիրությունը



ստեղծելու ուղղությամբ՝ տեղի մշակույթը, սովորություններն ու արհեստները թուրքական ներկայացնելու միտումով: Դրան հաջորդող քայլը՝ պարզ է: Թուրքական հեռուստատեսության ծրագրերի շուրջ 30 տոկոսը գիտական, քաղաքագիտական, մշակութային երկխոսությունների վրա է կառուցված՝ ապահովելով ամենօրյա լուրջ շփում տարբեր ոլորտների գաղափարախոսության հետ, իսկ մյուս ալիքները՝ 3, 4-ը, ուսումնական կարևոր, օգտակար հաղորդումներ են, որտեղից էլ երբեմն ականատես ենք լինում խեղաթյուրման հերթական օրինակներից:

Այսօր պոլսահայ մի քանի ականավոր, համարձակ հայ հեղինակներ նախընտրում են թուրքերենով, անգլերենով հրատարակել հանրագիտարանային արժեքի շքեղ գործեր, իրենց աշխատություններում ներկայացնելով հայկական եզակի հարստության փաստական նյութ: Սա կանխում է նույն բովանդակության թուրքական նյութերով իրական փաստերի խեղաթյուրման սովորույթը՝ միաժամանակ գերադասելի դարձնելով հայկական աղբյուրների գիտական օգտագործումը:

Թուրքական մթնոլորտն այսօր նախընտրում է ինքը զբաղվել իր պատմությամբ, քանզի օտարները թուրքական միլիոնների փոխարեն եթե ասպարեզ մտցրին ցանկալի բովանդակության գրքեր, ապա շուտով դրանք դարձան միջազգային գիտական լուրջ շրջանակների համար անընդունելի, շինծու գործեր, որոնք միայն ամոր են բերում թուրքական գիտական մտքին:

Թուրքական ուսնձգությունների դեմ պայքարի միջոցները ակնհայտ են, սակայն դա այլ զեկուցման նյութ է: Պայքարն առջևում է, և այն դժվարին է, որի դեմ չենք կարող լիարժեքորեն պայքարել ամոթխած մենախոսությունների մնամվող հայերեն գործերով, լոկ հայկական շրջանակով ամփոփված, առանց ընդդիմախոսների ներկայության կարևոր գիտաժողովներով, ինչպիսին այսօրվանն է:

*Ձեկուցումը կարդացվել է «Պատմություն և մշակույթ. Ընդդեմ կեղծիքի և ուսնձգության» Հանրապետական գիտաժողովում. (Երևան, 2011, 4-6 մայիս. ՀՀ Պաշտպանության նախարարություն):*

## ՀԱՅԵՐԻ ՆՊԱՍԵՐ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐԱՌԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԻ ՔԱՆԻ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ

Այս տարի, 2011թ. լրացավ Թուրքիո Հայոց Պատրիարքարանի հիմնադրման 550 ամյակը: Մեր զեկուցումը նվիրում ենք այս հիշարժան հոբելյանին, որի մեծագույն դերն արևմտահայության գոյատևման պատմության մեջ անհնարին է գերազմահատել: Առանց նրա անհնարին է պատկերացնել արևմտահայության ճակատագիրը մեր ժողովրդի պատմության ընթացքում:

Օսմանյան կայսրությունում մեծ է եղել հայերի դերը կյանքի ամենատարբեր ասպարեզներում: Պալատական, վարչական բարձրագույն պաշտոններ, դիվանագիտական և հյուպատոսական կարևորագույն ծառայություններ, մշակույթի և գիտության տարբեր ասպարեզներ, տպագրություն ու հրատարակչական գործ, արհեստներ, վաճառականություն, սեղանավորություն, գյուղատնտեսություն ու արդյունաբերություն, առողջապահություն, լուսավորական շարժման, ինքնուրույն և թարգմանական գրականության ու լրագրողական մշակույթի ձևավորում, նոր բնագավառների կազմավորում և այլն:

Օսմանյան կայսրության մշակույթում հայկական ներդրման, հայկական ժառանգության օրինակների մի մասը շոշափելի են, տեսանելի, ակնհայտ: Մյուս մասը, որ գաղափարական է, հոգու և տաղանդի ա՛յլ դրսևորում, որքան էլ որ հսկայական է եղել դրանց ազդեցությունը, այսօր մնացել են ժամանակի հիշողության մեջ, թուրքացման վտանգին հանդիման, բեկուն: Այն կարոտ է պաշպանության, շարունակական ուշադրության, ուսումնասիրության: Դ-ա՛ գրականությունն է, թատրոնը, երաժշտությունը, հրատարակչական գործը, որոնք ժամանակին մեծագույն ներդրում են ունեցել կայսրության լուսավորական կյանքում:

Հայկական **ճարտարապետությունը, քաղաքաշինությունը** առաջին խմբին է պատկանում: Կայսրության հայագգի արքունի ու նշանավոր ճարտարապետների ամունների մեր ցուցակը հասնում է հարյուրի: Դեռևս սելջուկյան ժանրագույն շրջանում նրանց ամենահայտնի սրբավայրերի, դամբարանների, մինչ օրս պահպանված մզկիթների, մեդրեսեների ու բյուրեքների ճարտարապետներն ու կառուցողները հայերն են եղել: Գ-ալով Օսմանյան կայսրությանը, այն առլեցուն է հայ ճարտարապետների գործերով: Վերջին շրջանի ճարտարապետության փառքերից Պալյաններն ու նրանց հետևորդները իսպառ փոխեցին ոչ միայն Պոլսի, այլև մի շարք քաղաքների տեսքը, դառնալով եվրոպական ոճի խոշոր կառույցների ներմուծողները: Նրանց կառուցած պալատները, ասպարանքները, խաները, վարչական ու զինվորական շենքերը, մզկիթներն ու առանձին հուշարձաններ մինչ

օրս զարդարում են կայսրությունը, հանդիսանում Թուրքիայի զբոսաշրջության կարևոր մագնիսները:

**Ոսկերչությունը և արծաթագործությունը<sup>1</sup>, աղամանդահեղչությունը** եղել է հայերի մենաշնորհներին: Մինչ այսօր արծաթագործության փնտրված որոշ տեսակների կրում են հայկական «Ազնավուր», ինչպես նաև՝ «սևաղա» անունները: Հայ վարպետների շնորհիվ դրանք տարածվել են Արևելքի երկրներով մեկ, իսկ դրանց մուշները զարդարում են աշխարհի թանգարանները, եղել աշխարհի տարբեր տիրակալների պատվերներ ու սուլթանների կողմից նրանց ուղղված նվերներ: Այս բնագավառը ներառել է 20-ից ավելի նեղ մասնագիտություններ՝ արքունի ոսկերիչներից, որոնք ղեկավարել են դրամահատարանը, դրամներ, պալատական թանկարժեք զարդեր հեղինակել, մինչև՝ շուկայի ոսկերիչների հռչակավոր դասը: Նրանք են հեղինակները օսմանյան շքանշանների ու զինանշանների: Այս ոլորտն ուղեկցվել է բազմաթիվ հայտնագործություններով ու որոշների գաղտնիքներն էլ, մինչ օրս մնացել են անհայտ: Հայ ոսկերիչների տաղանդը հիացրել է եվրոպական արքունիքներին իր ճաշակով ու մեծ վարպետությամբ:

Ժամագործ ոսկերիչներն ու **զինագործները**, ոսկե ու արծաթաթել գործերը, հյուսվածքները ևս պատվավոր տեղ ունեն կայսրության մշակույթի, կիրառական արվեստի զարգացման ասպարեզում:

**Արևտառայ երաժշտության** մեջ 1860-ական թվականները հեղաշրջման տարիներ են համարվում, շնորհիվ լիմոնճյանական խազագրության, որը հնարավորություն ընձեռեց նոտագրելու ոչ միայն հայկական, այլև թուրքական, քաղաքային և հայտնի բազմազգ աշուղների գործերը: Երկար տարիներ, երբ հաղթել էր եվրոպական նոտագրությունը, հանրապետական շրջանում, մեղրեսներում ընդդիմանում էին այս նորույթին, ու շարունակում ձայնագրել, դասավանդել թուրքական հոգևոր երաժշտությունը միայն լիմոնճյանական նոտագրությամբ:

Հայ կոմպոզիտորները, երաժիշտ արվեստագետ-կատարողները, նվագախմբերն իրենց մեծ ներդրումն են ունեցել երաժշտության զարգացման գործում: Հրատարակվել են երաժշտագիտական պարբերականներ, առանձին նոտաներ՝ երկրում և Եվրոպայում: Թատրոնին զուգահեռ երաժշտական կյանքը մեծ վերելք է արձանագրել: Այս գործի երախտավորները իտալացիների հետ միասին հիմնականում հայերն են եղել:

Անկարելի է հարգանքի տուրք չճանաչել կայսրության ամենասիրված ու ամեն

1 Այս մասին տես՝ Յովսեփ Թօթաթ. *Հայ արծաթագործ վարպետներ* (հ. և անգլ.): Լոս Անջելես 2005: Վ.Շատտրոբան, *Որումագիծ թրքահայ ոսկերչության պատմություն*. «Շողակաթ» տարեգիրք 1974-76 թթ., Իստանբուլ: Garo Kürkman. *Osmanlı Gümiş Damgaları*, İst. 1996.



նահայտնի, ամենաբեղմնավոր երաժշտին, Տիգրան Չուխաճյանի հիշատակին, որի անունը կապվում է թուրքական օպերայի, կոմիկական օպերաների (օպերետների, որոնց պարտիտուրները հիմնականում հայաստառ թուրքերեն են եղել), քայլերգային, քատերական երաժշտության պատմության հետ: Նրան համարել են թուրքական Օֆիենբախ, պաշտել առաջին օպերային քատրոն հիմնողին՝ իր 100-ից ավել արտիստական մասով, երգչախմբով ու նվագախմբով, քատրոնի դահլիճով հանդերձ: Նա հրատարակել է երաժշտական առաջին պարբերականներից երկուսը: Ժամանակի քատերագիտական, երաժշտագիտական խոսքը տարբեր լեզուներով հիացական հոդվածներ է տպագրել մամուլում, հիմնականում՝ հայալեզու և ֆրանսալեզու: Նրանք երկինք են հասցրել Չուխաճյանի հանճարեղ երաժշտությունը, երբ հիվանդ արվեստագետը լքված ու աղքատության մեջ, քատրոնի խաբեքա սնօրենների կողմից գոփված<sup>1</sup>, Իզմիրում իր մահկանացուն էր կնքում: Ցավոք սրտի մինչ օրս մենք ծանոթ չենք ոչ միայն Տիգրան Չուխաճյանի, այլև արևմտյան երաժշտության գանձարանի մի մասին, օրինակ՝ սուլթաններին ու այլոց նվիրված քայլերգային հրաշալի երաժշտությանը, քատերական ներկայացումների համար պատվիրված գործերին:

Ստամբուլյան, արքունի դահլիճները զբաղված են եղել հայ դերասանների, երգիչների, երգչախմբերի, երաժիշտների համերգներով: Դրանց մեծագույն մասը եվրոպական կրթություն ստացած, արդեն հայտնի դերքեր են եղել: Հրավիրյալ հայ և օտար երաժիշտների հետ համատեղ ելույթներում ժամանակի դասականների հետ մեկտեղ հնչել են հայ կոմպոզիտորների ու նրանց մշակմամբ հայ ազգային գործեր: Հայկական տարբեր տիպի նվագախմբեր տարածված են եղել երկրով մեկ:

Միջազգային ցուցահանդեսներում բազմաթիվ մրցանակներ շահած ու համաշխարհային հռչակ ձեռք բերած **Զիլճյան ընտանիքի ծնծղաները** 1623թ.ից դարձել են յուրատեսակ այցեքարտ (քրեդ) Թուրքիայի համար, մինչ օրս:

Հայկական **տպագրական մշակույթը** արևմտահայության հաղթական դերքերից է եղել: Սա նշանակում է՝ գրահրատարակչություն հայկական բազմալեզու հնարավորություններ ունեցող տպարաններում, տառաստեղծ, տառածույլների մի բանակ, որը ծնունդ է տվել թուրքական տպագրությանը, թուրքական տառատեսակներ ստեղծել, հրատարակել արքունի առաջին եռալեզու պաշտոնաբերքը, **Օսմանյան կայսրությունում առաջին քրթադրամները, պետական, մաքսային տոմսեր, տոմարներ, թուրք հեղինակների գործեր:** Արասյան և Մյուհենդիսյան անուններն այս ասպարեզի փառքերն են հանդիսանում, որոնք իրեն տաղանդա-

1 Թուրքական քատրոնի ֆրանսիացի պատմաբան Ադոլֆ Թալաստոն այդ ժամանակների համար հիշում է սնօրեններից ոմն Սամունելի:

վոր, հարյուրավոր հետևորդներն են ունեցել: Մյուսինդիսյանն՝ «թուրքական Գու-տներբերգի» շնորհիվ են թուրքիա մուտք գործել զալվանիսիսկայի, սրերիտորի-սի, ցինկոգրաֆիայի նորույթները, լինուրիսյ հրապարակությունը: Հարբիլեում (զինվորական վարժարանում) հայ մասնագետները դասավանդել են տպագրա-կան գործ, լիտոգրաֆիա, սղագրություն: Հայ հրատարակիչների անվան հետ են կապվում 44 օսմաներեն, 23 ֆրանսերեն 13 քառալեզու և 120 հայատառ թուրքերեն պարբերականների, ու հազարավոր գրքերի հրատարակությունները:

Հայատառ թուրքերեն պարբերական հարուստ մամուլը, նրա էջերում տպագր-վող ինքնուրույն ու քարզմանական, մասնավորապես ֆրանսիական արկածային գրականությունը օրը օրին, սովորության ուժով կարդացվում էին հասարակական վայրերում, սրճարաններում, թեյարաններում, պաշտոնատեղիներում՝ հարյուրա-պատիկ մեծացնելով ընթերցողների շրջանակը:

Հայատառ թուրքերեն գրականությունն Օսմանյան կայսրության եվրոպակա-նացման, նոր գաղափարների ներթափանցման, զարթոնքի ընդհանուր շրջանի ծնունդ տվողներից ու շարժիչ ուժերից է հանդիսացել: Ստեղծվել է մեծաթիվ գրա-կանություն: Այդ թվում՝ օսմաներեն լեզվի ուսուցման դասագրքերի, բառարաննե-րի աննախընթաց առատություն: Ամենից շատ այն օգնել է նոր թուրքերեն լեզվի կայացմանը, նրա բառացանկի հարստացմանը: Հայ լեզվաբանների հեղինա-կած թուրքերենի (հայատառ թուրքերենով, օսմաներենով) դասագրքերով սեփա-կան լեզուն տասնամյակներ շարունակ սովորել են թուրքերը, տարբեր նորաբաց մասնագիտական, նույնիսկ զինվորական ուսումնական հաստատություններում՝ հայատառ թուրքերեն մասնագիտական գրականության հետ միասին: Հայատառ թուրքերեն գրականությունն օգտագործվել է ստեղծելու համար կայսրություն մուտք գործող գիտության, տեխնիկայի, գյուղատնտեսության, արհեստների ու մշակույթի գրականություն, որը կոչված էր ծառայելու ոչ միայն հայ, այլև Օսման-յան կայսրության թուրքախոս ազգերին, թուրքերին: Ի տարբերություն օսմաներեն հրատարակություններին, նույն այդ տարիներին հրատարակված գրքերը այսօր էլ դյուրությամբ կարդեցվում են, մինչդեռ առաջինները կարդալու համար թուրքե-րը ստիպված են այն այսօր քարզմանել: Նրանք չեն կարողացել քարզմանել այն, ինչ կայսրությունում չի եղել և անձանոթ էր իրենց: Մինչդեռ հայ քարզմանիչները, շնորհիվ լեզվաբանի իրենց հոտառությամբ, լեզուների իմացությանն ու բառաս-տեղծի տաղանդին, ծնունդ են տվել նոր գրական թուրքերեն լեզվին, բազմապատ-կելով նրա բառացանկը, մեծապես նսև՝ ի հաշիվ եվրոպական բառերի:

Հայատառ թուրքերենը եղել է կենդանի օրգանիզմ և ծառայել է ողջ կայսրու-թյան շահերին: Ի գուր չէ, որ պալատական շրջանակներում 19-րդ դարի կեսերին օս-

մաներեն լեզվի արաբական այբուբենը հայկականով փոխարինելու հարց է առաջացել, որի կենսունակությունն արդեն ապացուցված էր:

Մտավորականությունը, մասնավորապես թուրքերը ոչ միայն սովորել են հայկական այբուբենը և ամեն օր կարդացել այդ թերթերը, այլև համագործակցել են դրանց, մախրնտրելով այն օսմաներեմով հրատարակվողներից:

Այս երևույթի կարևոր շարունակությունը պիտի համարել կայսրության մշակութային կյանքում այնպիսի հզոր մի ինստիտուտի ներդրումը, ինչպիսին **թատրոնն** է:

Ամենահայտնի թուրք լուսավորիչ գրող Նամըք Քեմալն այս առթիվ ասել է՝ «Թատրոնը զվարճություն է, սակայն զվարճություններից ամենաօգտակարը»<sup>1</sup>:

Պոլսահայ կյանքում թատրոնը մուտք է գործել 1820-ականներին: Սկզբում դրանք թատերական ներկայացումներ էին հարուստ, առաջադեմ եվրոպասեր ու արվեստների հովանավոր ամիրաների, մասնավորապես Բոսֆորի վալի Պեճգյանների, Տյուզլանների, Պալյանների ապարանքներում, փարիզյան մմանողությանը սալոնային երեկոների ընթացքում, ուր հավաքվել է Պոլսի տարբեր ազգերի ու տարբեր ոլորտների սերուցքը: Բեմադրել են Ռ-ասիմ, Վուլտեր, Մոլիեր...

Գրականության, քնդիանրապես արվեստասեր մտավորականության ու մտավորական ընտրանու «ընտանեկան» այս հավաքույթները երկար ժամանակ շարունակվել ու ավանդույթ են դարձել՝ մեծապես ազդվելով ժամանակի առաջադիմական մթնոլորտից, առիթ տալով տաղանդավոր անհատների միմյանց հետ շփմանն ու պոլսահայ գաղութի ոսկե կռիվի գոյացմանն ու նրա զարգացմանը:

Հայկական տարբեր թատերախմբերի (մինչև 400 հոգանոց անձնակազմով) գործունեությունը, նրանց ֆրանսերեն, իտալերեն, թուրքերեն, հունարեն ներկայացումներին է անդրադարձել Ադուլֆ Թալասոն:

Թուրքական թատրոնի հայտնի պատմաբանը, որ տարիներ շարունակ Պոլսում հետևել է թատրոնի զարգացմանը, հիացմունքով է գրում հայ թատերախմբերի, հայ դերասան-դերասանուհիների, դերասանուհիների մասին: Նա այնքան էր ոգևորված հայ դերասանուհիների արվեստով, որ նրանց նկարագրելու համար առանձին հատվածներ է նվիրել իր գրքում: Կրակոտ օպերետային աստղ Երանուհի Գարագաշյանին համարել է թուրքական բեմի Շնադերը: Նրա քույրը, Եվզինե Գարագաշյանը, որն անմոռաց է եղել կատակերգական դերերում, օսմանյան բեմի իրական մադամ Կոլբ էր, իր քնքույշ ձայնով: Մարի-Նվարդին Թալասոն համարել է ամենաբնական խաղին տիրապետող դերասանուհի: Ավելին, ամենայն հավանականությամբ նա ներկա է զանվել դերասանուհու ճակատագրական վերջին ներկայացմանը, ուր Մարգարիտ Գոթիեյի ողբը նաև իրական տանջանքների

<sup>1</sup> Türk Dili, Ist., 1966, cilt XV, s. 178, 699, (Celal Mukaddemesi, 1885).



արտահայտություն է եղել ու հերոստիհու մահը միախառնվել է բեմում դերասանուհու ողբերգական մահվան հետ:

Հիացմունքի տողեր են ցվիրված եղել տիկնայք Հեքիմյանին, Աճեմյանին, որոնց թուրք թատրոնի մասին ուսումնասիրության հեղինակը մտավորական ու դերասանական մեծ արժեք է վերագրել: Նա հիացել է Սիրամուշ և Աստղիկ քույրերի ոչ միայն արտակարգ տաղանդով, այլև քանդակային գեղեցկությամբ:

Թալաստն արևմտահայ մեծ բեմադրիչ Գյուլլի Հակոբին վերաբերվում է ոչ միայն որպես հզոր դերասանապետի, այլև մեծարժեք դերասանի, որին ժողովուրդը սիրել է, պաշտել ու լեզենդի վերածել:

Տաղանդավոր դերասան, արժեքավոր ցկարիչ ու տաղանդավոր քանաստեղծ Պետրոս Աղամյանին համարում է օսմանյան բեմի ամենամեծ դրամատիկ աստղը: Նա «Արևելքի Մունե-Սյուլլի է, որ կարողացել է մտնել իր յուրաքանչյուր հերոսի մաշկի տակ»: Իտալացի մեծանուն դերասան Էռնեստո Ռոսսին, որ ուղեկցել է նրա մահվան թափորը, Աղամյանին համարել է իր հանդիպած արտիստական ամենամեծ ոգի ունեցող դերասանը և որի մահը մեծագույն կորուստ էր թուրքական թատրոնի համար<sup>1</sup>:

Ըստ Թալաստոյի հայկական թատերախմբերի մեկ տարվա խաղացանկը փարիզյան ամենահայտնի, մեծ թատրոնի ռեպերտուարի կրկնակին, եռակին, քառակին է եղել:

Հայաստառ թուրքերենը եղել է հայկական թատերախմբերի աշխատանքային լեզուն: Հայաստառ թուրքերենով են գրել, թարգմանել, փոխադրել հայ թատրոնը շրջապատած թուրք լուսավորիչները՝ ծնունդ տալով թուրքական դրամատուրգիային, թուրք նոր գրականությանն ու գրական «թուրքերենին»:

Հայկական թատերախմբերը, մասնավորապես նրանց թուրքերեն ներկայացումները, նշանակալի դեր են խաղացել Օսմանյան կայսրության ժողովուրդների հոգևոր զարգացման գործում: Այդ բեմադրություններից շատերն ավելի կարևոր են եղել, քան հրատարակված որոշ ստեղծագործություններ: Կայսրությունում անգրագետների ու թուրքերեն կարողալ չիմացողների թիվը հսկայական է եղել, իսկ զարգացած ու թուրքերենին տիրապետողների թիվը՝ սահմանափակ: Գրանք բոլորը միասին դիտել և հասկացել են հայկական թատերախմբերի բեմերից հնչող թուրքերենը:

Այդպիսի ստեղծագործությունների թիվը հասնում է շուրջ 500-ի:

Հակոբ Վարդուկյանի (Գյուլլի Հակոբ) «Օսմանյան թատրոնի» հետ համագործակցության շրջանը թուրք մտավորական երիտասարդների մի կարևոր հատվածի համար ճակատագրական նշանակություն է ունեցել: Հետագայում նրանք լրջո-

1 Thalasso Adolphe, *Théâtre Turc...* էջ 383:

րեն տարվել են գրականությանը, հատկապես թատերական դրամատուրգիայով: Դրանք հանդիսանում են թուրք նոր գրականության դասականների ամենահայտնի ստեղծագործությունները: Եթե չլինեին թուրք հեղինակներին տրվող պատվերները, ապա դժվար թե ստեղծվեր թուրքական դրամատուրգիան, -պնդում են թուրք թատերագետները:

Հայկական թատերախմբերի հետ համագործակցած թուրք մտավորականների ցանկն իրենից ներկայացնում է թուրք նոր գրականության դասականների, լուսավորիչների համարյա լրիվ ցուցակը: Բացի նյութական կողմից, թատրոնը թուրք լուսավորիչներին գրավել է նրանով, որ հենց թատրոնի միջոցով է հնարավոր եղել արտահայտել նրանց ամենամեծ երազանքները և թուրք առաջադեմ մտավորականության արամադորությունները:

Օսմանյան կայսրությունում լուսավորական շարժման զարգացման, կանանց էմանսիպացիայի հարցում նկատելի դեր են խաղացել այդ թատերախմբերի երկրով մեկ կատարած հյուրախաղերը:

Այս շրջանն ուսումնասիրվում է որպես թուրքական ազգային թատրոնի սկզբնավորման, թուրքական նոր գրականության, գրական լեզվի ձևավորման ժամանակաշրջան:

Որպես զեկուցում կարդացվել է «Հայերի դերը Կ.Պոլսի մշակութային կյանքում»  
ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
համատեղ գիտաժողովում, (16.09.2011, Երևան).

## **ՉԵՈՒԳԻՐ ՄԻ ԲԺՇԿԱՐԱՆ ԵՎՍ**

2013թ. հոկտեմբերին Բուխարեստում տեղի ունեցավ «Հայկական մշակութային հետքը Ռումինիայում» միջազգային գիտաժողովը: Այն հովանավորվում էր երկու երկրների Մշակույթի նախարարությունների կողմից: Գիտաժողովի կազմակերպման խնդիրներին մեծապես նպաստեցին Ռումինիայում Հայոց թեմի առաջնորդարանը և Ռումիայում ՀՀ Դեսպանատունը: Ի բիվս ռումինացի, հայ, ուկրաինացի, հունգարացի, ֆրանսիացի գիտնականների, լուրջ զեկուցումներով հանդես եկան նաև Ռումինիայում ՀՀ դեսպան Համլետ Խաչատրյանը և Ռումինիայում Հայոց թեմի առաջնորդ, Տաթև Եսիսկուպոս Հակոբյան-Մուրադյանը:

Գիտաժողովն ավարտվեց Ռումինիայի Մոլդավիային հարող հայաբնակ սլատ-

մական վայրերի, վանքերի ու եկեղեցիների այցելությամբ: Հրաշալի մի ճանապարհորդություն, որն ապացուցեց համատեղ գիտաժողովների անցկացման հույժ կարևորությունը և հայ մշակութային ժառանգության ու հարստության տարիների բազմաբնույթ ուսումնասիրությունների վերագնահատման ու շարունակման անհետաձգելի անհրաժեշտությունը, ինչպես նաև հայկական գիտական շրջանակների կողմից ռումինական պատմական հուշարձանների վրա հայ արվեստի հետքերի նկատմամբ մեր գոգնությունը չկորցնելու ցանկությունը:

Աշխարհով մեկ ցրված հայ մշակութային արժեքների կորստյան վտանգը դամոկլյան սրի նման կախված է մեր գլխին: Հայաշատ ու դարերի ավանդույթներ ունեցող գաղութներն անգամ այսօր հայաթափվում են, կորստյան վտանգելով այդ տարածքներում մեր ժողովրդի գոյության ապացույցները, ակամա պատճառ դառնում նրանց ուժացման, իսկ գալով մշակութային արժեքներին՝ նրանց խեղաթյուրման, յուրացման, շատ հաճախ վերագրելով դրանք այլ ժողովուրդների ստեղծագործական մտքի արտահայտության: Այսպիսի փաստերի մեքեր ցավով հանդիպեցինք Բուխարեստի մի շարք թանգարաններում, երբ հայկական արձաթագործության ու ոսկերչության առարկաները վերագրված էին թուրքականի, տեքստիլը, գորգերը և կենցաղային շատ իրեր որպես բալկանյան ու կովկասյան արվեստի մնուշներ էին հրամցվում:

Այսպիսի անհաճ, ծանր իրավիճակներում չափազանց կարևոր են ոչ միայն գիտական նստաշրջանների կազմակերպումը, այլև տեղի հայ գաղութի մտավորական, հայրենասեր գոյությունը:

Ի որպիսություն մեզ, Բուխարեստի Հայոց առաջնորդարանն այսօր հավակնում է դառնալ Եվրոպայում մեր մշակութային, գիտական կարևոր կենտրոններից: Այն արդեն այսօր իր դռներն է բացել գիտնականների առջև: Իսկ դրա համար կան բոլոր նախադրյալները՝ հրաշալի և հարստագույն գրադարան՝ հնատիպ գրքերի ու մամուլի արժեքավոր հավաքածու, ձեռագրեր և Տուտյան թանգարանը: Եվ այս ամենը կոնկրետ, մերկայանալի վիճակում են գտնվում: Ավելին, թանգարանում ներկայացված և պահուստային ֆոնդերի արձաթագործության, տեքստիլի, ձեռագրական հարստության պատշաճ, գիտականորեն ներկայացման համար Հայաստանից պարբերաբար հրավիրվում են մասնագետներ, որոնց ուսումնասիրությունների շնորհիվ գիտական ու մշակութային այս ժառանգությունը հավոր պատշաճի կներկայացվի այցելուներին ու մասնագիտական շրջանակներին: Այն միաժամանակ իր որոշիչ ազդեցությունը կունենա ռումինական թանգարաններում ներկայացվող հայկական ծագում ունեցող մնուշների սխալ վերագրումները ճշգրտելու համար:

Այս երկրով մեկ ցրված հուշարձանների հայերեն, հայաստա թուրքերեն մի



քանի դարյա հուշարձանների ուսումնասիրությունը կարող է նաև վիճաբարագետ մասնագետների ներկայությամբ:

Մեր հողվածի համար պատճառ հանդիսացավ Բուխարեստի Հայոց առաջնորդարանի մատենադարանի համար վերջերս գնված մի ձեռագիր բժշկարան: Մենք, որ հրատարակել ենք Երևանի և Ս.Էջմիածնի Առաջնորդարանի մատենադարանների հայատառ թուրքերեն ձեռագրերի ցուցակը (Եր., 2008), չգտանք այստեղ 1892թ. հայերեն և հայատառ թուրքերեն այս «Հեքիմարանը»: Առաջնորդն այն գնել էր երկու տարի առաջ Կոնստանցիայից: Աստվածահաճո մի գործ, հայ մատենագիտության նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք այսօրյա մեր սփյուռքի հոգևորական առաջնորդի կողմից:

«Հեքիմարանը» ձեռագրատանը պահպանվում է 42 համարի ներքո: Հիշատակարանից հայտնի է դառնում, որ ձեռագիրն ամենայն հավանականությամբ գրվել է Էսկիչեհիլում, Մահտեսի Հակոբի՝ «մատինցի հանգուցեալ Տեր Յակոբայն որդի Յակոբոս ձեռագրես», սկսյալ 1840 թվականից: 644 էջ է, 34x24x4 սմ (ձեռագրի էջերը կազմի չափսերից մեկական սմ. փոքր են), կաշեկազմ, ոսկեգօծ, շքեղ նախշազարդերով դրվագված: Կազմի վրա դաջված են *Հեքիմարան* և *Մ. Յակոբ* բառերը: Երկայուն, վերնագրերը և դրան հաջորդող առաջին վանկերը կարմիր թանաքով են գրված:

Ձեռագրի հայատառ թուրքերեն մասն ամփոփում է Անկյուրացի Հաջի Գրիգորի «Բժշկարանից» առանձին մասեր, ինչպես նաև թարգմանություններ ֆրանսերեն և հայերեն բժշկագիտական աշխատություններից ու հեքիմարաններից: Գրչի հայատառ թուրքերեն և հայերեն հիշատակարանները գրադեցնում են՝ 1-3, 638-640 և 643-644 էջերը: Դրանցից 638-640 էջերինը՝ 9 քառատող է, գրված չափածո՝ 2 տող հայատառ թուրքերեն և 2 տող հայերեն, որոնք միմյանց շարունակություն են կազմում: Վերջին էջերի հիշատակարանն իրենից ներկայացնում է գրչի ըմտանիքի անդամների մասին ծննդյան տվյալներ, կնիքներ:

Հեքիմարանը շարադրված է 3-619 էջերում: Սկսվում է այսպես՝ «Քիթապ պուտուր, Հեքիմարան իսմիլեա ալընմըջտուր անկիրլի հեքիմ Հաճի Գրիգորըն հեքիմարանտան ասըլ ալընմըջ տուր» (Հեքիմարան անվամբ այս գրքի համար հիմք է ծառայել անկյուրացի հեքիմ Հաջի Գրիգորի Հեքիմարանը): Այսպես՝ «Ես, որ արհեստիս էմսապէն տարտի և այսպէս ասեալ ես վանկ ի վանկեմ և զպառից ի պառքառիմ և զտառից ի տառ կցեմ և ....»:

4- 92 և 548-612 էջերը հայատառ թուրքերեն են, ապա հետևում են տարբեր հիվանդությունների և դրանց բուժման նկարագրությունները հայերեն լեզվով, երբեմն՝ արաբերեն լրացումներով:

Ինչպես որոշ բժշկարաններում, այստեղ ևս զանում ենք տարբեր լեզուներով դեղերի անունների հայատառ բառարան՝ ուր նշված են լեզուները (539-547 էջ): Հիվանդությունների ցանկը, որ կրկին հայատառ թուրքերենով է՝ կազմում է 578-582 էջերը՝ հայատառ համարակալմամբ: 583-588 էջերում դեղատոմսեր են, իսկ հանրահայտ բժիշկ Գալիանոսի, նրա բուժման մեթոդների ու դեղատոմսերի մասը զբաղեցնում է 589-622 էջերը: 623-640 էջերում բժշկական նյութերի բացատրական բառարան է և ձեռագրում հիշատակված հիվանդությունների հայերեն ցանկը, այս անգամ արարական համարակալմամբ: 640-642 էջերում այլ ձեռագրով դեղատոմսեր են հավելված: Չեռագիրը հիանալի պահպանված է:

Ահա մի ձեռագիր բժշկարան ևս: Այն մեզ համար կարևոր է նաև հոգեբանական առումով, քանի որ փրկվել է հայ հոգևորական առաջնորդի շնորհիվ, վերադարձվել այն ստեղծող ժողովրդին և այսօր Բուխարեստի հայ առաջնորդարանի մատենադարանի մաս է կազմում: Հեքիմարանը կարող են ուսումնասիրել բժշկագիտության պատմությամբ հետաքրքրվողները, իսկ հայկական ձեռագիրը դրսում գնելու, փրկելու այս օրինակը երանի թե շատերին օրինակ ծառայի:

## ՀԱԿՈՒՄ ՍԻՐՈՒՆԻՆ և ՆՐԱ «ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



*Հակոբ Սիրունի (Ճոլոյան, 18.4.1890 Աղաբագար-7.04.1973 Բուխարեստ) - ականավոր հայագետ, արևելագետ, գրող, հրապարակախոս, անվանի ազգային, հասարակական գործիչ, Ռուսիայի Ակադեմիայի անդամ (2012թ., հետմահու).*

Հակոբ Սիրունին կրթությունը ստացել է Կ.Պոլսի Կեդրոնական, ապա՝ Էսայան վարժարանում, Կ.Պոլսի Համալսարանի իրավաբանական ֆակուլտետում (1909-13թթ.): Երիտասարդ տարիներից սկսած զբաղվել է գրական և հրատարակչական գործունեությամբ: 1906թ. խմբագրել ու հրատարակել է *ԵՐԱԶ*, 1910թ. *ԱՌՍՎՈՏ*, 1913թ. *ԳՐԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՄՆԵՐ* պարբերականները, իսկ 1914թ. Դանիել Վարուժանի հետ խմբագրել ու հրատարակել է *ՆԱՎԱՍՍԱՐԴ* տարեգիրքը: 1918-19թթ.՝ *ԱՐԻԱՍՄԱՐՏ*, 1911թ.՝ Շավարշ Քրիսյանի հետ լույս

է ընծայել Օսմանյան կայսրությունում առաջին մարզական պարբերականը՝ *ՄԱՐՄԱՄԱՐԶԸ*: «Մարմնամարզ» - (1911-14թթ.) հայերեն 32 էջանոց պատկերազարդ պարբերականը որպես ուղեցույց ծրագիր էր ծառայելու հայկական դպրոցների սկսնական կազմակերպությունների համար: Այն ազգային, ֆիզիկական կրթության և առողջ կյանքի սիրահարների խոսափողն էր: Կարճ ժամանակ անց «Մարմնամարզ»-ի արտոնատերն է դառնում Շավարշ Քրիսյանը: 10 համար որպես ամսաթերթ լույս ընծայվելուց հետո մարզական կյանքը հայրենասիրական գաղափարներով դեկավարող պարբերականը վերածվել է կիսամսաթերթի, որը վկայում էր նրա ունեցած հաջողության մասին:

Հակոբ Սիրունի Ճուլյանը Մեծ եղեռնից փրկվողների թվում է եղել:

1922թ. նա մեկնում է Բուխարեստ, հանդիպելու ռուսին մեծ մտավորական, պատմաբան Նիկոլաե Յորգային, որը հիացած է մնացել հայ երիտասարդի մտքի պայծառությամբ ու մտավորական մեծ ունակություններով: Յորգայի առաջարկով Հակոբ Սիրունին մտնում է Բուխարեստում, իր մեծագույն նպաստը ներդնելով այդ երկրում արևելագիտության ու հայագիտության զարգացման գործում: 1944թ. Բուխարեստում հիմնում է Հայ Մշակույթի տունը և նրան կից թանգարանը: Հակոբ Սիրունին պիտի դառնար ռուսինահայ ամենահայտնի մտավորականներից մեկը, որը հետմահու արժանացավ ակադեմիկոսի պատվավոր կոչման, իր մեծագույն ներդրում ունենալով ռուսինական ու նաև հայ մշակույթի մեջ:

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո, 1945թ. ազգայնական գաղափարների համար նա մեղադրվում է և 10 տարով արստրվում Սիբիր: Վերադառնալով Բուխարեստ, նա շարունակում է իր գրական և գիտական գործունեությունը<sup>1</sup>: Սիբիրից վերադարձի ճանապարհին նա որոշ ժամանակ մտնում է Հայաստանում: Ս.Էջմիածնում Հայոց Վեհափառի հետ հանդիպման ժամանակ նրան առաջարկում են գրել Պոլսի պատմությունը: Այն դառնում է Սիրունու կոթողային աշխատությունը:

<sup>1</sup> Հակոբ Սիրունու կյանքին ու գործունեությանը նվիրված գրքերից հիշատակության է արժանի ռուսներենով Բուխարեստում հրատարակված Վարդան Առաքելյանի «Սիրունի. Մի հայաճյալի ողիսականը» գիրքը (2011) և նույն Վ.Առաքելյանի առաջաբանով «Հակոբ Ճուլյան Սիրունի. Հայգիտականի աշխատանքը Ռուսինիայում» մատենագիտական հատորը: 2006թ. Երևանում, Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում տեղի ունեցավ Սիրունու ինքնակենսագրական նոթերը, չափածո և արձակ գործերը, թարգմանությունները, թատերագիտական գործերը, գիտական ուսումնասիրություններն ամփոփող հատորի շնորհանդեսը: Սյն կազմել ու հրատարակության էր պատրաստել եղբայրը՝ փարիզաբնակ լուսանկարիչ Գրիգոր Ճուլյանը



«ՊՈԼԻՄ ԵՎ ԻՐ ԴԵՆԸ» գրքի 4 հատորները լույս ընծայվեցին 1965-87թթ., Բեյրութում: Երկրորդ հատորը ձևաված է Մեծ եղեռնի 50-ամյակի հիշատակին: Գ և Դ հատորները լույս տեսան հետմահու:

Օսմանյան կայսրության և արևմտահայության պատմության ու մշակույթի ուսումնասիրողների համար այս գիրքն անփոխարինելի աղբյուր է:

Ուսումնասիրության ընդգրկած հինգ դարերի շրջանում Պոլսում ապրած ժողովուրդներից և ոչ մեկը չէր կարող առավելագույնս ճշգրիտ ու բազմաբնույթ, բազմերանգ ներկայացնել այս պատմությունը, որքան հայերը: Դրա խոսուն արտահայտություններն են աղբյուրագիտական մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ ձեռագրերը և տպագիր ժառանգությունը, որ հիմք են ծառայել այս եզակի աշխատության համար: Հայ հեղինակներն այն թողել են հայերեն, հայաստառ թուրքերեն, նաև եվրոպական՝ մասնավորապես ֆրանսերեն լեզուներով:

Մասնավորապես Օսմանյան կայսրության մասին կարելի է պատկերացում կազմել ոչ թե օսմաներեն աղբատիկ, այլ հայատառ թուրքերեն և հայերեն մատենագիտական բազմաթիվ աշխատությունների շնորհիվ: Ջարմանալի չէ, որ այսօր ժամանակակից, լատինատառ թուրքերենի են վերածվում հայատառ թուրքերեն երկերը և թուրքերենի թարգմանվում հայերեն գործերը: Մեր ասածի լավագույն ապացույցներից կարող է հանդիսանալ պոլսահայ մատենագետ Գևորգ Փամբուկյանի գիտական ժառանգությունը, պոլսահայ հրատարակիչ և հեղինակ Արսեն Յարմանի կողմից վերջին տարիներին հայ պատմագիտական գործերի թուրքերեն գիտական հրատարակությունները:

Կ.Պոլսի պատմության Հակոբ Սիրունի հեղինակը բազմաթիվ խիստ սկզբունքներ ունեցող գիտնական է: Նրա կարծիքով ուսումնասիրողները և ընթերցողները այս խնդրում կողմնորոշվելու համար դեռ տարիներ շարունակ ստիպված են լինելու դժվարություններ ունենալ: Պատմության ուսումնասիրությունը պարտադրում է երբեմն կենտրոնանալու առանձին անհատների կերպարների ու նրանց գործունեության ուսումնասիրության վրա: Հարկ է ոչ միայն պատմական, այլև հոգեբանական մանրակրկիտ անալիզի ենթարկելու նրանց առեղծվածային կամ երբեմն պարզունակ թվացող քայլերը՝ մինչ համրությանը նրանց որպես հերոս կամ դավաճան ներկայացնելը: Հեղինակը որքան երախտապարտ ու ջանասեր, նույնքան կտրուկ է նաև աղբյուրների ներկայացման ու իր եզրահանգումների, կարծիքների մեջ, քանզի նրանք երբեմն այնպիսի շփոթության մեջ են գցում ուսումնասիրողին, որ տատամսած կանգնում է:

«Այո, մեր պատմությունը գննության բովանդան անցնելու դեռ երկար ճանապարհ ունի: Միակ բանը, որ ընթերցողները չեն կարող գտնել այս գործում՝ դա երեկը դատելու գործում մեր անաչառությունն է» - եզրափակում է իր առաջաբանը Սիրունին և շարունակում:

«Որքան էլ փորձես անաչառ լինել, դժվար է անկեղծ դատել այն անձնավորությունները, որոնց ոչ միայն ճանաչել ես, այլև համագործակցել նրանց հետ: Պետք է մոռանալ անձնական համակրություններն ու հակակրությունները այն մարդկանց ու դեպքերի նկատմամբ, որոնց ժամանակակիցն էս եղել և պիտի դատես: Մեծ քաջություն պետք է ունենալ պաղարյուն ժառու այն դեպքերի հանդեպ, որոնք խորապես հուզել են հայ կյանքը: Հերոսի գործ է ինքդ քեզ դատավոր լինելը»:

Սիրունու որոշ արտահայտություններ կարելի է ընդունել որպես թևավոր խոսքեր կամ մտքի կայծոռիկներ, ինչպես սիրում են արտահայտվել պոլսեցիները:

«ՊՈԼԻՄ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ » կոթողային ուսումնասիրությունը կոչված էր պատմության դատի առջև բացահայտելու հայերին և թուրքերին:

*Հինգ դար կողք կողքի ապրեցին և միմյանց այդպես էլ չճանաչեցին:*

Սիրունին բացատրում է՝ «...քանզի մեկը տեր էր, մյուսը ռայա (հպատակ)»:

Ճանչման ճանապարհներից մեկը, որ ընթերցողին մատուցվում է, դա շուրջ 80 պատրիարքների ֆոնի վրա սերտաճած պատմությունն է, քանզի Պոլիսն առանց իր Պատրիարքական Աթոռի ու նրա անուրանալի դերի՝ անհնարին է երևակայել անգամ:

Եղան մեծ ու փոքր, հզոր ու կամագուրկ, բացառիկ ու կաթոլիկասեր պատրիարքներ, որոնք որոշեցին իրենց ժամանակի ճակատագիրը, ունենալով բարի, իսկ ոմանք՝ դաժան ու անփառունակ վախճան: Մենք նկատի ունենք Պատրիարքական Աթոռն իր խճանկարի ողջ էությունը, նրա մերձավոր ամիրայական ու փաշայական հայրենասեր, հսկող, դավող շրջապատով: Պալատի հետ պատրիարքների ունեցած դիվանագիտական հարաբերությունների ուսումնասիրությամբ կարելի է բացահայտել շատ ու շատ մութ, անհասկանալի երևույթների բանալին:

Նույնիսկ ամենաթուրքասեր ուսումնասիրողը չի կարող իր ուսումնասիրության մեջ զանց առնել հայերի մեծագույն ավանդը Օսմանյան կայսրության կյանքի ամենատարբեր, ավելի ստույգ կլիներ ասել՝ *համարյա բոլոր բնագավառներում*: Այն ներառում է հայ ժողովրդի պատմական անցյալն իր ողջ մշակութային ժառանգությամբ, տնտեսությունից՝ արհեստներ,

գիտություն, արվեստ ու տպագրություն, ճարտարապետություն, առևտուր ու լուսավորական, հասարակական մշակութային շարժում, եվրոպական առաջադիմական երևույթների ներմուծում, դիվանագիտություն և սպորտ և այլն, և այլն:

Մեծ ու փոքր հակասություններով առլեցուն մի շղթա...

Ա հատորում, Բյուզանդիոնի շրջանի հայ գաղութի մասին 100 էջից էլ քիչ է: Դրա փոխարեն Օսմանյան շրջանի հայ կյանքը, հայ-թուրք փոխհարաբերությունները ամենայն մանրամասնություններով առկա են գրքում: Սա գրքի հիմնական արժանիքներից է, քանզի մինչ օրս ոչ ոք մնաց մանրամասնություններ մեր առջև չի բացահայտել: Այս մանրամասները դուրս են գալիս Կ.Պոլսի, անգամ՝ Կայսրության սահմաններից, միայն թե պատմության տրամաբանական թելը չլիտրվի: Այսպիսով գիրք-խճանկարը ներառում է հայ կյանքը և պատմական իրադարձությունները հեղինակի գծած սահմաններից շատ ավելի հեռու, (օր. լեհահայ գաղութի տագնապը և այլն) ստեղծելով հասկանալի ու բացատրվող մի համայնապատկեր: Այն ավելի գունեղ ու շնչող է դառնում Սիրունու անձնական տպավորությունների և եզրահանգումների շնորհիվ: Լինելով մեծ մտավորական ու խորապես հայրենասեր մարդ, նրա ամփոփումները հաճախ առլեցուն են ցավով ու ավստասևքով: Նա գրում է. «*Հայ եկեղեցին դժնդակ ճգնաժամ մը կանցներ: Չորս կաթողիկոս միննույն ստեն Մայր Աթոռին վրա և երեք պատրիարք Պոլստ մեջ, որոնք շուրջ չորս քառամյակ շարունակ իրարու ձեռեն կը խլեն Աթոռը: Եվ մյուս կողմէ երկու պթոռներու վրայ ալ Հռոմեն որպիսի մարդիկ: Ի՞նչ ուժ կունենար այս պայմաններուն մեջ դիմանալու Հայ եկեղեցին իր վրա խուժող լիլիքներու դեմ»: Հեղինակը նկատի ունի Հովհաննես Խուլիս ու Ջաքարիա Կաղզվանցուն, Գրիգոր Կեսարացուն:*

Այս մենագրությունը որքան հայերի, արևելագետների, նույնքան անգնահատելի է թուրք և Թուրքիայի պատմության ուսումնասիրողների համար:

Սիրունու արխիվը զարմացնում է իր բազմազանությամբ ու հարստությամբ: Այն կարող է բազմաթիվ հատորների նյութ դառնալ:<sup>1</sup> Ինչպես հանրագիտարանային արժեք ունեցող գրքերը, որ կարող են սև նյութ հանդիսանալ հազարից ավել նոր գրքերի ու ատենախոսությունների համար, այս գիրքը ևս ներառում է տարբեր երևույթների մասին հարուստ աղբյուրներ: Դա նաև կաթոլիկ և բողոքական հարձակման շուրջ է, որն ուղղված էր

1 Կ.Պոլսի ԱՐԱՍ իրատարակությունը 2003թ. լույս է բնծայել Հակոբ Սիրունու «*Գարեգին Պատրիարք Խաչատուրյան. Մենագրություն*» հատորը (191 էջ):



Եվրոպական տերությունների կողմից Օսմանյան կայսրությունը բաժան-բաժան անելուն միտված « Արևելյան հարցին», որի գլխավոր գործիքներից ու տուժողներից մեկը դարձավ հենց ինքը՝ հայը՝ մեծապես փաստելով նախ և առաջ իրեն ու իր ճակատագիրը:

Իհարկե, Օսմանյան կայսրության և արևմտահայության պատմության ու մշակույթի ուսումնասիրողների համար այս գիրքն անփոխարինելի է: Ամենայն մանրամասնությամբ կարելի է հետևել պոլսահայության կյանքի զարթոնքին, որը եվրոպական զարթոնքի մունետիկը դարձավ Օսմանյան կայսրությունում, իր մեծագույն ներդրումն ունենալով տպագրության, ճարտարապետության, գեղանկարչության ու լուսանկարչության, արհեստների ու երաժշտության, թատրոնի, տնտեսության գիտական կազմակերպման, բժշկության ու այլ գիտությունների. իսկ թուրքերի համար նաև՝ գրական նոր թուրքերենի կազմավորման, թուրք նոր գրականության ու դրամատուրգիայի, թուրքական լուսավորիչների սերնդի կազմավորման ու եվրոպական առումով մշակույթի, կյանքի տարբեր ոլորտների, սեփական դիվանագիտության զարգացման գործում:

Այս մասին արդեն անգամ թուրքերն են խոստովանում: Երևի չէին խոստովանի, եթե չլինեին Հակոբ Միրունի պատմաբան հեղինակի այս ուսումնասիրությունները, որոնք աշխարհի դատի առջև դրեցին Օսմանյան կայսրությունում հայերին ու թուրքերին...

Կ.Պոլիսը կոչված էր պատուհան բացելու դեպի Արևմուտք և շփման անվերջանալի հնարավորություններ ընձեռնելու կայսրության ժողովուրդներին: Եվ այդ կարևորագույն առաքելության ամենադժվարին կրողները ու մունետիկները եղան հայերը:

*« Եղեռնի սերնդին թող հուշարձան ըլլայ այս գիրքը ընթերցողների հետ ».*

Իր գրույցն այսպես է ավարտում մեծ պոլսահայն ու նվիրյալ ռումինահայ Հակոբ Ճոլոյան Միրունին:

## ՀԱՅԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(19դ.)

Օսմանյան բռնակալության վեցդարյա ժամանակաշրջանում հայերը միշտ հեռու են գտնվել երկրի ղեկավարման աստիճաններից: Դրանք վերապահված են եղել տիրող թուրք ազգին: Վերջինս երկար ժամանակ իր համար անհարիր է համարել նստակյաց ազգերին հատուկ զբաղումները՝ արհեստները, երկրագործությունը, առևտուրը: Այն թողնվել է հպատակ ազգերին, որոնք և իրենց վրա կրելով երկրի տնտեսական զարգացման պարտականությունը, այնքան են առաջադիմել որոշ բնագավառներում, դարձնելով այն իրենց մենաշնորհը, որ նույնիսկ սկսել են ղեկավարել այդ ասպարեզները, որպես պետական բարձրաստիճան պաշտոնյաներ:

Օսմանյան կայսրությունում առավելագույն օգտվել են հայերի տաղանդից, հարստությունից, գործիմացությունից, եռանդից և մասնավորապես՝ երկրի նկատմամբ ունեցած հավատարմությունից: Ամճրցելի ու եզակի լինելով շատ ու շատ արհեստների, գիտության, օտար լեզուների տիրապետման ասպարեզում, նրանց ծառայությունները փնտրված էին տիրող իշխանության բոլոր խավերում, պալատում: Որպես այդպիսիք նրանց տաղանդից սկսեցին օգտվել օսմանյան սուլթանները, սկզբում որպես պալատական արհեստավոր-ծառայողներ, իսկ հետո արդեն՝ որպես պալատական բարձրաստիճան պաշտոնյաներ, իրենց բնագավառները տնօրինող ավելի քան 200 ամիրաներ, սուլթանների վստահված անձինք, երկրի ներքին ու արտաքին կյանքի կարևորագույն դեմքեր: Ամիրաներին մենք չենք անդրադառնա: Այն առանձնահատուկ կարևորության ընդարձակ մի ասպարեզ է:

Հայերը ժամանակ առ ժամանակ թուրքական կառավարական մեքենան շարժող գաղտնի, սակայն ամենահզոր ուժն են հանդիսացել: Նրանք ողջ կայսրության ամենահարուստ, ամենավաճառական և ամենավաճառված ժողովուրդն են եղել: Սուլթանները հիմնականում նրանց հարստությանը չեն խանդել, համոզված լինելով որ անհրաժեշտության դեպքում այն անպայման կծառայի կայսրությանը:

Որքան էլ որ տխուր է, պետք է խոստովանել, որ մեր նյութի հեռու հայերը կարծես թե զրկված լինելով թերարժեքության զգացումից, ի վնաս իրենց, չեն կարողացել ճանաչել ու գնահատել դիմացիմի իրական դիմագիծը, կանխատեսել դրանից հետևող իրավիճակները: Նրանք հիմնականում ռոմանտիկներ են եղել, վեհ գաղափարների կրողներ ու զարմանալիորեն շուտափույթ գերի են դարձել առաջադիմական հովերին, տարվել դրանցով ու հավատացել, թե լուսավորական, եվրոպական առաջադեմ գաղափարները զնահատող ու կրողները կարող են իսկապես

եղբայրներ լինել, անկախ դավանանքից, անկախ երկրում տիրող քաղաքական, սոցիալական իրավիճակից: Այսպիսի մարդիկ, որոնք մեր ազգի սերուցքն են կազմել, փարվել են ամեն մի առիթի, որը երկրին ու այնտեղ ապրող ազգերին, մասնավորապես հայերին, մարդկային արժանապատիվ ապագա կխոստանար, ավելի ուշ՝ գուցե նաև ազատություն: Այսպիսի առիթներից էր եվրոպական ազդեցության ամենախիճ տեսակներից մեկով խանդավառվելը: Այն է՝ եղբայրանալ մասոնական օբյակների շնորհիվ<sup>1</sup>: Իսկ դրանց թիվը Պոլսում, 19-րդ դարի վերջերին 50-ից էլ ավելի էր: 19-րդ դ. և 20-րդ դ. սկիզբը նշանավոր է եղել հայկական մասոնական օբյակների հիմնադրմամբ: Կարևորն այն է, որ այստեղ էլ հայերն ամենից առաջ են ընկել իրենց որակով: Մեզ հայտնի 4 հայտնի հայկական մասոնական օբյակները հիմնադրվել են ֆրանսիական Մեծ Արևելք, Էդիմբուրգի շտաբանդակյան մեծ օբյակների հովանավորությամբ:

Մասոնական օբյակների մասին թուրքական պատմագրությունը նշում է, որ այն սկիզբ է առել 19-րդ դարի 40-ականներից<sup>2</sup>: 1863թ. «Մեծ Արևելք»-ի հովանավորությամբ հիմնադրված օբյակը 1869թ. հավաքին 143 անդամ է արձանագրել: Դրանց թվում եղել են և՛ ֆրանսիացիներ, և՛ կայսրության տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ, թուրքեր: Նրանք կարևոր պաշտոններ ունեցող մարդիկ են եղել: Հիշվում է Տատյան ամիրայական հայտնի տոհմից Ներսես Տատյանի անունը, որպես

1 Հայկական վերնախավի հյուրասիրություններին, պարահանդեսներին ու բարեգործական ճոխ հավաքույթներին հրավիրված են եղել Պոլսի բազմազգ երեխաները՝ դեսպանատների ներկայացուցիչներից մինչև պալատական ու կառավարական շրջանակները ներկայացնողները: Ենթադրվում է, որ նման հավաքների ժամանակ էլ կազմվել է մասոնական օբյակի կազմը: Նման մի հավաքի, 1885թ. մարտի 26-ի Սիմոն Մաքսուդյանի Օրբաբեռլի ամառանոցում հյուրասիրությանը ի թիվս այլոց ներկա են եղել կաթոլիկ հայեր իրենց գուգված կանանցով Սարգզ Է.Ֆինդին, Նորատունկյանները, Ներեսյանները, Աբրահամ փաշան, Օմրնիկ Մարլըն, Տիգրան Յուսուֆյանը, Ներքին գործերի նախարար Մյունիք փաշան, Էդիսմ փաշայի 2 որդիները, Շելքեթ փաշայի տղան՝ Ռեֆիթ թեյը, Արտգործնախարարության քարտուղարը, ուս հյուպատոսը, Տրամվայի ընկերության նախագահ Թրյուլեն, «Կրեդի Լիոնեզ» բանկի տնօրեն Լեոն Լեմունանը, Ֆուկլոլ Մանգոն, փաստաբան Պեդրելլին և շատ հայտնի այլ օտարներ:

1885թ. մարտին ի նպաստ Աբարատյան, Կիլիկյան և Արեւելյան միացյալ դպրոցասիրաց ընկերությունների կազմակերպված Մեծ պարահանդեսը (դիմակով և առանց) կայացել է Օսմանյան կենտրոնական բանկի տնօրեն Մ.Ֆոսթերի, Մաքսուտ Սեպուրի, Էսայան Ալրուիչի, Նորատունկյան Հարութի հովանավորությամբ և նախագահությամբ: Կարգադիր հանձնաժողովի բոլոր անդամները հայտնի հայեր և օտարներ են եղել: Այդ թվում՝ *Սղաանբուլ* թերթի տնօրեն Հենրի Հանրին, Ժակ Պարոժձին, *Թաւ* թերթի թղթակից Մ. Դոմանձեն, Օսմանյան կենտրոնական բանկի հաշվապահ ընկնչ Ֆ.Սմայլը, *Չար դյու Բուֆոր* լրագրի տնօրեն Բիլիաբուրլուն և այլոք :

2 Paul Dumont. Tanzimat'ın Küçük Evreni Olarak Osmanlı Masonluğu. Tarih ve Toplum, İst. 1990, ocak, 12, s. 17-19: Ֆրանսերենից թարգմանված այս հոդվածը որպես գեկուցում կարդացվել է 1989թ. Թանգիմաթի 150-ամյակին նվիրված գիտաժողովում, որը տեղի է ունեցել Գերմանիայի Հեսսեն քաղաքում:



Ոստիկանական նախարարության քրեական հանցագործություններով զբաղվող քաժնի անդամ: 50-ի մոտ մուսուլման անդամներ են եղել օրյակում: Դրանց մեծ մասը զինվորականներ, մի քանի բարձրաստիճան պետական պաշտոնյաներ, այդ թվում՝ սուլթանի գլխավոր համհարզ Ռաուֆ բեյը, պետական քարտուղար Ջեմիլ բեյը, Ոստիկանական նախարարության խորհրդական Աբդուռահման Հիլմի էֆենդին, Սաքըզի վալի Մեհմեդ Ռեմզին և Երուսաղեմի նախկին վալի Իզզեթ փաշան, այնուհետև՝ Պետխորհրդի նախագահ Իբրահիմ Էդեմեդ, երիտթուրքերի առաջնորդներից արքայազն Մուստաֆա Ֆազլըն և ուրիշներ:

Օրյակներից երկրորդը՝ «Մեր»-ը, հիմնադրված Պոլսում Արքին Նորատունկյանի կողմից 1866թ. մայիսի 7-ին, ընտրել էր «Գիտություն, ազատություն, աշխատություն, եղբայրություն» բնաբանը: Պաշտոնական հիմնադրումից հետո այն մեծ վերելք է ապրել: Հայկական մատոնական այս օրյակին անդամակցել են արտասահմանում կրթություն ստացած մտավորական շատ հայ, թուրք պալատական պաշտոնյաներ: Դրանցից են ապագա Մուրադ 5-րդ սուլթանը՝ Շահգադե Մուրադը, Աբդուլմեջիդ և Աբդուլպալիզ սուլթանների համհարզ-ներկայացուցիչները, պալատական նախարար, կոմսյոզիտոր Ալի Հայդարը, Նամըք Քեմալը, սադրագամներ Միդհատ փաշան, Քեչեջիզադե Ֆուադ փաշան, Իբրահիմ Հաքքը փաշան, առաջին լուսավորիչ գրող Շինասին, Բեռլինում դեսպան Սադուլլահ փաշան, Թունիսցի Հայրեդդին փաշան, արքայազներ՝ Շեհգադե Քեմալեդդինը և Նուրեդդինը: Բոլորը «Մեր» օրյակի անդամներ են եղել: Նրանց բոլորի լուսանկարները գտնում ենք Աբդուլլահ եղբայրների լուսանկարչատան այրոմներում:

1906թ. օգոստոսի 22-ին Նորատունկյան խանում, ֆրանսիական օրյակի հովանավորությամբ հրավիրված հավաքի ժամանակ հիմնվում է «Ռենեսանս» մատոնական օրյակը: Շուրջ երկու տարի անց, 1908թ. հուլիսի 13-ի հավաքին, այս օրյակի հիմնադիր 14 անդամներից 12 մասոններ 33-րդ աստիճան են ստանում, այդ թվում՝ Միշել Նորատունկյանը, մնացած 11-ը՝ օսմանյան մեջլիսի անդամներ: Փարիզը, ապա մաս Ժնևը դառնում են հայ և թուրք մասոնների, դաշնակների, հնչակների հակասուլթանական կոնգրեսների ու ժողովների կենտրոնատեղի:

1907թ. Աբդուլհամիդ Բ-ի դեմ դաշնակների կազմակերպած երկրորդ կոնգրեսը տեղի է ունենում Փարիզում Բարոն դը Լորմեսի տանը: Փարիզում դաշնակցականները մասնակցում են սուլթանի դեմ ուղղված երիտթուրքերի կոնգրեսին:

1909թ. Հայկական 3-րդ մասոնական օրյակը հիմնադրվում է Խարբերդի Հյուսեմիկ գյուղում «Եփրատ» անունով՝ Էդիմբուրգի Շուտլանդական մեծ օրյակի հովանավորությամբ: Հիշվում է տարբեր մասնագիտությունների տեղ 10 կարևոր անդամների մասին:

1909թ. Պոլսում հիմնադրված Թուրքիայի Մեծ Արևելք օբյակի զինանշանի վրա գրված էր «Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն և Առաջադիմական ուժերի միություն» բառերը:

1918թ. մայիսի 1-ին Պոլսում հիմնադրվում է 1185 անդամից բաղկացած 4-րդ հայկական մատոնական օբյակը՝ «Հայաստան» անվամբ, Էդիմբուրգի Շոտլանդական Բարձր օբյակի հովանավորության ներքո: Օբյակի վարպետ ղեկավարն էր Թորգոմ Պոյաճյանը:

Մինչ հայ երևելիներն ու մտավորականները «եղբայրություն էին» խաղում ֆրանսիական ու շոտլանդական վարագույներով զարդարված բեմերում, 1910թ. հոկտեմբերին, Մելանիկում տեղի ունեցած իթիհադականների կոնգրեսում մեծամասնության կողմից ընդունվում է «Թուրքիան թուրքերի համար» նշանաբանով զադունի որոշումների շարքը:

1913թ. Թալեաթ բեյը սնունու է Մակեդոնիայի «Ռիզդուֆա» մատոնական օբյակ: Մատոնական այս կազմակերպություններից կարևորներում են թրծվում «Թանգիմաթ»ը վերակենդանացնելու, իրականություն դարձնելու ջանքերը. ծրագրերը:

19-րդ դարի սկզբին սուլթանական պալատը հասկացավ, որ ստիպված էին հրաժարվել եվրոպական երկրների նկատմամբ մեծապետական ու առավելություններ ունեցողի կեցվածքից: Հարկ է, որ պատրաստ լինեին գոնե հավասարը հավասարի նկատմամբ նոր գործելակերպի: Եվրոպական օրինակով նախարարությունների կազմակերպման ու գործունեության ծրագրերի իրականացման ասպարեզում անհրաժեշտ էին եվրոպական համալսարաններում ուսումնառություն անցած, լեզուներ տիրապետող անձիք: Այդպիսի բանակ Բարձր Դուռն իր տրամադրության տակ չունեին: Այդ հզոր բանակը կարող էր տրամադրել միայն Պոլսի հայ գաղութը, որն անելանելի թվացող այս ժամանակաշրջանում կայսրության համար փրկարար օղակ հանդիսացավ:

Հայերը ճանաչված էին որպես մտավոր մեծ հնարավորությունների տեր ներուժ: Բազմիցս ապացուցվել էր նրանց, որպես կայսրության հավատարիմ ծառայող հպատակներ լինելու հանգամանքը: Պալատն ունեցել էր հայագրի վեզիրներ, ծովակալներ, հայագրի գորավարներ, թո՛ղ որ մի մասը՝ ղևշիրմեի (մանկահավաքի) գոհեր: Հայագրի դիվանագիտական կորպուսը ներկայացնող դեսպանները, հյուպատոսները, ավագ թարգմանիչները, խորհրդականները լծվեցին դիվանագիտական այս առաքելությանը, ծառայելով որպես ոչ թե գուտ օգնական օղակներ, այլ որպես գործունեության կարևոր ու հիմնական ծանրությունն ապահովող լծակներ: Փաստ է, որ շատ քիչ բացառությամբ, դիվանագիտական ներկայացուցչություններին, արտգործնախարարության ու նախարարությունների հիմնական աշխատուժը

եղել են հայերը և որ նրանց ուսերին է եղել քարզմանական, արտասահմանյան, միջազգային օրենքների ու իրավաբանական խորհրդակցանքների, քարտուղարության, անգամ՝ հաշվակալական բաժինների ողջ ծանրությունն ու պատասխանատվությունը: Դա վերաբերում էր ոչ միայն կայսրության օտարերկրյա դեսպանատներին ու հյուպատոսարաններին, այլև մույն այդ օտար երկրների Պոլսում գործող դեսպանատներին ու հյուպատոսարաններին: Ավելին, հայտնի են պոլսահայ դիվանագետներ, որոնք եվրոպական տերություններն էին ներկայացնում մի այլ եվրոպական պետության մեջ<sup>1</sup>: Այս բոլոր գործիչները ոչ միայն քարձրացրին միջազգային ասպարեզում Օսմանյան կառավարության հեղինակությունը, այլև իրենց գործունեությամբ պատիվ ու բարի համբավ բերեցին իրենց ազգին, լավագույնս ճանաչել տվին հային՝ քաղաքական ամենաբարձր մակարդակներում: Նրանք հավատարմորեն ծառայեցին ոչ միայն սուլթանական արքունիքին, Բարձր Դռանը, այլև ազգաշահ գործերով ու բարեգործություններով շուայլ ու պայծառ էջեր գրեցին արևմտահայության պատմության մեջ:

Հիշենք, որ 1878թ. Բեռլինի դաշնագրով երբ Բուլղարիան իրավունք ստացավ իր համար իշխան ընտրելու՝ Ֆրանսիան և Անգլիան առաջարկել էին Նուպար փաշայի թեկնածությունը բուլղարական գահի վրա: Ռուսաստանը մերժել էր, գտնելով որ դա ասպարեզ կտար հայ ազատագրական շարժումներին: 1894թ. Եգիպտոսի երիցս վարչապետ եղած Նուպար Նուպարյանը խտիվի(փոխարքայի) բացակայության ժամանակ նրա պաշտոնակատարն է համարվել: Չմոռանալք Եգիպտոսում հայ նախարարների, սեղանավորների ու բարձրաստիճան պաշտոնյաների մի ողջ փայլուն բանակի մասին:

1840 թվականից քրիստոնյաները իրավունք ստացան վարելու կառավարական պաշտոններ:

1845թ. քրիստոնյա հարուստները կարող էին Մեջլիսի պատգամավորներ ընտրվել:

Օսմանյան առաջին դեսպաններից էր երկրի ասպագա Արտգործնախարար

1 3. Լավագույն օրինակ կարող է հանդիսանալ հայ կաթոլիկ մտավորականներ, հայր և որդի Մուրաջա և Կոնստանդին ԴՕհսոնների դիվանագիտական գործունեությունը: Իգնատիոս Մուրաջա դՕհսոնը (Ignatius Mouradgea D'Ohsson Թոնուկյան, 1740-1807), պոլսահայ, դավանանքով կաթոլիկ, ֆրանսիագիր հայտնի պատմաբան, դիվանագետ էր: Նա Ձմյունիսյան Ըվեդիայի հյուպատոսն էր: 1782թ. նշանակվեց Ըվեդիայի դեսպան և ստացավ Ասպետ Վազայի կարգ: Նրա որդին՝ Կոնստանդին (Կարլոս) Մուրաջա դՕհսոնը (1779-1851) ասպետը 1795թ. Կ.Պոլսում Ըվեդիայի դեսպանն է եղել: Գիվանագիտական առաքելությամբ աշխատել է Փարիզում, Մադրիդում, Հաագայում: 1834թ. նշանակվել է Ըվեդիայի դեսպան Բեռլինում:

Հայագրի պետական, դիվանագիտական գործիչներ են ծառայել նաև պարսկական արքունիքում: Մեյրում Խանը (1831-1908) եղել է Պարսկաստանի դեսպան Անգլիայում:



Մուստաֆա Ռեշիդ փաշան: Վեզիրն իր ժամանակի առաջադեմ ու զարգացած մարդկանցից մեկն է եղել: Նա դեսպան եղավ Փարիզում, ապա՝ Լոնդոնում: Նրան հետագայում վոյսարիմեց որդին: Հայր և որդի փաշաների գործունեության ողջ ընթացքում, 1835-65թթ., նրանցից համայնա անբաժան եղավ թարգմանիչ, խորհրդական, դեսպանորդ, մասն Հակոբ Կրճիկյանը:

Մուստաֆա Ռեշիդի և՛ Սահմանադրության հեղինակման շրջանում, և՛ դրանից հետո, նրա հիմնական խորհրդականը եղավ Գրիգոր Օտյանը<sup>1</sup>: 19-րդ դարի կեսերի դիվանագիտության հայտնի երախտավորներից էր Միրզայան Մանուկը<sup>2</sup>:

Պատկառելի հատորներ կարելի է գրել Օսմանյան կայսրության դիվանագիտական ու հյուպատոսական անձնակազմի հայազգի երախտավորների մասին: Ավելին, այդ գրքերի հերոսներից առնվազը 100-ը, իրենք էլ արժանի են առանձին հատորների ու նրանց գործունեության հիման վրա կարելի է ուսումնասիրել Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության քարտեզն ու պատմությունը:

Մեջլիսի հայազգի երեսփոխանները (1876-1909 թթ.), որոնք ներկայացրել են մինչև 12 տարբեր գավառներ, աչքի են ընկել իրենց բարձր կրթությամբ, կայսրության հնագույն մշակույթը ներկայացնող ժողովրդին վայել ողջ արժանապատվությամբ, երեսփոխաններից ակնկալվող մեծ հմտությամբ, իրենց գավառների շահերը լավագույնս ներկայացնելու հմտությամբ ու ողջամտությամբ: Դրանք տարբեր դասակարգեր, բնագավառներ, հասարակական, սոցիալական տարբեր խավեր ու քաղաքական համակրություններ ունեցող անձեր են եղել, պետական ծառայողներ, մտավորականներ: Ի դեպ, Մեջլիսի պատվո ճաշկերույթները սաղրապանները (վեզիր, վարչապետները) սովորաբար Պերայի Թոքատյան ճաշարանում էին կազմակերպում:

1838 թվականից Օսմանյան կայսրությունը Լոնդոնում, Վիեննայում, Փարիզում<sup>3</sup> ներկայացրել են հիմնականում հայ դեսպանները, գլխավոր հյուպատոսները: Լիբանանի վերջին երկու կուսակալները եղել են հայտնի հայ դիվանագետ այրեր՝ Կարապետ Արքին փաշա Դավոդյանը (1816-1873) և Հովհաննես փաշա

1 1876թ. Օսմանյան Սահմանադրության համահեղինակներից մեկը(Մուստաֆա Ռեշիդ փաշայի գլխավոր խորհրդականներից էր) հանդիսանալուց առաջ, նա եղել է 1861թ. Հայկական Ազգային Սահմանադրության հեղինակներից:

2 Դիվանագիտական ասպարեզի առաջին հայ ամենահայտնի դեմքերից մեկը եղել է Միրզայան Մանուկ բեյը: Այս մեծ դիվանագետի շնորհիվ կայացան ռուս-թուրքական բանակցությունները, որի արդյունքում 1812թ. կնքվեց Բուխարեստի հաշտության պայմանագիրը՝ ձախողելով Նապոլեոն Բոնապարտի այս երկու տերություններին պատերազմի մեջ ներքաշելու ծրագրերը:

3 1869թ. Կարապետ Դավոդյանը Վիեննայում գլխավոր դեսպան է նշանակվել: 1883թ. Մկրտիչ Շեքաիրյան ամիրան դեսպան է նշանակվել Ավստրիայում: Էդուարդ Չոխրապ է.ինդին 1838-41թթ. եղել է Լոնդոնում Գլխավոր դեսպան:

Կույունճյանը (1858-1933): Երկուսն էլ ունեցել են վեզիրի և ճարչալի (մյուշիք) աստիճաններ: Մինչ երկու հայ կուսակալները, այստեղ թուրք վալիների կողքին հայերը աղմինիստրատիվ, ղեկավար պաշտոններ են վարել (Հակոբ Քուփեյան և ուրիշներ):

Հայազգի դիվանագետները որպես Գլխավոր հյուպատոսներ ու հյուպատոսներ են ծառայել Մեսսինայում, Տուլոնում և Նիցցայում, Բրյուսելում, Բաթումում, Օդեսայում, Թիֆլիսում և Նովորոսիսկյում, Կոստանցիայում, Յաշ, Կալաց, Տուր դը Մեվերին ռումինական քաղաքներում, Քարադաղում (Չերնոգորիա), Սերբիայում, Բելգրադում, Բուդապեշտում, Եռհանգստուրգում, Նեապոլում, Բարիում, Ջանքիայում(Իտալիա), Կատանիայում, Լահեյում, Անտիվարում, Դուլչինոյում, Այա-Մավրայում, Կորֆու կղզում, և այլուր:

Դիվանագտական առաքելությունները չեն սահմանափակվել տարբեր երկրներիների ներկայացուցչությունների մաս կազմելով ու այն գլխավորելով: Հայազգի պաշտոնյաները մասնակցել են դիվանագիտական, մասնավորապես պատերազմական ժամանակներում տարբեր տիպի բանակցությունների ու հաշտության դաշնագրերի ստորագրմանը, միջազգային կազմակերպությունների համաժողովների, նաև՝ միջազգային ցուցահանդեսներում ներկայացրել են կայսրությունը, ստորագրել բազմաթիվ կարևոր համաձայնագրեր, վարել կարևորագույն բանակցություններ:

1886թ. Սահակ Ապրո Չելեպին Բ.Դռան կողմից նշանակվում է թուրք-բուլղարական հանձնաժողովի անդամ: 1885թ. Պոլսում Շվեդիայի և Նորվեգիայի դեսպանների հետ միասին ականակիրների և շոգենավների պատվերի շուրջ համաձայնագիրը Օսմանյան կայսրության կողմից ստորագրում է վեզիր Հակոբ Գազազյանը: 1885թ. Հակոբ Գազազյանը՝ Ֆինանսների նախարարի և Արքին Տաշյանը՝ Արտգործնախարարության խորհրդականի պաշտոններ են ստացել: Որպես կանոն, Արքին Տաշյանն է ընդունել օտար երկրների բոլոր պատվիրակներին, անգամ թարգմաններին: Նրա ներկայությամբ է սաղրագամ Մաիդ փաշան կառավարությունում ընդունել դեսպաններին և այլն:

Գրիգոր Աղաթոնը (1823-1868) հայտնի է որպես Օսմանյան կայսրության առաջին քրիստոնյա, հայ նախարարը: 1864թ. նա նշանակվում է Փոստի և հեռագրական գործերի նախարար, իսկ հաջորդ տարի՝ 1865թ. Փարիզում, Փոստային և հեռագրական միջազգային կոնգրեսում ներկայացնում է Թուրքիան:

Քանի որ կայսրության նախարարություններն անընդհատ միավորվում կամ բաժանվում էին ըստ առանձին բնագավառների, մենք ուղղակի կենքեք այն նախարարությունները, որոնք ղեկավարվել են հիմնականում հայազգի նախարար-

ների կողմից: Այն է՝ Անուառների ու հանքերի, Փոստի ու Հեռագրատան, Հանրա-  
 յին շինության, Առևտրի ու Գյուղատնտեսության, Արտգործնախարարությունը,  
 Ֆինանսների ու Հարկային, Հանրային պարտուց նախարարությունները: Արդա-  
 րադատության նախարարությունը ներկայացվել է հայ փոխնախարարով: Արդու  
 Համիդ Բ-ն իր անձնական զանձարանը վստահեց միայն հայերին: Մուլքանի  
 անձնական զանձերի նախարարներ են եղել Միքայել Փոքրուզալ փաշան (1842-  
 1897), Հովհաննես փաշա Սաքըզ(յան)ը, Մկրտիչ Հեթիմյանը (1847-1927), Հակոբ  
 Գազազյանը և ուրիշներ, ամիրաներ: Հայագրի մասնագետները վարել են նաև  
 Անվտանգության, Անշարժ գույքի, Պետական խորհրդի ու նրա տարբեր հանձ-  
 նաժողովների տնօրինությունը, տարբեր վարչություններ, ղեկավարել Կայսերա-  
 կան բժշկական ընկերությունը, դատական համակարգի երկրորդ աստիճանները,  
 Առևտրական սենյակը, քաղաքապետարանները, եղել նահանգային ղեկավար  
 պաշտոնյաներ, պալատի և կառավարության առաջին կարգի ծառայողներ:

Սա չափազանց շատ էր հպատակ մի ժողովրդի համար Օսմանյան կայսրու-  
 յան նման բռնակալ երկրում...

Ձևկուցումը կարդացվել է պետական ակադավոր գործիչ, հայտնի գիտնա-  
 կան Ջոն Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակին նվիրված հոբելյանական նիս-  
 տի ժամանակ (Երևան, մայիսի 22, 2009թ.)





## ԼՈՒՉԻՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

*Խորեն (Նար-Պեյ) և Ամբրոսիոս Գալֆայան եղբայրներ*

*Թէ քային ինձի*

*Թագ եւ աղանանդ, զասպան,*

*Քեզ զայն յօնէի,*

*Թագոսեկաց դժոյ, Հայասարան...*

(«Ըղձանք» Խորեն Նար-Պեյ)

**ԽՈՐԵՆ ՆԱՐ-ՔԵՅ ԳԱԼՖԱՅԱՆ** (6.09.1831-4.11.1892)- հայ հոգևոր և հասարակական գործիչ, դավանաբան, բանաստեղծ, դրամատուրգ, քարզմանիչ. **Archbishop Khorene Nar-Bey de Lusignan of Constantinople**

**ԱՄԲՐՈՍԻՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ** (ԳՎիդոն, 1826-1906) Ամբրոսիոս Լուզինյան Յուսուֆ բեյ, իշխան Լուզինյան Խալֆա, Ամբրոսիոս Խալֆա-բանասեր, բառարանագիր, մանկավարժ, պատմաբան. **Guy de Lusignan**



**ԽՈՐԵՆ ՆԱՐ-ՔԵՅ ԳԱԼՖԱՅԱՆ**



**ԱՄԲՐՈՍԻՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ**

1 1917թ. Բոստոնում անգլերենով հրատարակված հայկական պոեզիայի մի ժողովածուի մեջ բանաստեղծության անգլերեն օրինակի վերնագիրն է՝ ԱՐՄԵՆԻԱ: ARMENIA  
If a sceptre of diamond, a glittering crown,  
Were mine, at thy feet I would lay them both down,  
Queen of queens, O Armenia!...  
Stu' Blacwell, Alice Stone. Armenian Poems. Rendered into English Vers.

Հայագիտության արևմտահայ երախտավորների մեջ Գալֆայան եղբայրներն իրենց ուրույն ներդրումն ունեն։ Նրանք տարբերվում են մեր բազմաթիվ հոգևոր հայրերից իրենց բեղմնավոր գործունեությամբ, զարմանալի, մաս արկածախնդիր ճակատագրով:

Ծնվել են Կ.Պոլսում, հայ կաթոլիկների ընտանիքում: Փոքր հասակից մայրական հորդորով երկու եղբայրները՝ Խորենը և Ամբրոսիոսը 1843թ. ուղարկվել են Վենետիկ, Մխիթարյան մխարանության ս.Ղազար կղզու վանքը, որտեղ հրաշալի կրթություն են ստացել:

1855թ. Խորենը ձեռնադրվել է վարդապետ, նշանակվել արքահայր Գևորգ Հյուրմիզյանի քարտուղար, մասնակցել «Բազմավեպ» ամսագրի հրատարակությանը, սպա պաշտոնավարել է Մխիթարյան մխարանության Փարիզի Մուրադ-Ռաֆաելյան վարժարանում:

1856թ. գտնվել է Մխարանության հետև եղբոր, Սարգիս Թեոդորյանի և Գաբրիել Ալվազովսկու հետ միասին *հրատարվել են կարոլիկ դավանանքից, վերադարձել ստաբիլական հեղեղեցու գիրկը*. Փարիզում հիմնել են Հայկազյան վարժարանը, տնօրինել դասավանդել (1857-59 թթ.):

Փարիզյան շրջանն արտասովոր ազդեցություն է ունեցել երկու եղբայրների հետագա ճակատագրի վրա: Փարիզում, գեղեցիկ արտաքին, շուրջ յոթ լեզուներ տիրապետող ու բազմակողմանի, հրաշալի կրթություն ունեցող ապագա հայագետները ծանոթացել ու մտերմացել են Վիկտոր Հյուգոյի, ֆրանսիացի լուսավորիչ գրողների, մտավորականության սերունդի հետ, մուտք ունեցել փարիզյան հայտնի սալոնները, եղև ուշադրության կենտրոնում, թրծվել ու ազդվել են եվրոպական երկրների մշակութային այս ջահակրի մթնոլորտում: Նրանք իրենց ողջ հետագա կյանքում շարունակել են մարտել ազատատենչ այս երկրի հեղափոխական շունչը, երագելով ունենալ սեփական ազատ ու անկախ Հայաստան, փորձելով հնարավորինս իրենց նպատար բերել եվրոպացիներին ճանաչել, հարգել տալու, ապա մաս օրհասական ժամանակներում բարեկամի օգնության ձեռք մեկնելու հայ ժողովրդին: Նրանք մինչև իրենց կյանքի վերջը մնացել են այդ մթնոլորտում, նամակագրական աշխույժ կապ պահպանել Ֆրանսիայի մտավորական ու ազդեցիկ շրջանակների հետ, շարժելով շատերի մախանձը, ինչպես մաս իրենց նկատմամբ զգույշ վերաբերմունք պարտադրել սուլթանական գաղտնի ոստիկանությանը, պալատին:

Փարիզյան շրջանում ի թիվս շատ հանրահայտ դեմքերի, Խորեն Գալֆայանը բարեկամացել է Ալֆոնս Լամարթինի հետ, ձեռնարկել նրա բանաստեղծությունների թարգմանությունն ամենախորին գրաբարով, որը հրատարակվել է 1859թ.





1877-78թթ. ռուս-քուրբակյան պատերազմից հետո Մինաս Չերազի և Ստեփան Փափազյանի հետ մաս է կազմել ռուսական արքունիքի հետ դիվանագիտական բանակցությունների նպատակով Մոսկվա և Ս.Պետերբուրգ՝ Սկրտիչ Խրիմյանի զվլխավորած պատվիրակության: Այս առաքելությունը նախապատրաստություն էր հայերի մասնակցությանը 1878թ. Բեռլինի կոնգրեսին:

Ս.Պետերբուրգում Խորեն Գալֆայանը կարևոր հանդիպումներ է ունեցել արքունիքի մի շարք ազդեցիկ անդամների, այն է՝ իշխան Նիկոլայ Իգնատևի, Արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Գորչակովի և այլոց հետ: Նրան ընդունել է Ալեքսանդր Երկրորդ կայսրը, որի ժամանակ Գալֆայանը նրան է ներկայացրել Կ.Պոլսո պատրիարք Ներսես Վարժապետյանի «*Հայկական ավրոնոմիայի ծրագիրը*», որի հիմնական գաղափարը Հայաստանի ադմինիստրատիվ անկախությունն էր ռուսական հովանու ներքո:

«Северный Вестник» թերթին տված իր հարցազրույցում Գալֆայանն ասել է, որ «Ռուսաստանը ցույց է տվել, որ Թուրքիայի քրիստոնյաների պաշտպանն է: Ռուսաստանում ապրող մեր հայրենակիցներն ի տարբերություն Թուրքիայում ապրողների՝ շատ ավելի ազատ ու պաշտպանված են: Ավելի քան 20 տարի գոյություն ունեցող օսմանյան սահմանադրությունը չի կարող մեզ բավարարել: Այն որոշ ինքնուրույնություն է տվել միայն մեր դպրոցներին, եկեղեցիներին և բարեսիրական կազմակերպություններին: *Մենք ինքներս ազատ չենք, այլ փրկակալների արքունիք ենք: Մեր ժողովուրդը չունի սեփական հողեր, իսկ մենք կախված ենք թուրք պաշտոնյաների ամենաթողությունից*»:

1878թ. հունիս-հուլիս ամիսներին խորհրդական-թարգմանչի պաշտոնով նա մասնակցում է Բեռլինի կոնգրեսին, ջանալով «Հայկական հարցը» ներկայացնել միջազգային դիվանագիտության դատին: Ապարդյուն ջանքեր...

Նա ս.Էջմիածնի կաթողիկոսական գահին հավակնող 6 հոգևորականներից մեկն է եղել: Ռուսական արքունիքը և սուլթանական կառավարությունը նույնպիսի անհանգստությամբ են վերաբերվել ապագա հայ կաթողիկոսի ընտրությանը, նրա անձին: Ռուսական արքունիքի համար գաղտնի ոստիկանության, մասնավորապես Էրզրումում զվխավոր հյուպատոս Ա.Դամենթի հայկական հարցերի խնդրով 29.03.1883թ. գեկուցագիրը նվիրված է բոլոր հավակնորդների անհատական վերլուծությանը: Խնդիրը պարզ էր: Մինչ որոշելը, թե ո՞վ կրագմի հայոց Վեհափառի գահին, հարկ էր պարզաբանել նրա ռուսական և օսմանյան արքունիքների նկատմամբ ունեցած վերաբերմունքը և ապագա հնարավոր քայլերը, դրանց օգուտն ու վնասները, կառավարելիությունը կամ հանդգնությունը: Արքեպիսկոպոս Խորեն Նար Բեյ Պեշկիթաջին (Կոստանդնուպոլսեցին) այս տեղեկագրում ներկայաց-

վում է ոչ նախընտրելի թեկնածու՝. «նա տարբերվում է իր կրթվածությամբ, մի քանի եվրոպական լեզուների է տիրապետում, հրաշալի հրապարակախոս է, նրա բնավորության բարոյական չափանիշները անբավարար են: Նա խորամանկ է, դավաղիր, հպարտ: Ռուսաստանի նկատմամբ ակնհայտ անբարյացկամ վերաբերմունք է տածում»<sup>1</sup>:

Գալով սուլթանական կառավարությանը, ապա Խորեն Նար Բեյը նրանց համար ևս նախընտրելի հավակնորդ չէր կարող լինել նույն պատճառներով և այս անգամ Գալֆայան եպիսկոպոսը նկատվել է ոչ միայն եվրոպական բարձր ու մտավորական շրջանակներում հայտնի և որոշակի ազդեցություն ունեցող մեկը, այլև դիտվել է ռուսամետ գործիչ: Կաթողիկոսական թեկնածուների մասին այս տեղեկագրերը դիվանագիտական խոդովակներով փոխանցվել են նաև համիդյան կառավարական շրջանակներին. համատեղ, փոխադարձ համաձայնությամբ երկնյաաստ ընտրություն կատարելու համար:

Կյանքի վերջին տարիներին Խորեն Գալֆայան Նար-Բեյն անցկացրել է Պոլսում, աշխույժ մամակագրություն վարել եվրոպական մշակույթի ու հասարակական գործիչների հետ<sup>2</sup>: Իր ամենօրյա մամակաբերի կողմից նա մատնվել, ոստիկանատուն է տարվել, մեղադրվել լրտեսության մեջ, որի տրամաբանական ավարտը երկարատև տաժանելի բանտարկությունն էր կամ՝ մահապատիժը:

Սուլթան Աբդուլ Համիդի հետ երկժամյա առանձնագրույցից հետո նա, որքան էլ որ ապշեցուցիչ է, վերադարձել է տուն: Նրանց գրույցի մասին որևէ տեղեկություն մեզ չի հասել: Բայց որ Հայաստանի ապագայով, նրա ազատագրման ու անկախացման հույսերով ապրող ու գործող հայտնի այս հոգևորական գործիչի դիվանագիտությունն ու վարկը, եվրոպական հայտնի շրջանակների հետ նրա մտերիմ կապերն ու ունեցած մեծագույն հեղինակությունը, նրան պատժելու դեպքում սպասվելիք միջազգային շրջանակների արձագանքը զսպել են Աբդուլ Համիդին՝ փաստ է: Խորեն Նար Բեյի, ֆրանսիական մշակույթն ու կենցաղը վայելած, մարսած զեղազետ, ճաշակավոր մտավորականի, հարուստ մարդու ու հազվագյուտ իրերի սիրահարի բնակարանը դավադրաբար «հանկարծ» մի օր հրո ճարակ է դարձել: Նա կորցրել էր իր գրադարանը, հազվագյուտ ձեռագրեր ու անփոխարինելի բոլոր իրերը: Նա հուսախաբ, լքված ու վիրավոր մեճակացի չափազանց ծանր շրջան է ապրել:

1 Русское правительство и выборы католиков всех армян. Iraber.asj-oa.am/3301/1/1991-3 (148).pdf

2 Խորեն Նար Բեյն իր իշխանավայել կենցաղով, գործունեությամբ շատերի նախանձն է շարժել ու դարձել սուր քննադատության զոհ: Ամենասուր ակննները նրա դեմ ուղղել է Հակոբ Պարոնյանն իր «Ազգային ջոջեր»-ում: Տես՝ Գառնիկ Ստեփանյան, Հ. Պարոնյանի «Ազգային ջոջերը», ՀՀ ԳԱ Տեղեկագիր, 1965, հ. 9, էջ 75-112:

Նույն Սուլթան Համդիի հրամանով նրան նոր բնակարան են հատկացրել, ուր մերձավոր շրջանակի ու Պոլսո Պատրիարքի հետևողական հալածանքի (ի դեմս Խորեն Նար Բեյի կողմից պատրիարքական ընտրություններում մեծապես նրա աջակցելուն), խարդալանքների, որոգայթների ու մատնությունների զոհ է դարձել: Եղել է ոստիկանական խիստ հսկողության ներքո, սոսկ բրոջ հոգածությամբ և մահացել Պոլսում 1892թ. նոյեմբերի 4 (16)ին համելուկային հանգամանքներում:

Թաղված է Շիշլիի մտավորականների գերեզմանատանը:

Նա հեղինակել է՝

«Հայ եկեղեցին և կաթոլիկները», «Քրիստոնեական ուսուցում», պատմագրական աշխատություններ, ինչպես «Պատմություն Սուրբ Գրոց», «Առաջնորդ անգղիերեն և հայերեն գրուցատրութան» (1855), «Առաջնորդ գաղղիերեն և հայերեն գրուցատրութան» (1855), «Բազմալեզու առաջնորդ գրուցատրութան ի պետս ճանապարհորդաց և ուսանողաց, գաղղիերեն-տաճկերեն (հ.թ.)» սրբագրեալ և ճոխացեալ Խորեն վրդ. Գալֆաեսան-Նարայէ (Փարիզ, 2 հ. 1859), «Բառգիրք հայ-գաղղիերեն և գաղղիերեն-հայերեն», (1861. 5-րդ տպ. 1973), «Արշակ Բ» ողբերգությունը (1861), «Ալաֆրանկա» կատակերգությունը (1862), «Զրուցատրութիւն ի տաճիկ լեզուէ ի հայ» (1864), «Վարդենիք» բանաստեղծությունների ժողովածուն (1863): Վերջինս սուր քննադատության է ենթարկել Սիբայել Նալբանդյանն իր «Աղցմինք» պարողիայում: Հաջորդիվ հրատարակել է «Բնաբք պանդխտին» բանաստեղծությունների ժողովածուն (1868), «Ստուերք Հայկականք» (1874), «Հայոց եկեղեցին և անդրալեռնականք» ուսումնասիրությունը (1870), «Ընդարձակ բառարան տաճկերեն-հայերեն» (Կ.Պոլիս, 1892, 670 էջ), «Հանգարան» **Khoren Narbey. La Catéchisme de l'instruction d'après la doctrine de l'Eglise Arménienne Apostolique. 1855, Der Agopian, Paris, և այլն:**

\* \* \*

Գալով Խորեն Նար Բեյի եղբոր՝ Ամբրոսիոս Գալֆայանի անձին, ապա նա Թեոդոսիայում Գաբրիել Այվազովսկու հետ 1855-58թթ. խմբագրել է «Մասյաց Աղավնի» պարբերականը, միառժամանակ աշխատել տեղի Խալիպյան ազգային վարժարանում, ապա նորից վերադարձել Ֆրանսիա, հրաժարվել հոգևոր սքեմից, ամուսնացել է Մարի Լուիզ (Marie Louise Ambrose Calfa Legoupil Josephine (1833-90) անվամբ մի հարուստ ազնվական ֆրանսուհու հետ, երկու զավակների հայր դարձել: 1858թ. Աբդուլ Մեջիդ սուլթանից որպես բանակի մատակարար, ստացել է «Մեջիդիյե» բարձրագույն պատվանշանը: Նա ձեռնարկել է ֆրանս-հայերեն մի հարստագույն բառարանի պատրաստմանը, հրատարակել այն «Նոր բառգիրք



ֆրանսահայ» վերնագրով (հ.Ա Փարիզ, 1900, և հ.Բ՝ 1903): Այս մեծ բառարանը հայտնի է «Լուսինյան բառարան» անվամբ: Այն մինչ օրս չգերազանցված գործ է և այսօր էլ հինք է ծառայում ֆրանսիացի լեզվաբաններին՝ ֆրանսերենով բառարաններ կազմելիս:

Ամբրոսիոս Գալֆայանը հայերենի է թարգմանել մի շարք ֆրանսիացի գրողների գործերը, մեծ օգնություն է ցուցաբերել ֆրանսիացի վիճակորդներին, իր ներդրումն ունեցել Պաղոտյան Լեզեոնի պալատի վերանորոգման աշխատանքներում:

Նա իրեն նվիրել է գիտությանը, մասնավորապես՝ լեզվաբանությանը, բառարանագիտությանը, կազմել գրուցարաններ, բառարաններ:

Հեղինակել է «Համառոտ պատմություն հին եւ նոր ազգաց» (հ.1-5, 1849-51), «Պատմություն միջին դարու» (1850), «Պատմություն ժամանակակից» (Թեոդոսիա, տպ. Խալիպեան ուսումնարանի, 1863, 245 էջ), «Զրուցատրոփին ի տաճիկ (հ.թ.) լեզուի ի հայ» (Թեոդոսիա, տպ. Խալիպեան ուսումնարանի, 1864, 191 էջ), «Հայ-ֆրանսերեն առձեռն բառարան», «Ժամանակակից հայերենի առձեռն բառարան» պատկերազարդ ֆրանս-հայերեն բառարաններ: Գրել է թվաբանության, հայերենի գեղագրության, պատմության դասագրքեր:

\* \* \*

Գալֆայան եղբայրների՝ եվրոպական երկրների ազնվականական շրջանակներում և մասնավորապես Ֆրանսիայում հանրահայտ լինելու փաստը կապվում է նաև նրանց՝ Լուզինյան արքայական տոհմի ժառանգներ ճանաչվելու պատմության և եվրոպական բարձրաշխարհիկ շրջանակներում Գալֆայանների հաստատած ու մեծ հաջողություն վայելող Լուզինյան արքայական տան շքանշանների նկատմամբ մեծ հետաքրքրության հետ:

Դեռևս Ռիչարդ Առյուծաստի ժամանակներում Լուզինյան հին տոհմը գրահեցնում էր Կիլյորսի թագավորների գահը: 19-րդ դարի վերջում այս թագի աղքատացած ժառանգներից Տետրուա Պելենդերին եպիսկոպոս Խոթեն Նար-Բեյլին է վաճառում գահակալի իրենց իրավունքները, ներկայացնելով Գալֆայան եղբայրներին որպես իրենց «մերձավոր ազգականներին»: Նորընծա ժառանգները՝ 1888թ. ի փառս Լուզինյան հին տոհմի պահապան փերի Մելուզինի, շքանշան են հաստատում:

1 Տես՝ Chanoine Pascal, Histoire de La Maison Royale de Lusignan (1896, Kessinger Publishing, 2010) և բազմաթիվ այլ գրքեր, սկզբից մինչև մեր օրերի Լուզինյան թագավորական տան ժառանգների մասին:

Շքանշանը պատկերում էր երուսաղեմյան խաչը, կենտրոնում՝ Երուսաղեմի, Լուզինյանների, Կիպրոսի և Հայաստանի զինանշանները: Փեռի Մելուզինի շքանշանը Լուզինյան արքայական տան այս նոր տիրակալների՝ Գալֆայան եղբայրների կողմից տրվում էր «հանուն հայ ազգի և Լուզինյան բազավորական տան նկատմամբ ունեցած հունահիզմի վաստակի»: Շքանշանը, կախյալ յուր աստիճաններից, արժեր 400-1200 ֆրանսիական ֆրանկ, կից փաստաթղթերով հանդերձ: Այն համարվել է գոյություն ունեցող 10 ամենաշքեղ շքանշաններից: Շատ շատերն են ցանկացել իրենց կրծքին կրել այդ գեղեցիկ, բանկարժեք ու շքեղ «զարդը»:



*Լուզինյան բազավորական րան հիմնադիր, Երուսաղեմի արքա Գի դը Լուզինյան հաշակիր աստկիր*

Հայկական ձեռներեցություն այս պայացույցը այնպիսի մեծ հաջողություն է ունենում Եվրոպայի ազնվական ու հարուստ շրջանակներում, որ 1891թ. Գալֆայան եղբայրները մի նոր, «Սինայի սուրբ Եկատերինայի»<sup>1</sup> շքանշան են հաստատում:


1 «Սինայի սուրբ Եկատերինայի» անվամբ շքանշանի պատմությունը սկիզբ է առնում 12-րդ դ. Ալեքսանդրիայում խաչակիրների վանական-ասպետների ուխտի հետ, որոնք կապված էին Սինայի թերակղզում սուրբ Եկատերինայի մատուրները պահպանող վանքին: 1186թ. տոհմի հիմնադիր խաչակիր Գի դը Լուզինյանը Բաղդոսի բազավորի մահվան առիթից օգտվելով, պալատական հեղաշրջում կատարեց և գրավեց Երուսաղեմի բազավորության գահը: 1187թ., երբ սուլթան Սալադդինը գրավեց Երուսաղեմը, տոհմի հիմնադիր Գի դը Լուզինյանը (Guy de Lusignan (1159 † 1194) հաստատվեց Կիպրոսում: Նա նյութական ծանր վիճակում գտնվող Ռիչարդ Առյուծախոր բազավորից 40 հազ. թեզանոով (որամական միավոր) գնեց այդ կղզին: Այստեղից է սկիզբ առնում Կիպրոսում Լուզինյանների բազավորական ճյուղը, որ սուեց մինչև 15-րդ դարի վերջը: Մելուզին փերիի պակերները, որպես Կիպրոսի, Երուսաղեմի ու Հայակական բազավորության գահի՝ Լուզինյանների պահապանի խորհրդանիշ, հաստատվել է 1392թ. Բերրիի դուքս Ժանի հրամանով: Այս պատմությունը բազմաթիվ գեղարվեստական գործերի և ուսումնասիրությունների նյութ է դարձել եվրոպական գրականության մեջ:

Մինչ այդ, դեռևս 14-րդ դ. կեսերին, Լուզինյաններից մեկը դառնում է Կապադոկիայի արքա: Նրա բազավորական տոհմը իշխում է մինչև 1375թ., Եգիպտոսի կողմից գրավումը: Այս տոհմի՝ Հայաստանի բազավորների տիտղոսն անցնում է կիպրական Լուզինյաններին: Հետագայում այն կորցնելով իր վերջին ժառանգին, անցնում է Վենետիկի հանրապետությանը: Միայն 19-րդ դարի առաջին կեսին այս տոհմի երկու ժառանգներ հայտնվեցին, որոնցից Տեարուս Պեկեմոյին, որ հաստատվել էր Ս.Պետերբուրգում, որպես կիպրական բազի ժառանգ, նախ փորձեց Թուրքիայից փոխհատուցում պահանջել, ապա նյութական անբաժանի պատճառները նրան մղեցին 1870-ական թթ. հայտարարել Գալֆայան երկու եղբայրներից իրենց մերձավոր ազգականները, սկիզբ դնելով Լուզինյան բազավորական տոհմի նոր, հայկական ճյուղին:



*Լուզինյան փան հովանավոր Մելուզին փերիի պարիկերները փարքեր փորագրանկարներում և գրքերի կազմերին*

*Լուզինյան քազավորական փան Մելուզին փերիի շքանշանները*



*Մինայի սուրբ Եկատերինայի շքանշանը*

Այն պատկերում էր երուսաղեմյան խաչը, ասպետական սուրը՝ զարդարված շքեղ թագով, կենտրոնում՝ Երուսաղեմի, Լուզինյանների, Կիպրոսի և Հայաստանի զինանշանները:

Երկու շքանշաններն էլ մեծ հաջողությամբ վաճառվում են մինչև 1905 թվականը, Գալֆայան եղբայրների վախճանը:

Լուզինյան տոհմի ժառանգներն այսօր էլ ապրում են տարբեր երկրներում, բայց թե որքանո՞վ է հայկական արյունը և անունը մնացել նրանց հիշողության մեջ՝ դժվար է ասել:



Ահա այսպիսին է ուրվագիծը Խորեն և Ամբրոսիոս Գալիլայան եղբայրների կյանքի, Լուզինյան արքայական տան՝ Երուսաղեմի, Կիպրոսի և Հայաստանի թագերի երկու հայ ժառանգների՝ գիտությամբ, դիվանագիտությամբ և արվածախնդրությամբ հազեցած հայրենասեր երկու դեմքերի ողիսականը: Այն բոլորովին էլ չի ստորադասում մեր մշակույթում և հասարակական կյանքում նրանց ունեցած նշանակալի ներդրումը:

Anunner.com – ճանաչեք հայ մեծերին. (Հոռոտասիազորդում) 2013 թ.  
ԱՆԿԱՆ շաբաթօր, 2014, Եր., հ.3, էջ 18.

## ՄԻ ՀԱՎԱՏՈՒՐԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ԱՄԻՐԱՆԵՐ

*Գլուխդ շար մի բարչրացրու, որ չկորեն,  
բայց շար էլ մի ծոխր, որ վրան չկոխեն...*

Հայերն Օսմանյան կայսրությունում հմուտ առևտրականների, արհեստավորների համբավ են վայելել: Կայսրությունում հայերը հատկապես առևտրի, սեղանավորական ասպարեզում գերիշխող դիրք են գրավել: Հարյուրից ավելի արհեստներում հայերը մրցակիցներ չեն ունեցել, շնորհիվ իրենց ստեղծագործ մտքի, աշխատասիրության, տաղանդի ու հայ արհեստավորներին բնորոշող ազնիվ ու բարոյական վարքագծի:

Նրանց ծառայություններից ու տաղանդից սկսեցին օգտվել օսմանյան սուլթանները, սկզբում՝ որպես պալատական արհեստավոր-ծառայողների, իսկ հետո արդեն որպես պալատական բարձրաստիճան պաշտոնյաների, իրենց բնագավառների տնօրինողների, երկրի ներքին ու արտաքին կյանքի կարևորագույն դեմքերի: Այդպիսով ստեղծվեց *ամիրայական*՝ արևմտահայության համար ազնվակական մի խավ, որի որոշ գերդաստաններ իրապես շարունակությունն են հանդիսացել հայ արքայական, ազնվականական տոհմերի, եղել «բանկային իշխաններ»:

Իր առանձնակի դիրքով, ազդեցությամբ ու հնարավորություններով, որ մինչ այդ փակ ու անհասանելի էր քրիստոնյա հպատակներին, նրանք մի նոր մակարդակ ձևավորեցին Օսմանյան կայսրությունում ու պալատում: Նրանք ի տարբերություն քրիստոնյա հպատակների, բազմաթիվ առավելություններից էին օգտվում: Իսկ այն ամիրաները, որոնք ուրանում էին սեփական հավատքն ու մահմեդականություն ընդունում, էլ ավելի էին մերձենում թուրքական պալատին, անձեռնմխելի դառնում,

սուլթանից ստանում իրենց ուզած պաշտոնը և չափազանց արագ բազմապատկում իրենց հարստությունը: Այդպիսի օրինակներն արևմտահայության պատմության մեջ մատենի վրա կարելի է հաշվել: Իսկ դրդապատճառները՝ տարբեր են եղել...

Ամիրայական խավի մի մասը, ցավոք տուրք տալով եվրոպամոլությանը և գերվելով նրա լուսավորյալ, առաջադիմական գաղափարներով, հուսալով այս առավելությունները վերածել ազատության, անկախության, բարեկեցության, եվրոպական հովանավորության տակ գտնվելու մեծաշնորհի, դարձել էր կարոլի եկեղեցու հետևորդ: Ազգի միասնության մեջ սեպ խրելով, այնուամենայնիվ նրանք, որպես կանոն, լավագույն ազգասերներ ու բարերարներ էին, արևմտահայության առաջադիմությամբ ու ապագայով մտահոգ ազգային այրեր:

Այս հանգամանքն ընդհանուր առմամբ մեծապես փոխեց կայսրությունում արևմտահայության դեմքը և հետագա 18-19-րդ դարերը արևմտահայ իրակաճության մեջ հայտնի դարձան որպես ամիրայական իշխանության շրջան՝ իրենց բացառիկ որական ու որոշ բացասական կողմերով: Ամիրայական դասը, որի մեծ մասը ղեմնկրատական հայացքների կրող էր, որքան էլ ազգային մեծ գործունեություն ունեցել, այնուամենայնիվ բավականին «փակ» խավ էր:

«Գլուխդ շատ մի բարձրացրու, որ չկտրեն, բայց շատ էլ մի ծռիր, որ վրան չկոխեն»։ Ջգուշության, չափավորության, խելամտության, համեստության այս գիծը հիմնականում պահպանել են բոլորը՝ ամիրաները, փաշաները, անվանի ու հարուստ հայերը: Կյանքը Օսմանյան կայսրությունում նրանց բազմիցս ապացուցել էր այս սկզբունքին հավատարիմ լինելու իմաստությունը:

Մեր պատմությունն առնչվում է արքունի ոսկերչապետերի, նկարիչների, սերնդեսերունդ որպես ոսկերիչներ ու փողերանոցի տնօրեններ, դրամահատարանն իրենց ձեռքում պահած Տյուզյան հայտնի գերդաստանի բացառիկ դաժման ճակատագրին: Այս գերդաստանի մահապետներից Հարություն անունով անձը 1600թ. Տիվրիկից գաղթել էր Պոլիս և այնքան մեծ հաջողություններ ունեցել ոսկերչության մեջ, որ Արքունի ոսկերիչ էր անվանվել ու իր խանութը բացել Կայսերական գանձատան մոտ: Նրա որդին՝ Մահտեսի Սարգիսը հենց հոր մահվան օրը Սուլթան Սելիմ Գ-ից ստացել է Արքունի ոսկերչի պաշտոնն ու տիրոջը: Վալիդե (մայր) թագուհու համար ոսկերչական դժվարագույն մի պատվերի համար որպես վարձատրություն շնչին մի գումար էր խնդրել, որի համար ստացել էր «Տիզ» (շիտակ) մականունը: Իրավմամբ այս գերդաստանն աչքի է ընկել իր բացառիկ տաղանդով, ազնվությամբ ու նվիրվածությամբ:

Նրանց է վստահվել փողերանոցը, դրամահատարանը, որ Տյուզյան ամիրայական ընտանիքը մեծ հավատարմությամբ էր աշխատեցնում: Սակայն նրա դիր-

ըլ շատ բանասարկությունների, խանդի ու նախանձի առիթ է տվել մրցակիցներին: Իսկ փողերանոցը՝ խարդախությունների, գողության, զեղծարարության բացառիկ հնարավորություններ էր ներառում: Մուլթանական Յըլդզ պալատը չէր հանդուրժում գողությունը:

Եվ ահա՛ Եագո Պոնֆիլ անունով մի հրեա ոսկերիչ խաբեության համար հեռացվում է պալատից և կախաղան պիտի հանվեր փողերանոցի առջև: Դրանահատարանի տնօրեն է կարգվում Միքայել Տյուգյանը: Նա խնդրում է սուլթանին խնայել հրեայի կյանքը և մինչև նրա մահն իր նախորդին սեփական գումարներից ամսական է տալիս: Փոխադարձ վերաբերմունքը խարդավանքն էր Տյուգյանի նկատմամբ:

Նա ստիպված հեռանում է պալատից, վախից հիվանդանում: Սակայն Մուստաֆա Գ-ն իմանալով որ Միքայելը զոհ է դարձել նրան փոխարինած Պալքի անունով մի այլ հրեայի բանասարկության, ետ է կանչում նրան: Սուլթանն անգամ իր բժիշկներին է ուղարկում նրա մոտ: Լավանալով ամիրան գնում է սուլթանի մոտ, պատմում ամեն ինչ, խոստանում հրեաների գողացածն իր միջոցներից տեղը դնել: Նա ազատ ելումուտ ուներ պալատում: Սուլթանն ասում էր. «Եթե տերությանս մեջ երկու Միքայել ունենայի, ինձ կբավեր»:

Ոչ ոք չէր կարողանում փոխարինել Տյուգյաններին, որոնք շնորհիվ բազմաթիվ հայտնագործությունների, կատարելության էին հասցրել փողերանոցի աշխատանքը, իրենց գործը, զանձերի մանրամասն հաշվապահություն և պահովել: Նրանք էին հեղինակը մինչև օրս հարզի «Ֆընտըզ արլըն» կոչվող ոսկե դրամների, ելրոպական թագավորական տների համար պատվիրվող սուլթանական զարդերի: Տյուգյանները տերության ու սուլթանի բարձրագույն շքանշաններին էին արժանանում: Իսկ հրեա աշխատողները նախանձից գողանում էին դրամահատարանի ոսկին, արծաթները:

Սուլթանի և քրիստոնյայի մտերմությունը դուր չէր գալիս հրեաներին, մոլեռանդ մահմեդականներին: Նրանց դրդումով, հավաստիանալու համար Տյուգյանի «շվայտ վիճակին», Սուլթանն իր քրոջը ծպտյալ ուղարկում է Միքայել Տյուգյանի Գուրու-Չեշմեի նորակառույց տունը: Վերադառնալով, քույրը հավաստում է, որ պարզ զարդարված և ոչ թե շքեղ ու շռայլ տուն է տեսել: Ամիրան շատ լավ դիվանագետ էր: Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հունական խնդիրների նկատմամբ նրա մտքերը հավանության են արժանանում կառավարող ավագանու մոտ: Շատ հայերի, հույների է ազատել բանտերից, գլխատվելուց:

Հոճա Միքայելի ավագ որդին ու նրան փոխարինողը Սուլթան Սելիմի սիրելի ու վստահելի պալատականներից էր: Մանկությունից մեծացել էր սուլթան Սելիմի



հետ, պլաւատում. միասին մանկական խաղեր էին խաղացել:

Իրենց անձնվեր ծառայությունների շնորհիվ Եմի գյուղի ապարանքը կառուցելու համար սուլթան Մահմուդ Բ-ից նվեր են ստանում 30 հազար դուշ: Մուլթանը նրանց սամույրներ է հագցնում, որ արքայական սիրո ամենամեծ նշանն էր:

Սակայն թշնամիները չէին հանգստանում: Մի բանսարկությունը հաջորդում էր մյուսին: Իսկ ստուգումներն ապացուցում էին ամիրայական այս ընտանիքի անմեղությունը: Սակայն, մի անգամ հրեաների կողմից գողացված գումարն այնքան մեծ էր, իսկ հրեա ու բուրբ միացյալ դավադրությունն այնքան խորամակ վարպետությամբ կազմակերպված, որ Մուլթանի գայրույթն է շարժում ու առանց հետաքննելու՝ Տյուզյանները բանտարկվում են, չկարողանալով անմիջապես գտնել անհրաժեշտ գումարը:

Նրանց գերդաստանի ողջ ունեցվածքը պիտի պետականացվեր ու աճուրդի հանվեր: Տյուզյան երեք եղբայրները և հորեղբայրը՝ Սյրտիչ Չելեային անմեղ տեղը զլխատվում են: Ունեցվածքը աճուրդի է հանվում: Նրանց զլուխները կախում են Եմիքեռլի իրենց ծովեզերյա տան պատուհաններից: Երբ Տյուզյանների զլխատումից մեկ ժամ չանցած կեղծիքը բացվում է և պարզվում Տյուզյանների անմեղությունը, սուլթանը խորապես ափսոսում է եղածի համար, սակայն ուշ էր...

Մուլթան Մահմուդ Բ-ի ժամանակաշրջանի մասին մի փորագրանկար պատկերում է գրպարտության գոհ դարձած Տյուզյան ամիրաներից Գրիգոր Չելեայի Տյուզի տանջալից մահը՝ կրակի վրա դրած եռացած յուղի կաթսայում:

Եվ ահա՝ անմեղ տեղը մահապատժի ենթարկված Տյուզյանների ունեցվածքը աճուրդի է հանվել: Այն ղեկավարում էր մատնիչ հրեա սեղանավոր Եհեսխել Գաբայն իր թուրք համախոհ Հալեթ էֆենդիի հետ, որը շատ թուրք վաշանների, վեզիրների դավաճանությամբ մահվան էր դատապարտել, սեփականացնելով նրանց ունեցվածքը:

Նայ որոշ ամիրաներ ներկա էին ձմեռային այդ տխուր աճուրդին, որպես հարգանքի տուրք հայրենակից անմեղ զոհերի հիշատակին:

Տյուզյանները, ինչպես և ամիրայական գերդաստանների մի հիմնական մասը, կաթոլիկություն էին դավանում: Նրանցից շատերը չէին հաճախում հայկական եկեղեցիներ և գաղտնի մատուռներ ունեին իրենց տանը: Իսկ առանց հատուկ կառավարական արտոնության եկեղեցի կամ մատուռ կանգնեցնելը մահվան էր պատժվում: Ուստի, աճուրդի ժամանակ սրիկա մատնիչներից հրեա Իսխելը անհամբերությամբ սպասում էր այդ գաղտնի մատուռի դռների բացմանը, որ ըմբռոշխներ իր ատելության ու մատնության արյունքի մահաբեր հաճույքը: Երբ բոլորը կանգնում են մատուռի սրբապատկերներով, խաչով ու մոմերով խորանի

առջև, Տյուզյանների դահիճը բնօրինակով խորանից վերցնելով հաղորդության սկիզբ՝ «բբաման» է անվանում այն: Սրբապիղծ խոսքերը հագիվ արտասանած՝ շառաչուն ապտակ է ստանում Երկանյան Հովհաննես Հաջի Չելեպի Ամիրայից, որը մի կողմ գլորելով սրիկային, ճմլելով ձեռքը, խլում է սկիզբ, սուրբ անոթը տանում շրթներին ու երկյուղածորեն դնում խորանին, ասելով՝ «Ձիուդ, քո պիղծ ձեռքերը անարժան են սրբության հպվելու»:

Տյուզյանների մոխրացած տան մեջ ամիրայի հարվածից գետին գլորված ու խայտառակված սրիկայի հայացքը մահ էր ավետում, որ առերես հանդարտությամբ տանում է Ամիրան: Դեպքից քիչ անց, Հալեբ է.Ֆեռդին շուտով իր հեթական հայ գոհին՝ Չերազյան Գասպար Ամիրային ևս անմեղ տեղը գլխատել է տալիս (1821թ.): Ազնավուրօղլու Կարապետը, որ սեղանավորների գլխավոր էր՝ արտրվում է Սաքըզ կղզի և մի այլ սեղանավոր, Սկրտիչ օղլու Իլյանը՝ Իսթանբույ կղզին: Ճարտարապետ Գոբիգոր Ամիրա Պալյանը արտրվում է Կեսարիա: Հերթը՝ Երկանյան ամիրայինն էր, որ իր ընտանիքի կյանքը փրկելու համար ճարահատյալ դիմում է Շեյխ-ուլ-խալամին ու մահմեդականություն ընդունում: Այլևս փրկված էր նրա ունեցվածքը, իր և ընտանիքի կյանքը:

Ուրացող ամիրան դուրս է գալիս տնից ու այդ օրվանից չի հանդիպում իր ընտանիքին: Սուլթանը տալիս է նրան իր ուզած մաքսային տեսչության ղեկավարի պաշտոնը՝ ամուսնացնելով մահմեդական մանկամարդ մի կնոջ հետ: Վերջինս շաբաթը մեկ այցելում էր Ամիրայի հայ կնոջն, ու ծնկաչոք նրա առջև պատմում ամիրայի՝ օտար բնում, ընտանիքից զրկված դժբախտ մարդու անխոս տառապանքներն մասին:

Ստոր դավադիրներն արդեն անկարող էին վրեժ լուծել նրանից:

Ազգային գործերից հեռացած ու միայն իր նոր պաշտոնով զբաղվող հայ ուրացողը գաղտնի ու երկար, խորհրդավոր թղթակցություն էր վարում արտասահմանի հետ, ու մի օր էլ բռնել է տալիս Իսխեյի անունով եկած սնդուկներն ու թղթակցությունը, դրանք սուլթանական պալատ փոխադրել տալիս, ինքն էլ ունկնդրություն խնդրելով սուլթանից՝ բացահայտում իրողությունը: Սուլթանական պետության կեղծ դրամները և թղթակցությունը կայսրության դեմ հրեայի ու բուրք պաշտոնյայի դավադրության ահավոր ապացույցներ էին: Սուլթանը սոսկալի բարկացած էր: 1823թ. Հալեբին տանում են Կոնիա, գլխատում ու գլուխը բերում Պոլիս: Հրեանյին տանում են Թեքե, գլխատում ու գլուխը բերում Պոլիս:

Հաջի Չելեպի Երկանյան ամիրան, որ սարսափելի ու անճանաչելիորեն ծեքացած, փոխված էր, գնում է դիտելու դավաճանների գլուխները, այդ սրբապիղծ շրթունքները:

Նա ճանաչում է հայաստյաց ու կործանիչ սրիկաների գլուխները, որոնց անշար-  
ժության դատապարտողն ինքն էր եղել ու... ժպտում է: Տարիներ անց առաջին  
ծախիտը նրա սեղմված շրթունքների ծայրին:

Իր անարգված հավատքի վրեժը լուծել էր:

Ի՞նչ բուռն հավատք էր, որի դեմ եղած անարգանքը սրբելու համար դիմել էր  
ամենավերջին, անընդունելի քայլին՝ նույն սուրբ հավատքն ուրանալուն:

**Ամիրա՝** արաբերեն նշանակում է պետ, իշխան: Արաբական խալիֆայությունում *ամիրաներ*  
են անվանվել զորահրամանատարները, կուսակալները: Օսմանյան կայսրությունում *Ամիրա* և  
*Չիլիսի* պատվանունները տրվում էին Օսմանյան սուլթանների պալատական քրիստոնյա, հայ  
արքունի պաշտոնյաներին, որոնք ժամանակի ընթացքում, շուրջ երկու դար, իրենց ձեռքում էին  
կենտրոնացրել վարչատնտեսական որոշ գերատեսչություններ, արևևտի, արվեստի, արդյու-  
նաբերության, գյուղատնտեսության որոշ ասպարեզներ:

«ԱՆԿԱՍ» շաբաթաթերթ, հ. 13 (225), 10-17 ապրիլ 2014, երևան, էջ 18:

## **1829թ. «ՍԵՎ ՀԻՆԳԱՆՑՆԵՐԻ» ԳՈՐԾԸ ԵՎ ՍԱՀՄՈՒԳ Բ-Ի ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՎԱՆԱՎՈՐ ՈՒ ՏԱՐԻՆԵՐԻ ՀՎԱՍԱՐԻՄ, ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՐՀՐԳԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՁՁՅԱՆ ԱՄԻՐԱՆ**

**Պեզճյան Հարություն Ամիրան (մետաքսի Գազազ Արքին Ամիրա, 1771-1834)**  
18-րդ դարի արևմտահայության փայլուն դեմքերից է: Ժամանակի բուրք սուլ-  
թաններից «եվրոպասեր» հորջորջված Սուլթան Մահմուդ Բ-ի անձնական սեղա-  
նավորն ու տարիների հավատարիմ, իմաստուն խորհրդակցան է եղել<sup>1</sup>: *Kazaz* մա-  
կանունը նշանակում է մետաքսի վաճառական, որով նա զբաղվել է մինչ պալատ  
գալը, շարունակելով հոր՝ մետաքսի վաճառական Պեզճի Պողոս աղայի գործը:

12 տարեկանում Գումգափու թաղի Մայր վարժարանի ամենաուշիմ աշակեր-  
տը որոշում է թողնել ուսումը և նախընտրում շարունակել այն շուկայում: Այս  
արտառոց արարքը ապշեցնում է բոլորին, հուսահատեցնում ծնողներին, որոնք  
իրենց միակ արու որդուն երագում էին տեսնել ուսյալ ու կրթյալ: Սակայն փոք-  
րիկի վճռակաճությունն ու արցունքախառն աղաչանքները տեղի են տալիս:  
1783 թվականից սկսում է զբաղվել կտավի, մետաքսի վաճառականությամբ: Նա  
ամենավաղն էր գալիս խանութ և ամենաուշը լքում այն: Հայրական խորհուր-

1 Սուլթանի և Ամիրայի բարեկամության մասին գրքեր, անգամ պիեսներ կան: Դրանցից մեկը  
Արա Ալիյեյան, «Յաղթանակի ճամբան» վեպն է, Պեզճյան Ամիրայի կյանքից: Իսթ, ԱՐԱՍ  
հրատ, 2005թ.:



դը հետևյալն էր՝ «Հաջողելու համար երկու բան է պետք. աշխատել և խնայել»։ 17 տարեկանում արդեն մետաքսի ճանաչված մասնագետ էր։ 20 տարեկանում իր խնայողություններով մի խանութ է բացում, սեփական գործ սկսում։ Տասնյակ աշխատողներ է ունենում՝ բոլորն էլ հայ։ Հարությունի միակ հաճույքը կիրակի օրերը եկեղեցի գնալն ու դպրություն անելն էր։

Մի օր նրա խանութի առջև գեղեցիկ նժույզներով լծված փառավոր մի կառք է կանգնում։ Խանութ է մտնում սուլթանական պալատի ամենամշահավոր հայ ամիրան՝ Հովհաննես Տյուզյանը։ Այս տոհմի անդամները տարիներ շարունակ եղել են սուլթանի և մայր սուլթանի ոսկերչապետերը, դրամահատարանի ղեկավարները, տնօրինելով կայսրության և սուլթանների գանձարանը։ Այս ընտանիքը Օսմանյան կայսրության ամենապատկառելի տոհմերից էր։ Ամիրան իշխանական առաջարկով էր եկել։ 1802թ. Հարություն Պեզճյանը նշանակվում է Տյուզյանների ընտանիքի գործերի վերակացուն և մինչև կյանքի վերջը ծառայում հավատարմորեն։

Նրա՝ անգնիվ ու խելացի վաճառականի համբավը շատ արագ տարածվում է Պոլսում։ Նա դառնում է Սուլթան Մահմուդ Բ-ի անձնական սեղանավորը։ Այս պաշտոնը վերաճում է անձնական մեծ բարեկամության։ Սուլթանական անձնական գանձի նախարարությունը տևակաճորեն հայ նախարարների ձեռքում է եղել, նույնիսկ հայաստյաց Աբդուլ Համիդ Բ-ի օրոք՝ Գազազյան Հակոբ փաշա, Փոքրգալյան Միքայել փաշա, Հովհաննես Սաքըզ փաշա և այլ հայեր։

Ընդհանրապես սեղանավորական (դրամափոխների) դասը կազմել են ամիրայական ցանկի գերակշռող մասը, որոնցից շատերի արմատները Ակնից են։ Գալով Պոլիս, հաջողությունների հասնելով, նրանք դառնում էին տերության ամենահեղինակավոր մարդկանց սեղանավորները։

1807թ. 12 հոգու (հրեա, հայ) փրկել է եմիչերիների կախաղանից։ Ավելին, իր կտակով ապահովել է նրանցից մի քանիսի հետագա գոյությունն ու բարգավաճումը։ 250 հազ. ոսկու բարերարություն է արել։ Գազազ Արքիմ Ամիրան և մյուս ամիրաները Սուլթան Մահմուդ Բ-ին էին նվիրել մի առազաստանավ, որով ճանաչվողում էր Սուլթանը։

Երբ արքունի Փողերանոցի տնօրեն Տյուզյանները բանասրկության պատճառով անհիմն տեղը գլխատվեցին, 1819թ. նրան հանձնվեց Արքունի փողերանոցի վերատեսչությունը, ուր Պեզճյանը ծառայեց ավելի քան 10 տարի։

Ազգանվեր մեծ գործունեություն է ունեցել։

Երբ 1826թ. հունիսի 8-ի հրդեհին զոհ էր գնացել նաև Հայոց Պատրիարքարանը, Մայր եկեղեցին, Պեզճյան Ամիրան մեծ գումար բաժանեց տուժածներին, իր

ջանքերով կառուցեց Մայր եկեղեցին ու Պատրիարքարանը, վերանորոգեց շատ եկեղեցիներ, վարժարաններ: Նա երկու դպրոց է հիմնել, նաև՝ Պերսյաի աղջիկներին անեղնագործության վարժարանը, արհեստանոցը:

1832թ., արքունի գանձարանի Թահիր անունով նախարարը Սուլթանին համոզեց ու հրամանագիր վերցրեց այն մասին, որ բոլոր հպատակ ժողովուրդների եկեղեցիների, վանքերի եկամուտները արքայական գանձարանին տրվեն և այնտեղից էլ մատակարարվեն: Այդ ազգերի գլխավորներն ապադրոյում պայքարներից հետո դիմեցին Պեզճյան ամիրայի օգնությամբ: Նա մի պարսպ կամթեղով զնաց պալատ և նրան այդ վիճակում Սուլթանը հարցրեց, թե ի՞նչ է բռնել:

-Եկեղեցիներում յուր չկա կամթեղները վառելու համար, ուղարկեցին այս կամթեղը Չերդ վեհափառությանը:

Սուլթան Մահմուդը զգալով, թե ի՞նչ է ուզում հասկացնել Գազազ Արքինը, հրամանը ետ է վերցնում:

Օսմանյան կայսրությունը պատերազմական, ճգնաժամային պահերին հայ հպատակների կողմից փրկելու օրինակները քիչ չեն: Սուլթան Սուլեյման Կանունիի կյանքը փրկող Քարասեֆերյան Մանուկը փոխարենը խնդրում է, որ Սուլթանն իր հայ հպատակներին բարյացկամությամբ վերաբերվերվի:

1808թ. գահ բարձրացավ երկրում բարենորոգչական շրջանի սկզբնավորող Մահմուդ Բ սուլթանը: Նրա հիմնական խորհրդականն ու աջակիցը արքայական դրամահատարանի ղեկավար **Հարություն Պեզճյան Ամիրան** էր:

Պեզճյան Ամիրայի տնտեսագիտական ու դիվանագիտական բացառիկ տաղանդի հետ են կապվում եկիրը երիցս ճգնաժամերից փրկելու փաստերը: Պեզճյան Հարություն Ամիրայի և Միրզայան Մանուկ բեյի անվան հետ է կապվում ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Սուլթան Մահմուդ Բ-ին անասելի ծանր վիճակից հանելու եղելությունը: 1829թ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին ռուսներին տրվելիք 15 միլիոն ռուբլի ռազմատուգանքի հսկայական չափն ուղղակի անկարելի ու անիրականաճալի է թվացել սուլթանին: Վճարելու ո՛չ դրամ կար և ո՛չ էր կռիվը շարունակելու համար զինվոր: Սուլթանի մոտ ազատ ելումուտի շնորհ ունեցող, նրա մտերիմ ու խորհրդական Գազազ Արքին Ամիրայի հնարամտության շնորհիվ հնարավոր է դառնում երկիրը փրկել ակնհայտ փորձանքից: Այս պատմությունը հայտնի է, որպես «**սև հինգանոցների**» գործ: Գազազ Արքինի խորհրդով ժողովրդից հավաքում են պղիձ, արծաթ, հալեցնում և մի քանի գիշեր ու ցերեկ «սև հինգանոցներ» են ձուլում: Նոր ձուլվածների փայլը մաշեցնելու համար ս.Սոֆիայի հրապարակում հավաքում են գորբը և նոր, փայլուն դրամներն անցնելով ձեռքից ձեռք, մի քանի ժամվա ընթացքում կորց-

նում են նոր հատված դրամի փայլը, մաշվածի տեսք են ստանում: Դրանով Ղալաբիայի եվրոպական բանկերից գնում են հունգարական ոսկի, որը և Գազազ Արթինը հասցնում է Մեմշիկովին, որպես ռազմատուգանք: Մեմշիկովն իր ավաստանքն է հայտնում, որ մնան խոշոր դիվանագետը բշմամու բանակում է գտնվում և ոչ թե իրենց է ծառայում: Ռուսական բանակներն անմիջապես ետ են քաշվում:

Այս փրկարար գործի հաջողությամբ իրագործման համար Սուլթանն ի նշան բարձրագույն գոհունակության ու սիրո՝ անձամբ նրա կուրծքը զարդարել է «Թասֆիր-ի Հյումայուն» բարձրագույն շքանշանով:

**Պեզճյան Ամիրայի** խորհրդով էր, որ Սուլթանը դիմեց ռուսների օգնությանը, երբ Եգիպտոսի փոխարքա Մուհամմեդ Ալի փաշան գրավելով երկրի մեծ մասը, Ստամբուլի պարիսպներին էր հասել: Գազազ Արթին ամիրան մեծապես նպաստել է Կայսրության ֆինանսավարկային համակարգի կարգավորմանը:

Ամիրան չափազանց ազգասեր ու բարերար անձ է եղել: Նա չհասցրեց, ավելի ստույգ՝ չուզեցավ դավաճանել իր միակ սիրուն՝ Տյուզյան ընտանիքի օրիորդին և այդպես էլ ընտանիք չկազմեց:

Բոլորին էր հայտնի, որ Պեզճյան Ամիրան Մահմուդ Բ-ի «աջ բազուկն ու աչքի լույսն էր»: Բացառիկ ազդեցիկ ու ազնիվ անձ, մեծ հայրենասեր ու խոշոր դիվանագետ: Երբ Ամիրան ջրդողությամբ հիվանդացավ, Սուլթանը երկու սեմակապետների հետ ծպտված եկավ նրա հուղարկավորությանը, վերջին հրաժեշտը տալու իր սիրելի մարդուն: Սուլթանը հրամայեց, որ դին տարվի պալատի առջևով և թաղվի Մայր տաճարում:

Այս մեծ բարերարն է 1832թ. հիմնադրել Պոլիսի Ս.Փրկիչ Ազգային Հիվանդանոցը, որն այսօր ոչ միայն շարունակում է մարդասիրական իր փառավոր ուղին, այլև համարվում է Թուրքիայի առաջին հիվանդանոցներից մեկը: Նրա դռները բաց են բոլոր ազգությունների համար: Պեզճյան Ամիրայի գործունեության ժամանակաշրջանը երախտապարտ պոլսեցիներն անվանել են «պեզճյանական դար»:

**ԱՆԿԱՍ** շարասրիք (Եր., 2014թ. հ.40, նյութեր 6-13, էջ 5)



## ՄԱՆՈՒԿ ԲԵՅ ՄԻՐՉԱՅԱՆ (1769-1817)



*Մանուկ Մարտիրոսի Միրզայանը* օսմանյան և ռուսական դիվանագիտական ասպարեզի ամենահայտնի դեմքերից է: Հայրը ծնունդով եղել է Աշտարակի Կարբի գյուղից: Մանուկը (Էմմանուելը) ծնվել է Բուլղարիայի Ռուսձուկ վայրում:

Միրզայան Մանուկ րեյը միաժամանակ եղել է Օսմանյան կայսրության և Ռուսաստանի հպատակ, հարգված հյուր տարբեր ավստրիական, ռուսական տիրակալների պալատներում: Նա ունեցել է մետաքսի, քրոյի, բամբակի, ծխախոտի, համեմունքների և մեղրամոմի վաճառքի մենաշնորհ:

12 տարեկանում հայրը Ռուսձուկից նրան ուղարկում է Յասսա, հայ առևտրականների մոտ սովորելու: Դեռևս երիտասարդ, նա դառնում է Բալկանների անմենահարուստ մաքրիկանցից մեկը:

Վերադառնալով՝ նա ամուսնանում է, դառնում տեղի իշխանությունների պետական խորհրդական:

Պեզճյան Հարություն Ամիրայի և Միրզայան Մանուկ րեյի անվան հետ է կապվում ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Սուլթան Մահմուդ Բ-ին անասելի ծանր վիճակից հանելու եղելությունը: Մանուկ րեյն աջակցել է նաև ստեպայելու Օսմանյան կայսրությունում ենիչերական հզոր ու երկրի համար չափազանց վտանգավոր դարձրած վարչակարգը:


Օսմանյան կայսրությանը մատուցած ծառայությունների համար 1808թ. սուլթանից ստացել է Մոլդովայի իշխանի՝ *Boğdan Prensi* և *Bey*-ի տիտղոսներ, որոշ ժամանակ փաստորեն դառնալով Մոլդավիայի կառավարիչ:

1808թ. Կ.Պոլիս է եկել, Բարձր Դռան և սուլթանական պալատի *դրագման* դիվանագիտական բանակցությունների գլխավոր թարգման նշանակվել, արագործմախարարի օգնականի մակարդակով: Մեծ հաջողությամբ լուծել է ֆինանսական դժվարին խնդիրներ: 1806-12թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ այս հայտնի դիվանագետը, վաճառականն ու սեղանավորը, կայսրության մատակարարներից է եղել, զբաղվել օսմանյան բանակի պարե-

նավորմամբ և ռազմական նշանակության կառույցների նորոգությամբ: Եղել է օսմանյան Դանուբյան բանակի հրամանատար Մուստաֆա փաշա Բայրաքբաթի խորհրդականը, օժտված՝ ռուսների հետ հաշտության բանակցություններ վարելու լիազորությամբ:

Նա գտնում էր, որ իր ազգի ճակատագիրը պետք է կապել քրիստոնյա Ռուսաստանի հետ և ընդունում է նաև ռուսական հպատակություն:

Նրան լսում, վստահում և նրա բարեկամությունն էին վայելում ռուս ամենահայտնի գորավարներն ու քաղաքական գործիչները (Բագրատիոն, Կամենսկի, Կուտուզով: Վերջինս Մանուկ բեյին իր ընկերն էր համարում): Վերադառնալով Բուխարեստ, 1804-8թթ. կառուցում է Բուխարեստի տեսարժան վայրերից մեկը՝ հանդիսացող մի պալատ, որ մինչ օրս հայտնի է *Մանուկի խան* անունով:



Նրա եռանդուն ջանքերի, դիվանագիտական հմտությունների շնորհիվ են կայացել ռուս-թուրքական 1806-1812թթ. պատերազմի հաշտության մի շարք բանակցությունները, որոնց արդյունքում 1812թ. իր կառուցած պալատում («Մանուկի խանը») կնքվել է Բուխարեստի ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը: Ռուսական կողմից այն ստորագրել է Կուտուզովը: Բուխարեստի պայմանագիրը ձախողել է Նապոլեոն Բոնապարտի՝ այս երկու պետություններին պա-

տերազմի մեջ ներքաշելու ծրագրերը, սակայն թուրքական կողմը Միքայանին մեղադրել է դավաճանության մեջ:

Ալեքսանդր Առաջինն իր պետերբուրգյան պալատում հյուրընկալում է նրան և կնոջը, շնորհում ս.Վլադիմիր ասպետի 3-րդ աստիճանի շքանշան:

1813թ. Բուխարեստից անցել է Տրանսիլվանիա, ապա հաստատվել Քիշինևում և դարձել ռուսահպատակ: 1814 թվականին Մանուկ Բեյին շնորհվել է պետական խորհրդականի աստիճան:


Մանուկ Բեյը Հայաստանի ազատագրումը կապել է Ռուսաստանի հետ: Այցելել է Հայաստան, ելուրական օժանդակություն ցույց տվել Էջմիածնի, Մուշի, Երուսաղեմի և այլ վայրերի վանքերին: Բուխարեստի հայոց եկեղեցու մերձակայքում հիմնել է քաղաքում առաջին հայկական դպրոցը (1817): Մանուկ Բեյի արխիվը պահվում է Բուխարեստի Պատմության թանգարանում:

Նա 100 հայ ընտանիք է տեղափոխում, և պատրաստվում էր շուրջ կես միլիոն օսմանահպատակ հայերի ևս տեղափոխել Վալախիա ապրելու: Ալեքսանդր Առաջինը խոստանում է Մանուկ Բեյին, որ Բեսարաբիան կդառնա օսմանահպատակ տեղահանված հայերի փրկության հանգրվաններից: Նրան հայկական իշխան էին հորջորջում:

300 000 ոսկե լեյով նա հողեր է գնում Ռումինիայում: Նրա գնած հողերում 40 գյուղեր կային, իսկ 1817թ., Քիշինևից 36կմ արևմուտք, Հընչեշտում հիմնում է իր ընտանեկան սքանչելի ապարանքը՝ ֆրանսիական կլասիցիզմի ոճով, կառուցված հայազգի ճարտարապետ Բերնարդացու կողմից: Պալատի առաստաղները նկարագարող էլ է մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին: Բլրի վրա կառուցված պալատը շրջապատված էր պարսպով: Կարապներով արհեստական լճակը, շատրվանները, ապարանքի տարբեր մասերը միմյանց միացնող ապակեպատ, էկզոտիկ մրգերի ձմեռային այգիները (որոնց տակ գետնափոր ուղիներ կային) զարմացնում էին իրենց շքեղությամբ, որից ցավոք սրտի համարյա ոչինչ չի պահպանվել: 1993թ. պալատը ստանում է ճարտարապետական հուշարձանի կարգավիճակ և այժմ համարվում է Մոլդավիայի ազգային հարստությունը:

Պատմում են, որ այս պալիլիոնների տակ էր թաղված Մանուկ բեյի հարստությունը և ազգային հերոսներից Կոտովսկին շատ հաճախ էր այստեղ գալիս, փնտրելու այն: Ասում են, նաև, որ հենց նա էլ գտել ու յուրացրել է Մանուկ բեյի հարստությունը:





Ըստ Միրզայանի այստեղ հիմնադրվելու էր Ալեքսանդրապոլ հայաբաղաբը: Ծարունակելով տաղանդավոր վաճառականի իր գործունեությունը, նա հսկայական գումարներ էր ներդնում հայկական հզոր համայնք ստեղծելու վրա: Նրա երազանքը չիրականացավ:

Եստ հայերը հիմնվեցին Քիշիննում, ստեղծելով լավ համայնք: Նա մեծ ավանդ է ունեցել մոլդավական գինեգործության մեջ՝ որպես ֆրանսիական տեխնոլոգիաների շարունակող:

Նա այդպես էլ չհասցրեց ապրել իր պերճաշուք ապարանքում:

Հանկարծամահ է եղել 1817թ. հուլիսի 2-ին Մոլդավիայի Բեսարաբիայի մարզի Հըչեշտ (Կոտովսկի) քաղաքի իր ազարակում, թողնելով Մարի անվամբ կնոջը և 6 որբերի: Այս մահը խորհրդավորությամբ է պատված:

Թաղված է Քիշիննում, իր կառուցած ա.Աստվածամոր եկեղեցում:

Իրազգի համար նա կառուցել է եկեղեցիներ, դպրոցներ: Հարազատ Ռուսչուկում կառուցել է կամուրջներ, քարվանսարաններ, ջրաղացներ, գարկ տվել հանքարդյունաբերությանը: Բալկանյան շատ քաղաքներ իրենց տնտեսական զարգացմամբ մեծապես պարտական են Մանուկ Միրզայանին: Նա հիմնել է մանուֆակտուրաներ, կալվածքներ, տրամադրել փոխառություններ: Նրա անվամբ կոչվել են ռումինական երկու գյուղ: Նրա մասին ժամանակակիցները հիշատակում են որպես ծայրաստիճան ազնիվ մեկի:

Մխիթարյան հայրերի հետ նա հայոց լեզվի դասագիրք է հրատարակել դպրոցների համար: Նրա ծառանգները, մասնավորապես Գրիգոր որդին, որ Փարիզում էր մահացել, մեծ ծառանգություն էր բողել Մոսկվայի Լազարյան

ինստիտուտին, որի շքեղագույն «Մանուկի դահլիճը» բալանվեց ու ոչնչացվեց բոլշևիկների կողմից:

Մանուկ Բեյն ամուսնացած է եղել հայագգի իշխանուհի Դեյանովայի հետ: Զավակներն էին Գրիգոր Հովհաննեսը և Մարի Մանուկը: Թոռնուհիներն էին իտալական կոմսուհի Ելիզավետա Շենտոնին, գերմանական բարոնուհի Օլգա Հոգֆելդ-Դրախթեմբերգը: Վերջինիս ծոռն է կանադացի ճարտարապետ Փեթեր ֆոն Քորֆը: Իր մի ասուլիսում նա հպարտորեն է խոսել իր հայկական արմատների մասին:

Զարմանալի է, որ Մանուկ Միրզայանի ժառանգները մինչ օրս հավակնություն չեն ցուցաբերել մեծ հայի ժառանգության համար<sup>1</sup>:

«Անկախ», Երևան, հուլիս 7-12, 2015

---

<sup>1</sup> Հ.Ճ. Միրունի, Էջեր Մանուկ Բեյի կյանքեն, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1969թ. հ.3, 1970թ. հ.2-3:

ՀԱՍՍԻԿ ԱՏԵՓԱՆՅԱՆ

**ԼՈՒՁԻՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅ  
ԺԱՌԱՆԳՆԵՐԸ**

(Հոդվածների ժողովածու)

АСМИК СТЕПАНЯН

**АРМЯНСКИЕ НАСЛЕДНИКИ ЦАРСТВУЮЩЕГО  
ДОМА ЛУЗИНЯНОВ**

(Сборник статей)

Հրատ. պատվեր № 709

Ստորագրված է տպագրության՝ 07.09.2016թ.:

Չափաը՝ 70x100 <sup>1</sup>/<sub>16</sub>, քուդր N 1,

տպագրական 13.75 մամուլ:

Տպարանակը՝ 150 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:



[2300/11.]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0438007

ԱՄ  
190952

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ



Ծնվել է 1950թ. Երևանում, մտավորականի ընտանիքում: 1972թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետը, թուրքերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ:

1972-1997թթ. աշխատել է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում: 2005թ. մինչ օրս աշխատում է նույն ինստիտուտում, որպես առաջատար գիտաշխատող:

Միաժամանակ, 1992-93թթ. աշխատել է ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչությունում, ապա՝ 1995-98թթ. դիվանագիտական առաքելությամբ մեկնել ժՆԱ, աշխատել ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպություններին առընթեր ՀՀ Մշտական ներկայացուցչությունում և

Ծվեցարհայում ՀՀ Գլխավոր հյուպատոսությունում:

1987թ. պաշտպանել է պատմական գիտությունների թեկնածուական թեզ՝ «Հայաստան թուրքերեն գրականության դերը Օսմանյան կայսրության սոցիալ-մշակութային կյանքում» թեմայով:

«Հայաստան թուրքերեն գրքերի մատենագիտություն (1727-1968)» գիրքը հրատարակվել է 1985թ. Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի հրատարակչության կողմից:

«Հայաստան թուրքերեն պարբերական մամուլը» մատենագիտական քառալեզու աշխատանքը նույն հրատարակչության կողմից լույս է ընծայվել 1987 թվականին:

«Հայաստան թուրքերեն գրականությունը» աղբյուրագիտական հետազոտությունը լույս է ընծայվել Երևանի պետական համալսարանի հրատարակչության կողմից 2001 թվականին: Մենագրությունը ֆրանսերեն լեզվով լույս է տեսել 2012թ.:

2005թ. Ստամբուլի «Թուրքուազ» հրատարակչությունը լույս է ընծայել «Հայաստան թուրքերեն գրքերի և հայաստան թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն» քառալեզու աշխատությունները մի գրքով: Այն պարունակում է ավելի քան 2000 ամուս գրքեր, հրատարակված 1727-1968թթ., աշխարհի 50 քաղաքների շուրջ 200 տպարաններում: Հայաստան թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտությունը ներառում է շուրջ 120 ամուս պարբերականներ, սկսած 1840 թվականից:

2005թ. պաշտպանել է պատմական գիտությունների դոկտորական ատենախոսություն՝ «Հայաստան թուրքերեն գրականությունը 15-20-րդ դարերում» (Աղբյուրագիտական հետազոտություն) թեմայով:

2008թ. լույս է տեսել «Ցուցակ հայերեն ձեռագրերի հայաստան թուրքերեն նյութերի և հայաստան թուրքերեն ձեռագրերի» մատենագիտական աշխատությունը: Այն ներկայացնում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայաստան թուրքերեն ձեռագրական հարստությունը:

«Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» ուսումնասիրությունը հայերեն լեզվով լույս է տեսել 2011թ. և արժանացել ՀՀ Նախագահի մրցանակին: Գրքի Բ տպագրությունը կատարվել է 2012թ.: Նույն թվականին գիրքը լույս է տեսել ռուսերեն և Մինսկում արժանացել «Գրքերի արվեստ» ԱՊՀ երկրների մրցույթի «Գրան Պրի» մրցանակին: Թուրքերեն լեզվով ուսումնասիրությունը հրատարակվել է 2014թ.: